Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

N1439. 2-50

~~1752~~ ~~5247~~ 5616.

V ur
1954

# ՀԱՄԱՌՕՏ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՅՕՐԻՆԵԱԼ Ի ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՍԱԼԱՆԹԵԱՆՑ:

Ի Հայրապետութե՟ն Տեառն և Տեառն Ն. ՆԵՐՍԻՍԻ Ա՟ծապատիւ կաթուղիկոսի Ամենայն հայոց և Ասպետի զանազան Նշանաց Ա՟ծահաստատ ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱՑ:

Հրամանաւ Ա՟ծարեալ Առաքելաշաւիղ Բոյ Տր Սրբազան Արքեպիսկոպոսի Վիճակաւոր Առաջնորդի և Մետրապօլտի Հայոց Ղարաբաղու և այլոց, Տեառն Բաղտասարայ Իշխանազնեի Հասան Ջալալեանց, և Ասպետի ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱՑ:

Երկրորդ Տպագրութիւն

Արդեամբք և ծախիւք բարեպաշտօն Պ՟ն Մկրտչի Յովակիմեան Պալեանց:

1854: Ի ՇՈՒՇԻ: ՌՅԳ:

Ի Տպարանի Մինասի Տաղլիճեանց:

9372

ՆՈՒԷՐ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԷՈՐԳԵԱՆ
Ժառանգաւորաց Ճեմարանին
ՄՈՒՐԱՑԱՆ՝ից
25 Սեպտեմբ. 1899 ամի.

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ ՀԱՅՈՑ

Նորակարգ ոճով 'ի պէտս աշակերտաց գերահռչակ Ճեմարանին կառուցելոյ 'ի Մոսկով 'ի Պայազատազարմ Տեարց Եղիազարեանց, 'ի լոյս ընծայեալ Միքայէլ Ծայրագոյն Վարդապետ Սալլանթեան Կոստանդնուպօլսեցի, միաբան սրբոյ Էջմիածնի, Նուիրակ Աստապատու Կաթուղիկոսի, Յաջորդ Վիճակաւոր Արքեպիսկոպոսի, Կարգավար ( инспекторъ ) յիշեալ Ճեմարանին, Դասաւանդիչ ( учитель ) տառագրելի մատենից, Ասիոյ և դասատու Աստուածաբանութեան, փիլիսոփայութեան, և հայկաբանութեան:

Բաժանեալ յերկուս Հատորս փոքր. և 'ի Մեծ:

## ՀԱՏՈՐ. Ա:

Փոքր Քերականութիւն:

'Ի Հայրապետութեան Տեառն Տեառն ԵՓՐԵՄԱՅ Արժանընտիր Աստուածային Կաթուղիկոսի ամ. Հայոց:

Յառաջնորդութեան Ռուսաստանեայ Հայոց Տեառն Յովհաննու առաքելաշաւիղ Սրբազան Արք Եպիսկոպոսի:

1827. 'Ի ՄՈՍԿՈՎ. ռմհզ.
'Ի Տպարանի Օգոստեան Սենատին:

Աջահաստատ Քաջազօր Մեծ Իշխանապետութ,

Ազնուածնունդ Հոգեհարազատ Եղբարք,

ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԽԱՉԱՏՈՒՐ, և

ՂԱԶԱՐՈՍ

ՅՈՎԱԿԻՄԵԱՆՔ Եղիազարեանց,

Ազնուափառ Մեծամեծարար Պայազատք ,

Բարերար Տեառն իմ,

Չեղեն ինձ ինչ պէտք յոլովագումար կշռադատութեանց, ըստ արդեօք ումեք զայս առաջնապտուղ քրտանցս օրէն լիցէ ընծայաբերել, զի հանրահռչակ արդիւնք ազգալոյս Նախահարց ձերոց բարձին յինէն զամ կշռուել, մատնանիշ գոլչիք հոլանեալ զՁեզ զանմահածնունդ շառաւիղսդ նոյին, զմիայն արժանացեալսդ զամ նախաթոռս և զգահագլուխս յազգիս, և զամ նախողջոյնս և զընծայաբերութիւնս՝ 'ի դոյզն տրէտուր անձառապատում արգասեաց ձերայնոց՝ ձերոց, զի արդարև անթիւ են 'ի բազմուէ անօրինակ երախտիքն, զոր 'ի բազմակարօտ անդաստան Ազգիս գետորէն անձրևեցին երջանկայիշատակ Նախնիքն ձեր. յարոց մէջէ, զի Է Առաքողէն խօսեցայց, երեք են՝ որք

պարծ շրջին, և չորրորդն գեղեցիկ Ճեմէ, մեծամե-
ծարար իշխանապետքն Յովհաննէս և Մինաս, Խա-
չատուր և Յովակիմ, արժանապտուղ ծնունդք վե-
հաղնեայ Տեառն Եղիազարայ, կայսերական պաշտա-
մամբք պատուանշանօք, եկեղեցեաց շինուածք, արտօ-
նութիւք կայսերաց առ ազգս, ազգասէրս Ճեմարանիս
նորաստեղծուխ, և այլովք բազմօք անհամեմատ սխրա-
գործութիւք ծովացեալք և ծածկեալք ըլերինս ազգիս,
որոյ վերջին՝ հոգեւոյս ՀԱՅՐ ձեր՝ գերմարդկային
գործակալութեան յաղագ իւր գերածայրեալ, 'ի դըխակար
դէմ զիս Պապասաց հայկազեան ընդունել յայսմ ձերում
տեղծ Ճեմարանի, անդուլ մեղադիր ընէր, ընդու-
նաւեալ խաշինս բանաւոր մանկունս՝ ածել վարել 'ի

տուն գիտուն՝ յուղի նորոգագործ կարծուն, զբաղմաթերթս ազգ ազգ մակացութեց ՚ի փունջս փունջս բաղկեալ բոլորեալ։

Այսու արդարախորհուրդ Նորուն իրաւախօսութբ եւ կանխադատ առեղբարս կարեկցութբ օժանդակեալ՝ յանձին կալեալ ձեռնաձուլել զառաջինն զքերթողականս զայս նախակրթութի, զոր եւ յետ վերափոխման երանելւոյն այնորիկ յաշխարհն կենդանեաց, ը իրաւանց ժառանգուն՝ Ձերումդ Մեծափառուն վերանուիրեմ, ՚ի նշանակ երախտագէտ շնորհակալութե սրտիս՝ Ձերոց առիս անվճարելի բարերարութեց եւ ՚ի նպաստ յառաջադիմուն գառնամոլ Որդեգրաց ձերոց։

Ընկալարուք սրբեմ՝ ով Անմահածնունդ մեծ

ԸՆԾԱՅԵՑԱՔ զայս վկայագիր անուխտադրութ: շնորհապարտութ, զոր Ձերումդ տեղերահռչակ Գերաղանցուն երկնուղամած նուիրագործէ, և բաղորածիր երջանկութ Տեառն յարանալ ձեզ յամուստ

Պարծանք Նախաղարեանց,

Պսակ Հայկազեանց,

Դքեզուն Համարանիս, և

Մեկենաս Խորոյ անձին

Ուխտէ և Մաղթէ

Հեղինակ Գրոյս.

# ԱՌ ՀԱՅԱԽՕՍ

## Լեզուասէրս

Տարեկաւն էր ինձ, և է՛ ինձ այսօր՝ անընդհատ ուսանել ինձ նոր, զի ըստ Սեքենայի խօսեցայց, առ ուսուցանել համառօտ ուսումնականօք ընկերաց իմոց, հաստատեալ անձի-նս, Ձեզ՝ որ ընդ Եղբարց ժառանգութեան ազգիս և օգտակար հա-մարի առանց հաւանութեան, և Ձեզ՝ ո՛չ ծնողաց մեր ձայն մեր և մեզ միայն, այլ ըստ ինչ մերոյ՝ պարտիք ընծայեցայց և եղբարցս, ինչ ընծայեցին մանն՝ պարտաւորեմք այսպէս ապա-ւանդից, զոր մի՛ անցէ և մի՛ հայրենեաց ստանձնել եղբարց։

Յայս առնի և ես յօրէ՝ յորմէ զպաշտօն դպրատանս-թեան հայրենի լեզուին ի ստանձնել ի ձեռնարկ Տեառն Եղիա-զարեանց յանձին կալայ, զամ ձեռն մայն յայն ուղղեցի և ուղ-ղեմ, զի այս առնուացոյն Բայց և առաջնորդեցին պաշտօնէ Եմուղանդն ըստ ամ ժամանակին, և ի փոքուն մեզ մատաղ-աստեղ առաջնորդելոյ՝ ոչ զկարն մտնելոյն հոմ զանելոյն Ար-Բոքնն, այլ զնորանայն հեմունն Ձշմարիտ ըմբռնողութեան, հայրենասիրութեան, ուղղափառ հայկաբանութեան, և այլոց հա-րկաւոր գիտութեանց անտագիտ իրաձեռնօք համառօտ եկեղե-ցեալ կառուցին, որոց համբառնալ նայս յառաջադրեալ յառ-Բունն՝ տարբերակն մնալ լինել հայրենեաց կարճառօտուցեալ և ցանկութեանս։

[illegible]

[illegible]

ոչի՛նչ պանդաղեցայց զոյգս և յանուանեալ գիտաւնեանց հա-
նել յաշխարհ ուղղափառ եկեղեցւոյս մերոյ, որպիսութեանց
զերծս լուսաւորչականին ծննդոց նորոյս սիոնի։

Զհաւատութեան հանգամանաց որոյն ոչի՛նչ պէտս էն ցուցու-
ցանել զի գործս ինքնին առաջին առաքելութեամբն յայտնէ։
Զհետոյ անցին, զոր հետևեալ հետևեցան առաքելոյն կրօնա-
ւորեալ 'ի հաստատս, որք ինչ ինչ 'ի բաց բարեաց 'ի հալածեցեալ
հայրենեաց անձին, և ինչ ինչ փոփոխեցին բառ նորոյն և բառ առեղ-
ծոյ, զորոց և զնման է՛ր հաստատել 'ի մանաւանդ, նոյն և ջանք
ինչ պիտանի կան 'ի յառաջնոյ աշխարհի 'ի նորոց նախնի յա-
ծուցի առաքելոյն, յորմ հաստատեալ է ինձ հետևեցաւ, և
'ի զեղածութեանց 'ի ջանալով յառաջ խաղացեալ։

Զօրինակ հանդէպ կորհրդոյ 'ի արդարեալ տառենից հա-
ւաքելոյ, կարծեալ յերևարութեան նշանակեալ զաշխարհ, որ ոչ-
ի՛նչ օգուտ բերէ տանելոյ, զոր է նորա գիտել եւ մի մերձա-
յուցիջ 'ի մուերական գրոց նախնեաց մերոց էն ծագեցուցեալ։

Ինչ մի միայն մայ ինչ տացեալ յորոց արտևորակս ուխտին և
զուարճութիւն ծնող հայր և հոգամն, զոյժ, յուշ անձեւ զառա-
ջնորդ մաքուր հոգւոյն որքոյ, [[ Ապա թէ ոք իւրոյն, և մանաւանդ
ընտանեաց իւրոց ոչ տայցէ, 'ի հաւատոյն ուրացեալ է, և չար
ևս քան զանհաւատն է ]] (Ա. Տիմ. Ե. 8.) իւրով առա-
նօք ոչ զմարմնաւորն ասէ, զերեխայս և զորդեայս, զի այդ
բնական է մեզ ծնողաց, այլ և անասնոց չորքոտանեաց և թռչնոց-
նոց, որք կերակրեն զձագս, և այսպէս ոչ զառանձին ջերմ-

[library stamp]

անձեայն յանձնանելը, այլ ընդհանուր խնամս տարածելէ ամ Հաւատացելոց, հոգ տանել վասն հոգւոց որդւոց և ընտանեացն, ուսուցանել նոցա զամ կենցն, զամ զգուշութեամբ վարժամանակս՝ զանձայինս և ընդհանուր հոգւոյ փրկութեան, յայս է՝ ըստ վարժութեամբ տեսչին և տնտեսին Գրոց, զորոց ասելով՝ չէ՛ հայր ա՛ս ձեզ լինիլ ասանց քերականական գիտութեան, այլ փոյթ հակելն ծնողք, ոչ այլջանալու արծանել և ուժով հաստատութեան զերդեն, այլ հոգեւոր ուսմամբք և գիտութեամբք գրոց, որով հոգւոյն նոցա տալ 'ի կենաց յաւիտենից, ըստ պատուիրանին Քրիստոսի, Զանձեալ զերդեն, որ դուք հոսմամբ նոցա ունել ընտանի յաւիտենականս, (յովհ. Է. 38):

# ՑԱՆԿ

Գլխոց և յօդուածոց ըստ թղթահամարի։

Երես։

Սահմանութիւն, առարկայ, և բաժանումն քերականութեան. 1

Փոքր քերականութիւն,

Նախածանօթք . . . . . . . . . . . . 6

Առաջին մասն փոքր քերականութեան.

Գլուխ. Ա։ Յաղագս բառից ընդհանրապէս . . . . 7
Յօդ. Ա. Յաղագս կազմութեան բառից . . . . 8
Յօդ. Բ. Յաղագս նշանակութեան բառից . . . 12
Գլ. Բ. Յաղագս անուան . . . . . . . . . 13
Գլ. Գ. Յաղագս դերանուան . . . . . . . . 62
Գլ. Դ. Յաղագս բայի . . . . . . . . . . 73
Գլ. Ե. Յաղագս ընդունելութեան . . . . . . 145
Գլ. Զ. Յաղագս նախադրութեան . . . . . . 149
Գլ. Է. Յաղագս մակբայի . . . . . . . . . 153
Գլ. Ը. Յաղագս շաղկապի . . . . . . . . . 162
Գլ. Թ. Յաղագս միջարկութեան . . . . . . . 168

## Երկրորդ մասն

## Փոքր քերականութեան:

Գլ. ա. Յաղագս նախադասութեան ընդհանրապէս . . 176
Գլ. բ. Յաղագս ընտրութեան բառից . . . . . 179
Գլ. գ. Յաղագս կերպի խօսակցութեան . . . . . 184
Գլ. դ. Զիարդ արժան է հայելի ընդունելութեանց ընդ բայի. 190
Գլ. ե. Զիարդ հայոց գոյականն ընդ ածականի հոլովում. 206
Յօդ. ա. Ածական՝ յատկացուցիչ զիարդ համաձայնին ընդ գոյականս . . . . , 200
Յօդ. բ. Միջական ածական՝ զիարդ համաձայնին ընդ գոյականս , . . . . 223
Յօդ. գ. Ածական դերանուանց զիարդ համաձայնին ընդ գոյականս . . . . . 231
Յօդ. դ. Ընդունելութիւնք զիարդ համաձայնին ընդ գոյականս . . . . . 238
Գլ. զ. Զիարդ հայոց դերանուն բայք ընդ մակբայի հոլովում . . . . . . 241
Գլ. է. Խնդրող բառն զիարդ հայի ընդ խնդրեալ բառս . . . . . . 247
Յօդ. ա. Զիարդ հայիցին դերանուն բայք ընդ խնդրելոյ . . . . . . 249
Յօդ. բ. Գերբայք զիարդ հայիցին ընդ խնդրելոյ . 285
Յօդ. գ. Դերբայք զիարդ հայիցին ընդ խնդրելոյ . 291
Յօդ. դ. Զիարդ հայիցին, որ, ընդունելութիւնք ընդ խնդրելոյ . . . . , . 300
Յօդ. ե. Զիարդ հայիցին, Լի, ընդունելութիւնք ընդ խնդրելոյ . . . . . 305

Յօդ. Զ. Դերբայք հայերէն, լոյծ, ընդունելութեանց ընդ իտալերէն . . . . . 307

Յօդ. Է. Դերբայք հայերէնին փոխական անուանց ընդ իտալերէն . . . . . 310

Յօդ. Ը. Նշանական անուանց դերբայք հայերէն ընդ իտալերէն . . . . . 315

Յօդ. Թ. Դերբայք հայերէն ենթադասական ածականաց ընդ իտալերէն . . . . . 322

Յօդ. Ժ. Դերբայք հայերէն միջական ածականաց ընդ իտալերէն . . . . . 323

Յօդ. ԺԱ. Դերբայք հայերէն ներգործութեան ընդ իտալերէն . 325

Գլ. Ը. Բացայայտող բառն հայերէն բառի ընդ բա-ցայայտելի բառի . . . . . 338

Գլ. Թ. Յաճախական բառն հայերէն բառի ընդ յաճախ-ացուցող բառի . . . . . 344

Գլ. Ժ. Գիճորոշող բառս հայերէն բառին ընդ գիճո-րոշելի բառս . . . . . 351

Գլ. ԺԱ. Յարաբերող բառն հայերէն բառի ընդ յարա-բերելոյ բառի . . . . . 359

Գլ. ԺԲ. Շաղկապող և միջանկեալ բառս հայերէն բառին ընդ բառս . . . . . 374

Գլ. ԺԳ. Յաղ. ներքին ուղղութեան խոտորութեան . , 381

Գլ. ԺԴ. Յաղագս ոճերանց ջերականութեան . . 384

Գլ. ԺԵ. Ընդդիմութեանն տարածութեան և յաւել-ուած հարևորոց . . . . . 388

Գլ. ԺԶ. և վերջին: Յաղագս ուղղախոսութեան և ուղղագրութեան . . . . . 426

Դուք եթէ լեզուօք ոչ նշանակեսջիք զբանն, զիարդ ճանաչիցին խօսքն, զի լինիցիք այնուհետեւ իբրեւ ընդ օդս խօսեցեալք։ Զի այնչափ ազգք ձայնից են յաշխարհի, եւ ոչինչ է անձայն։ Իսկ արդ՝ եթէ ոչ գիտիցեմ զզօրութիւն ձայնին, լինիցիմ այնմ՝ որ խօսիցին ընդ իս, խուժ. եւ նա՝ որ խօսիցին ընդ իս, խուժ։

Բայց ինձ տացէ Ա՛Ծ ասել ըստ միտս, եւ խորհել արժանաւոր ըստ բանից ասացելոց։

(Ա. Կորնթ. ԺԴ. 9։ Իմաստ. Է. 15)

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## Գրաբառ լեզուի Հայոց։

Օրինաւորեալ. ուղղեալ. եւ ճոխացեալ ձեռնհասութեամբ։

1։ Մարդս ստեղծեալ է յոյժ կենդանի բանական, ընկերական եւ քաղաքական, որպէս զի սիրով բնակեալ 'ի միասին, դիւրաւ մարթասցեն հոգալ զկարեւոր պէտս իւրեանց, եւ միաբան ծառայելով Այ յայսմ աշխարհի, արժանի լիցին վայելել զնա 'ի հանդերձեալ կեանսն։

2։ Բայց առ ընկերանալ բազմաց 'ի միասին, ամենեւին հարկաւոր էր, զի իւրաքանչիւր ոք կարասցէ յայտնել ընկերի իւրում զխորհուրդս մտաց, զյօժարութիւն կամաց, եւ զպէտս անձին իւրոյ. վասն որոյ ամենագթածն Ած տուեալ է մարդկան պայմանս գործիս կամ միջոցս, որով կարող են յայտնել իւրեանց զխորհուրդս եւ զյօժարութիւն իւրեանց։

3։ Այսպիսի գործիք յայտնելոյ այլոց զմիտս մեր՝ են երկու. այսինքն. շարժումն եւ բարբառ. կամ որ նոյն է յայտնելն այլոց զմիտս մեր կարէ լինել կրկնակի. նախ՝ զանազան շարժմամբ ձեռաց, աչաց, կամ այլոց անդամոց. որպէս առնեն համրք. որք այսպէս եւ այնպէս շարժելով զձեռս եւ զայլ անդամս, իմացուցանեն այլոց զկամս իւրեանց։ Երկրորդ՝ հնչմամբ ձայնի, յորժամ զկանոնաւոր բառս ասելով եւ արտաբերելով լեզուաւ, իմացուցանեմք այլոց զկամս մեր, եւ այս եղանակ յայտնելոյ յա-

տուկ բառիւ կոչի, Խօսակցութիւն։ (կոչի ևս խօսք, զըրոյց բան, բարբառ, ասացուած և այլն,)

4։ Խօսակցութիւն կամ խօսիլն կարէ լինել կրկին եղանակաւ։ Նախ՝ յորժամ ընդ կենդանի առաջիկայ մարդոյ լսելի ձայնիւ խօսիմք, և այս կոչի Յայտնաբար խօսակցութիւն, երկրորդ՝ յորժամ կամիմք հեռաւոր կամ ապագայ անձանց ծանուցանել զմիտս մեր, որոց վասն գրով և թղթով խօսիմք ընդ նոսա, և այս կոչի, Գրաւոր խօսակցութիւն։

5։ Յայտնի է կարես իմանալ՝ թէ զինչ է խօսակցութիւն մարդոյ, այսինքն թէ,, է արտայայտութիւն դատողութեանց մտաց 'ի ձեռն կանոնաւոր բառից,, այն է, զներքին ծածուկ խորհուրդս և զդատողութիւն մտաց՝ արտաքուստ յայտնել և հաղորդել այլոց, ոչ շարժմամբք և նշանօք, այլ արտասանութեամբ կանոնաւ հնչեալ բառից. կարգել յայն փոխման, զի լսողք նախ իմացեն զխօսակցութիւն մեր, և միջնորդութեամբ բառից իմացեն ապա զխորհուրդս կամ զդատողութիւնս մտաց մերոց։

6։ Խօսակցութիւն լեզուիս մերոյ ըստ ուղղութեան նիւթոյն բաժանի 'ի գեղջկական և 'ի գիտնական։ Գեղջկական՝ կամ ռամկական խօսակցութիւն կոչի այն՝ զոր անդրագէտ և ռամիկ անձինք վարեն 'ի հասարակ կենակցութեան 'ի քաղաքս և 'ի գիւղս, և է բազմապատիկ՝ ըստ զանազան գաւառաց և Տէրութեանց. յորս ցրուեալ կայ ազգն մեր։ Իսկ գիտնական, կամ գրաբառ խօսակցութիւն է այն, զոր իմաստունք և հեղինակք գրոց վարեն առաւելապէս 'ի մատենագրութիւնս, որ և է բուն լեզու նախահայրենին մերոյ Հայկայ։

7: Իսկ ըստ տարածութեան նիւթոյն մտածեալ խօսակցութի մարդոյ բաժանի յերիս տեսակս, որք են Նախադասութի, պարբերութիւն, և Ճառ։

8: Նախադասութիւն (որ ասի և, առանձին խօսից) է համառօտ խօսակցութի բաղկացեալ երկու կամ երեք բա-ռից, որ պարունակէ զմի միայն իմաստ կամ զդա-տողութի մտաց. զօ. Ադամ մեղաւ. առաքինութիւն է սիրելի. ՚ի սկզբանէ արար ած զերկինս և զերկիր։ և այլն։

9: Պարբերութիւն է խօսակցութի բաղկացեալ յերկուց կամ յերից նախադասութեանց զմիմեանց կախելոց, և ըստ իրեարս յօդիւ և թուով շաղկապելոց. զօ. որպէս էր Յով-նան ՚ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս, նոյն-պէս եղիցի և որդի մարդոյ ՚ի սիրտ երկրի զերիս աւուրս և զերիս գիշերս։

10: Ճառն է ընդարձակ խօսակցութի բաղկացեալ ՚ի բազում պարբերութեանց՝ ըստ իրեարս կապելոց և ՚ի մի նպատակ ուղղելոց։ որպիսի են ճառք ՚ի գիրս աղօթից ներբողեանն, և առ այլ վարդապետս։

11: Յայսոսանէ իմանայ ուշիմ ընթերցողն, թէ որով հետև ճառն բաղկանայ՝ ՚ի պարբերութեանց, և պարբե-րութիւն ՚ի նախադասութեանց, ուրեմն. նախադասութիւն է հիմն և բաղադրիչ ամ ընդարձակ խօսակցութեանց, մանաւանդ թէ է նոյն իսկ էական խօսակցութի։

12: Որպէս այլ ամ գործողութիւնք, նոյնպէս և խօսակցութի մարդոյ ենթակայ կայ ըստ բազում փոփոխութ, ըստ որում ՚ի տեսս զանազան պարագայից անձանց և ժամանակաց կարէ առաւելուլ, պակասել, սպառել, խանգարել, և այլն, վասն նորին հեղինակք լեզուաց վասն գրաբառ

խօսակցութեան մերոյ սահմանեալ են օրինակս և կանոնս, որոց պարտիմք յամի հետևել, եթէ կամիմք, զի խօսակցութի մեր լիցի ուղիղ:

13: Այս կանոնք և օրինակք՝ հետ զհետէ հաւաքեալք և աւանդեալք կարգեցան 'ի ձև արուեստի, և անուն այսր արուեստի կոչեցաւ, Քերականութի:

14: Ապա յառաջեալ ցայս վայր՝ բացայայտ իմացեալ լինի նախ՝ զինչութի քերականութեն, որ սահմանի այսպէս: Քերականութին է արուեստ, որ ուսուցանէ ըզկանոնս ուղիղ յօրինելոյ զգրաբառ խօսակցութի լեզուիս մերոյ:

15: Իմացեալ լինի երկր. տարրկայն քերականութե, որ է խօսակցութի մարդոյ, մտածեալ միայն՝ ըստ որում՝ է ուղղելի ըստ կանոնաց և սկզբանց, զոր աւանդեսցէն նախնի դասագրուիս հեղինակք այսր արուեստի:

16: Կանոնք ուղղիչք խօսակցութեան մերոյ բաժանին յերկուս դասս, յորոց ոմանք ուսուցանեն յօրինել ըզզիւրիմանալի և զպարզ խօսակցութի, այսինքն զայնպիսի, զոր և թերավարժ անձինք մտադրութբ լուեալ կամ ընթերցեալ կարող են իմանալ, որպիսի են խօսակցութիք ոք աւետարանչաց, սաղմոսաց դաւթի, յայսմաւուրաց. և այլն:

Իսկ ոմանք ուսուցանեն յօրինել զդժուարիմանալի և զխրթին խօսակցութիս մթին ոճով, որ իմաստնոց միայն է իմանալի, որպիսին խօսակցութիք խորենացւոյն, օձնեցւոյն, Նարեկացւոյն:

17: Նախընթաց հեղինակք այսր արուեստի՝ սովորեցան զկրկնակի կանոնս խառն 'ի միասին առաջի

տանել իմ ուսանողաց, այլ բանն և փորձն բազմամեայ ուսոյց մեզ, թէ այդ եղանակ առնէ շփոթութիւն և մթութիւն ամենայն, մանաւանդ՝ մանկանց. որոյ տեսեալ՝ զբազմութիւն կանոնաց, օրինակաց, բացառութեանց, խոտորմանց, և այլոց բազմապատիկ ծանօթութեանց առ մի և նոյն նիւթ վերաբերելոց՝ 'ի միում վայրի խառնեալս, և չգիտելով որոշակի, թէ զո՞ր կանոն պարտին 'ի գործ դնել 'ի սկսանելն, զո՞ր՝ 'ի զարգանալն, ո՞ր իցէ հետևելի, և ո՞ր՝ գիտելի միայն, և այլն. շփոթին՝ ձանձրանան և յամի կաղացեալ գայթեն, զոր կանխաւ նշմարեալ, և տարաբաղդ վիճակի մանկանց ազգիս կարեկցեալ, ձեռն արկի զամ առիթս շփոթութեանց բառնալ, պանկուս և զառասպար կարծեցեալն՝ ըստ իմում կարի դիւրադնալի առնել, և հորդել ամենայն մուտ համարձակ յայս արուեստ, զոր ըստ յառաջադիր եղանակիս՝ բաժանեմ յերկուս գիրս։

Յառաջին գիրս, որ կոչի, Փոքր Քերականութիւն, փոյթ կալայց աւանդել զայնս միայն, որ կարևոր են 'ի յօրինել զդիւրիմանալի խօսակցութիւնս, յայտ է՝ թէ 'ի պէտս աշակերտաց ստորին դասու և նոր սկսանողաց։

Յերկրորդ գիրս, որ կոչի Մեծ Քերականութիւն, պարզեցից զվերաբերեալսն առ խրթին խօսակցութիւն, վասն զարգացելոց և աշակերտաց միջին դասու։

# ՓՈՔՐ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Որ ուսուցանէ զհնաւանդ յօրինուածս պարզ և գեղեցկացուցանէ
Գրաբառ խօսակցութեան լեզուի մերոյ:

## Նախադասութիւնք:

18: Յորևիցէ խօսակցութեան կամ 'ի նախադասութեան միշտ գտանին երկու զանազան իրք. այսինքն, նախ՝ դնին պէսպէս բառք նշանակիչք զանազան իրաց ստեղծականաց կամ արուեստականաց և նոցին պարագայից. և այսպիսի բառք կոչին, Նիւթ խօսակցութեան՝ վա զի խօսակցութիւն մարդոյ իբր բոլոր ինչ բարդական՝ բաղադրի 'ի բառից իբրու 'ի նիւթոյ ումանց:

19: Երկրորդ՝ այս զանազան բառք հիւսին և կապակցին ընդ իրեարս կանոնօք ինչ առ 'ի լինել յայտարար իմաստից և դատողութեանց մտաց մերոց, և այս հիւսուած բառից, կամ եղանակն բառահիւսութեան կոչի, Ձեւ խօսակցութեան:

Իսկ աստ զերկուս զայսոսիկ ունիմ ուսուցանել յայսմ փոքր քերականութեան, զոր և յայս սակս բաժանեմ յերկուս մասունս. յառաջին մասին խօսեցայց համառօտ զամենայն վերաբերեալսն առ նիւթն խօսակցութեան, իսկ յերկրորդ մասին զայն ամենայն, որք պահանջին առ կերպն խօսակցութեան:

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ։

# ՓՈՔՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

Յորում աւանդին նիւթն խօսակցութեան մերոյ։

## Գլուխ, Ա։

### Յաղագս բառից ընդհանրապէս։

20։ Ո՛չ բառք այլոց լեզուաց, նոյնպէս և բառք հայկոց ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ ձայնք յօդեալք և հնչեալք լեզուաւ իբր նշանք ճանաչմանց և իրաց, կամ պարագայից նոցին. այսինքն՝ այնպիսի ձայն, որ բաղադրեալ և հնչեցեալ լինի մարդկային լեզուաւ, միանգամայն և լինի նշան ճանաչմանց մտաց, և միջնորդութեամբ ճանաչմանց՝ յայտնող իրաց, կամ պարագայից նոցին։ Օ՛ր. բառս Քար, նախ՝ է ձայն ինչ կերպացեալ, այսինքն, բաղադրեալ և հնչեցեալ լեզուաւ իմով, երկրորդ՝ է նշան ինչ որոյ լսողն զառաջինն իմանայ զմիտս իմ, թէ այժմ խորհիմ ես 'ի մի՛ քարի, և ո՛չ ջրոյ կամ այլոյ իրի, և ապա իմանայ զիրն զայն ստեղծեալ յԱյ, զոր ոմն ոք ճանաչէ։ Ապա յայտնապէս երեւի, թէ առ իսկութեան բառից երկու ինչ խնդրի. այսինքն, նախ՝ զի իցէ ձայն կազմեալ և բաղադրեալ. Եւ երկրորդ՝ զի իցէ ձայն նշանակող, զորոց հարկ է խօսիլ աստանօր յերկուս յօդուածս։

## Յօդ. ա:

### Յաղագս հաղորդութեան բառից:

21: Բառն կազմի և բաղադրի կա՛մ ՚ի տառից միայն, զօ. այգ. աղգ. բանտ. բոց. գայլ. գին. դաս. երգ. զէն. ըստ. թագ. մեծ. սէր. և այլն: կամ ՚ի տառից և ՚ի վանկից միանգամայն. զօ. բարի. սիրել. մեծուն. և այլն: վ՛ռկ մասունք կամ բաղադրիչք բառից լինին երկու. այսինքն. տառք. և վանկք:

22: Արդ՝ տառն է ձայն կամ հնչումն ինչ պարզ. ելեալ ՚ի բերանոյ մարդոյ, բայց յօդելի և կապելի ընդ այլում ձայնի, որպէս են ձայնքս. ա՛. է. ի. ղա՛. թո. սէ. քէ. և այլն:

Այսպիսի ձայնք՝ յորժամ հնչեն բերանով մարդոյ և լսելի լինին ականջաց. կոչին. Տառ: Իսկ յորժամ ՚ի վր թղթոյ, քարի կամ ՚ի վր այլ նիւթոյ գծեալ ձեւանան, և աչօք տեսանելի լինին կոչին, Գ.Ի.Ր. ուստի գիրն կոչի նշան և երևեցուցիչ տառի կամ ձայնի:

23: Տառք. (այսինքն ձայնք կամ հնչմունք). և Գիրք. (այսինքն նշանք այնպիսի ձայնից), այժմ ՚ի լեզուի մերում, համարին երեսուն և ինն, որ են սոքին:

| Թիւ | Անուանք գրոց հայոց | Գիրք կամ տառք. կերպ. կամ ձեւ. կամ նշանք ձայնից | | | Թիւ | Անուանք գրոց հայոց | Գիրք կամ տառք. կերպ. կամ ձեւ. կամ նշանք ձայնից | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Բոլոր գիր | Նօտր գիր | Երկաթագիր | | | Բոլոր գիր | Նօտր գիր | Երկաթագիր |
| 1. | այբ. | ա. | ա. | Ա. | 21, | յի. | յ. | յ. | Յ. |
| 2. | բեն. | բ. | բ. | Բ. | 22 | նու. | ն. | ն. | Ն. |
| 3. | գիմ. | գ. | գ. | Գ. | 23. | շա. | շ. | շ. | Շ. |
| 4. | դա. | դ. | դ. | Դ. | 24. | ուո. | ո. | ո. | Ո. |
| 5. | եչ. | ե. | ե. | Ե. | 25. | չա. | չ. | չ. | Չ. |
| 6. | զա. | զ. | զ. | Զ. | 26. | պէ. | պ. | պ. | Պ. |
| 7. | է. | է. | է. | Է. | 27. | ջէ. | ջ. | ջ. | Ջ. |
| 8. | ըթ. | ը. | ը. | Ը. | 28. | ռա, | ռ. | ռ. | Ռ. |
| 9. | թո. | թ. | թ. | Թ. | 29. | սէ. | ս. | ս. | Ս. |
| 10. | ժէ. | ժ. | ժ. | Ժ. | 30. | վեվ. | վ, | վ. | Վ. |
| 11. | ինի. | ի. | ի. | Ի. | 31. | տիւն, | տ. | տ. | Տ. |
| 12. | լիւն. | լ. | լ. | Լ. | 32, | րէ. | ր. | ր. | Ր. |
| 13. | խէ. | խ. | խ. | Խ. | 33. | ցո. | ց. | ց. | Ց. |
| 14. | ծա. | ծ. | ծ. | Ծ. | 34. | ւիւն | ւ. | ւ. | Ւ. |
| 15. | կեն. | կ. | կ. | Կ. | 35. | փիւր, | փ. | փ. | Փ. |
| 16. | հո. | հ. | հ. | Հ. | 36. | քէ. | ք. | ք. | Ք. |
| 17. | ձա. | ձ. | ձ. | Ձ. | 37, | եւ. | և. | և. | |
| 18. | ղատ. | ղ. | ղ. | Ղ. | 38. | օ. | օ. | օ. | Օ. |
| 19. | ճէ. | ճ. | ճ. | Ճ. | 39. | ֆէ. | ֆ. | ֆ. | Ֆ, |
| 20. | մեն. | մ. | մ. | Մ. | | | | | |

24: Տառք կամ հնչմունք բաժանին յերկուս. այն է՝ ՚ի պարզ, և ՚ի բաղադրեալ: Պարզ հնչումն է, որ ինքնին միայնակ՝ առանց բաղադրելոյ ընդ այլում, ելուզանէ ըղ-ձայն, վոյ և կոչի, ֆօնիէնտա տառ. և են ութ տառքն: ա. ե. է. ը. ի. ո. ւ. օ:

Իսկ բաղադրեալն է այն, որ ոչ միայնակ, այլ կցելով և բաղադրելով ընդ ձայնաւորի տայ զհնչումն, ոյք են միայնեալ տառք. որք կոչին դիփթոնգոյ. զի միանալով ընդ ձայնաւորայ հնչեն զձայն. այսպէս:

ա.— ղա. գա. ծա. ձա. գաս. չա. ռա:

ե.— բեն. կեն. մեն. վեվ. եւ:

է.— ժէ. խէ. ճէ. պէ. ջէ. սէ. րէ. քէ. ֆէ:

ի.— գիմ. յի:

ո.— թո. հո. ցո:

ւ.— լիւն. տիւն. փիւր:

Իսկ ընդ երկուց ձայնաւորայս, ը. օ. ոչ կապին բաղաձայնք: ով և գիրն, ն, ոչ ընդ պարզ ձայնաւորի այլ ընդ երկձայնիս, ու. կապելով հնչէ. նու:

25: Վանկ կոչի այնպիսի ձայն, որ միով հնչմամբ, բայց բաղադրութ ձայնաւոր և բաղաձայն տառից, ելանէ ՚ի բերանոյ մարդոյ, և լինի մասն բանից. զօ. մա: կայկ: ձե: ղուն: և այլն: յորմէ իմանի, թէ առ խոկումն վանկի երկու ինչ պահանջի. նախ՝ զի իցէ մի հնչումն կամ մի ձայն: և երկրդ՝ զի իցէ բաղադրեալ ձայն, և ոչ պարզ: Ըստ առաջնոյն՝ վանկն կարէ ունել զմի հնչումն, թէ ունիցի զմի ձայնաւոր տառ. զօ. աղ. օդ. մի. ոչ. և այլն. և թէ ունիցի զերկուս ձայնաւորս, բայց միով ձայնիւ հնչեալս. զօ. ձիւն. տուն, եօթն. գոյն. իւղ. քաւ, գործեա. և այլն: այսպիսի վանկք կոչին դիփթոնգք, կամ.

էրէչյոյն: Սակաւ ուրեք գտանին վանկք յերից ձայնաւորաց բաղկացեալ, որ կոչին եռաբարբառ. զօ. շի՛ն՝ուած. տեղ՝ եաւ. թեթեւութի, և այլն:

Բառ երկրորդ՝ վանկն կարէ բաղադրիլ կամ յերկուց տառից. զօ. աղ. օդ. ոչ: և այլն: կա՛մ՝ յերից. զօ. հաց. սէր. մեծ. և այլն. կամ ՚ի չորից, զօ. գործ. փոքր. սիրտ: կամ ՚ի հնգից. զօ. ջուր. բուստ. զուսպ. սոյնք. և այլն: և կամ ՚ի վեցից. զօ. թուրմք. ջուրբք. սեամբք. և այլն:

26: ՚Ի տառից կամ ՚ի վանկից աստի, ուր վերագոյն ասացաք, բաղադրին բառք, որոց չէք որոշել սահման, թէ քանի՞ տառս, կամ վանկս պարտին ունել. կի ա̅ տառիւն թուելով, գտանի բառ միով տառիւ. զօ. Է. ա̅ էակ, գոյացեալ էր: կամ երկու տառիւք բաղկացեալ. զօ. աղ. օդ. և այլն. կամ երեք տառիւք. զօ. հաց. սէր. և այլն: և այսպէս յաջորդաբար գնալով, գտանի բառ քսանեւերկու տառիւք բաղադրեալ, որպէս է բառս, անապականադաւանութեամբք: Նոյնպէս ա̅ վանկիւն թուելով, գտանի բառ միավանկ: զօ. գող. թոյն. սով: և այլն: երկավանկ. զօ տարի. աշուն. բարի. և այլն: եռավանկ. զօ. բարեսէր. չարագործ. և այլն: քառավանկ. զօ. եղբայրասեաց, սիրելութի. և այլն: հնգավանկ. զօ. բարեսիրութիւն, մեծապատուել. և այլն: վեցավանկ. զօ. մեծամեծացուել. և այլն: եօթնավանկ. զօ. յաւիտենականութիւն. մեծաչարչարութիւն. և այլն: ութավանկ. զօ. անապատաբնակուել. և այլն: ինն՝ավանկ. զօ. անապականադաւանուել. և այլն: տասնավանկ. զօ. անապականադաւանութէ, և այլն:

## Յօդուած. Բ:

### Յաղագս նշանակութեանց բառից:

27: Բառքն սահմանեալ են 'ի նախնեաց, զի լիցին նշան կամ երեւոյթից ստեղծելոց կամ յօրինելոց իրաց, եւ գործողութեանց նոցին: որպէս Բառքս, աստղ. քար. ջուր. ծառ. եւ այլն: Թէ գրեալ եւ թէ լեզուաւ հնչեալ, են նշանք Աստուծոյ ստեղծելոց իրաց: Բառքս, տուն, աթոռ, հաց, նաւ, եւ այլն: են նշանք 'ի մարդկանէ յօրինելոց իրաց: Իսկ բառքս, բարի, չար, մեծ, սեաւ, ուտել, ննջել, աստանօր, յաղագս, եւ այլն, են նշանք, կամ նշանակեն զորպիսութիւն իրաց:

28: Բովանդակ բառք լեզուիս հայոց ըստ նշանակութեան նոյին քննելով, բաժանին յութն դաս կամ 'ի տեսակս, զորս հեղինակք զանազան կոչմամբ իմացուցանեն, քան զի զառաջին տեսակ բառից կոչեն, Անուն: զերկրորդ տեսակն կոչեն, Դերանուն: զերրորդ տեսակն կոչեն, Բայ: զչորրորդն կոչեն, Ընդունելութիւն: զհինգերորդն, Նախադրութիւն: զվեցերորդն, Մակբայ: զեօթներորդն, Շաղկապ: իսկ զութերորդն, Միջարկութիւն: Եւ այսոք կոչմունք ութ տեսակ բառից են սոքին. 1. Անուն: 2. Դերանուն: 3. Բայ: 4. Ընդունելութիւն: 5. Նախադրութիւն: 6. Մակբայ: 7. Շաղկապ: եւ 8. Միջարկութիւն: Այժմ առաջիկայ խօսել զիւրաքանչիւրոց նոյին առանձինն, բայց համառօտ, այն, որ չափ հարկաւոր է 'ի յօրինել զպարզ խօսակցութիւն լեզուի գրոց, զդժուարինսն եւ զմանուածոյսն պահելով առանձնել 'ի մեծ քերականութեան:

# ԳԼՈՒԽ Բ։

## Յաղագս անուանց։

29։ Անունն է այնպիսի բառ, որ ցուցանէ զի՞նչ լինելն, կամ զորպիսի լինելն առեղծեալ և յօրինեալ իրաց, որպէս բառքս, մարդ, ձի, քար, լոյս, օդ, և այլն, կոչին անունք, զի նշանակեն զգոյութիւն կամ զգոյն լինելոյ առեղծեալ իրաց։ Նոյնպէս բառքս, տուն, հաց, կօշիկ, թուղթ, և այլն, ցուցանեն զինչութիւն ՚ի մարդկանէ յօրինեալ իրաց։ Իսկ բառքս, բարի, մեծ, գեղեցիկ, երկայն, սպիտակ, և այլն։ Նշանակեն զորպիսութիւն կամ զորքանութիւն առեղծեալ կամ յօրինեալ իրաց։

Այսպիսի բառք, այսինքն, անուանք, զանազանին ՚ի միմեանց և յայլ և յայլ դասս որոշին ՚ի պատճառս այլ և այլ որպիսութեան իւրեանց. և այս որպիսութիւնք կոչին, պարագայք անուանց, և են եօթն, այս, 1. Որակ. 2. Սեռ. 3. Ձև. 4. Տեսակ, 5. Թիւ. 6. Հոլով. և 7. Հոլովադասութիւն։

30 Որակն է առաջին պարագայ, ըստ որոյ անուանք բաժանին յերկուս դասս, այս, ՚ի գոյական և յածական։ Գոյական անունն է այնպիսի բառ, որ ցուցանէ զի՞նչ լինելն առեղծեալ կամ յօրինեալ իրաց, կամ որ նշանակէ զիրս առեղծեալս կամ զյօրինեալս, և լինի պատասխանի հարցմանս զի՞նչ է. զօ. ՚ի հարցանել իմում քեզ. թէ զի՞նչ է այս. դու պատասխանես, այս է հուր, քար, ծով, մարդ, հաց, տուն, և այլն։ Վասն այսորիկ բառք կոչին գոյականք։

31։ Գոյական անուանք բաժանին ՚ի չորս տեսակս, որք են, յատուկ, ընդհանուր, հաւաքական, և հոմաձայն։

Յատուկ անուն ասի բառն այն, որ նշանակէ զմիայն իւ-
անհատ իր մի ստեղծեալ կամ յօրինեալ. զօ. արեգակն,
լուսին, մասիս, պօղոս, մարիամ, եփրատ, նեղոս, կիւ-
րոս, յունվար, երուսաղէմ, էջմիածին, ևայլն:
Ընդհանուր կոչի բառն այն. որ պատշաճի թէ բոլոր
տեսակի իրաց ինչ, և թէ իւրաքանչիւր անհատից այնր
տեսակի: զօ. մարդ. ծաղիկ, քար, մատանի. թուղթ, ևայլն:
Հաւաքական կոչի բառն այն, որ նշանակէ զգումարեալ
միատեսակ իրս, և ոչ պատշաճի անհատից, զօ. ժողովդ.
զօրք. հօտ, երամ, գունդ, շեղջ, դէզ, կարկառ, ևայլն:
Համաձայն ասի բառն այն, որ միով ձայնիւ նշանակէ
զիրս տեսակաւ զանազանեալս, զօ. այծ, արմաւ, գայլ,
գեղ, լար, լոյս, կէտ, հաւ, մայր, շուն, որթ, վահան,
փող, օդ, ևայլն:

32: Գոյականք ըստ այլ իմաստից բաժանին յերկուս
դասս, որք կոչին, նիւթական և մտքական: Նիւթա-
կան ասին այն անուանք, որք նշանակեն զիրս թանձրա-
ցեալս և ըստ զգայութեան անկեալս, թէ յԱյ ստեղծեալ իցեն.
զօ. քար, փայտ. ձուկն, երկինք, ծով, և թէ ՚ի մարդ-
կանէ արուեստագործեալ, զօ. զգեստ, տուն, աթոռ,
հաց, թուղթ, ևայլն: Իսկ մտքական անուն կոչին այնք, որք
նշանակեն զիրս վերացեալս և աննիւթս, որք ոչ անկա-
նին ըստ զգայութեանք, այլ միայն մտօք իմացեալ լինին: որպէս են
հաւատք, օրէնք, յոյս, սէր, պատերազմ, հրահանգ,
սուգ, ուխտ, խօսք, խորհուրդ, հնարք, ևայլն: և ըստ արմատ-
քայից. ևս և բառք՝ որք ՚ի վերջոյ ունին կցեալ զմի ՚ի
մասնկանցս. ումն. ութիւն. ուած. ումբ. ուոյ. անք, ուկ,
զօ. ելումն,—ղոչելումն, հնչելումն, ևայլն:

ութիւն.—չարութիւն. բարութիւն. գեղեցկութիւն։
ումն.—գոչումն. լալումն. դողումն։
ունդ.—ծնունդ. սերունդ. սնունդ.
ուստ.—թաքուստ. փախուստ. կորուստ։
անք.—բաղձանք. ձաղանք. աղաչանք։
ուած.—խնդրուած. հարուած։

33։ Ածական անունն է այնպիսի բառ, որ նշանակէ զո՛րպիսի լինելն ստեղծեալ կամ յօրինեալ իրաց, կամ որ լինի պատասխանի հարցմանս, ո՞րպիսի է, զօ. ՚ի հարցանել իմում քեզ՝ թէ ո՞րպիսի մարդ է. դու պատասխանես, է գիտուն. բարի. չար. աղքատ. մոլի. եւայլն։ կամ ՚ի հարցանելդ, ո՞րպիսի հաց է. դու ասես, սպիտակ. սեաւ, քաղցր. մեծ. դառն. եւայլն։ Եւ ահա այսպիսի բառք կոչին ածական։

34։ Ածական անուանք բաժանին ՚ի պարզ, ՚ի բարդ եւ ՚ի յարաբարդ, զորոց տես ստորեւ ՚ի ձեւս անուանց. Պարզ ածականք դարձեալ բաժանին յերկուս տեսակս, այս ՚ի դրական եւ ՚ի բաղդատական. Դրականն է, որ առանց բաղդատութեան պարզապէս զորպիսութիւն իրաց նշանակէ. զօ. մեծ. փոքր. բարի. չար. լայն. եւայլն։
Բաղդատականն ածականն է, որ ՚ի վերջոյ կցեալ ունի դանանշան մասնիկս, գոյն. զօ. մեծագոյն. բարեգոյն. լայնագոյն. եւայլն։

35։ Ընդ ածական անուանս դասին եւ սակաւ բառք որք կոչին. թուականք, կամ լատինս, նումերալիա. զի զքանակութիւն կամ զթիւս եւ զորչափութիւն իրաց նշանակեն, եւ բաժանին ՚ի հինգ տեսակս, որք են, մասնական, համրական, հարցական, վերբերական, եւ թուական։

ա։ Ասանական ածականք են սոքին։ Ունիւր․ իւ-
րաքանչիւր․ իմն․ ինչ․ իւրաքանչիւր․ ի․ք․ միւս․ ումն․ ո․ք։
բ։ Հանրական ածականք են սոքին։ ամէն․ ամենայն․ ամենեքեան․ ամենեքին․ ընաւ․ բոլոր․ բոլորեքեան․ բոլորեքին․ ողջոյն․ ամենին։
գ։ Հարցականք են սոքին։ զ_ի՞նչպիսի․ ի՞նչ․ ո՞․ ո՞վ․ ո՞ր․ ո՞րչափ․ ո՞րպիսի․ ո՞րքան․ քանի՞։
դ։ Վերբերական ածականք են սոքին։ այսպիսի․ այդպիսի․ այնպիսի․ սոյնպիսի․ դոյնպիսի․ նոյնպիսի․ որպիսի։ այսչափ․ այդչափ․ այնչափ․ սոյնչափ․ դոյնչափ․ նոյնչափ․ որչափ։ այսքան․ այդքան․ այնքան․ սոյնքան․ դոյնքան․ նոյնքան․ որքան․ որ։
ե։ Թուական անուանք բաժանին ՚ի հինգ տեսակս․ առաջին բացարձակք։ զօ․ մի․ երկու․ երեք․ տասն․ հարիւր․ հազար․ բիւր․ ևայլն։ երկրդ՝ դասականք, որ ՚ի վերջոյ ունին զմասնիկս, րորդ․ զօ․ առաջնորդ․ երկրորդ․ երրորդ․ տասներորդ․ ևայլն։ 3․ գաւառականք, որք ՚ի վերջոյ կցեալ ունին զմասնիկս․ ակ․ եակ․ զօ․ միակ․ երկեակ․ քառեակ․ տասնեակ․ ևայլն։ 4․ բաշխողական․ որք կազմին մասնկամբս, -եան կամ -ին։ զօ․ երկոքեան․ երկոքին․ երեքեան․ հնգեքեան․ տասնեքին․ քսանեքին։
5։ կրկնական, որք ՚ի վերջոյ ունին զմասնիկս պատիկ, կամ՝ կին․ զօ․ քառապատիկ․ հնգապատիկ․ տասնապատիկ․ նախկին․ կրկին․ երեքկին․ ևայլն։

36։ Սոյն է երկրորդ պարագայ, որով գոյական անուանք ըստ նշանակութեն բաժանին ՚ի չորս տեսակս, որք կոչին․ արական․ իգական․ հասարակ․ և չէզոք։
Արական կոչի անունն այն, որոյ նշանակեալ իրն է կենդանի արու․ զօ․ Մովսէս․ Պետրոս․ հայր․ եղբայր․ փեսայ․ Թագաւոր․ ցուլ․ եզն․ խոյ․ աքաղաղ։

Իգական կոչի անունն, որ նշանակէ զէգ կենդանի. զօ՛. մարիամ. աննա. մայր. քոյր. հարսն. տիկին. կով. եղն. եւայլն: Հասարակ կոչի անունն, որ պատշաճի թէ արուի և թէ իգի. զօ՛. մարդ. զաւակ. թոռն. թռչուն. ոչխար. աղաւնի. ձագ. եւայլն: Չէզոք կոչի անունն այն, որոյ նշանակեալն է անկենդան և չունի զարու զամ՛ զէգ. զօ՛. հող. ջուր. ծառ. հաց. տուն. կոշիկ. եւայլն:

9312

37: Ձևն է երրորդ պարագայ. ը՟ որոյ անուանք վասն նշանակելոյն ը՟ իմաստին զմի կամ զբազում այլաձևաւ իւր, բաժանին յերիս դասս. պարզ. բարդ. և յարաբարդ. Պարզ կոչի անունն այն, որ միով ձայնիւ զմիատեսակ իր նշանակէ. զօ՛. հոգի. սով. ոք. բարի. մեծ. եւայլն: Բարդ անունն է որ միով բառիւ զերկուս իրս նշանակէ. զօ՛. հոգեսէր. սովամահ. սրբալոյս. բարեմիտ. ամենատէր. ամենամեծ. բոլորապտուղ. համայնաջինջ. եւայլն: Յարաբարդ կոչի այնպիսի անունն, որ միով բառիւ զերիս իրս նշանակէ. զօ՛. այլայլախառն. անձնապահապետ. անաչառասփիւռ. անընդդէմ. արծաթափոխատու. բոցակնադոյն. չարախօսավատ. բարեհամբոյր. երեքփառատրեան. վեշտասանամեայ. ծաղկայօրինուածակ:

38: Տեսակն է չորրորդ պարագայ, որով անուանք վասն ունելոյ կամ չունելոյ զանուշան մասնիկս, բաժանին յերիս դասս, որ կոչին, նախատիպ, բաղադրեալ, ածանցեալ: Նախատիպ ասի անունն այն, որ յառաջոյ կամ 'ի վերջոյ չունի կցեալ զանուշան մասնիկ. զօ՛. լոյս. մահ. գործ. փառք. եւայլն: Բաղադրեալ կոչի անունն, որ յառաջոյ կցեալ ունի զմին յանուշան մասնկացս. ա. ան. ամ. ապ. առ. արտ. դժ. դ. ըն. ըմ. չ. տ. տժ: եւայլն: զօ՛. ակամայ. ամբաւ. անգործ. ապուշ. առձեռն. արտաքսլ. դժգոյն. դայբոյց. ընձիւղ. ըմբոստ. չգոյ. տկար. տժգոյն. եւայլն:

Ծանուցեալ կոչի անունն այն, որ ՚ի վերջոյ անձին կայ և զծ յանուշան մասնկանց.

ած. ալ. այլն. ան. ատ. գրն. եալ. եայ. եան. եղ. եղէն. եմն. եցու. ի. իկ. ին. իչ. ինն. ոլ. ոտ. ունի. ոց. ող. ոտ. ոտի. ուլ. ուց:

Ած.—կատարած, աղօրած, ալարած, և այլն:

ալ.—ազգալ, դխալ, հատալ, և այլն,

այլն.—մարդկայլն, երկնայլն, հրայլն, և այլն:

ան.—գերան, կուսան, պատուհան, և այլն:

ատ.—Հրատ, ծայրատ, ամփոփատ, և այլն:

գրն.—յաւարքն, ազօթարքն, և այլն:

եալ—մաշկեալ, վերծեալ, աղբեալ:

եայ—թխատանեայ, միօրեայ, քարկոչեայ:

եան—ղղձեան, քառանկիւնեան, նկարկեան:

եղ.—փորեղ, ահեղ, Հանճարեղ:

եղէն.—քարեղէն, լուսեղէն:

եմն.—մեծուին, չարուին, սիրելուին:

եցու.—ախտամէցու, երկիւղամէցու, խնդամէցու:

ի.—երկաթի, ծառայի, այլի:

իկ.—դաշճիկ, մարտիկ, խաղալիկ:

ին.—լուսին, մարդկային, խորին, աւագին:

իչ.—Հալածիչ, բնակիչ, Հզօրիչ:

ինն.—դրչին, լալին, Հնչին:

ոլ.—բերկրալի, գովելի, ցաւալի:

ունի.—Հոգեկան, օրինական, բնական:

ոտ.—Հայրենի, Երզուանի:

ոց.—Հիւրանոց, Համբարանոց:

ող.—աջող, ձախող, սիրող, ներող:

ոտ.—լուսկածոտ, նախանձոտ, ձիթոտ:

ոտի:—մեռելոտի, գազանոտի: Հնոտի

որդ։ — կրտսորդ, առաջնորդ, աւելորդ:
ոց — սրոց, հօտոց, ծածկոց, ձմերոց:
ու. — մօրու, ալեւրու, աղքու:
ուած — շինուած, հարուած, խնդրուած:
ուկ — գեղձուկ, ժլատուկ, երկեղուկ:
ումն — քաղխումն, հնչումն:
ունդ — սնունդ, ծնունդ:
ունիք — արդարունիք, ծերունիք, ակերունիք:
ուշ — անուշ, փայլուշ:
ուստ — ապրուստ, փախուստ, կորուստ, թաքուստ:
ցի — խորհեցի, գիւղացի, գետացի: եւայլն:

39: Թիւն է հնգերորդ պարագայ ըստ որոյ անուանք մի նշանակելոյն ձայնիւ զմի կամ զբազում նոյնատեսակ իրս, բաժանին յերկուս՝ ՚ի յեզակի, և ՚ի յոգնակի: Եզակի կոչի անունն, որ ըստ ձայնին նշանակէ զմի իր միայն, կամ զմին ՚ի բազում նոյնատեսակ իրաց զօ՛, յովհաննէս, մարդ, հայր, ժողովուրդ եւայլն: Յոգնակի կոչի անունն այն, որ զօրութ վերջաւորութեան զբազում նոյնատեսակ իրս նշանակէ, զօ՛. մարդիկ. քաղաքներ. հայեր. լերինք. եւայլն: Ծանօթ: ՚Ի լեզուի մերում գտանին այնպիսի բառք, որ միշտ եզակի վարին, և չունին զյոգնակին, այդ և կոչին անյոգնական անուանք. որպիսի են սոքին. ամօթ, երկիւղ, լոյս, խաւար հանգիստ, ձէթ, մեղր, պատիւ, սէր, փափկանն, քուն, եւայլն: Գտան եւս այնպիսի բառք, որ միշտ յոգնակի վարին, և ոչ եզակի. այդ և կոչին, անեզական անուանք. որպիսի են սոքին. անձինք, առօրէք, բարք, դժոխք. երեսք, խելք, ծախք կեանք, շնորհք, վէրք, ցոյցք, փառք, օրէնք, եւայլն:

40: Հոլովն է վեցերորդ պարագայ, որ ցուցանէ զփոփոխումն թէ՛ կազմութ և թէ նշանակութ մի և նոյն բառին, և վա զի այսպիսի փոփոխութիք լինին իմն կեր-

պէս յեզական թւոյն, և նոյնչափ 'ի յոգնականին, առ 'ի դիւրաւ որոշել 'ի միմեանց, հնարեալ են 'ի նախնեաց զանազան կոչմունք փոփոխմանց և փոփոխել անուանց, որք ենին այսոքիկ. 1. Ուղղական: 2. Սեռական: 3. Գործիական 4. Պարառական: 5. Հայցական: 6. Բացառական: 7. Պատմական: 8. Տրական: և 9. Ներգոյական:

Զայսոսիկ լինն փոփոխմունս ցուցցուք օրինակի աղագաւ 'ի վր միոյ, բառիս, այսպէս:

| | | |
|---|---|---|
| 1. Ուղղական . . | փեսայ . . | փեսայք. |
| 2. Սեռական . . | փեսայի . . | փեսայից. |
| 3. Գործիական . . | փեսայիւ . | փեսայիւք. |
| 4. Պարառական . . | զփեսայիւ . | զփեսայիւք. |
| 5. Հայցական . . | զփեսայ . . | զփեսայս. |
| 6. Բացառական . . | 'ի փեսայէ . . | 'ի փեսայից. |
| 7. Պատմական . . | զփեսայէ . . | զփեսայից. |
| 8. Տրական . . . | 'ի փեսայ . . | առ փեսայս. |
| | փեսայի . . | փեսայից. |
| 9. Ներգոյական . . | 'ի փեսայի . . | 'ի փեսայս: |

ուր տեսանես, զի մի և նոյն, փեսայ անունս լինն կերպիւ փոխեցաւ յեզականին, և նոյնչափ 'ի յոգնականին, և ահա այսպիսի փոփոխմունք ձայնի և նշանակութ մի և նոյն բառին, կոչին, հոլովք:

41: Ընկատմամբ այսպիսի փոփոխման և հոլովման. բովանդակ անուանք լեզուիս մերոյ բաժանին յերկուս տեսակս, որ կոչին, կանոնաւորք և պակասաւորք:

Կանոնաւոր կոչին այն անուանք, որք կարեն ըստ այսմ լինն կերպի փոփոխել թէ յեզակին, և թէ 'ի յոգնակին:

Իսկ պակասաւոր կոչին, այնք՝ որք ոչ կարեն փոփոխել ըստ ասացեալ օրինակիդ, այլ պակասին կամ 'ի թւոյն, կամ

'ի հոլովս, և այսպիսի անուանք բաժանին 'ի չորս կարգս:

42: Յառաջին կարգի են այնպիսի անուանք, որք միայն եզակի թուով հոլովին, և չունին յոգնակի, որպէս են յատուկ անուանք, և անյոգնակի բառք (տես 39:) Յերկրորդ կարգի են անուանք, որք միայն յոգնակի թուով հոլովին և ոչ եզակի, որպէս են անեզական բառք. (39:) Յերրորդ կարգի դնին այնպիսի բառք, որ միայն յառաջոյ կողմանէ կարեն փոփոխել, և ոչ 'ի վերջոյ, որէ ասել, թէ կարեն ունել միայն զուղղականն, զհայցականն, և զնախդրիւ սեռականն. և ոչ զայլ հոլովս, և կոչին ոչ բնահոլով կամ նախդրիւ հոլովելի, և այսպիսի բառք, բազում են յոյժ 'ի լեզուի մերում, մանաւանդ յածականաց, որպիսի են այս սակաւք. ազդու. ախտաբեր. անցնիւր, բնաւին, բքալից, պաշամեծար, դժոխըմբեր, երգեցիկ, զուսպ, թերալից, և այլ բազումք: 'Ի չորրորդ կարգի են սակաւ բառք, որք թէպէտ կարեն փոփոխիլ յառաջոյ և 'ի վերջոյ, սակայն չունին զասացեալսն փոփոխմունս, որպէս են բառքս. երեկոյ. միջօրոյ. որք չունին զուղղականս բառս, իմն, որ չունի զսեռական և ըզգործիականս բառս, ոչ. որ չունի զգործիական հոլովն:

43: Հոլովադասութիւն է եօթներորդ պարագայ, ըստ որոյ հոլովելի անուանք դասաւորին յայլ և այլ պատկերս 'ի սակս զանազան վերջաւորութեանց սեռականի և գործիականի հոլովոցն. այսպէս՝ զի թէ հարիւր բառք ունիցին զմիօրինակ վերջաւորութիւն սեռականաց և գործիականաց, տարբեր յայլոց կացուցանեն զառանձին պատկեր հոլովադասութեան, և այլ հարիւր բառք ունելով զայլ վերջաւորութիւն սեռականաց և գործիականաց, կացուցանեն զայլ պատկեր, և այնպէս որքան լինին տարբերել վեր-

ջաւորութիւնք սեռականաց և գործիականաց, այնքան լինին և պատկերք հոլովադասութեանց:

44: Ինձ 'ի գործումս բարւոք թուեցաւ՝ զամենայն անուանս մեր բաժանել յինն պատկերս, ըստ իննեակ գլխաւոր վերջաւորութեանց սեռականաց և գործիականաց, զանց արարեալ զանօգուտ բաժանմամբք ոմանց: Յայսմ վայրի դնեմ զաղիւսակ վերջաւորութեանց ըստ սեռական, գործիական, և բացառական հոլովոց. ըստ եզականին և ըստ յոգնականին. և ապա կարգեմ զպատկեր հոլովադասութեանց ինունց:

## Աղիւսակ վերջաւորութեանց:

| | Եզականք. | | | Յոգնականք. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ուղղա-կան. | գործիա-կան. | բացառ-ական. | ուղղա-կան. | գործիա-կան. | բացա-ռա-կան. |
| Արքայ. | ի. | իւ. | է. |ից. | իւք. | ից. |
| Բաժակ. | ի. | աւ. | է. | աց. | աւք.օք | աց. |
| Գող. | ոյ. | ով. | ոյ, | ոց. | ովք.<br>եաւք. | ոց. |
| Դրացի. | ւոյ. | եաւ. | ւոյ. | ւաց. | եօք. | եաց. |
| Եղէգն. | ան. | ամբ. | նէ. | անց. | ամբք. | անց. |
| Զգեստ. | ու. | ու. | է. | ուց. | ուք. | ուց. |
| Եղջիւր. | եր. | երբ.<br>երաւ. | րէ. | րց.<br>րեց. | երբք.<br>երաւք | երց.<br>րեց. |
| Հայր. | օր | արբ. | րէ. | արց. | արբք. | արց. |
| Բէլ. | այ.<br>եայ | աւ.<br>եաւ. | այ.<br>եայ. | | | |

45: Վասն յետոյ պատկերաց հոլովմանց գիտելի է, նախ՝ զի 'ի նորոց իւրաքանչիւր պատկերի դնեմք զանուանս նմանօրինակ հոլովիցս, ըստ նախածանօթ կարգի դասաւորելոյ զայս, ըստ նախ՝ զզգայականս, երկր. զյատուկ անուանս. երրդ. զածականս ըստ տեսակաց նոցին. ապա զանեզականս, զանյողնականս ևայլն. զի այս ոչ սակաւ նպաստէ մանկանց 'ի ճանաչել և յորոշել ըզպէսպէս տեսակս անուանց ըստ հոլովոց նոցին:

46: Երկրորդ՝ ձևանալն վերջաւորութեանց ուղղականի, գործականի, և այլոց հոլովոց, անկանոն է ամենևին, զի գրեթէ իւրաքանչիւր բառ ունի իւր յատուկ եղանակ փոփոխելոյ ըստ տառից և ըստ վանկիցն, և սակաւ են բառք որք միօրինակ փոխին 'ի հոլովելն, մինչ և չէ հնար սահմանել պէտս ինչ որոշակի վասն այսր: Շատ լիցի աստանօր ծանուցանել, թէ երեք են գլխաւոր եղանակք՝ յոր վերածին փոփոխմունք հոլովման անուանց, եթէ զի ոմանք 'ի բառից անփոփոխ պահեն զուղղականն, 'ի մի այնր տառս ինչ յաւելուն 'ի վերջուստ 'ի ուղղականն և յայլ հոլովս, որպ տեսանես առորև 'ի բառսդ՝ [illegible] ջաջանկ. և յայլս Է. պատկերօք եդեալս: Ոմանք զվերջին ձայնաւոր տառն կամ զվանկն արտաքսեն, և ոչ նոր յաւելուն. զօ″ խուղ. խղի: հրեայ. հրէի. ևայլն: Ոմանք զվերջին ձայնաւորն փոխարկեն յայլ ձայնաւոր. զօ″. տէգ. տիգի: բոյթ. բութի: թիւ. թուոյ: ևայլն:

47: Երրորդ՝ զփոխելն անուանց յառաջոյ կողմանէ, այսինքն խմ. զի պարառականն կազմի յաւելլով 'ի մի գործականին զտառդ ը. թէ յեզակին և թէ 'ի յոգնակին զօ″. արքայիւ, զարքայիւ, զարքայիւք. ևայլն:

Հայցականն կազմի յաւելլով յուղղականն զնոյն տառդ. զ. զօ″. արքայ—զարքայ: արքայք—զարքայս. ևայլն:

Ուր ով տեսանի. 'ի յոգնականն՝ վերջին, ա. տառն ուղղականին փոխի միշտ 'ի ս, 'ի հայցականն:

Բացառականն յաւելու զտառս 'ն, առ'ն, երբ բառն սկսանի բաղաձայնիւ. զօր. 'ի բաժակէ. առ'ի քէն. եւայլն: Այլ եթէ բառն սկսանի ձայնաւորաւ. յայնժամ զ'ն եւ յ, եւ առկաւ ուրեք. 'է յ. զօր. յարքայէ. 'է յերկնից. եւ այլն:

Պատմականն անփոփոխ պահէ զվերջաւորութիւն բացառականին յառաջոյ յաւելու միշտ զտառս. ը. զօր. զարքայէ. զբաժակէ:

Տրականն հոլովն կրկնակի ձեւանայ առ մեզ, այս, վերջահոլով. եւ սկզբնահոլով, (զոր նախնեաց, Դորբեքեր- քերականք, ասացին:) Վերջահոլովն զի եթէ միշտ նոյն է ընդ սեռականին յանուանս, թէպէտ 'ի դերանունս եւ 'ի սակաւ անուանս ունի զզատուկ վերջաւորութիւն: Իսկ սկզբնահոլովն տրականն յառաջոյ բառին յաւելու զմի 'ի նախդրաց. յ. 'ի. ց. առ. ընդ: յորոց տառս. յ, միշտ յարի 'ի բառս ձայնաւորաւ սկսեալս. զօր. յարքայ յեղեգն: Տառս. յարի 'ի բաղաձայնիւ սկսեալս. զօր. 'ի բաժակ. 'ի գող: Իսկ մնացեալքն կցին անխտիր յոր եւ լիցի բառ. զօր. առ արքայ. առ մեզ. ցարքայ. ցքեզ. ընդ եւ այլն: ընդ եւ. ը

Ներգոյականն կազմի յաւելլով 'ի սեռականն կամ 'ի հայցականն զտառս, 'ն, կամ յ. զօր. 'ի բաժակի, 'ի գող. յարքայի, յեղջեր, եւայլն:

48: Ունեն յայս վայրի զինն պատկերս հոլովմանց, եւ այս մեկնեցից համառօտ զնշանակութիւն հոլովոց կամ հոլովեալ անուանց:

49: Առաջին Պատկեր Հոլովադասութեան։

| | Եզականք. | Յոգնականք. |
|---|---|---|
| 1: Ուղղական։ | Արքայ, | Արքայք. |
| 2: Սեռական։ | արքայի. | արքայից. |
| 3: Գործիական։ | արքայիւ, | արքայիւք. |
| 4: Պարառական։ | զարքայիւ, | զարքայիւք. |
| 5: Հայցական։ | զարքայ. | զարքայս. |
| 6: Բացառական, | յարքայէ. | յարքայից. |
| 7: Պատմական. | զարքայէ, | զարքայից. |
| 8: Տրական. | ցարքայ. | ցարքայս, |
| | արքայի, | արքայից. |
| 9: Ներգոյական. | յարքայի, | յարքայս, |

50: Ըստ օրինակիս ե̄ այսմիկ հոլովին բազում անուանք լեզուիս մերոյ, և Նոյն՝ բազում գոյականք, յո րոց զսակաւս դիցուք. զորօրինակ. Ախտ, տի, տիւ. տից, տիւք. ակումբ, ակմբի. աղխ. այծ. աւիլթ, աւլթի. աւազան, զնի՝ արոյր, րուրի. արօտ. բաժին, ժնի. բահ. բագարջ. բաղդ. բայ. բան. բանտ. բառ. բարձ. բդեշխ. բեմ. բիծ, բծի. բող. բորբոք. բրուտ, բրտի. բօթ. գահ. գան. գիծ, գծի. գիւտ. գմբէթ. գողօն. գոմ. գոյ. գոյժ, գուժի. գուլպայ. գումար. գրաւ. գրոհ. դահլիճ, լճի. դանդամնաւանդ. դաշոյն, շունի դաշտ. դարբնասայլ. դարձ. դարպաս. դեղձ. դէն. դշխոյ. դոյլ դուլի դուքս, դքսի. դրոշմ. դրուատ դրօշ. երաստ, երեխայ. երեկոյ. երկին, կնի զարմ. զմբաղ. զխտ, զտի. զոհ. զոքանչ. զրահ. էջ. էջի. ընձայ. թագ.

թաթ. թախանձ. թամբ. թանաք. թառ. թատրոն.
թափառ. թեւ. թերթ. թոյն, թունի. թոնիր, նրի.
թօն. իժ. իղեայ. իղձ. ըղձի. իմաստ. լախտ. լաստ. լար.
լեարդ, լերդի. լիճ, լճի. լուծայ. լօղիկ, ղկի. լօռ,
լորայ. խաղ. խայծ. խաղ. խաղաւարտ. խայթ. խայծ.
խամ. խանդ. խանութ. խաչ. խաւարն. խարբալ. խա-
ւարտ. խեթ. խեղդ. խեժ, խեժի. խեչ, խեչի. խիթ,
խթի. խիլայ. խիղբ, խղբի. խիղճ, խղճի. խիճ, խճի.
խող. խոյլ, խուլի. խոյր, խուրի. խոչ. խորխորատ. խորշ.
խոց. խուղ. խղի. խումբ, խմբի. խուց, խցի. խրախոյս,
խուսի. խրայ. ծագ. ծայր. ծառայ. ծափ. ծերպ. ծէս,
ծիսի. ծիր, ծրի. ծիրտ, ծրտի. ծղօտ. ծնօտ. ծոց.
ծուստ. ծրար. կագ. կաթ. կաթսայ. կահ. կահոյր,
հուրի. կաղաղ. կաղամբ. կածան, ծնի. կալթ. կայծ.
կայմ. կանթ, կարքեա, կասկած. կատար. կատարած,
կատու, ւի. կար. կարապն, նի. կարան. կարթ. կարկա-
կարկառ, կռի. կերպ. կշտի. կէտ, կիտի. կիրճ, կրճի.
կոկոն. կող. կոմս. կոյս, կուսի. կոյտ, կուտի. կոնք.
կուշտ, կշտի. կսկիծ, կծի. կորօն. կրկուտ, կտի. հաղ.
համբոյր, բուրի. համեմ. համեստ. հանգոյց, գուցի.
հանդերձ. հանդէս, դիսի. հաշիւ, շուի. հաս. հասկ.
հասոյթ, սութի: հարճ. հայ. հեղոյս, ղուսի. հէն,
հինի. հիւղէ. հիւղ. հովաթափ. հող. հսկայ. հրատ.
հրդեհ. հրէայ, րէի. հրէշ. հօտ. ձայն. ձիր, ձրի.
ճաճանչ. ճանճ. ճառ. ճառագայթ. ճար. ճկոյթ, կու-
թի. մազապուրթ. մաղթանք. մախաղ. մակբայ. մաղ.
մաղղմայ. մաղձ. մամոնայ. մայթ. մանանայ. մատեան,
նի. մարմաջ. մարտ. մաքս. մեքենայ. մէջ, մջի. մը-
թեր. միջօրէ. մոյթ, մութի. մուղայ. մօր. յանգ.

՛յարդ: յարդ: յաւիտեան. տեննի: յուռութ. ութի:
յօդ: յօտ: յօրայ: նահանջ: նաճայ: նարտ: նաւայն. նի:
նաւթ: նաքարակիտ. կտի: նեարդ. ներդի: նեղուկ:
նետ: ներ: ներբան: ներբող: նկրկ: նկրկայ: նկար:
նժոյգ. նժուգի: նիգ. նգի: նիշ. նշի: նխատ. նստի: նկուղ:
նշդյլ. նշուլի: նոյեմբեր: նուսխայ: նպաստ: շաղ: շա-
ղամաթ: շաղաշուր: շամբ: շամփուռ: շանաճանճ: շանթ:
շար: շարժ: շարժաւիթ. ութի: շարխատ: շափիւղայ:
շեղբ: շեղջ: շեշտ: շերեփ: շերտ: շիթ. շթի: շիշ. շշի:
շիւղ: շղթայ: շողգամ: շուկայ: շուշմայ: շուշփայ:
շփոթ: շօթ: ողիմպիաթ: ոլոռ: ոխ: ողկոյզ. կուզի:
ողջոյն. ջունի: ոճիր. ոճրի: ոստայն: ոստիկան: ոստրէ:
որայ: որդոստայ: որձ: որոգայթ: ուխտ: ուղեշ. ղեշի:
ունեստ: չուխայ: պալատ: պահեստ: պայտ: պան: պատ:
պատճէն. ճենի: պատուաստ: պատուհան: պատրաստ:
պարագայ: պարեգօտ: պարէն. րենի: պարիկ: պարոյր.
րուրի: պողոտայ: ջահ: ջայլամ: ջան: ջոխ: ջոկ: ջրհաս:
ջրշեղջ. շղջի: ռազմ: ռահայ: ռահ: ռետին. տնի: ռըմբ-
կէն. կենի: սալ: սակ: սակառ: սաղարթ: սաղաւարտ:
սաղմն. մի: սամետ: սայլ: սայր: սան: սանդ: սանձ:
սապատ: սաստ: սատան: սատանայ: սատափ: սարատ:
սարդ: սեխ: սեկ: սեռ: սեր: սիրայ: սիրտ. սրտի:
սկահ: սկայ: սնակուշտ. կշտի: սոփեստ: սոփեստէս.
տեսի: սպայ: սպանդ: ստոր: ստորոտ: սրահ: սրի-
կայ: սօս: վակաս: վայ: վայրկեան. կենի: վանկ: վաշխ:
վառօդ: վարդ: վարկ: վարմ: վարքայ: վէճ. վիճի:
վիրապ: վկայ: վճար: տախտ. տաղ: տաշտ: տաքակոյս:
՛կուսի: տարմ: տափ: տենդ: տեռ: տոհմ: տող: տոմս:
տոյժ. տուժի: տօն: րաբուն: ցան: ցեղ: ցմակ: փայտ:

փառս: փարախ: փեղկ: փեսայ: փիլոն: փող: քահանայ: քաղ: քաղցկեղ: քայլ: քայռ. քար: քարբ: քարոզ: քե-րոբէ: քղամ ց: քուրայ: քսեստ: օգուտ. օգտել: օձ: օժիտ. օժտել: օճ: օղ: եւայլն:

Ծանօթութիւն: 'Ի բառից աստի այնք, որոց ստուականն ոչ գնի առընթեր, հոլովին ամենեքին նման օրինակիդ: Իսկ այնոց՝ որոց հոլովքն զարտուղին յօրինակէդ, միայն ստուականքն նշանակին, զի զայլ հոլովս դիւրին է մակաբերել 'ի ստուականէն, և սովին տարբերութ՝ գնին նա և յետադաս բառք Ը սովին և Ը հետեւեալ պատկերօք:

51: Երկրորդ՝ յատուկ անուանք, որպիսի են սոքին. Ադդէ. դէի: անդրէաս. րէի: արտաշէս. շեսի: բենիամին. մենի: բարսեղ. սղի: գաբրիէլ. րիէլի: եղիսէ. սէի: եփեսոս: զաքէոս: էջմիածին. ծնի: իսրայէլ. յէլի: լամբրոն: հաբէլ: ղեւոնդ: մարկոս: մովսէս. սեսի: յաբէթ: յիսուս. սի: նինուէ. էի: սարգիս. գսի: պետրոս տարսոն: եւայլն:

52: Երրորդ՝ բազում պարզ ածական անուանք. զորօրինակ. Անկարօտ. տի. տից: անոյշ. նուշի: աշխոյժ. խուժի: բախանձ: բարդ: գաղջ: դալար: զգաստ: ըմբոստ: Թըլուատ: ժլատ: խենէշ. նեշի: խուլ. խլի: համեստ: Ճըշմարիտ. րտի: մեղկ: յամառ: նման: շռայլ: ողորկ: պատեհ: պայծառ: ջախջախ: սերտ: սրիկայ: վաւաշ: վարժ: աժպոհ: եւայլն:

53: Չորրորդ՝ ամ բաղդատական (34) ածականք. զորօրինակ. Առատագոյն, գունի, գունիւ. բարեգոյն. գերագոյն. դանագոյն. չարագոյն. մեծագոյն. վատթարագոյն. եւայլն:

54։ Հնչերդ՝ որ բարդին և ածանցին ի միում ՚ի մասնկանց կամ ՚ի բառիցս յայսցանէ։ բան, բարոյ, գին, եայ, եստ, զան. զարդ, զգեաց, զգեստ, է, խոհ, ծին,ծոյ, կայ, կրօն, կոյտ, ձայն, ձև, ճան, մուտ, նիւթ, ոյթ, շարժ, շէն, սեռ, ցոյց, քաղ, կէտ, եւայլն։

Բան.— մեծաբան, նև. ստաբան, քաղցրաբան, ամծաբան, ճարտարաբան, եւայլն։

Բարոյ.— առատաբարոյ, չի, բարեբարոյ. մեծաբարոյ։ չարաբարոյ, խորթաբարոյ, և այլն։

Գին.— թանկագին, գնի, գնիւ. մեծագին, սակաւագին. դիւրագին, թեթևագին, և այլն։

Եայ.— առօրեայ, ընէի. փախստեայ, դուզնաքեայ, միջօրեայ, մարմարեայ, կճեայ, եւայլն։

Եստ.— արհեստ. ռի, գովեստ, ուտեստ, պաշտեստ, սո-փեստ, քսեստ. եւայլն։

Զան.— այլազան, նի, զանազան, սրբազան, յոգնազան,

Զարդ.— լուսազարդ, դի, թագազարդ, փառազարդ։

Զգեաց.— խաչազգեաց, պեյլի, սևազգեաց, լուսազգեաց։

Զգեստ.— լուսազգեստ, ալի, որտմազգեստ, ջահազգեստ։

Է.— ափսէ. սէի, բազէ։ հալուէ. մարգարէ, րոպէ, քուէ, պազպէ, սերովբէ, եւայլն։

Խոհ.— ողջախոհ, հի, մեծախոհ, չարախոհ, խորախոհ։

Ծին.— անծին, ծնի, ամլածին, կուսածին, հողածին.

Ծոյ.— կոփածոյ, քի, ձուլածոյ, կռածոյ, քերածոյ.

Կայ.— դերակայ, քի ենթակայ, սորակայ, շրջակայ.

Կրօն.— բարեկրօն, նի. խառնակրօն, վերնակրօն, սրբակրօն. հրեշտակակրօն, եւայլն։

Կոյտ.— ծերակոյտ, կուսի. հողակոյտ, մարդակոյտ.

Ձայն.— բաղաձայն, նի մեծաձայն, քաղցրաձայն.

ձեւ.— անուանաձեւ, ձեւի. խաչաձեւ, քառաձեւ։
ճան.— գինեճան, նի. դաւաճան, ճակաճան։
մուտ.—եկամուտ, մտի. տարեմուտ, կերակամուտ.
նիւթ.— լուսանիւթ, թի. քառանիւթ, փշանիւթ.
ոյթ.— երեւոյթ, ութի, դայլոյթ, հասոյթ, հացկերոյթ,
ձանձրոյթ, սովորոյթ.
շարժ. —անշարժ, ժի, բազմաշարժ, դիւրաշարժ.
շէն.— բարեշէն, շինի, մեծաշէն, քարաշէն.
սեռ.—այլասեռ, ռի, նոյնասեռ, տարասեռ.
ցոյց.— ժամացոյց, ցուցի, ուղղեցոյց, հեռացոյց.
քաղ.— այգեքաղ, ղի, հասկաքաղ, ճռաքաղ.
կէտ.— հեռակէտ, կէտի, միջակէտ, վերջակէտ, եւայլն։

55. Վեցերորդ. քանակական ածականք. զորօրինակ. Մէն, մենի, ամենայն, նի, բոլոր, րի, երեք, երից, երիւք, չորք, չորից, րիւք, չորս, քառք, ոից, ոիւք, վեցի, ութ, թի, ինն, ըննի, ինունք, ըննից, ըննիւք, ինամբք, մետասան նի, վեշտասան, նի, քսան, նի, երեսուն, ոնի, քառասուն, սնի, յիսուն, յիսնի, վաթսուն, սնի, իննսուն, իննսնի, համայն, նի, ոչինչ, ոչնչի, ոչնչիւ.

56. Եօթներորդ՝ բազում անեզական անուանք. զո՛։ Աժէք, էից, ադէտք, տից, ազօթք, թից, այծեայք, ծէից, անգք, գից, ապաշխարհութիւնք, բնաւք, ւից. դիւղօրէ-րէից. գնայք. ցից. գիրք. գրից եղբք, լից, եղերոք, ոից, երեքօրեայք, րէից, ղուգք. գուգից, ընթացք, թորգա-ուաչք, չից, լուսանցք, խնջոյք, խօսք, ծունկք, նից, կառուցք, նից, հաղարամեայք, մէից, հաճոյք, հէնք, հրաշք, ձեռաձիրք, ձրից, մանրաթելք, յոնք, նզովք, ոլորտք, սրունք, վայելք, ցնորք, վանք, նից, եւայլն։

57: Ութերորդ՝ սակաւ անյոգնական անուանք. զօ՛՛. Երկիւղ. ղի: խիղճ. խղճի, հանգիստ. հանգստի: երաշխէպ. խեպի: վաղիւ. ղուի: և այլն:

58: Իններորդ՝ սակաւ արտուղի անուանք. զորօրինակ. Գիւղ կամ գեօղ: սեռ: գեղջ: գործ: գիւղիւ: 'ի գեղջէ: գիւղից. գիւղիւք. 'ի գիւղից: սոյնպէս և բարդեալք սորին: Ձորագիւղ: Նորագիւղ: Քաղաքագիւղ: և այլն:

Ծանօթութիւն: Այս յաճախուն բառից հաւաքեալ է այսու և ը յետագայ պատկերօք, մի՛ տարադէպ երևեսցի գիտնականաց, զի յայսմանէ օգուտ մեծ քաղել ունին մանկունք, որք առաջի աչաց դաւարէն տեսանեն գրեթէ զամ՛ արմատական պարզ կցականս, զպարզ, զածանցեալ, և զբարդ ածականս: զանյոգնական և զանեզական անուանս, զբազմադիմի փոփոխումն սեռական հոլովոց, և այլն: որով և ոչ իմիք անկարօտ լինին բառագրոց առ ձեռն պատրաստ ունելով զբազմութ̃ պիտոյ բառից, և զեղանակ հոլովմանց նոցին, որոց պակասութ̃բ գոյցեն միշտ տատանելին մանկունք 'ի յօրինելն զշարադրութ̃ ինչ, վ̃յ եթէ տկարութ̃ աչացս և անօգնական միայնութ̃ս չէին արգելեալ, 'ի մտի եղեալ էր իմ՝ զամ՛ և զիւրաքանչիւր բառս լեզուիս Նոր օրինակ դասակարգութ̃ յանդիման առնել համբակաց, զի բազում յոյժ կարօտին այսմ վաստակոց՝ ոչ քերականք միայն, այլ և նոյն իսկ հռետորք, որպէս ցուցից 'ի ճարտասանութ̃ իմում:

59: Երկրորդ Պատկեր հոլովադասութեան:

| Եզակի, | Յոգնակի: |
|---|---|
| Ուղղ. Բաժակ. | Բաժակք: |
| Սեռ. բաժակի. | բաժակաց: |
| Գործ. բաժակաւ. | բաժակաւք. կօք: |
| Պար. զբաժակաւ. | զբաժակաւք. կօք: |
| Հայց. զբաժակ. | զբաժակս: |
| Բաց. ՚ի բաժակէ. | ՚ի բաժակաց: |
| Պատմ. զբաժակէ. | զբաժակաց: |
| Տրակ. ՚ի բաժակ. բաժակի. | յբաժակս. բաժակաց: |
| Ներգ. ՚ի բաժակի. | ՚ի բաժակս: |

60: Ըստ այսմ պատկերի հոլովին նախ՝ բազում գոյականն անուանք. զո՛. Ագարակ. կի. կաւ: ազգան: անգղ: ազոխ: ալթար: ախտահեղձ էս. ղիսի: ախորժակ: ոլյան: ակօս: աղաբողոն: աղաղակ: աղեւսակ: աղմուկ. մկի: աճառ: այր: ամբարտակ: աշակերտ: ապաւէն. ել-նի: բաւիղ. ղի: բբուկ. բբկի: բեղեկ: բեկոր: բերդ: բեւեռ: բղեղ՝ բղեղի: բիր. բբի: բիր. բրի: բիւրեղ: բլթակ. կի: բլիթ. բլթի: բլրակ: բճիճ. բճճի: բո-ժոժ: բոկեղ: բոյթ. բութի: բութակ: բուսակ: գա-ղտաս: գաղափար: գանգատ: գանձանակ: գարշապար: գաւազան: գաւակ: գաւառ: գաւիթ. ւթի: գդակ: գե-րոց: գեղջուկ. ջկի: գերան: գերդաստան: գերեզման: գզիր. գզրի. գզրոց: գէղ. գիղի: գէշ. գիշի: գէս: գիսի: գէտ. գետի: գիլ. գլի: գիսակ: գինտ. գնտի: գիշեր. րի: գիրկ. գրկի: գիրուկ: գլան: գլխարկ: գըն-դակ: գոհար: գումարտակ: գունդ. գնդի: գուպար: գուսան: գուճ: գրեխ: գրուան: գրպան: դապաղ:

դահեկան. դահիճ, հճի. դամարճակ. դամբարան. դա-յեակ, եկի. դանակ. դանդ. դաշխուրան. դաշնակ. դաշտ. դաստակ. դաստառակ. դաստակերտ. դաստառուակ. դաստիարակ. դատաստան. դատաւոր. դարան. դարա-պան. դարատան. դարաւանդ. դարբին, բնի. դարբ-նոց. դարպաս. դեղահատ. դեղձանիկ, նկի. դենար. դեսպակ. դեսպան. դերասան. դերձակ. դեւ, դիւի. դէզ, դիզի. դէմ, դիմի. դէտ, դիտի. դժնիկ, դժնկի. դիպակ. դիւան. դիր. դղեակ, եկի. դոյլ, դուլի. դըր-բոց. դմնակ. դատիկոն. դրուագ. դրօշակ. եթեր. եղեւ-զակ. եղանակ. եղամիշ, մշտի. եղախ. եղախան. երակ. երամակ. երաշխաւոր. երասանակ. երաստան: երիվար. երիտասարդ. երկան, զանգակ. կաւեկ. զու-ռիկ, ռկի. զուակ. զոլող. զրոյց, զրուցի. էակ. էգ, էգի, էգու. ըմբիշ, բշի. ըմպանակ. ընկեր. ընկոյզ, կուզի. թակոյկ, կուկի. թաշկինակ. թարգման. թը-զուկ, թզկի. թզեղ, թզղի. թմբուկ, բկի. թոշակ. ժա-մանակ. ժապաւէն, ւենի. ժառանգ. ժլժմակ, իշխան. իր. լապտեր. լեզու, ւի. լեզուակ. լիճ, լճի. լծակ. խախայոյ. խածեակ. խաղալիկ, լկի. խայթոց. խան-ձող. խաշնարած. խաչվառ. խառան. խարբայան. խա-րակ, խարան. խարիսխ, րսխի. խարոյկ, րուկի. խար-տոց. խեղապատակ. խէթան. խլուրդ, լրդի. խող, խո-զան. խոզանակ. խոհեր. խողովակ. խոռոչ. խորան. խո-րխուխ, րխխի. խորշակ. խորտիկ, տկի. խուժան. խու-ճապ. խուչակ. խտրոց. խրախճան, խրճիթ, ճթի. ծամ. ծածրակ. ծաղակ. ծարակ. ծարան. կախաղան. կախարդ. կոկան. կաճառ, կամար. կայլակ. կամուրջ, մրջի. կան-թեղ. կանոն. կաշառ. կապուտ. կապարան. կապար.

կապեղէն. կապիկ, պկի. կապիճ, պճի. կատակ.
կարաւան. կարդ. կարաւակ. կերան. կերպարան. կլակ.
կիթառ. կինճ. կնճի. կճղակ. կնդնդոց. կնդրուկ, րկի.
կնճիթ, կնճթի. կշռորդ. կոկորդ. կոհակ. կոճակ. կոյր.
կուրծ. կոնդակ. կանոն. կոչնակ. կապար. կոտորակ. կո-
րեղ. կուլակ. կուտակ. կռան. կռուան. կոճղ. կտակա-
րան. կտուց. Կորոյ. կրակ. կրկնոց. կրպակ. կոշիկ,
շկի. հագագ. հալոց. համբարարան. համբակ. համբու-
րանոց. հանդրուան. հասակ. հաստաբակած. հարկ. հար-
ցուկ. ցկի. հաւակ. հեթանոս. հեծան. հեղեղ. հեղեղատ.
հեղինակ. հերետիկոս. հնձան. հնոց. հովանոց. հովիտ,
վտի. հովիւ, վուի. հողկահար. հպատակ. հռետոր.
հռչակ. հրաման. հրապարակ. հրացան. հրաւէր, ւիրի.
հրեշտակ. հրետակ. հրոսակ. հրովարտակ. հօտոյ. հօ-
րան. հօրու. ձաղկ. ձանձրալիութ, րթի. ձեռնոց. ձո-
րակ. ղամբար. ղեակ, ղկի. ղենջակ. ճախարակ. ճահիճ,
հճի. ճամբար. ճանապարհ. ճաշակ. ճարակ. ճարմանդ.
ճարտասան. ճեմարան. ճենճեր. ճիպոտ. ճիւաղ. ճոպան.
ճրագ. մագիղ, գղի. մաղխ. մականն. մակոյկ, կուկի.
մահակ. մահիճ, հճի, մամոյ. մանգաղ, մանուկ. նկի.
մաշկ. մառան. մատակ. մատռուակ. մարգ. մարգագ. մար-
գարիտ, րտի. մարզպան. մարմանդ. մարմարիոն. մար-
տիկ, տկի. մարտկոց. մայրը. մեկնոյ. մեհեանք. մեղեսի.
մեղու, ւի. մեհեան, հենի. մեռոն. մետաղ. մէգ, միգի.
մժղուկ, ղկի. միջնորդ. միջոց. մկրատ. մղեղ, մղոն.
Միջկատակ. մշակ. մշտիկ, տկի. մոլորակ. մորոս. մու-
ճակ. մունետիկ, տկի. մուշտակ. մուրհակ. մորակ.
մորուկ, րկի. մրրիկ, մրրկի. մօրու, ւի. յակինթ,
կնթի. յաղթանակ. յատակ. յարկ. յաւանակ. յե-

սան։ յեռկար։ յեշտակ։ նաժիշտ. ժշտե։ նախա-
րար։ նախնի. խրի։ նախճիր. ճրի։ նահանգ։ նամակ։
նաւակ։ նահատակ։ նապաստակ։ նափորտ։ նեցուկ, ցկե։
նիզ. նզե։ նիզակ։ նկանակ։ նշան։ նշանակ։ նշ.ուակ։
նշխար։ նպաստակ։ նպարան։ նրան։ նօտար։ շալակ շա-
հապ շահատակ շաղեղ, ղղե շաղկապ շամանդաղ շա-
դամալթ շապիկ, պկե շառաւիղ շատրուան շաւիղ ւղե
շաքար շեճուկ ճկե շեփոր րփե շնչերակ շուշան շ.ե-
ջառ շտապ շրջան շրջանակ։ ոլորակ ոլոք ոչխար
ոսխ որակ որձակ որոջ որորդ ուղկան ուռեճ, ռճե
ուրագ ուրար ուրուկ. րկե։ չուան։ պալար պահակ
պահանգ պահապան պաճար պայազատ պայման պայ-
տառ պայքար պանդոկ պանդուխտ, դխտե պաշտ-
պան պայուսակ պառակ պատառ պատահար պա-
տան պատանդ պատատ պատարագ պատգամ պատգա-
րակ պատերազմ պատկեր պատճառ պատմուճան
պատնէշ, նշէ պատշգամբ պատուանդան պատուար
պատուիրան պատուհան պատրոյգ, րուգե պատրուակ
պատրուճակ պարան պարանոց պարգև, րգե պարեխ
պարիսպ, րսպե պարուտակ պաշտեղ, տիզե պետ պե-
տակ պխակ պղպեղ պնակ պղպջակ պոռնիկ, նկե
պսակ պտուտակ պրակ։ ջնջոց ջոլիր, լրե ջուլհակ
ջրբուղխ, բղխե ջիլ, ջլե։ ռամիկ, միկե ռոճիկ ճկե։
սագ սալթ սահման սաղմոս սատար սատեր սարակ
սարաւանդակ սարեակ սարկաւագ սաւան սեղեխ սեն-
եակ, եկե սերեկ սերկեւիլ սիգ սինկղիտոս սկաւ սկա-
ւառակ սկեսուր, սրջ սկունդ, սկնդե սողոխ սղոց սըմ-
բակ սնդուս, սե սոխակ սողնակ սոնքոն սուզակ սու-
մեր սուրհանդակ սպարապետ սռնակ ստամոք ստամոքս

ստուեր ստրուկ, ստրկի սրահակ սրբան սրինգ, սրնգի
սրուակ սփիւռ սքեմ։ վախճան վահան վաճառ վայր
վանդակ վարագոյր, գուրի վարապանակ վարդապետ
վարձկան վարշամակ վարոյ վարուժան վարսավէր վե-
րի վեղար վերարկու, եւ վերմակ վէգ, վեգի վէմ վե-
մի վէպ վիպի վէտ վիտի վիգն վգնի վիզ վզի վի-
ժակ վիհ վհի վիճակ վիշապ վիշտ վշտի վիրգ վրգի
վհուկ վ կի վոհմակ վտակ վտառ վտառակ վտառան
վտուառ վրան վրիպակ վրձին վրձնի։ տագնապ տախ-
տակ տակառ տաղանդ տաղաւար տաճար տաճկինակ
տաշիղ տապակ տապան տապանակ տապար տառա-
պան տառատոկ տատասկ տատրակ տարտարոս տաւիղ
եղի տափան տեսակ տետր տետրակ տզրուկ տզրկի
տէգ տիգի տիկ տկի տիղ տղի տիպար տիտղոս տըն-
տես տոմսակ տումար տրեխ տրցակ։ րակերտ ցամաք
ցուցակ ցռուկ ցռկի։ փաղանգ փայտատ փապար փար-
սախ փեթակ փեճկ փեսաւոր ջեռի փերեզակ փիղ
փղի փիւնիկ նկի փլատոսի փղձուկ ձկի փշատ փոթո-
րիկ րկի փոխանակ փոխանորդ փոխարէն րէնի փողոց
փողպատ փուխթ։ քաղաք քաղկերթ ղրթի քամակ
քամոյ քանակ քանդակ քատակ քարտէղ տէղի քար-
տուղտ քաքար քիլ քլի քնար րի քուրմ քրմի քսակ
օթեւան օղապարք օձան օձառ օշարակ օրան օրինակ
օրիորդ օրհաս օրօրոց։ Եւ այլն։

61: Երկրդ՝ սակաւ յաւելն անուանք: որօրինակ:
Բեթղեհէմ, հեմի: Երիքով, Զարեհ, Խաչիկ, չկի. Հնդիկ, դկի. Մաշտոց, ցի, Յազկերտ, պարսիկ, սկի, պերոզ, տաճիկ, ճկի, և այլն:

62: Երրդ՝ բազում պարզ ածականք: որօրինակ:
Ագահ, հի, հաց: անառակ: անմիտ, մտի: բազում՝, բազմի: դէճ, դիճի: դաժան: երագ: գաճաճ: թշուառ: ժիր, ժրի: լաւ, լերկ: խառնակ: ծանակ: կաղ: համօրէն, րինի: համակ: հզօր: ճապուկ, պկի: մեծ: յիմար: նսեմ, շամբուշ, բշի: ողորմած: չար: պերճ: ռամիկ, մկի: սէգ, սիգի: վայրագ: տարտամ: ցած: փարթամ: քաջ: օտար, և այլն:

63: Չորրդ՝ այն ամ դոյականք և ածականք, որք 'ի վերջոյ ունին կցեալ զմի 'ի մասնկանցս կամ 'ի բառիցս յայսցանէ, ատեաց: ացու, բեր, գար, գէտ գիր, գործ. դէմ, դիր, էակ, էջ, ըմն, ըող, ընկեց, ժէտ, իշտ, իչ, իօն, կալ, կան, կէր, կէր, կէց, հար, ըմն, մէտ, նալ, նակ, նշան, նոց, ոչ, կամ օչ, ոտ, ոտէ, ոտն, ոյ, ու, ուկ, պան, պէտ, ուէր, տպան, տպան, ճար, տէր, րան, րար, ուէտ, ուէր, ուր: և այլն: Զորօրինակ:
Ատեաց,— չարատեաց, եցի, բարեատեաց, ոխատեաց:
ացու,— ապականացու, ցուի, մահկանացու, քննացու:
բեր,— արդիւնաբեր. րի, բարեբեր, պտղաբեր, փշաբեր, աւետաբեր:
գար,— լեզուագար, րի, լուսագար, խելագար, դլխագար, յաւագար:
գէտ,— խորագէտ, գիտի, ազգէտ, հնարագէտ:
գիր,— ձեռագիր. գրի, որդեգիր, վերնագիր, աշխարհագիր, տապանագիր:
գործ,— բարեգործ, ծի, չարագործ, երախտագործ:

դէմ, — այլադէմ, դիմի, բազմադէմ, խոժոռադէմ:

դիր, — հանդիսադիր, դրի, թշնամադիր, որոգայթադիր, ժամադիր:

եակ, — ահեակ, հեկի, սենեակ, մանեակ, որդեակ, վերնլեակ: դայեակ:

եղ — գօրեղ, ղի, ահեղ, հանճարեղ, գայեղ, համեղ, տաշեղ:

զէն, — մահազէն, զինի, սպառազէն, անզէն:

զօր, — ամենազօր, րի, մեծազօր, քաջազօր:

ընկէց, — նետընկէց, կեցի, շանթընկէց, քարընկէց, կեցընկէց, ահընկէց:

ժէտ, — ախտաժէտ, ժետի, խելաժէտ, երկամնաժէտ, հորկորաժէտ:

իշտ, — ամբարիշտ, րշտի, բարեպարիշտ կռապարիշտ, չարապարիշտ:

իչ — հալածիչ, ծչի, քաւիչ, հզօրիչ, նեղիչ:

խօս, — բարեխօս, սի, ծանրախօս, չարախօս:

կալ, — աթոռակալ, լի, ինքնակալ, կողմնակալ, թագակալ, ժառանգակալ:

կան, — հողեկան, նի, հաւանական, ձրիական:

կապ, — աղէկապ, պի, յօդակապ, ոտնակապ, ձեռնակապ, թագակապ, սնտակապ:

կեր, գազանակեր, րի, շատակեր, շաղղակեր:

կիր, բեռնակիր, կրի, ծանրակիր, վշտակիր:

կից, պարտակից, կցի, աթոռակից, թեւակից, սրտակից:

հար, շանթահար, րի, այտահար, դիւահար:

ղէն, մոմեղէն, ղինի, լուսեղէն, արծաթեղէն:

միտ, պարզամիտ, մտի, նենգամիտ, չարամիտ:

մոլ. գինեմոլ, լի, կռամոլ, փառամոլ, իգամոլ:

Նակ,— յաղթանակ. կն: գանձանակ: խոտորնակ:
Նշան,— բարենշան. նն: դահանշան: չարանշան:
Նոց,— հիւրանոց. ցն: պարանոց: լանջանոց:
Ող. Օղ,— առեցող. ղն: շինող: վաստակող: խանձող:
Ոտ,— բաջաղկոտ. տն: գայթոտ: եռանդնոտ:
Որդ,— աւելորդ. դն: այգորդ: կշռորդ: ձախորդ: քա-
ռորդ: կոկորդ: սայլորդ: ցանցորդ:
Որս,— ձկնորս. սն: հաւորս: թռչնորս:
Ոց,— խայթոց. ցն: խորոց: տալրոց: միջոց: հոտոց: սղոց:
վարոց: ծաղկոց: հովանոց:
Ու,— խրատատու. տուն: վաշխատու: քսու: վերլարկու:
լեզու: մեղու: հօրու:
Ուկ,— սորուկ. ուկն: վհուկ: տզրուկ: սնդուկ:
Պան,— դռնապան. նն: պահապան: պարտիզպան:
Պետ,— ազգապետ, տն: զօրապետ: հազարապետ: գնդա-
պետ: դասապետ:
Սէր,— մեղսասէր. սէրն: չարասէր: հոգեսէր: արծաթա-
սէր: ուսումնասէր:
Սպան,— անձնասպան. նն: հայրասպան: որդեսպան:
Ստան,— վրաստան. նն: բուրաստան: հայաստան: ան-
դաստան: դատաստան:
Վար,— ջոկավար. րն: զօրավար: նաւավար:
Տես,— հեռատես. սն: քաջատես: ամենատես:
Րան,— ձեմարան. նն: վարժարան: նուագարան:
Րար,— աղօթարար. րն: բարերար: չարարար:
Ւէտ,— թիկնաւէտ. ւէտն: ծաղկաւէտ: հոտաւէտ: երա-
նաւէտ: պտղաւէտ:
Ւէր,— նուէր. ւէրն: հրաւէր: փեսաւէր: վարսաւէր:
Ւոր,— ալեւոր. րն: զինուոր: այլաւոր: հոգեւոր: փա-
ռաւոր: ջահաւոր: եւ այլն:

64: Հինգերորդ՝ որ Թուականք. ակ, եակ, ակի, երորդ, եզելեայք, գործեան:

Միակ, կի: Երկեակ, կեկի: Հնգեակ, գեկի: Եօթնեակ: տասնեակ: երկպատիկ, տկի: քառապատիկ: տասնապատիկ: երկդ, դի: երդ, վեցերդ: տասներդ:

65: Վեցերդ՝ բազում անեզական անուանք, զօ":

Ականջք, ջաց. ապաշխանք, նաց. աչք, չաց. արտասուք, սուաց. արհաւիրք, ւրաց. բաղձանք, նաց. գգուանք. գովասանք. դէպք, դիպաց. դիք, դից, դիօք. դուրք, դրաց, դրօք. երանք. երեսք, սաց. զբօսանք. զրկանք. ընդերք, րաց. թշնամանք. լրանք. լանջք, ջաց. խելք լաց. խորանք. խոյանք. ծանականք. ծփանք. կալանք. կամք, մաց. կառք, ռաց. կեանք, կենաց. հանդամանք. հառաչանք. ձաղանք. մեղք, ղաց. միտք մտաց. մօրուք, րուաց. յանցանք, նաց. յորձանք. նախատինք, տանաց. ջերմունք, մնաց. սահանք, նաց. վէրք, վիրաց. փականք. փառք, ռաց. քիմք, քմաց. քունք քը քաց. օրէնք, օրինաց. եւ այլն: Նոյն և, գամիրք, գամբրաց. վիրք, վրաց. եւտիքականք, նաց. արիանոսք, սաց. Թուրք, քաց. հելլէնք, լենաց. հոնք, նաց. մարք լաց. ռուսք, սաց. եւ այլն:

66: Եօթներդ՝ սակաւ անյոգնական անուանք: զօ":

Երկիր, կրի. խաւար, րի. սնդիկ, դկի. դաշտան. հերեկ, հրկի. հորիզոն. եւ այլն:

67: Երրորդ՝ Պատկեր Հոլովադասութեան:

| | Եզակի: | Յոգնակի: |
|---|---|---|
| Ուղ: | Գող. | Գողք: |
| Սեռ: | գողոյ. | գողոց, |
| Գործ: | գողով. | գողովք: |
| Պար: | զգողով. | զգողովք: |
| Հայց. | զգող | զգողս |
| Բաց: | ՚ի գողոյ. | ՚ի գողոց: |
| Պատմ. | զգողոյ. | զգողոց: |
| Տրակ: | ցգող. գողոյ. | ցգողս. գողոց: |
| Ներգ. | ՚ի գող. | ՚ի գողս: |

68: Այսպէս հոլովին նաև՝ բազում՝ գրեթէ անուանք զօ": Աթոռ, ռոյ, ռով: աղախին, խնոյ: աղեւ: աճիւն, ճնոյ: ամիս, ամսոյ: ամուսին, սնոյ: ամպ: այր, րոյ: անդամ: անիւ, անուոյ: անկողին, ղնոյ: անուր: անրոյ: անօթ: արծաթ: արմատ: արծիւ, ծուոյ: արօտ: աւազ: բարուր, րրոյ: բեհեզ: բերան: բլուր, բլըրոյ: բոյն, բունոյ: բոյս, բուսոյ: բոր: բոց: բուծին, ծնոյ: բուռն, բռնոյ, բուռ, բռոյ: բուրդ, բրդոյ: բուք, բքոյ: բրինձ, բրնձոյ: գաւառ: գայլ: գանգուր, գրոյ: գետ: գետին, տնոյ: գեղ: գին, գնոյ: գիր, գրոյ: գլուխ, գլխոյ: գլանոր: գոտ: գոմէշ, մշոյ: գործ: գոյն: գունոյ: գորտ: գուբ, գբոյ: գութ, գթոյ, գունտ, գնտոյ: գէլր. գէլրոյ. դաստակ? դակուր, կրոյ: դարման: դաւ: դափ: դդում, դդմոյ: դեղ: դի, դիոյ: դրամ, եղունգն, եղնգոյ: երազ: երամ: երանգ: երգ: երդ: երինջ, երնջոյ: երկաթ: զամբիւղ: զմուռս, զմռսոյ: էշ, իշոյ: էրէ, էրէոյ: ընձիւղ: թափ: թել: թեւ, թեւոյ: թի: թիւ,

թուոյ: Թուզ, թզոյ: թուղթ, թղթոյ: Թումբ,
թմբոյ: թուրծ, թրծոյ: թուփ, թփոյ: Թուք, թքոյ:
թոք: թրթուր, թրոյ: ժանկ: ժողով: իղ: Լուծ,
լծոյ: Լուր, լրոյ: խաղող: խանձարուր: րրոյ: խիւս:
խծուծ, խծծոյ: խմոր: խնամ, խնդիր, դրոյ: խնձոր:
խոյ: խոտ: խորհուրդ, հրդոյ: խունկ, խնկոյ: խուրձ
խրձոյ: խախու, խաուոյ: խուփ, խփոյ: խոտոր: խրամ:
ծառ: ծարաւ: ծեր: ծեփ, ծծումբ, ծծմբոյ: ծով: ծոր-
ծոր: ծոյ: ծուխ, ծխոյ: ծուծ, ծծոյ: կաթիլ, թլոյ:
կայլ, լոյ: կաղին, ղնոյ: կաճին, ճնոյ, կանգուն, գնոյ:
կապ: կարաս: կարկին, կնոյ: կացին, ցնոյ: կաւ: կա-
փուլ, փլոյ: կեղ: կեղեւ: կեռ: կենդաղ: կերակուր,
կրոյ: կէս, կիսոյ: կիճ, կճոյ: կիր, կրոյ: կնգուղ,
գղոյ: կնիւն, նոյ: կնիք, կնքոյ: կնճիռ, կնճռոյ: կը-
շիռ, կշռոյ: կոծ: կողով: կոճ: կոպիճ, պճոյ: կո-
տոր: կուժ, կժոյ: կուղ, կղոյ: կուղբ, կղբոյ: կու-
պըր, կպրոյ: կռիւ. կռուոյ: կտաւ: համ: համար:
համբար: համբաւ: հայ: հայս: հանճար: հապճեպ:
հատ: հատոր: հարբուղխ, բղխոյ: հեր: հիւթ: հիւս:
հիւր: հոգ: հոլով: հող: հողմ: հոտ: հոր: հուր:
հրոյ: ձետ: ձեւ: ձէթ, ձիթոյ: ձի: ձիւթ: ձող:
ձոր: ձորձ: ձու, ւոյ: ձունձ, ձնձոյ: ճանկ: ճարպ:
ճեպ: ճիչ, ճչոյ: ճիւղ: մաղ: մաշուխ, լխոյ: մաճ:
մամուլ, մլոյ: մամուռ, մռոյ: մանանեխ, նխոյ: մա-
րախ: մարդ: մարմին, մնոյ: մէջ, միջոյ: միս, մսոյ:
միրգ, մրգոյ: մոխիր, խրոյ: մոմ: մոյն, մունոյ:
մորթ: մուշկ, մշկոյ: մուր, մրոյ: մուրճ, մրճոյ:
մսուր, մսրոյ, մրմունջ, մնջոյ: մրուր, մրրոյ: Նա-
շիհ, շհոյ: Նարինջ, րնջոյ: Նիւթ, նուշ, նշոյ:

շաղախ. շաղափ. շամփուր, փրոյ. շարաւ. շերամ. շէր.
շող. շունչ, շնչոյ, շուք, շքոյ. ողբ. ողոք. ոձ. ոյժ,
ուժոյ. ոջիլ, ոջլոյ: ոստ. որբ. որդ. որկոր. որմ.
որջ. որս, որսին. ուղեղ, ղղոյ, ունդ, ընդոյ. ուշ.
ուռ. ուս. չափ. չու, ւոյ. պաղպաջ. պանիր, նրոյ.
պաշար. պարսաւ. պատառ. պատիժ, տժոյ. պարապ.
պղինձ, պղնձոյ. պորտ. պտուղ, պտղոյ. պրտու, ւոյ.
ջեր. ջուր, ջրոյ. ջրհոր. ռուտբ, ռտբոյ. ռուփ, ռփոյ.
սաստ. սարսափ. սարսուռ, ռոյ. սափ րեկղմն. սեպ. սեղ,
սեղոյ. սեկ, սկոյ. սինձ, սնձոյ. սիկեհ, սկհոյ. սոխ. սոր.
սուգ, սգոյ. սունկ, սնկոյ. սուր, սրոյ. սպունգ, սպնգոյ,
սփռուր, սրոյ. սաւ, ւոյ. վաստակ. վարունգ, րնգոյ.
վարսակ. վերջ, ջոյ. վճիռ, վճռոյ. վուշ, վշոյ. տապ.
տարափ. տեղ. տերեւ. տիղմ, տղմոյ. տղայ, տորտ.
տուղտ, տղտոյ. տունկ, տնկոյ. տուփ, տփոյ. տտուն,
տտնոյ. տրմուխ, մխոյ. տօթ. ցայգ. ցանկ. ցաւ. ցե-
րեկ. ցեց. ցիրտ, ցրտոյ. ցից, ցցոյ. ցնցուղ, ցղոյ. ցու.
ցուպ, ցպոյ. ցուրտ, ցրտոյ. ցորեան, րենոյ. ցօղ. փամ-
փուշտ, փշտոյ. փախուք. փետուր, տրոյ. փոխ. փոխինդ,
խնդոյ. փոկ. փող. փոյթ, փութոյ. փոս. փոր. փորձ.
փունդ, փնդոյ. փունջ, փնջոյ. փուշ, փշոյ. փուք,
փքոյ. փրփուր, փրոյ. փքին, փքնոյ. քակոր. քաղցու,
ւոյ. քանքար. քացախ. քին, քնոյ. քծմուխտ, մխտոյ.
քոս: քուղ, քղոյ. քուն, քնոյ. քուրձ, քրձոյ. քուք,
քքոյ. քօղ. օդ. եւ այլն.

69: Նշէլդ՝ քանի մի անուանք բազմավանկք եզեր-
եալք, ի, տառիւ, զորօրինակ:

Արծուի, արծուոյ, ուլ, ւոյ, ուլք. կաշի, շւոյ.
շոգի, գւոյ. կոգի, գւոյ. կանայի, ցւոյ. հանի, նւոյ.

հոգի, գւոյ. մորի, րւոյ. կղի, կղւոյ. ոգի, ոգւոյ. ոգ՚նի, նւոյ. ոսկի, կւոյ. որդի, դւոյ. այսպէս և բաղդեալք սորին, ամօրդի. եղբօրորդի. հաճորդի. քեռորդի, և այլն: ուղի, ղւոյ. ջորի, րւոյ. սակառի, ռւոյ. տարի, րւոյ. ցքի, ցքւոյ. քենի, նւոյ. քեռի, ռւոյ. օղի. օղւոյ. և այլն:

70: Երրորդ՝ սակաւ յատուկ անուանք, զորօրինակ: Անի, անւոյ. աստուածատուր, տրոյ. թաթուլ, թաթլոյ. խոյ, յոյ. կարէն, րնոյ. հեթում, թմոյ. մուշ, մշոյ. շապուհ, պհոյ. սանատրուկ. րկոյ. սանդուխտ, դխտոյ. սեպուհ, հոյ:

71: Չորրորդ՝ բազում անձական անուանք, զորօրինակ: Այլ, լոյ, յայլմէ, կամ յայլոյ, այլում. ամուլ, ամլոյ. արդար, րոյ. արթուն, թնոյ. բութ, բթոյ. գձուձ գձձոյ, դեղին, ղնոյ. զուտ, զտոյ. թեթեւ, ւոյ. թուխ: թխոյ. լի, լիոյ. լկ, կոյ. խորթ. ծեր. կակուղ, կակղոյ. կարճ. հանուր, նրոյ. հեղ. ձոյլ, ձուլոյ. մատաղ. միայն, նոյ, նում. յետին, տնոյ. նոր. ուղիղ, ղղոյ. ողջ. չոր. պիղծ, պղծոյ. ջերմ. սեաւ, սեւոյ. սուրբ, սրբոյ. ցուրտ, ցրտոյ. մաքուր, քրոյ. մեղմ. մերկ միջին, ջնոյ. և այլն:

72: Հինգերորդ՝ այն ամ դոյականք կամ ածականք ևս որ 'ի վերջոյ ունին կցեալ զմի 'ի մասնկանցս, ալ, ած, ային, ացի, էլ, էալ, էլի, իլ, ուլ, ուն, ուած, և այլն, զօ":

ալ — կարդալ, լոյ, լով. ցնծալ. խորդալ. լուանալ:

ած, — այրեցած, ծոյ, ծով. խափանած. հալած. յօրինած. բրած. խուզած:

ային, — խաւարային, յնոյ. ծովային. մարդկային:

ացի, — բաբելացի. ցւոյ, ցւով. գաղատացի. գեղջա-

ցի. հելլենացի. մայրի. քաղաքացի:

ել — կապել, լոյ, լով. սիրել. գրել. շարժել. և այլն:

եալ — գրեալ, ելոյ, ելով: շարժեալ. սառուցեալ:

եցի, — ափրիկեցի, ցւոյ. եբրայեցի. կիւլիկեցի. փիւնիկեցի. լիւբիկեցի:

իլ — կապիլ, պելոյ, պելով. սիրիլ. գրիլ. շարժիլ:

ին, — ներքին, քնոյ. յետին. ստորին. վերին. միջին:

ուլ — հեղուլ, հեղլոյ, հեղլով. թողուլ, ղլոյ, ընթեռնուլ, նլոյ. երդնուլ, նլոյ. և այլն:

ուն, — գիտուն, տնոյ. անտառուն. չքաւուն, կուարթուն հաստատուն. պղպջուն. մածուն:

ուած, — ընթերցուած, ծոյ. խմացուած. յաւելուած. յօդուած. գիւլուած:

73: Վեցերորդ՝ սակաւ բանականական ածականք, որ՝: Առաջին. ջնոյ. ջնում: երկերիւր. րոյ. երկաքանչիւր. րոյ: ըմէ. իւրաքանչիւր. րոյ. րում. հարիւր. րոյ: մի. միոյ. 'ի միոջ, կամ 'ի միոջէ: միում. միւս. սոյ. սմէ. սում. նախնի. նոյ. նում. և այլն:

74: Եօթներորդ՝ անեզական անուանք. զօրօրինակ: Ամուլք. ամլոյ. անուրջք, անրջոյ. արալք. լոյ. դժոխք. խոց. երկք. կոյ. խորք. րոյ. կալուածք, ծոյ. կոչունք. չնոյ: կութք. կթոյ. կուռք. կռոյ. կուրծք. կրծոյ. հայք. յոց. հաւատք. տոյ. հետք՝ տոյ. հունձք՝ հնձոյ՝ յանցուածք. ծոյ. ունչք. ընչոյ. ընչուլք՝ պահք. հոյ. սանդուղք. դղոյ. սեալք. սեւոց տիք. տիոց. տուրք. տրոց. ցուցք. ցցոց. և այլն.

75: Ութերորդ՝ անյոգնական անուանք, զօրօրինակ: Աստուած. ւծոյ. ամօթ, թոյ. ցոյ. Լոյս, լուսոյ. հուր. հրոյ. ձէթ. ձիթոյ. յոյս, յուսոյ. պատիւ. տուոյ, սէր. սիրոյ. հարաւ. հիւսիս. և այլն:

76: Ծանօթութիւն: Տրական և ներգոյականն ոմանց 'ի բառից այսր պատկերի, մանաւանդ՝ ածականաց յանգլին երբեմն 'ի, ում, ոյ՝. զլեցելում, 'ի հանդերձելում, վերնում, 'ի ներքնում. մարդկայնում, միայնում, միում, միւսում, յայլում. և այլն: Իսկ ներգոյականն եղերի եւս, ի, զօ՛, յանկողնի, 'ի բլրի, 'ի դբի, 'ի մարմնի, 'ի սիզամի. և այլն:

77: Չորրորդ Պատկեր Հոլովադասութեան:

| | Եզակի: | Յոգնակի: |
|---|---|---|
| Ուղ: | Դրացի. | Դրացիք: |
| Սեռ: | դրացւոյ. | դրացեաց: |
| Գործ: | դրացեաւ. | դրացեաւք. ցեօք: |
| Պար: | զ դրացեաւ. | զ դրացեաւք. ցեօք: |
| Հայց: | զ դրացի. | զ դրացիս: |
| Բաց: | 'ի դրացւոյ. | 'ի դրացեաց: |
| Պատ. | զ դրացւոյ. | զ դրացեաց: |
| Տրակ. | ցդրացի. դրացւոյ, | առ դրացիս. դրացեաց: |
| Ներգ | 'ի դրացի. | 'ի դրացիս: |

78: Այսմ հոլովին նախ՝ բազում յոգնավանկ գոյականք եղերեալք, ի ձայնաւորաւ. զորօրինակ:
Ազատի. նոյ նեաւ, ամուրի. այգի. ատամի. բանալի. գարի. գերանդի. գերի, գինի. գինի. գլխանի. գաղանի. գոտուղի. գործի. գոզի. դալարի. դրանդի. եկեղեցի. երախայրի. երեկորի. երի. երեքժամի. ընկուզի. թշնամի. լեղի. խեցի. լռամի. ծղնի. ծիրանի. կաղնի. կարասի. կենդանի. կղզի. հացի. համեմի. հովանի. ձիթենի. ձոնի. ԽԽի. մայրի. մանկտի. մատանի. մարի. մաքի, մեղ՝ դի. մեսեդի. նաւաստի. ներքինի. որի. ունկի.

ուռի. պաճարենի, պանդխտի. պատանի. պատասխանի. պղպջակի. սպեղանի. սղի. տամալի: տեղի, րոպէի. ցփսի. փորոտի. քաղցրաւենի. քեղի. քենի. և այլն:

79: Երկդ՝ սակաւ յատուկ անուանք, զորօրինակ:

Անգղիա, ղիոյ. աշոտ, տոյ. տաւ. բաբէն, ենոյ. դալմատիայ, տիոյ. որմզ, մզոյ. վենետիկ, տկոյ. սիս, սսոյ. և այլն:

80: Երրդ՝ ամ պարզ ածականք յոգնավանկք, ի, տառիւ եզերեալք, զորօրինակ:

Ռաքինի, նւոյ, նեաւ. ալի. արծաթի. բալի. երկաթի. երկաղի. զարտուղի. ծարաւի. կալոտի. կանամբի. կատաղի. կորովի. հուսատի. հոլանի. միականի. մոլի. յոռի. նախնի: նմանի. պղնձի. սնոտի. վայրենի. վտալանդի. փանաքի. քծնի, օտարոտի և այլն:

81: Չրդ՝ ամ բազմավանկ գոյականք և ածականք, ի, ձայնաւորաւ եզերեալք, որք են յանդեալքն, ազգի. անի, էնի, եղի, ելի, անկիւնի, ոտի, ուհի, ունի. և այլն. զօ":

ազգի, — մեծազգի, զւոյ. ազնուազգի. ցածազգի:

անի, — ընտանի, նւոյ, երկտանի. լեզուանի. պխտանի. աւազանի. երիցանի. նամականի:

էնի, — հայրենի, նւոյ. վայրենի. ուլենի. օղենի:

եղի, — աղտեղի, ղւոյ. մսեղի, ղւոյ, ղեայ. և այլն:

ելի, — երանելի. լւոյ. ձաղկալի. շարժելի:

անկիւնի, — եռանկիւնի, նւոյ. քառանկիւնի. ութանկիւնի:

ոտի, — զազրոտի, տւոյ. մեղերոտի. չքոտի:

ուհի, — թագուհի, հւոյ. սրբուհի. տիրուհի:

ունի, — ծերունի, նւոյ. դողունի. տէրունի. արշալունի. բակրատունի, գեղարքունի. և այլն:

82, Հինգերորդ՝ բանականն ածականք, զորօրինակ:
Այսպիսի. ս-ոյ, նաեւ: այդպիսի, այնպիսի: սոյնպիսի: դոյնպիսի: նոյնպիսի: որպիսի՞: այսքան: նոյ, նաեւ: այդքան: այնքան: սոյնքան: դոյնքան: նոյնքան: քանի՞, քանոյ, նաեւ: ո՞րքան:

83: Վեցերորդ՝ ամ՝ անեզականք, էջ, եզերեալք, զոր-օրինակ:

Ալիք, ալեաց, ալեօք: այօրիք: ամորձիք: աւետիք: բաղանիք: գաղտնիք: գոլորշիք: գործիք: երախտիք: ընթրիք: լծեղանիք: ժամք: լալիք: խոպոպիք: խորոփիք: ծակոտիք: ծամելիք: կարիք: կարծիք: հայրենիք: Ճաշակելիք: յեռելիք: ոտնկեչիք: չարիք: ոռնոտիք: վարտիք: սանիք.օղիք: օձիք, եւ այլն:

Այսպէս եւս, գնթունիք, նեաց: բռշտունիք: մանդակունիք: պահլաւունիք: սիւնիք:

84: Եօթներորդ՝ բազումք յանեզականաց, էջ, եզերելոց, զորօրինակ:

Այգեստանեայք, եայց, եօք: դուզնաքեայք: ենթալուսնեայք: երեկորեայք: ծաղկեայք: հայաստանեայք: հայկազնեայք: հռոմկլայեայք: միջերկրեայք: եւ այլն,

85: Ծանօթութիւն: Նշանակի ներգոյականն ստանալ յայսց բառից յանգի, -ոջ, զորօրինակ, յայգւոջ, 'ի դալարւոջ, յեկեղեցւոջ, 'ի կղզւոջ, 'ի տեղւոջ, եւ այլն:

86: Հինգերորդ Պատկեր Հոլովադասութեան:

| | Եզական: | Յոգնական: |
|---|---|---|
| Ուղ. | Եղեգն. | Եղեգունք. |
| Սեռ. | եղեգան. | եղեգանց. |
| Գործ. | եղեգամբ. | եղեգամբք. |
| Պար. | զեղեգամբ. | զեղեգամբք. |
| Հայց. | զեղեգն. | զեղեգունս. |
| Բաց. | յեղեգանէ. | յեղեգանց. |
| Պատ. | զեղեգանէ. | զեղեգանց. |
| Տրակ. | ցեղեգն. եղեգան. | ցեղեգունս. եղեգանց. |
| Ներգ. | յեղեգան. | յեղեգունս: |

87: Այսպէս հոլովին նաև՝ բազում գոյական անուանք, զո՛: Ակն, ական, ակամբ, ականէ, ակունք, ականց, ակամբք. աղեղն, աղեղան, աղջիկ, ջկան. այծեամն, ծեման. անկիւն, կեան, անուն, անուան. ասեղն, ղան. ատամն, ման. արմուկն, մկան. արիւն, րեան, րենէ. ալն, ալխան. բուռն, բռան. բաղեղն, ղան. բամբիռն, բռան. գաղթն, թան. գամփռ, ռան. գեղարդն, դեան. գեղմն, ման. գարուն, րան. դուռն, դրան, եղեամն, եման. եղունգն, եղնգան. երկն, կան. թիթեղն, ղան. թիկն, կան. Ժողովուրդ, վրդեան, վրդենէ. Լիսեռն, ռան. խուռն, խռան. Ծաղիկ, ղկան. ծունգն, ծնգան. կայծակն, կան. կռուափն, փան. կղափն, փան. կծիկ, կծկան. կողմն, ման. կորիւն, րեան. կրունկն, կրնկան. հիմն, հման. հիւսն, սան. ձուն. ձեան. ձուկն, ձկան. Ճիւղն ճղան. Ճնճղուկ, ղկան. Մանուկ, նկան. Մանեկ՝ նկան. Մատուռն. տռան. Մուկն, մկան. Մրջիւն, ջման. Նուռն, նռան. Շուն, շան. Շուրթն, շրթան. ոլոգն.

ձան· ոլոռն, ռան· ոսպն, պան· որդն, դան· որոմն, ման· ուլն· լան· ունկն, կան· ուռն· ռան· պաշտօն, տաման· պձեղն, պձեղան· պղյան: պտուտոյն· պտեղն, ղան· ջերմն, ման· ռունգն, ունգան· սանդխտոռն, ռան· սերմն· ման, սխտոռն, սխտռան· սիւն, սեան· սկիզբն, սկզբան· սաեղն, ղան· ստէն, ստեան· տեսիլ, սլեան· տիտեռն, տռան· առռն, ռան· տոռն, ռան· տուռն, տռան· ցօղուն, ղան· փակեղն, ղան· փայծաղն ծաղան· փանդիռն, դռան· փուռն, փռան· քիրտն, քրտան· և այլն:

88: Երկրորդ՝ ամ դոյականք եզերեալք, ութիւն, ումն, ունդ, ուստ մասնկամբ քք, զորօրինակ:

ութիւն, — բարութիւն, թեան· թեամբ, թենէ. թիւնք թեանց· ալխութ· գողութ· թլրութ· մանկութ· սրբութ· սիրելութ· և այլն:

ումն, — խոստումն, տման, տմամբ, տմանէ· ծագումն· պաշտումն· երևումն· երգումն:

ունդ, — ծնունդ, ծննդեան, դեամբ, դենէ· մնունդ· սերունդ· ընդեան:

ուստ, — գալուստ, լստեան, տեամբ· թաքուստ· կորուստ· փախուստ· ոսկորուստ:

89: Երրորդ՝ յետադաս անուանք սակաւուրեք զար- տուղիք, զորօրինակ:

Աղքն, քին, քամբ· ագն, գին, գամբ, գնէ· ագանց· անձն, ձին, ձնէ· արմն, մին· բեռն, ռին, ռամբ· գառն, ռին· դաշն, շին· եզն, զին· եղն, ղին· թոռն, ռին· լեառն, լերին· րամբ, րանէ· խաշն, շին· կաթն· թին· հարսն, սին· ձեռն, ռին· մասն, սին· մատն, տին· նեռն, ռին· ոզն, զին· ոտն, տին· տանէ· սալապատողն, ղին· սառն, ռին· ստաշխն, խին·

տէր, տեառն, տերամբ, տեառնէ, առ տէր. տեարք, տերանց, կամ տեարց՝ այսպէս, կոչնատէր. սպարապետ-տէր. տանուտէր: Այր, առն, արամբ, յառնէ. արք, արանց. երկայր. քեռայր: Կին, կնոջ, կանամբ, կամ կնաւ, ՚ի կնոջէ. կանայք, կանանց. այսպէս, ամուսնակին. բազմակին. միակին. տիկին: Երէց, երիցու, երիցամբ. այսպէս և բաղադրեալքն, գաւառերէց. բռներէց. աւագերէց, հազարերէց. վաներէց. և այլն:

90: Չորրորդ՝ սակաւ յատուկ և անձական անուանք, զորօրինակ:

Աստղիկ, ղկան. գողթն, թան. յուսիկ, սկան. սաթենիկ, թենկան: Պառն, ռին. փոքրիկ, րկան. եօթն, եօթան, թամբ. մութ, մթան, մթամբ. սան, սնի. սամբ. և այլն:

91: Հինգերորդ՝ անեզական անուանք, զորօրինակ: Արդիւնք, դեանց. բաջաղմունք, մանց. ժաժմունք, մանց. երասունք, ասանց. կորձունք, ձանց. խրձունք, ձանց. ցոլմունք, մանց. բոհմունք. երկկամունք. մարդիկ, դկան. մկանունք նանց. պտկունք, կանց. և այլն:

92: Վեցերորդ՝ անյայտնակի անուանք, զորօրինակ: Ամառն, ռան. լուսն, սան. հանդիստ, դստեան. ձմեռն, մերան. վաղիւ, ղուեան. ալիւ, ռանջեան, ջինչ, կամ ՚ի տունէ. եղեւն, ւան. եռանդն, դեան:

93: Վեցերորդ Պատկեր Հոլովադրութեան:

| | Եզակի: | Յոգնակի: |
|---|---|---|
| Ուղ. | Զգեստ. | Զգեստք. |
| Սեռ. | զգեստու. | զգեստուց. |
| Գործ. | զգեստու. | զգեստուք. |
| Պար. | զ զգեստու. | զ զգեստուք. |
| Հայց. | զ զգեստ | զ զգեստս. |
| Բաց. | 'ի զգեստէ. | 'ի զգեստուց. |
| Պատ. | զ զգեստէ. | զ զգեստուց. |
| Տրակ. | ցզգեստ· զգեստու. | ցզգեստս. զգեստուց. |
| Ներգ. | 'ի զգեստու. | 'ի զգեստս: |

94: Այսպէս հոլովին նաև յետագայ դոյականքս:
Ագռաւ, ւու. աղուէս, եսու. այգ, գու, գուէ. առա-ւօտ, տու, տէ. առիւծ, ծու. ասր, սու, յասուէ. արև, րևու, րևէ. արջ, ջու. բաղ. գանձ. գղաթ, թու· գլասա. դատ. դար. զարդ, դու, դուէ. զէն, զինու. Ձոր, րու. րուէ, ձորայ, րուք. ժամ, մու. ինձ, ընձու. խաղ. խրատ, տու, տուէ, ծախ. ծակ. ծով. կաքաւ. կետր. կեդրոս. կով. հաւ. ձագ. ձախ. ձաղ. ճաշ. Ճաղատ. մեղր, ղու. մոգ. նախանձ. նարօտ. նաւ. նկար շաբաթ· շահ. շէն, շինու. որթ. ուլ. ուղտ. ուր-բաթ. պահ. պար. սան. սար. սով. սպաս. վաշտ. վարագ. վարձ. վնաս. վրէժ, վրիժու. տարազ. ցիռ, ցռու. ցուլ, ցլու. քաղց. քէն, քինու. և այլն:

95: Նշեմ՝ յետոյ բառք սակաւուք զարտուղիք, որ՞:
Բարձր, ձու, ձուէ, ձունք, ձանց, ձամբք.
Եւր, րու, րուց. րուք:
Թանձր, ձու, ձրէ, ձունք, ձունց, ձրուք.

թաւ, ւու, ւույ:

ծաղր, ղու, ղրէ, ծաղք, ղույ, ղուք:

ծանր, նու, նրէ, նունք· նունց, նուք:

մանր. նու, նրէ, նունք, նունց:

փոքր, քու, քուէ, քունք, քունց, քումբք:

սակաւ. ւու. ւէ, ւույ ւուք:

վաղ ղու ղուց:

քաղցր ցու ցու ցունք ցունց:

96: Երրդ՝ սակաւ յատուկ անուանք, զորօրինակ:

Աբգլաս գլու: աբրահամ մու մաւ մէ: արտաւազդ զու զէ: բահաղ ղու ղէ: եղիազար րու րաւ րէ: եպիփան նու: թովմաս սու սէ: լիբանան նու նէ: ղուկաս սու սէ: յակովբոս բու բէ: կամ բայ: յովհան նու նէ: հոփնան նու նէ: յորդանան նու նէ: փոկաս սու սաւ սէ: և այլն:

97: Չրդ՝ ամ թուականք, [illegible], [illegible], եղկերեալք,

զորօրինակ:

Ամենեքեան կամ նեքին նեցունց նեքումբք նեսեան: յամենեցունց նեսեան կամ նեսին: այսպէս հոլովին եւս, բոլորեքեան կամ քին: երկոքեան քին: երեքեան քին: հնգեքեան քին: տասնեքեան քսանեքեան: և այլն:

98: Հինգերրորդ՝ սակաւ անեզական անուանք, զոր-օրինակ:

Աղունք նց ղումբք քարք րուց րուք բոլք լոց լուք: յոգունք գունց գումբք: պարտք տուց տուք: վարք րուց րուք: և այլն:

99 Եօթներորդ Պատկեր Հոլովադասութեան:

| | Եզակին: | Յոգնակին: |
|---|---|---|
| Ուղ. | Եղջիւր. | Եղջիւրք: կամ Եղջերք. |
| Սեռ: | եղջեր. | եղջերց, ջերաց. |
| Գործ. | եղջերբ. երաւ. | եղջերբք. ջերաւք. |
| Պար. | զեղջերբ. երաւ. | զեղջերբք. ջերաւք. |
| Հայց. | զեղջիւր | զեղջիւրս, ջերս: |
| Բաց. | յեղջերէ. | յեղջերց. ջերաց: |
| Պատ. | զեղջերէ | զեղջերց, ջերաց: |
| Տրակ. | ցեղջիւր. | ցեղջիւրս, ցեղջերս: |
| | եղջեր. | եղջերց, եղջերաց: |
| Ներգ. | յեղջիւր, | յեղջերս, ջիւրս: |

100: Ըստ այսմ օրինակի հոլովին նախ՝ գոյական և ածական անուանք ինչ, զորօրինակ:

Ազդր դեր: ալեւր լեր աղբեւր բեր աղտեւր տեր դակր կեր դուստր դստեր եզր զեր նոյնպէս և ած-նայն բարդեալք սոցին, գետեզր ծովեզր և այլն:
Լինտր լնտեր լէտր լտեր կայսր սեր կղմինտր մըն-տեր կոտր դեր մախր խեր ոսկր կեր ուստր տեր ունկր կեր սանտր տեր փոքր քեր վաղր ղեր սադր զեր տարր բեր համր մեր և այլն:

101: Երկդ՝ քառադաց սակաւ բառք, որք 'ի հոլովս ինչ զարտուղին 'ի պատկերէն, զորօրինակ,
Անգղ գեղ դուղ ղոց աստղ տեղ տեղք արկղ կեղ բակուղ կ՚ղ նաւղ եստեղ տեղք նոյնպէս և բարդեալքն, բանակեստղ ժողովեստղ լուսեստղ կոթղ թեղ կոճղ ճեղ կուպղ պեղ ոստղ տեղ սեկղ սկեղ սկուտղ տեղ Շեպղ Շպեղ

սխնկղ, սնկեղ. քոյր. քեռ, քերբ, ՚ի քեռէ, քորք, քերց քերբք: այսպէս, հօրաքոյր, մօրաքոյր. և այլն:

102: Ութերորդ Պատկեր Հոլովադրութեան:

| | Եզակի: | Յոգնակի: |
|---|---|---|
| Ուղ. | Հայր. | Հարք. |
| Սեռ. | հաւր. կամ հօր. | հարց. հարանց. |
| Գործ. | հարբ. | հարբք. |
| Պար. | զհարբ. | զհարբք. |
| Հայց. | զհայր. | զհարս. |
| Բաց. | ՚ի հաւրէ. ՚ի հօրէ. | ՚ի հարց. ՚ի հարանց. |
| Պատ. | զհաւրէ. զհօրէ. | զհարց. զհարանց. |
| Տրակ. | ցհայր. հօր. | ցհարս. հարանց. |
| Ներգ. | ՚ի հաւր. ՚ի հօր. | ՚ի հարս: |

103: Այսպէս հոլովին և բարդեալքն սորին և այլ սակաւ անուանք, զորօրինակ:

Ածահայր. համահայր. նախահայր. կնքահայր. և այլն: Մայր, մօր, մարբ, ՚ի մօրէ. մարք, մարց. կնքամայր. կողամայր. տիրամայր. ոսկեմայր. և այլն: Եղբայր, բօր, բարբ, բօրէ, բարք, բարց. այսպէս և, հօրեղ-բայր. սանեղբայր. և այլն: այնպէս և բառս Աւր, կամ օր, աւուր, աւուրբ, յուրէ, աւուրք, աւուրց, աւուրբք. այսուհետև. միջօր. կէսաւր. երկայնաւր. հասարակօր. և այլն:

104: Իններորդ Պատկեր Հոլովադասութեան:

Նշանակ:

Ուղղ. Բէլ:
Սեռ. բելայ:
Գործ: բելաւ:
Պար. զբելաւ:
Հայց. զԲէլ:
Բաց. 'ի բելայ:
Պատմ. զբելայ:
Տրամ. առ Բէլ. ցԲէլ:
Ներգ. 'ի Բէլ:

105: Այսպէս հոլովին բազում յատուկ անուանք լեզուիս, որգորինակ:

Անակ, կայ, կաւ. անուշէտ, հտայ. դաւնիկ, նկայ. եղեմ, մայ. զենոբ, բայ. թոռնիկ, նկայ. խոսրով, վայ. կղեմէս, մայ. մծբին, բնայ. յովակիմ, մայ. նարեկ, կայ. շուշան. պապ. ռափայէլ. սամուէլ. սեան. վաղարշ. տիգրան. և այլն:

106: Այսպէս հոլովին և այնք, որոց սեռականն, լինի էայ, և գործիականն, էաւ, որգորինակ:

Աթանագինէ, նեայ, նեաւ. արիստակէս, կեայ, կեաւ. բիւրատղէ. գալիլեա. գայիանէ. դիոգինէս. եղիսէ, սեայ. եւտիքէս. իլիրիկէ. կոստորինէ, նեայ. մանի, նեայ. նունէ. նեայ. ողիմպոս, պեայ. սոկրատէս. տիբերիոս. և այլն:

107: Վասն հոլովոյ միջակին ածականաց գիտել արժան է, զի ոմանք յայսց ըստ օրինակի պարզական անուանց հոլովին, զորս և նշանակեսցի 'ի վերոյ ը̅ իւրաքանչիւր հոլովադասութե̅, իսկ 'ի մնացելոյն ոմանք նախդրիւ միայն հոլովին, և կէսք ունին զպաւանձն

հոլովս, զորս յայսմ վայրի պարզեցից:

108: Միջականք, ամենիւր, այսչափ. այդչափ. այնչափ. սոյնչափ. դոյնչափ. նոյնչափ. որչափ. ողջոյն. ողջ. Նախդրիւ միայն հոլովին, ըստ միայն զուգադրակա- ցհայցական. և զ՚նախդրիւ ուղական հոլովս, զորօրինակ ամենիւր. զամենիւր. յամենիւր: ողջոյն, զողջոյն, յողջոյն: զող. առ ող: և այլն:

Մասնական, են և ոչ նախդրիւ հոլովին, այլ միշտ եզակի և անհոլով՝ վասն Ը պաշտամանց: զորօրինակ: զբան ինչ մեծ: մարդկային ինչ իւր նուաստ լինիցին, և այլն:

109: Զ հոլովս թուական անականաց կանխաւ նշանակեալ եմ Ը իւրաքանչիւր օրինակի հոլովաձեւութե պաշտամանց ՚ի վերոյ, զորոյ տես անդ:

110: Բառք, որ, ա. թէ իբր մակբայական և իբր հարցական վարեալ, հոլովին ամենեքին նման յարա- բերական դերանուանց, զորոց զօրինակս տես սոյն ՚ի գլ. ժը, դերան, ՚ի պատկերն տառենիդ:

111: Միջականք, իմն. իք. ոք. ոմն. ի՞նչ. քանզի ունին զառանձին հոլովս, ոմանք ըստ լրման, և ոմանք պա- կասեալ, յայսմ վայրի առաջի եդից ուրոյն ՚ի դիւ- րութիւն համբակաց:

112: Մասնական՝ իմն, այսչափ միայն հոլովի:

Եզակի:

| | |
|---|---|
| Ուղ: | Իմն: |
| Հայց: | զ իմն: |
| Բաց: | յիմեմնէ: |
| Պատ: | զ իմեմնէ: |
| Տրակ: | յիմն. ցիմն: |

113: Մասնական ոք, հոլովի այսչափ միայն:

| | Եզական: |
|---|---|
| Ուղղ: | Ոք: |
| Սեռ: | ուրուք: |
| Հայց: | զոք: |
| Բաց: | յումեքէ: |
| Պար: | զումեքէ: |
| Տրակ: | ումեք. առ ոք. ցոք: |
| Ներգ: | յումեք: |

114: Մասնական, ինչ, հոլովի այսպէս և այսչափ:

| | Եզա | ——— | կան: |
|---|---|---|---|
| Ուղղ: | Իք: | Բաց: | յիմեքէ: |
| Սեռ: | իրիք: | Պար: | զիմեքէ: |
| Գործ: | իւիք: | Տրակ: | իմիք: |
| Պատ: | զիւիք: | Ներգ: | յիմիք: |
| Հայց: | զիք: | | |

115: Մասնական, Ոմն, հոլովի այսպէս:

| | Եզական: | Յոգնական: |
|---|---|---|
| Ուղղ: | Ոմն. | Ոմանք: |
| Սեռ: | ուրեմն. | ոմանց: |
| Գործ: | ոմամբ. | ոմամբք: |
| Պատ: | զոմամբ. | զոմամբք: |
| Հայց: | զոմն. | զոմանս: |
| Բաց: | յումեմնէ: | յոմանց: |
| Պար: | զումեմնէ. | զոմանց: |
| Տրակ: | ցումն. ումեմն: | ոմանց. առ ոմանս: |
| Ներգ: | յումեմն. | յոմանս: |

116: Հարցականս, ե՞րբ, հոլովի այսպէս:

Եզակի:

Ուղ: ի՞նչ, կամ զ՛ի՞նչ

Սեռ: է՞ր, կամ ե՞ր:

Գործ: ի՞ւ:

Պար: զ՛ի՞ւ:

Հայց: զ՛ի՞նչ:

Բաց: առ ի՞մէ:

Պատ: զ՛մէ՞:

Տրակ: ի՞մ, յի՞մ, առ ի՞նչ:

Ներգ: յի՛նչ:

117: Իսկ իմաստն կամ նշանակութիւն բառից զանազան փոփոխմանց հոլովերոյ՝ բացայայտի այսր, զի բառն և իւրն յուղղական հոլովն առնէ՝ նշանակի անփոփոխ և առանց յարաբերութեան առ այլս, որ, ով առնեցն է կամ յօրինակ է իւրն, և իւրով անուամբն կոչեցեալ լինի զորօրինակ. հայր, մայր, լեառն, քար, և այլն:

Բառն սեռական հոլովեալ՝ լինի յատկացուցիչ այլոյ բառի, զի պահանջէ ունել առ իւր զայլ բառ, որ իցէ ստացուած կամ այլ ինչ վերաբերեալ առ սեռականն, որոյ և լինի պատասխանի հարցմանս, որո՞յ է զորօրինակ, պատկեր այս որո՞յ է,— է պատկեր կայսեր, այ, հրեշտակի. մտածանի, ձիոյ, ձկան, տան, և այլն:

Բառն գործիական հոլովեալ՝ նշանակէ լինել իբր գործիք կամ միջնորդ կամ ընկեր գործողութեան և կրելութեան, զորօրինակ, հարկանել ձեռամբ, գաւազանաւ, սրով. գնալ ոտիւք, նաւաւ, կառօք. այրեցալ կարօտիւ, սիրով, հրով:

Բառն՝ պարառական հոլովեալ, վարի՛ ի խօսակցութեան իբր առարկայ, շուրջ գոլով, կամ յորոյ վերայ կատարի գործողութիւն կամ կրելութիւն ինչ, զօ", կուտել հող զքաղաքաւ,

Թշնամիք պատեցան զորքայիւ, յածէր զաչս զբանա-կանօք, փարեցաւ զոտիւք նր̄, մեղք քո լիցին զինեւ. եւ այլն:

Բառն՝ հայցական հոլովիւ, նշանակէ զեզրն, յորոյ վր̄ յանգին ներգործական գործողութիք, զօ՛, պատա-ռեմ զթուղթ, զհանդերձս. այրեմ զտուն, զփայտ. գրեմ զնամակ. սիրեմ զա̄ծ. տեսանեմ զծառ, զմ̄րդկ:

Բառն՝ բացառական հոլովիւ, նշանակէ զեզրն, յոր-մէ ելանէ կամ սկսանի գործողութի ինչ կամ կրելութի, զօ՛, հանել ՚ի բանտէ, արտաքսել ՚ի տանէ. զրկել յաչաց. կապել ՚ի զինուորաց, պատառել ՚ի գազանաց, զարթնուլ ՚ի քնոյ, յառնել յանկողնոյ. եւ այլն:

Բառն՝ գործիական հոլովիւ, զնի եւս առարկայ, զորմէ կամ յոր սակս լինի գործողութի կամ կրելութի ինչ, զոր-օրինակ, Ջանամ զքերականութէ, խօսիմ զքէն, պատմեմ զփառաց մ̄յ, գուշակեաց զքնէ, գոհացայ զմ̄յ, տրտըն-ջէ զընկերէն, եղեւ ամբաստանութի զքէն. եւ այլն:

Բառն՝ տրական հոլովիւ, նշանակէ զեզրն, առ որ դիմէ, կամ ուր եղերի գործողութի եւ կրելութի ինչ, զօ՛, ետու քեզ, բաշխէ զօրաց. ցուցանեմ եւ յայտնեմ ամե̄յն, էած ՚ի դաշտ, կարօտիմ բանիցդ, եւ այլն:

Բառն՝ ներգոյական հոլովիւ, նշանակէ կամ զտեղին, կամ զժամանակն՝ յորս կատարի եւ հանդչի գործողութի կամ կրելութի ինչ. զօրօրինակ, դնել ՚ի սապատի, սրն-կել յայգւոջ, թաղել յերկրի, պահել ՚ի սրտի, վաս-տակել ՚ի խառնջեան, ՚ի նստիլ ՚ի տան. եւ այլն:

118: Այսչափ տեղեկութիք զանուանց՝ շատ համա-րեսցին առ ժամս նորամուտ մանկանց, զորս քաջ ՚ի միո առայժմ առաջնորդութբ աննախանձ դասատուաց, որք կ՛ի մարթասցին յառաջադէմ վարժանալ ՚ի խօսակցութ̄ գրաբառ լեզուիս մերոյ:

# ԳԼՈՒԽ Գ։

## Յաղագս Դերանուանց։

119։ Երկդ տեսակն նշանական բառից մերոց կոչի՝ Դերանուն, որով իմանին այնպիսի բառք, որք 'ի խօսակցութ 'ի գործ ածին կամ փոխանակ դիմական անուանց, կամ ցուցանեն զստացուած ինչ դիմականաց, զօ՛, եթէ պօղոս ոմն կամիցի աղաչել զ յակոբն յաղօթել սիմոնի, կարէ խօսիլ ընդ նմա այսպէս, ես (պօղոս) խնդրեմ 'ի քէն (յակոբէ) աղօթել նմա (սիմոնի), ուր տեսանես, զի փոխանակ բառիցս, պօղոս, յակոբէ, սիմոնի, 'ի գործ ածան բառքս, ես, 'ի քէն, նմա, և յայս սակս՝ այսպիսի բառք կոչին, դերանուն, որք և բաժանին 'ի հինգ տեսակս, որք են, էական, ցուցական, ստացական, յարաբերող, և դիմորոշ։

Էական կոչին այս բառք, Ես, դու, ինքն, իւր իւրեանց միմեանց, զի վարին փոխանակ դիմական անուանց և անձանց։

Ցուցական դերանուն կոչին այս ինն բառք, Սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն։ զի ցուցանեն զանձն կամ զիր, որ մօտ է խօսողաց։

Ստացական կոչին այս բառք, Իմ, քո, մեր, ձեր, իւր, իմոյին, քոյին, մերոյին, ձերոյին, իւրոյին, իմային, մերային, ձերային, իւրային, իւրեանցային, սորայ, դորայ, նորայ, սոյայ, դոյայ, նոցայ։ զի յայտ առնեն զստացուած ինչ դիմականաց։

Յարաբերօղք կոչին երկու այս բառք, Ո, Որ, զի 'ի խօսս դնին փոխանակ բառս այլոց խօսակցութեան:

Դիմորոշող կոչին այս երեքին տառք, Ս, Դ, Ն, զի են արմատ դիմաւոր դերանուանց. և զի որոշեն զդէմս կամ զանձինս խօսողաց:

120: Քննելով զգործածութիւն և զկազմութիւն այսոցիկ դերանուանց, կարեմք մատնել յայտ զվեց որպիսութիւնս, որք կոչին պարագայք դերանուանց, և են սոքին, 1. Որակ: 2. Տեսակ: 3. Թիւ: 4 Դէմք: 5. Հոլով: և 6. Հոլովադասութիւն:

121: Որակն է առաջին պարագայ, ըստ որոյ դերանունք 'ի գոյական, և յածական:

Գոյական են սոքին, ես, դու, ինքն, իւրեանց, միմեանց, իւր, սա, դա, նա, ո, որ, զի վարին փոխանակ անձանց կամ իրաց:

Իսկ ածական են մնացեալ վեց յօդականք, և ամենայն ստացականք, զի վարին յարեւալ 'ի գոյականս:

122: Տեսակն է երկրորդ պարագայ, որ զդերանունս բաժանէ յերկուս, ըս, յածանցեալ, և 'ի նախատիպ:

Ածանցեալ են, որ 'ի վերջոյ կցեալ ունին զմասնիկս, այն կամ ոյն, որպէս են սոյն, նոյն, մերոյն. ձերոյն, իւրոյն, իմոյն, և այլն:

Նախատիպ են, որ չունին կապակցեալ մասնիկս, որպէս են այլ մնացեալ դերանունք:

123: Թիւն է երրորդ պարագայ, որով դերանուանց ոմանք կոչին եզակի, զի ցուցանեն զմի անձն կամ զիր, զորօրինակ. ես, դու: և ոմանք յոգնակի, զի նշանակելով զբազում անձինս կամ զստացուածս իրաց, զոր օրինակ, մեք, դուք, սոցա, դոցա, և այլն:

124: Դէմքն է չորրորդ պարագայ, որով դերանունք մի զանազանելոյն զանձինս խօսողին, լսողին, և պատմելոյն, բաժանին յերիս կարգս, որ կոչին, առաջին դէմ, երկրորդ դէմ, և երրորդ դէմ, իբր զի եթէ՝ օրինակ իմն՝ սիմոն խօսելով ընդ մարկոսի, պատմիցէ նմա ըզվարս կամ զգործս պօղոսի, ասէ նմա, ես (սիմոն), պատմեցից քեզ (մարկոսիդ) զգործս նորա (այսինքն պօղոսի), ուր տեսանես, զի բառդ՝ ես, նշան փոխանակ խօսողին: բառդ՝ քեզ, նշան փոխանակ լսողին, որ էր մարկոսն: և բառդ՝ նորա, նշան փոխանակ պատմելոյ անձին, այսինքն պօղոսին, որոյ գործք պատմին 'ի մէջ երկուցն, և յայսմանէ սովորութիւն եղեալ է քերականաց, զդերանունսն՝ որ դնի փոխանակ խօսողին, կոչել, առաջին դէմ, որպէս են, ես, մեք: զայն՝ որ ցուցանէ զլսողն, կոչել՝ երկրորդ դէմ, զորօրինակ, դու, դուք: և զայն՝ որ դնի փոխանակ պատմելոյ անձին, կոչել՝ երրորդ դէմ, զորօրինակ, ինքն, իւր, նա:

125: Հոլովն է հինգերորդ պարագայ, որ ցուցանէ զփոփոխումն կազմութեան և նշանակութեան մի և նոյն դերանուան, որ ըստ օրինակի անուանց՝ լինի ինն կերպիւ յեզակսն և 'ի յոգնականսն, որպէս ունիս տեսանել ստորև:

126: Հոլովադասութիւն է վեցերորդ պարագայ, ըստ որոյ դերանունք 'ի պատճառս այլ և այլ վերջաւորութեանց սեռականին և գործիականին՝ դասաւորին 'ի մետասան պատկերս, զորս առ 'ի դիւրութիւն մտաւորութեան համբակաց դիցուք յայսմ վայրի:

## Առաջին Պատկեր:

| | Եզական: | Յոգնական: |
|---|---|---|
| Ուղ: | Ես. | Մեք: |
| Սեռ: | իմ: | մեր: |
| Գործ: | ինեւ: | մեւք. մեօք: |
| Պար: | զինեւ: | զմեուք. զմեօք: |
| Հայց: | զիս: | զմեզ: |
| Բաց. | յինէն: | 'ի մէնջ: |
| Պատ: | զինէն: | զմէնջ: |
| Տրակ: | ինձ. ցիս. առիս. | մեզ. ցմեզ. առ մեզ: |
| Ներգ: | յիս. | 'ի մեզ: |

## Երկրորդ Պատկեր:

| | Եզական: | Յոգնական: |
|---|---|---|
| Ուղ: | Դու. | Դուք: |
| Սեռ: | քո. | ձեր: |
| Գործ: | քեւ. բեւ, | ձեւք. զձեօք: |
| Պար: | զքեւ. զքեւ. | զձեւք. զձեօք: |
| Հայց: | զքեզ. | զձեզ: |
| Բաց: | 'ի քէն, | 'ի ձէնջ: |
| Պատ: | զքէն. | զձէնջ: |
| Տրակ: | քեզ. ցքեզ. առ քեզ: | ձեզ. ցձեզ. առ ձեզ: |
| Ներգ: | 'ի քեզ. | 'ի ձեզ: |

## Երրորդ Պատկեր:

| | Եզական: | Յոգնական: |
|---|---|---|
| Ուղ: | Ինքն. | Ինքեանք: |
| Սեռ: | ինքեան. | ինքեանց: |
| Գործ: | ինքեամբ. | ինքեամբք: |
| Պար: | զինքեամբ. | զինքեամբք: |
| Հայց: | զինքն. | զինքեանս: |
| Բաց: | յինքենէ. | յինքեանց: |
| Պատ: | զինքենէ. | զինքեանց: |
| Տրակ: | ինքեան. առ ինքն: | ինքեանց. առ ինքեանս: |
| Ներգ: | յինքեան. | յինքեանս: |

## Չորրորդ Պատկեր:

| | Եզական: | Յոգնական: |
|---|---|---|
| Ուղ: | Իւր, | Իւրեանք: |
| Սեռ: | իւրեան. | իւրեանց: |
| Գործ: | իւրեամբ. իւրեաւ. իւրև. | իւրեամբք: |
| Պար: | զիւրեամբ. զիւրեաւ. զիւրև. | զիւրեամբք: |
| Հայց: | զիւր. | զիւրեանս: |
| Բաց: | յիւրմէ. | յիւրեանց: |
| Պատ: | զիւրմէ. | զիւրեանց: |
| Տրակ: | իւրեան. առ իւր: | իւրեանց. առ իւրեանս: |
| Ներգ: | յիւր. յիւրեան. | յիւրեանս: |

## Հինգերորդ Պատկեր:

| | Եզակի: | Յոգնակի: |
|---|---|---|
| Ուղ. | Սա. | Սոքա: |
| Սեռ. | սորա. | սոյա: |
| Գործ. | սովաւ, | սոքաւք, սոքօք: |
| Պար. | զսովաւ. | զսոքաւք. զսոքօք: |
| Հայց. | զսա. | զսոսա: |
| Բաց. | 'ի սմանէ. | 'ի սոցանէ: |
| Պատ. | զսմանէ. | զսոցանէ: |
| Տրակ. | սմա. առ սա: | սոցա. առ սոսա: |
| Ներգ. | 'ի սա, 'ի սմա: | 'ի սոսա: |

127: Նոյնպէս հոլովին և Դա, դորա, դովաւ, 'ի դմանէ, դոքա, դոյա, դոքօք, 'ի դոյանէ: Նա, նորա նովաւ, 'ի նմանէ, նոքա, նոյա, նոքօք, 'ի նոյանէ, ևայլն:

---

## Վեցերորդ Պատկեր,

| | Եզակի: | Յոգնակի: |
|---|---|---|
| Ուղ: | Այս. | Այսք. այսոքիկ: |
| Սեռ: | այսր. այսորիկ. | այսց. այսոցիկ: |
| Գործ: | այսու. այսուիկ, | այսոքիւք. այսոքիմբք: |
| Պար: | զայսու. զայսուիկ. | զայսոքիւք. զայսոքիմբք: |
| Հայց: | զայս. | զայսոսիկ: |
| Բաց. | յայսմանէ. յայսմ. | յայսց. յայսցանէ: |
| Պատ: | զայսմանէ. զայսմ. | զայսց. զայսցանէ. |
| Տրակ: | այսմ. այսմիկ. առ այս. | այսց. այսցիկ. առ այսոսիկ: |
| Ներգ: | յայսմ. յայսմիկ. | յայսոսիկ: |

128: Նոյնպէս հոլովին և Այդ, այդր, այդորիկ,

այդու. այդուիկ. յայդմանէ, այդք. այդց. այդոքիւք, յայդց. յայդցանէ. և այլն: Այն. այնր. այնորիկ. այնու. այնուիկ. յայնմանէ. այնք. այնց. այնոցիկ. այնոքիւք. յայնց. յայնցանէ. և այլն:

## Եօթներորդ Պատկեր:

| | Եզական: | Յոգնական: |
|---|---|---|
| Ուղ. | Սոյն. | Սոյնք. սոքին: |
| Սեռ. | սորին. սորուն. | սոցին. սոցուն՝ ցունց. |
| Գործ. | սովին. սովիմբ. | սովիմբք, սոքիմբք. քումբք: |
| Պար. | զսովին. զսովեաւ. | զսովիմբք. զսոքիմբք. քամբք |
| Հայց. | զսոյն. | զսոյնս. զսոսին: |
| Բաց. | ոչ ունի. | 'ի սոցունց: |
| Պատ. | ոչ ունի. | զսոցունց: |
| Տրակ. | սմին. առ սոյն՝ | սոցին. առ սոսին. առ սոյնս: |
| Ներգ. | 'ի սմին. 'ի սոյն. | 'ի սոսին. 'ի սոյնս: |

129: Նոյնպէս հոլովին և դոյն, դորին. դորուն. դովին. դովիմբ. 'ի դոյն. դոյնք. դոքին. դոցին՝ դովիմբք. և այլն: Նոյն. նորին. նորուն. նովին. 'ի նոյն. նոյնք. նոքին, նոցին. նոցուն. նոքիմբք. 'ի նոցունց. և այլն:

## Ութերորդ Պատկեր:

| | Եզակական: | Յոգնական: |
|---|---|---|
| Ուղ: | իմ. | իմք: |
| Սեռ: | իմոյ. | իմոյ: |
| Գործ | իմով: | իմովք: |
| Պար: | զիմով. | զիմովք: |
| Հայց: | զիմ. | զիմս: |
| Բաց: | յիմոյ. յիմմէ. | յիմոյ: |
| Պատ· | զիմոյ. զիմմէ. | զիմոց: |
| Տրակ· | իմում. առ իմ· | իմոց. առ իմս: |
| Ներգ: | յիմում. | յիմս: |

130: Նոյնպէս հոլովին և յետադաս ստացականքս, Քո. Սեռ. քոյ· Գործ. քով. Հայց. զքո. Բաց. 'ի քումմէ. Տրակ. քում. Ներգ. 'ի քում: քոյք. քոց. քովք. 'ի քոց. 'ի քոյս. և այլն:

Մեր. մերոյ. մերով. զմերէ. 'ի մերմէ. մերում. մեք. մերոց. րովք. զմերս. 'ի մերոյ մերոյ. 'ի մերս:
Ձեր. ձերոյ. ձերով. զձեր. 'ի ձերմէ. ձերում. ձերք րոց. ձերովք. զձերս. 'ի ձերոյ. ձերոց. 'ի ձերս:
Իւր. իւրոյ. րով. զիւր. յիւրմէ. իւրում. յիւրում. իւրք. իւրոյ. րովք. զիւրս. յիւրոյ. յիւրս.
Սորայ. սորայոյ, րայով. զսորայ. 'ի սորայոյ. սորայում. սորայք. րայց. կամ րայոյ. րայովք. զսորայս. 'ի սորայոց. և այլն:
Դորայ. րայոյ. րայով. զդորայ. 'ի դորայոյ րայում. դորայք. րայց. րայոց. րայովք. զդորայս. 'ի դորայոց:
Նորայ. րայոյ. րայով. 'ի Նորայոյ. Նորայում. Նորայք. Նորայց. Յրայոց. րայովք. 'ի Նորայոց:

Սոցայ· ցայս· ցայով· զսոցայ· 'ի սոցայս· սոյայում·
սոցայք· ցայց· ցայովք· 'ի սոյայոց:

Դոցայ· ցայդ· ցայով· 'ի դոցայդ· ցայում· դոցայք·
դոցայց· ցայովք:

Նոցայ· ցայն· ցայով· 'ի նոյայն· ցայում· նոյայք·
նոցայց· ցայովք:

Իմային· մայնոյ· մայնով· զիմային· յիմայնոյ· իմայնում· իմայինք· մայնոց· մայնովք· յիմայնոց· յիմայինս:

Մերային· րայնոյ· րայնով· 'ի մերայնոյ· մերայնում· մերայինք· րայնոց· րայնովք· 'ի մերայնոց 'ի մերայինս:

Այնպէս ձերային, իւրային, և իւրեանցային:

## ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ:

| | Եզակի: | Յոգնակի: |
|---|---|---|
| Ուղ: | Քոյին: | Քոյինք: |
| Սեռ: | քոյոյ· | քոյոց: |
| Գործ: | քոյով· | քոյովք: |
| Պատ: | զքոյով, | զքոյովք: |
| Հայց: | զքոյին· | զքոյինս: |
| Բաց: | 'ի քոյոյ· | 'ի քոյոց: |
| Պար: | զքոյոյ, | զքոյոց: |
| Տրակ: | քոյում· առ քոյին· | քոյոց· առ քոյինս: |
| Ներգ: | 'ի քոյում· | 'ի քոյինս: |

Բայց միւս՝ այլն եղերեալ ստացականքս, իմոյին, մերոյին, ձերոյին, իւրոյին, ոչ հոլովին այսոք, այլ միայն նախդրիւ հոլովեալ վարին 'ի խօսս. զիմոյին, յիմոյին, զմերոյին, յիւրոյին, և այլն:

## Տասներորդ Պատկեր։

Յարաբերականս, Ո, պակասաւոր է և հոլովի այսչափ։

| | | |
|---|---|---|
| Ուղ։ | Ո· | Ոյք։ |
| Սեռ։ | ոյր· | ոյց։ |
| Հայց։ | զո· | զոյս։ |
| Բաց։ | յումմէ, | յոյց։ |
| Պատ։ | զումմէ· | զոյց։ |
| Տրակ։ | ում· առ ո· | ոյց։ |

Յարաբերականս, Որ, անպակաս հոլովի այսպէս։

| | | |
|---|---|---|
| Ուղ։ | Որ· | Որք։ |
| Սեռ։ | որոյ· | որոց։ |
| Գործ։ | որով, | որովք։ |
| Պար։ | զորով· | զորովք։ |
| Հայց։ | զոր· | զորս։ |
| Բաց։ | յորմէ· յորոյ· | յորոց։ |
| Պատ։ | զորմէ· զորոյ· | զորոց։ |
| Տրակ։ | որում· առ որ· ցոր· | որոց· առ որս։ |
| Ներգ։ | յորում· | յորս։ |

## Մետասաներորդ Պատկեր:

Անեզական և պակասաւոր դերանուանքս, իրերաց, միմեանց, հոլովին այսպէս:

| | Յոգնակի: | Յոգնակի: |
|---|---|---|
| Սեռ: | Իրերաց· | Միմեանց: |
| Գործ: | իրերօք, | միմեամբք: |
| Պար: | զիրերօք· | զմիմեամբք: |
| Հայց: | զիրեարս· | զմիմեանս: |
| Բաց: | յիրերաց· | 'ի միմեանց: |
| Պատ: | զիրերաց· | զմիմեանց: |
| Տրակ: | ցիրեարս. իրերաց· | առ միմեանս. միմեանց: |
| Ներգ: | յիրեարս. | 'ի միմեանս: |

131: Յաղագս դերանուանց բաւական լիցին 'ի ժամուս այսչափ ծանօթութիւնք:

# Գ Լ Ո Ւ Խ Դ:

## Յաղագս Բայից:

2: Երրորդ մասն նշանական բանից մերոյ կոչի Բայ, և են այնպիսի բառք, որք յայտ առնեն զգործելն կամ զկրելն կենդանեաց և իրաց, մինչ զի մեք կենդանիք, և մեք ստեղծիլ և արուեստագործիլ եմք ունիմք զանազան գործողութիւնս և զկրելութիւնս, զորս զանազան բառիւք բացայայտեմք, զո". յորժամ ասեմք, եզն ծնանի՝ ուտէ՝ ըմպէ՝ ննջէ՝ աշխատի: Մարդն ծնանի՝ զարգանայ՝ մտածէ՝ խօսի՝ ընթեռնու՝ ախտանայ՝ մեռանի. Արեգակն ծագէ՝ շարժի՝ խաւարի՝ մտանէ: Հուրն այրէ՝ եփէ՝ հալէ: Զգեստն ծածկէ՝ ջեռուցանէ՝ հնանայ՝ մաշի. և այլն: Արդ՝ այսպիսի բառք, որ ոչ զեղն, այլ զգործելն կամ զկրելն իրաց նշանակեն, կոչին Բայ:

133: Յայսպիսի բառս, նկատեմք ըստ կազմութեան նոցին և նշանակութեան՝ մասունս այլ և այլ որպիսութիւնք որք կոչին, պարագայք բայից, և են ինն թուով, 1, Սեռ, 2, Ձև, 3, Տեսակ: 4, Թիւ: 5, Դէմք: 6, Ժամանակ: 7, Եղանակ: 8, Լծորդութիւն և 9 Խոնարհմունք:

134: Սեռն է առաջին պարագայ, ըստ որոյ բայք բաժանին ՚ի վեց տեսակս, որք կոչին, ներգործական, կրաւորական, հասարակ, չէզոքական, էական, և անդէմական:

Ներգործական կոչին այն բայք, որք յայտնեն զգործողին ինչ ներգործել ՚ի վր այլոյ, զո", պատառեմ զփայտ, Գրեմ զԹուղթ, հուրն այրէ զպալատն, և այլն:

Կրաւորական կոչեն այն բայք, որ նշանակեն զկրելն ինչ կենդանւոյ կամ իրաց՝ ընկալնել և կրել յայլմէ ներգործողէ, զօ", Ք͞ս տանջեցաւ՝ խոցեցաւ ՚ի զինուորաց. Պետրոս գլխատեցաւ ՚ի դահճէ, հուրն շիջեցաւ ՚ի հողմոյ, փայտն այրեցաւ ՚ի հրոյ, և այլն,

Ծանօթութիւն։ Ներգործական և կրաւորական բայք որոշին ՚ի միմեանց ոչ միայն նշանակութ͞բ, այլ և յանկ վերջաւորութ͞բ խօսից, և ամենայն ներգործականք կարեն փոխիլ ՚ի կրաւորականս, և կրաւորականք ՚ի ներգործականս, սակայն յայնժամ փոփոխի և ձայն վերջաւորութ͞ն նոցին, զօ", սիրեմ՝ սիրիմ. սիրեցի. սիրեցայ. և այլն։ զորս ստորև ՚ի պատկերս խոնարհմանց ունիս տեսանել։

Հասարակ կոչեն այն բայք, որ առանց փոփոխելոյ զվերջաւորութ͞ն խօսից՝ ցուցանեն երբեմն զներգործելն յայլս, և երբեմն զկրելն յայլմէ, ըստ պահանջելոյ խօսից կամ խնդրոյ բանից, զօ", Աբրահամ ծնաւ զԻսահակ . . . Իսահակ ծնաւ յԱբրահամէ, և այլն։

135։ Չէզոքական ասային բայք ցուցանեն զայնպիսի գործողութի, որ ոչ եղանի ՚ի վ͞ր այլում կրողի. այլ սկիզբն և եզր գործոյն լինի նոյն իսկ գործողն, զօ", ննջեմ. երթամ. փախչիմ. զբօսնում. և այլն։

136։ Էական կոչեն այս չորք բայք, Եմ. Գոմ. Լինիմ. Նշանիմ. որք ըստ նշանակութեան նոյն են ընդ չէզոքականաց, այլ սովորութի է քերթողաց՝ էական կոչել զդոսին։

137։ Անցողական կոչեն այնպիսի բայք, որք ցուցանեն զգործողութի ինչ պատճառաւ զայլ գործողութի յայլում ենթակայի, կամ որք նշանակեն զպատճառն գործելոյ այլոց, զօ", ճաշակեցուցանեմ. զարթուցանեմ. փոշեցու-

ցանէ. նշանակեն, թէ ես լինիմ պատճառ՝ զի նա բարկասցի. փախիցէ. գոչիցէ. և այլն. և այսպիսիք եղերին, ուղղանէ. ուղղեսցէ. ուտանէ. զօ՛, զօրացուցանեմ. երկուցանեմ. կործանեմ. և այլն:

133: Չէզոք է երկր. սպառողս, ըստ որոյ բայք մի նշանակելոյն զմի կամ զբազում ելս և գործս, բաժանին յերիս դասս, որք են, պարզ. բարդ. և յարաբերակ:

Պարզ կոչի բայն, որ զմի գործողութիւն կամ կրելութիւն նշանակէ. զօ՛, գրեմ. պարզաբեմ. այրեմք. և այլն:

Բարդ կոչին այնք, որք յօդեալ են ի միում նշանական բառէ զօ՛. գեղապարզեմ. խմաստաւորեմ. և այլն:

Յարաբերակ կոչին այն բայք, որք զօդեալ են ի երկուց նշանական բառից, զօ՛, յուսադատակցեմ. ողբերգակեմ. վերակենդրկեմ. ինքնապահապետեմ. քարշեմ:

Ծանօթութիւն: Բայք կարեն բարդիլ նախ՝ ի գոյական անուանց, զօ՛, երկրպագանեմ. ձեռնադրեմ. պտղաբերեմ. լուսաւորագեմ. և այլն:

Երկդ՝ ի ածականաց, զօ՛, բարեգործեմ. չարախօսեմ:

Երրդ՝ ի դերանուանց, զօ՛, ինքնահաճեմ. նոյնանամ. խրացուցանեմ. նոյնացուցանեմ. և այլն:

Չորրդ՝ ի մակբայ լինելոց, զօ՛, բերկեմ. բերկբերկեմ: հրջեմ. հրջհրջեմ: բախեմ. բաբախեմ:

Հինգերրդ՝ ի ընդունելութեց, զօ՛, առաքելագործեմ. կատարողապետեմ. կատարելագործեմ. քինթողաբանեմ. և այլն:

Վեցերրդ՝ ի նախադրութեց, զօ՛, առածեմ. ընդօտնեմ. հրջապատեմ. ընդդիմախօսեմ. և այլն:

Եօթներրդ՝ ի մակբայից, զօ՛, բազադառնամ. նախաժամանեմ. վերամբառնամ. և այլն:

139: Տեսակն է երրդ. սպառողս, որով բայք մի ու-

նելոյ կամ չունելոյ զանուշան ձայնիկս, բաժանին յե-
րիս կարգս, որք կոչին, նախադաս, բաղադրեալ և ա-
ծանցեալ:

Նախադասիք կոչին բայք, որ չունին կցեալ ուստեք ձայ-
նիկ ինչ անուշան, զօ՛, խօսիմ, փոխանամ, ասեմ, և այլն:

Բաղադրեալ ասին այն բայք, որ յառաջոյ կցեալ ու-
նին զմի ՚ի ձայնկանցս կամ ՚ի տառիցս, ան: առ: դ: ըն:
ը: հ: յ: ո: ստ: չ: ա: ամ: եւ այլն, զորօրինակ:

ան, — պատուեմ, անպատուեմ: ժառանգեմ, անժառանգեմ:

առ, — ցուցանեմ, առցուցանեմ: աշխարեմ, առաշխարեմ:

դ, — գրգռեմ, դգրգռեմ: եղծանեմ, դեղծանեմ:

ըն, — բերեմ, ընբերեմ: բռնեմ, ընբռնեմ:

ը — որոջեմ, ըորոջեմ: պրծիմ, ըպրծիմ:

հ, — ամբառնամ, համբառնամ: պօրանամ, հպօրանամ:

յ, — աճեմ, յաճեմ: ապահովեմ, յապահովեմ:

ո, — բուժեմ, ոբուժեմ: թափիմ, ոթափիմ: տածեմ, ոտածեմ: քօղեմ, ոքօղեմ:

ստ, — գտանեմ, ստգտանեմ: եղծեմ, ստեղծեմ: երկուբեմ, ստերկուբեմ: ածեմ, ստածեմ:

չ — եղանեմ, չեղանեմ: հանդուրժեմ, չհանդուրժեմ:

ա, — կարանամ, ակարանամ: ընիմ, աընիմ: հաճիմ, ահաճիմ:

ամ, — փոշանամ, ամփոշանամ: փունեմ, ամփունեմ:

140: Ածանցեալ կոչին բայք, երբ ՚ի մէջ վանկիցն մտանէ մին յանուշան ձայնկանցս կամ ՚ի տառիցս յայսցա-
նէ: ակ: ան: ատ: ե: գէն: է: ը: ի: կան: ը: ն: ոյ: ոտ: որ:
ուր: ոյ: ու: չ: ան: ա: ր: ւոր: զորօրինակ:

ակ, — ճաշեմ, ճաշակեմ: խառնեմ, խառնակեմ:

ան, — դիզեմ, դիզանեմ: օծեմ, օծանեմ: լքեմ, լքանեմ:

ատ, — կտրեմ, կտրատեմ: պատեմ, պատատեմ:

Բ, — թմրիմ, թմբրեցի: շամշիմ, շամբշեցի: կճրեմ, կճբեցի:
Գն, — մոլլիմ, մոլլգնեցի: յաւլիմ, յաւագնեցի:
Դ, — պաղեմ, փաղդեցի: բերեմ, չբերդեցի:
Ը — լմեմ, լմըեցի: շարժեմ, շարժըեցի:
Է, — պճնիմ, փճնէի: կծեմ, կծկեցի: ձաղեմ, ջաղէցի:
Էան, — գործեմ, գործծանեցի: գրաւեմ, գրաւանեցի:
Ը — բախեմ, բաղխեցի: խախտեմ, խախտեցի:
Ն, — մարմաջեմ, մարմնջեցի: բառաչեմ, բառանչեցի:
Ոյ, — սղեմ, սղոյցի: խառնեմ, խառոյցի: քերթեմ, չերթոյցի: այրեմ, այրոյցի:
Որ, — գլեմ, գլորեցի: մոլիմ, մոլորեցի:
Ող, — խամձեմ, խամձողեցի: խածեմ, խածողեցի:
Որդ, — կշռեմ, կշռորդեցի: լծեմ, լծորդեցի: կցեմ, կցորդեցի:
Ոտ, — խայթեմ, խայթոտեցի: պատառեմ, պատառոտեցի:
Ու, — դրոշմեմ, դրոշմուեցի: կծեմ, կծուեցի: ցրեմ, ցրուեցի:
Չ — մատիմ, մատչեցի: սառիմ, սառչեցի: զատիմ, զատչեցի:
Ան, — ճչեմ, ճանչեցի: շչեմ, շանչեցի: փչեմ, փանչեցի:
Տ, — բեկեմ, բեկտեցի: ճակեմ, ճակտեցի: կոճեմ. կոճտեցի:
Ր, բաժանեմ, բաժրանեցի: պահեմ, պահրեցի: տաժանիմ, տաժրանեցի: խլինջամ, խլրինջամ:
Ուր, արատեմ, արատուրեցի: զուգեմ, զուգուրեցի: ասլեմ, ասլուրեցի: և այլն:

141: Յայս սեռակ ածանցման վերածին և ամ անցողական բայք, յորս միշտ մնայ մին յանցման մասնկանցս, ուց, ուն, ուց որք յարին ի՛ նախնթաց. ան, մանականն, կացմեն զանցողական բայս, զօ՛, հնչեցուցանեմ, փլուզանեմ, կորուսանեմ, և այլն:

142: Յիւսն է չորրդ պարագայ, որով բայք ի՛ օրինակէ ասուանց՝ բաժանին յերկական և ՚ի յօդնական:

Եզական կոչի բայն, երբ նշանակէ զգործողութիւն կամ զկրելութիւն միոյ անձին կամ իրի, զո՛, գրեմ. կերեր. ջատագովեցի. այրեցաւ. ննջեսցէ. և այլն:

Յոգնական ասի բայն, յորժամ նշանակէ զգործողութիւն կամ զկրելութիւն բազում անձանց կամ իրաց, զո՛, գրեմք. կերայք. այրեցան. ննջեսցեն. և այլն:

Յոգնակի բայք ՚ի լեզուի մերում միշտ եզերին, ք. կամ ն. տառիւք, միայն թէ տառն ն. մի՛ լիցի զիմորոշող՝ յարեալ յեզականն:

143: Դէմք է հնգերորդ պարագայ, որ զբայս բաժանէ յերկուս տեսակս, որք են, դիմաւոր. և անդէմ:

Դիմաւոր կոչին այն բայք, որ զօրութ. վերջաւորութ. իւրեանց յայտ առնեն զորոշ դէմս ենթակային, որում պատշաճի գործողութիւն և կրելութիւն: Իսկ վս զի ՚ի խօսակցութ. երեք միայն ենթակայք գործոյ կամ կրից զանազանին, որք են, ես. դու. և նա. (տե՛ս 124,) վսկ և դիմաւոր բայք բաժանին յերիս դէմս, որք ասին, առաջին դէմ, երկրորդ դէմ, և երրորդ դէմ:

144: Առաջին դէմ կոչին այն բայք, որ զօրութ. վերջաւորութ. իւրեանց ցուցանեն, թէ գործն այն կամ կիրքն վերաբերի առ խօսողն, զո՛, գրեմ. ննջեցի. ըմբռնեցայ. պարզաբանեցայք. և այլն:

Երկրորդ դէմ կոչին այնք, որք ցուցանեն թէ գործն կամ կիրքն վերաբերի առ լսողն, զո՛, կրես. ննջեցեր. խաչակնքեսջիք. ըմբռնեցար. և այլն:

Երրորդ դէմ կոչին բայքն, որք ցուցանեն թէ գործն կամ կիրքն վերածի առ երրորդ ոմն՝ բաց ՚ի խօսողէն և ՚ի լսողէն, զո՛, գրէ. ննջեաց. ըմբռնեցաւ. և այլն:

145: Վերջաւորութիւնք զդէմս բայայայտողք թէ-

ակէտ բաղում են յոյժ և զանազան, բայց գլխաւորքն են չորեքին այսոքիկ, էն. ան. ուն. ին. զի սոքին գոլով առաջին դէմ ո՛ւ ի ներկայ բայից սահմանականաց, են երբ ն. արմատ և ոճիղ էն կամ աղբեւր, յորոց բղխեն այլ վերջաւորութիւնք յայլ և այլ ժամանակս՝ 'ի դէմս և 'ի թիւս, որպէս տեսանես ստորև յերիս պատկերս խոնարհմանց:

Կե՛ր. մի՛ ուտեր: կերէ՛ք. կամ կերա՛յք. մի՛ ուտէք:
Ուտիմ. տիս. տի: ուտէի. և այլն:
կերիցիմ, ցիս, ցի: ուտիցիմ, ցիս, ցի:
ուտել, կերօղ, կերեալ, ուտելոյ, ուտելի:

199: Զեղչական:

Մեղանչեմ, չես, չէ: մեղանչէի, և այլն:
մեղայ. մեղար. մեղաւ: մեղաք. մեղայք. մեղան:
մեղայց կամ մեղիցեմ. մեղիցես կամ մեղիջիր. մեղիցէ:
մեղիցուք. մեղիջիք. մեղիցեն:
մեղանչիցեմ: չիցես. չիցէ: չիցեմք. չիցէք. չիցեն:
մեղի՛ր, մի՛ մեղանչեր: մեղարո՛ւք մի՛ մեղանչէք:
մեղանչել. մեղանչօղ. մեղուցեալ. մեղանչելոյ:
Յառնեմ. նես. նէ. յառնէի:
յարեայ. յարեար. յարեաւ. յարեաք. եայք. եան:
յարեայց կամ յարիցեմ. յարիցես կամ յարիջիր. յարի-
ցէ: յարիցուք. յարիջիք. յարիցեն:
յառնիցեմ. նիցես կամ նիջիր. նիցէ. նիցեմք. յառ-
նիցէք կամ նիջիք. նիցեն:
արի՛. մի՛ յառներ. արի՛ք. մի՛ յառնէք:
յառնել. յարուցեալ. յառնելոյ: և այլն:

200: Զոր խոտորմունս, և զբացառութիւնս այսց գործողք և պակասաւոր բայից ցուցցէ ուսանողաց թէ ոյ ուսուցիչն. թէ որում չէր հնար առ տեղեաւս նշանակել զամ մանրամասն դիտել ի նոյն:

Տեսցուք այժմ՝ ի տեսանել զերկու պատկերս խոնարհման բայից, որ ունի օրինակ զայս:

## Դիմաւոր և ժամանակաւոր բայք ի Սահմանական եղանակի:

| Դէմք | Ներգործականք: Եզական: | Ներգործականք: Յոգնական: | Կրաւորականք: Եզական: | Կրաւորականք: Յոգնական: | Ժամանակք |
|---|---|---|---|---|---|
| ա: | Լուանամ. | Լուանամք. | Լուանիմ. | Լուանիմք. | |
| բ: | Լուանաս. | Լուանայք. | Լուանիս. | Լուանիք. | Ներկայ: |
| գ: | Լուանայ | Լուանան | Լուանի: | Լուանին: | |
| | — | — | — | — | — |
| ա: | Լուանայի. | Լուանայաք. | Լուանայի. | Լուանայաք. | |
| բ: | Լուանայիր. | Լուանայիք. | Լուանայիր. | Լուանայիք. | Անկատար: |
| գ: | Լուանայր. | Լուանային: | Լուանիւր. | Լուանային: | |
| | — | — | — | — | — |
| ա: | Լուացի. | Լուացաք. | Լուացայ. | Լուացաք. | |
| բ: | Լուացեր. | Լուացիք. | Լուացար. | Լուացայք. | Կատարեալ |
| գ: | Լուաց: | Լուացին: | Լուացաւ | Լուացան: | |
| | — | — | — | — | — |
| ա: | Լուացից. | Լուասցուք. | Լուացայց. | Լուասցուք. | |
| բ: | Լուասցես. ա-ջիր. | Լուասջիք. | Լուասցիս. ա-ջիր | Լուասջիք. | Ապառնի պարզ: |
| գ: | Լուասցէ: | Լուասցեն: | Լուասցի: | Լուասցին: | |
| | — | — | — | — | — |
| ա: | Լուանայցեմ. | Լուանայցեմք | Լուանայցիմ. | Լուանայցիմք. | Ապառնի |
| բ: | Լուանայցես. | Լուանայցէք. | Լուանայցիս. | Լուանայցիք. | ենթադրա- |
| գ: | Լուանայցէ: | Լուանայցեն: | Լուանայցի. | Լուանայցին: | կան: |

## Դիմաւոր և ժամանակաւոր բայք ի Հրամայական եղանակի:

| Դէմք | Ներգործականք: Եզական: | Ներգործականք: Յոգնական: | Կրաւորականք: Եզական: | Կրաւորականք: Յոգնական, | |
|---|---|---|---|---|---|
| ա: | . . . . . | . . . . . | . . . . . | . . . . . | Ներկայ: |
| բ: | Լուա՛ մի՛ լուանար. | Լուացէ՛ք. մի՛ լուանայք. | Լուացի՛ր. մի՛ լուանիր. | Լուացարո՛ւք. մի՛ լուանիք, | |
| գ: | . . . . . | . . . . . | . . . . . | . . . . . | |

## Անդէմ և անժամանակ բայանունք:

Աներևոյթք. { ներգործ. Լուանալ: կրաւորակ. Լուանիլ: } նալոյ նալով

Ընդունելութիւնք: { Լուացող: Լուացեալ: Լուանալի. Լուանալոց. }

Բայք երկդիմի դառնան:

202: Բայք՝ որ խոնարհին ըստ այսմ երկրորդ պատկերի՝ գրեթէ ամենեքին փոփոխելի են և պակասաւոր, անկանոն և աննմանաձայն լինելով, յոր սակս առ խորհելոյ 'ի շփոթութենէ բաժանեցից զայնս յերիս կարգս, զի դիւրին լիցի համբակաց ուսանել:

Յառաջին կարգի դնեմ այն բայս, որ 'ի ներգործական սեռի ունին զամ ժամանակս, և խոնարհին ըստ ընդհանրոյն, (մեկնեցաւ և ոչ ամենեքեան յատկի,) իսկ 'ի կրաւորականն պակասաւոր գոլով ունին միայն զմասն 'ի ժամանակաց, զորս և առ իւրաքանչիւր բայ շարադրեմ. ցուցեալ՝ թէ յայնս, զոր չունին, փոխեն ըստ ներգործականին կամ կազմեն հակառակ բային:

203: Իսկ յերկրորդում կարգի դասեմ այն բայս, որոյ խոնարհումն լինի 'ի ժամանակս ինչ ըստ ներգործականին. և 'ի ժամանակս ինչ ըստ կրաւորականին. զօր., բայս. [illegible] 'ի ներկայն՝ յանկատարին՝ և 'ի բաղադրեալ ապառնին խոնարհի ըստ ներգործականին [illegible]. և այլն: իսկ 'ի կատարելումն 'ի պարզ ապառնին և 'ի հրամայականին խոնարհի ըստ կրաւորականին. [illegible]. և այլն: Ըստ այսմ լինին և այլ բայք. մերթ ըստ ներգործականին. և մերթ ըստ կրաւորականին խոնարհելով. և ասա զայսպիսիս դասեմ յերկրորդում կարգի ընդ գլխաւոր խոտորմամբ նշանակեմ առ իւրաքանչիւր բայ:

204: Զայս բաժանումն բայից յերկուս կարգս. խոր(հեցայ) ոչ միայն ըստ ներգործականաց, այլ և ըստ չեզոքականաց, զի և սոքին ըստ օրինակի այսց երկուց խոնարհին. յոր սակս և զասին բաժանեալ յերկուս կարգս, առաջին առաւել զ լինի ներգործականաց:

205: Ներգործականք առաջին կարգի:

Աղամ, աղայի, աղացի, աղացից. աղայցեմ. աղա՛, մի՛ աղար, աղացէ՛ք, մի՛ աղաք: Աղացայ, աղացայց, աղացի՛ր, . . . աղացարու՛ք: աղացեալ:

Ամամ, ամայի, ամացից, ամայցեմ, ամա՛: Ամացայ, ամացի՛ր: և այլն:

Ամբառնամ, ամբարձի, ամբառնայցեմ, ամբա՛րձ: մի՛ ամբառնար: Ամբարձայ, ամբարձեալ:

Բանամ, բացի, բացից, բանայցեմ, բա՛ց, մի՛ բանար: Բանիմ, բացայ, բացայց, բացի՛ր . . . բացարու՛ք, բացեալ, բացօղ, և այլն:

Բառնամ, բարձի, բարձից, բառնայցեմ, բա՛րձ, մի՛ բառնար, բարձէ՛ք: Բառնիմ, բարձայ, ձայց, բարձի՛ր, բարձարու՛ք: բարձեալ, բարձօղ:

Զգամ, զգայի, զգայցեմ, զգա՛, մի՛ զգար, զգայօղ, զգայեալ:

Թանամ, թացի, թանայցեմ, թա՛ց, մի՛ թանար: Թացայ, թացեալ:

Լամ, լացի, լայցեմ, լա՛ց, մի՛ լար: Լացայ, լացեալ:

Լուանամ, լուացի, լուանայցեմ, լուա՛: Լուացայ:

Խոկամ, կացի, կայցեմ, խոկա՛. մի՛ խոկար, խոկացեալ:

Կորզամ, զացի, զայցեմ, կորզա՛, կորզացեալ:

Հաւատամ, տացի, տայցեմ, տա՛, մի՛ հաւատար, հաւատացեալ:

Հոգամ, հոգացի, գայցեմ, հոգա՛: հոգացեալ:

Մուրամ, մրացի: րայցեմ: մուրա՛, մուրացեալ:

Ողբամ, բացի: բա՛: բացեալ:

Որոճամ, ճացի: ճայցեմ: որոճա՛: ճացեալ:

Տեղամ, ղացի: ղայցեմ: տեղա՛: տեղացեալ: և այլն:

206: Ներգործականք երկրորդ կարգի:

Անգիտանամ, նայի, անգիտայայ, ցայց, տանայցեմ: անգիտացի՛ր, մի՛ անգիտանար. անգիտայցէ՛ք: անգիտացեալ: և այլն:

Գիտենամ, գիտացայ: գիտենայցեմ: գիտացի՛ր, մի՛ գիտենար: գիտացեալ:

Գողանամ, գողայ, ղացայց: ղանայցեմ, գողացի՛ր, մի՛ գողանար, գողացեալ: գողայօղ: և այլն:

Զլանամ, զլայայ: զլացի՛ր, մի՛ զլանար: զլացիլ:

Զղջանամ, ջացայ, ցայց: ջացի՛ր մի՛ զղջանար: զղջացեալ:

Իմանամ, իմացայ, ցայց: իմանայցեմ: իմացի՛ր, մի՛ իմանար: իմացեալ:

Խոստանամ, տացայ, ցայց: տանայցեմ: տացի՛ր, մի՛ խոստանար:

Մերկանամ, կացայ: կացի՛ր, մի՛ մերկանար: մերկացեալ:

Մոռանամ, ռացայ: ռացի՛ր: մի՛ մոռանար: ռացեալ:
Մուրանամ, րացայ: րացի՛ր, մի՛ մուրանար: րացեալ:
Յղանամ, յղացայ: յղացի՛ր, մի՛ յղանար: յղացեալ:
Որսամ, որսացայ: սացի՛ր կամ որսա՛, մի՛ որսար:
Ուրանամ, րացայ: րացի՛ր, մի՛ ուրանար: րացեալ:
Սպամ, սպացայ: սպացի՛ր, մի՛ սպար: սպացեալ:
Ստանամ, ստացայ: ստացի՛ր, մի՛ ստանար: ստացեալ:
Տգիտանամ, տացայ: տացի՛ր, մի՛ տգիտանար. տգիտացեալ: և այլն:

Ծանօթութիւն: Զայսոսիկ բայս հնոյն է կոչել, հասարակ, զի որում չունին յատուկ վերջաւորութիւն 'ի ներգործական և 'ի կրաւորական սեռս. այլ մի և նոյն յանգին՝ երբեմն լինի ներգործական վարին, և երբեմն

ւեր՝ կրաւորական, որով և նոյնանան ընդ հասարակ կոչեցեալ բայից: Այսպիսի են և սոքա ՚ի բայից ընդնախընթաց թուով եղելոց:

207: Չէզոքականք առաջնոյ խոնարհի:

Նստամ, նստայի, նստա՛, մի՛ նստար, նստայէ՛ք, մի՛ նստայք, նստայեալ, և այլն: Այսպէս և: բաղձամ. գնամ. գոռամ. գուժամ. եռամ. զգնամ. զեռամ. զռամ. ղօնչամ. ըղձամ. թնդամ. ժուժամ. խաղամ. խայթամ. խեթամ. խնդամ. խորդամ. խրոխտամ. ծփամ. կծոտամ. կղկղամ. կոծամ. հազամ. հեծկլտամ. հեւամ. ձգտամ. մկթամ. մնամ. մռմռամ. նուամ. շողամ. ոռնամ. ործամ. որոտամ. պանծամ. պժգամ. սիգամ. սոսկամ. տարփամ. տոկամ. փռնգամ. փրփրամ. փշամ. Կամ, կայի, կացի՝ ցեր՝ եկաց. կա՛ց, մի՛ կար. կացէ՛ք մի՛ կայք. կացեալ. կայօղ. կալոց. և այլն:

208: Չէզոքականք երկրորդ խոնարհի:

Ապաստանամ, նայի, ապաստանայ, ապաստանեցայց, ապաստանայցես. ապաստանայի՛ր. մի՛ ապաստանար. ապաստանացո՛ւք, մի՛ ապաստանայք, ապաստանայեալ, և այլն. Այսպէս և: ախտանամ. ածխանամ. աղբերանամ. աղտեղանամ. աղքատանամ. աղօտանամ. ամայանամ. ամբողջանամ. ամեհանամ. ամլանամ. ամուսնանամ. ամրանամ. այգանամ. այրիանամ. անօթանամ. անապատանամ. անմտանամ. անասնանամ. անարգանամ. անբուանամ. անգայտանամ. անգիտանամ. անդորրանամ. անդրանամ. անդրանկանամ. աներեւութանամ. անպարգանամ. անզգամանամ. անզգայանամ. անզօրանամ. անժուժանամ. անիմաստանամ. անխոհեմանամ. անխօսանամ. անծանօթանամ. անկատարանամ. անկարանամ. անկարգանամ. անկիւնանամ. անկղխտանամ.

անկ․ պարանամ․ անկրօնանամ․ անհաճոյանամ․ անհա-
մնանամ․ անհանճարանամ․ անհատանամ․ անհաւա-
տանամ․ անհետանամ․ անհօգանամ․ անձեւանամ․ անձ-
կանամ․ անձկամ․ անձրեւանամ․ անճարանամ․ ան-
մահանամ․ անմորթանամ․ անմաքրանամ․ անմեղա-
նամ․ անմտանամ․ անյայտանամ․ անյաջողանամ։ ան-
յուսանամ․ աննիւթանամ․ անշարժանամ․ անշնչա-
նամ։ անշքանամ․ անուշանամ․ անչափանամ․ անպա-
րապանամ․ անպարկեշտանամ, անպիտանանամ․ անջր-
դանամ․ անսաւղանամ․ անտառանամ․ անօրանամ․
աչանամ․ ապականանամ․ ապահովանամ․ ապառաժանամ․
ապերախտանամ․ առանձնանամ․ առատանամ․ առա-
ւօտանամ․ առաքինանամ․ առիւծանամ․ առողջանամ․
առոյգանամ․ ածանամ․ ատոքանամ․ արբենամ․
արդարանամ․ արդիւնանամ․ արթնանամ․ արժանա-
նամ, արիւնանամ․ արձանանամ․ արմատանամ․ ար-
փիանամ․ արքայանամ․ արքունանամ․ աւանանամ․ ա-
ւազանամ․ բազմանամ․ բողկանամ․ բարեբաղդա-
նամ․ բարեբաստանամ․ բարկանամ․ բարձրանամ․
բաւականանամ․ բերանանամ, բթանամ․ բնականամ․
բոկանամ․ բունանամ․ բրտանամ․ գաղախանամ․ գա-
գոնանամ․ գաղջանամ․ գայլանամ․ գանգրանամ․
գարշանամ․ գեղեցկանամ․ գեղձամ․ գերանանամ․
գլթամ․ գիճանամ, գիշերանամ։ գիրանամ․ գոգա-
նամ․ գոհանամ․ գոյանամ․ գոնջանամ․ գուլանամ․
գորշանամ․ գոեհկանամ․ գրաստանամ․ գրգամ․
գօտանամ, դաժանանամ․ դալարանամ․ դահճանամ․
դաշտանամ․ դառնանամ, դատարկանամ, դերեւանամ․
դժնդականամ․ դժուարանամ․ դիակնանամ․ դիզանամ․
դիւանանամ․ դիւրանամ․ դողամ․ եզանամ․ եկեղեցանամ․

եղբայրանամ· եղկանամ· ենթակայանամ· երազանամ
երախայանամ· երամանամ: երանանամ· երաշտանամ·
երեկանամ· երեկոյանամ· երեւութանամ· երէթանամ·
երիտասարդանամ· երկուանամ· ենմանամ· երջանկա-
նամ· զազրանամ· զայրանամ· զանխլանամ· զառամանամ·
զարդանամ· զարմանամ, զգաստանամ· զգուշանամ·
զգօնանամ· զընդամ· զղջամ· զոլանամ· զուարթա-
նամ· զուարճանամ· զոփամ· զօրանամ· էականամ·
էանամ· ըղձանամ· ըմբոստանամ· ընդարմանամ· ընդ-
դիմանամ· ընդելանամ, ընթանամ, ընկերանամ· ըն-
տանենամ· թոլկանամ· թանձրանամ· թաւանամ·
թափուրանամ· թեթեւանամ· թերանամ· թեւանամ·
թխանամ· թշնամանամ· թշուառանամ· թողանամ·
թուլանամ· ժանտանամ· ժլատանամ· ժրանամ· իգա-
նամ· իմաստնանամ· իշխանանամ· լրբանամ· լայնա-
նամ· լաւանամ· լեռնանամ· լերկանամ· լխանամ·
լկտանամ· լճանամ· լոգանամ· լողամ: լուսանամ· լրա-
նանամ· լրանամ· լրբանամ· լրթանամ· լրջանամ·
խականամ· խաղաղանամ· խամանամ· խամրանամ·
խանդամ· խաչանամ· խարտեշանամ· խաւարանամ·
խեթամ· խենեշանամ, խեւամ· խեւանամ· խլա-
նամ· խնամանամ· խնծղամ· խողանամ· խողանանամ·
խոհեմանամ· խոհերանամ· խոյանամ· խոնաւանամ·
խոպանանամ· խորանամ· խորթանամ· խորխանամ·
խստանամ· խտանամ· խրախանամ· խրթնանամ· խրոխ-
տանամ· խօթանամ· ծաղկաւէտանամ· ծայրանամ·
ծանրանամ· ծանօթանամ· ծառայանամ· ծուանամ·
ծերանամ· ծիրանանամ· ծովանամ· ծուլանամ· կաթ-
նանամ· կակղանամ· կաղամ· կամարանամ· կամըր-
ջանամ· կայլակնանամ· կայծանամ· կանաչանամ·

կործանամ, կարծրանամ. կարողանամ. կարօտա-
նամ, կաւանամ. կենդանանամ, կերպանամ. կձգա-
կամ, կուճանամ. կնճթանամ. կնտանամ, կոշտա-
նամ. կրանամ. կորդանամ. կորովանամ. կուսա-
նամ. կուրանամ. հաճոյանամ. համբականամ. հա-
մեղանամ. համեստանամ, համրանամ, հայանամ.
հանդիտանամ. հանգստանամ. հանդխանամ. հասու-
նանամ. հաստանամ. հարազատանամ. հարսնանամ.
հարստանամ. հարօրանամ. հաւատարմանամ. հեզա-
նամ. հեթանոսանամ. հեղգամ. հեղգանամ, հեշ-
տանամ. հեռանամ. հերետիկոսանամ. հերիքանամ.
հզօրանամ. հիանամ. հիւանամ. հիմնանամ. հիւան-
դանամ. հմտանամ. հնանամ. հոգլանամ. հոլանամ.
հոպանամ. հովանամ. հոլանանամ. հպարտանամ.
հսկայանամ. հրանամ. հրաշանամ. հրէանամ. ձանձ-
րանամ. ձիւանամ. ձիւնանամ. ձմեռնանամ. ճաճան-
չանամ, ճարտարանամ, ճոխանամ. ճոռոմանամ.
մախամ. մոհանամ. մանկանամ. մարգարէանամ.
մարդանամ. մարթանամ. մարմնանամ. մարտիրոսա-
նամ. մեծանամ. մեկուսանամ. մեղկանամ. մեղմա-
նամ. մենանամ. մերձենամ. մթանամ, միայնանամ.
միանամ. միանձնանամ. մորոսանամ. մտերմանամ.
մօտանամ, յագենամ. յամենամ. յամրանամ, յապա-
հոլանամ, յառաջանամ. յատկանամ. յարանամ: յա-
ւերանամ. յաւերժանամ. յաւէտանամ. յափրանամ.
յերապանամ. յերկարանամ. յերկուանամ. յիմարա-
նամ. յղփանամ. յոխորտամ. յոխորտանամ. յողամ.
յոռանամ. յուլանամ. յուսամ. յօղանամ. յօրա-
նամ. նախահոգամ. նահրանամ. ներանձնանամ. ներ-
հունանամ. նժդեհանամ. նիհարանամ. նողկամ.

նողկամ․ նոյնանամ․ նորանամ․ նուաստանամ․ նր-
սեմանամ․ նրբանամ․ շոքաթանամ․ շատանամ․
շիկանամ․ շլանամ․ շնամ․ շուշանանամ․ շքեղանամ
ոլորտանամ․ ոխամ․ ոխանամ․ ողջախոհանամ․ ողջա-
նամ․ ոչնչանամ․ որոկանամ․ որբանամ․ որպիսա-
նամ․ որջանամ․ ուծանամ․ ունականամ․ ունայնա-
նամ․ ուռճանամ․ ուրախանամ․ ուրոյնանամ․ չարա-
նամ․ չորանամ․ չքանամ․ պալարանամ, պաճարա-
նամ․ պայծառանամ․ պանդխտանամ․ պատկերանամ․
պարարտանամ․ պարթևանամ․ պարկեշտանամ․ պա-
քըսկանամ․ պերճանամ․ պէսպիսանամ․ պխակա-
նամ․ պխտոյանամ․ պղերգանամ․ պնդանամ․ ջա-
նամ․ ջերմանամ․ ջոկանամ, սալանամ․ սակաւանամ․
սաղարթանամ․ սառնանամ․ սաստկանամ․ սարսուամ․
սեպանամ․ սեպուհանամ․ սերտանամ․ սեւանամ․ սինա-
նամ․ սլանամ․ սխրանամ․ սնանամ․ սնանկանամ․ սոգամ-
մնքամ․ սպառնամ․ սպիտանամ․ սպիտականամ․ սևրջա-
նամ․ ստուարանամ․ ստուերանամ․ սուրկանամ․ սուրջա-
նամ․ սրանամ․ սրբանամ․ սքանչանամ․ վայրագանամ․
վայրենանամ, վատանամ, վատթարանամ, վաւերանամ
վերանամ, վերջանամ, վխտանամ, վիշտագանամ, վշտանամ,
վսեմանամ, վստահանամ, վտականամ, տաղկամ,
տաճարանամ, տամկանամ, տապանամ, տարրանամ,
տգեղանամ․ տեղեկանամ, տենչամ, տխրանամ, տկա-
րանամ, տղայանամ, տնանկանամ, տպանամ, տափամ,
տօթանամ, րաբունանամ: ըմբռնամ, ցանկամ, ցնծամ,
ցոլնամ, ցրտանամ, ցօղանամ; փայլակնամ, փայտանամ,
փարթամանամ, փափկանամ, փենայանամ փղձկամ, փու-
թամ, փոքրկանամ, փքամ, քծնայանամ, քաղց-
րանամ, քաջանամ, քաղանամ, քինամ. օտարանամ, եւայլն:

209: Պակասաւոր և զարտուղի բայք Երկրորդ պատկերի:

Պակասաւոր ներգործական:

Տամ, տաս, տայ: տամք, տայք, տան: տայի, տա-յիր, և այլն:
Ետու, ետուր, ետ: տուաք, ետուք, ետուն:
տաց, տացես կամ տաջիր, տացէ: տացուք, տաջիք, տացեն:
տայցեմ, ցես, ցէ: և այլն:
տո՛ւր, մի՛ տար: տո՛ւք, մի՛ տայք:
Տուայ՝ տուար, տուաւ: տուաք, տուայք: տուան:
տայցիմ, ցիս, ցի: և այլն
տալ, տուող, տուեալ, տալոց, տալի:

Զարտուղի չէզոք:

Դառնամ, նաս, նայ: դառնայի:
դարձայ, ձար, ձաւ: ձաք, ձայք, ձան:
դարձայց, դարձցիս, ձցի: դարձցուք, ձջիք, ձցին:
դառնայցեմ, ցես, ցէ: դառնայցեմք, և այլն:
դա՛րձ կամ դարձի՛ր, մի՛ դառնար: դարձէ՛ք կամ դարձարո՛ւք: դառնալ, դարձեալ, դարձող, դառնալոց, նալի:

Նոյնպէս խոնարհին և բաղադրեալք սորին, անդրադառնամ. բացադառնամ. վերադառնամ:

Զարտուղի չէզոք:

Կեամ, կեաս, կեայ: կեամք, կեայք, կեան:
կեցի, կեցեր, կեաց, կեցաք, կեցէք, կեցին:

Կեցի. կեցեր. եկեաց: կեցաք. կեցիք. կեցին:
կեցից. կեցցես կամ ցջիր. կեցցէ: կեցցուք. կեցջիք.
կեցցեն: կեայցեմ. ցես. ցէ. և այլն:
կեա՛ց. մի՛ կեար: կեցէ՛ք. մի՛ կեայք:
կեցօղ. կեցեալ. կելոյ. կեալ:

Պակասաւոր չէզոք:

Գամ. գաս. գայ: գամք. գայք. գան: գայի. յիր. գայր:
գայաք. և այլն:
Եկի. եկեր. եկն: եկաք. եկիք. եկին:
եկից. եկեսցես կամ եկեսջիր. եկեսցէ: եկեսցուք. եկե-
սջիք. եկեսցեն: գայցեմ. ցես. ցէ: և այլն:
Ե՛կ. մի՛ գար: եկա՛յք. մի՛ գայք:
գալ, գալոյ. լով: եկեալ. գալոց:

Պակասաւոր չէզոք:

Երթամ. երթաս. թայ: երթայի. յիր. թայր:
չոգայ. չոգար. գաւ: չոգաք. գայք. գան:
երթայց կամ երթիցեմ. երթիցես կամ երթիջիր եր-
թիցէ: երթիցուք. երթիջիք. երթիցեն:
երթայցեմ. թայցես. թայցէ: թայցեմք: և այլն:
Ե՛րթ. մի՛ երթար: երթա՛յք. մի՛ երթայք:
երթալ. լոյ. լով: երթեալ. երթալի:

Այլ յաղագս բայից եկ̄դ. պատկերի սոյնչափ, տես-
ցուք արդ զվերջին պատկերն խոնարհման ընդ բայից
նորուն:

### Դիմաւոր և ժամանակաւոր բայք ի Սահմանական եղանակի:

| Դէմք | Ներգործականք: | | Կրաւորականք: | | Ժամանակք |
|---|---|---|---|---|---|
| | Եզակի: | Յոգնակի: | Եզակի: | Յոգնակի: | — |
| ա: | Հեղում. | Հեղումք. | Հեղանիմ. | Հեղանիմք. | |
| բ: | հեղուս. | հեղուք. | հեղանիս. | հեղանիք. | Ներկայ: |
| գ: | հեղու: | հեղուն: | հեղանի: | հեղանին: | |
| | — | — | — | — | — |
| ա: | Հեղուի. | Հեղուաք. | Հեղանէի. | Հեղանէաք. | |
| բ: | հեղուիր. | հեղուիք. | հեղանէիր. | հեղանէիք. | Անկատար: |
| գ: | հեղոյր: | հեղուին: | հեղանիւր: | հեղանէին: | |
| | — | — | — | — | — |
| ա: | Հեղի. | Հեղաք. | Հեղայ. | Հեղաք. | |
| բ: | հեղեր. | հեղիք. | հեղար. | հեղայք. | Կատարեալ |
| գ: | հեղ. կամ եհեղ: | հեղին. | հեղաւ: | հեղան: | |
| | — | — | — | — | — |
| ա: | Հեղից. | Հեղցուք. | Հեղայց. | Հեղցուք. | |
| բ: | հեղցես. հեղջիր. | հեղջիք. | հեղջիս. հեղջիր. | հեղջիք. | Ապառնի |
| գ: | հեղցէ: | հեղցեն: | հեղցի. | հեղցին: | պարզ: |
| | — | — | — | — | — |
| ա: | Հեղուցում. | Հեղուցումք. | Հեղանիցիմ. | Հեղանիցիմք. | Ապառնի |
| բ: | հեղուցուս. | հեղուցուք. | հեղանիցիս. նիջիր. | հեղանիջիք. նի ջիք. | բաղադրեալ: |
| գ: | հեղուցու: | հեղուցուն: | հեղանիցի: | հեղանիցին: | |

### Դիմաւոր և ժամանակաւոր բայք ի հրամայական եղանակի:

| Դէմք | Ներգործականք: | | Կրաւորականք: | | |
|---|---|---|---|---|---|
| | Եզակի: | Յոգնակի: | Եզակի: | Յոգնակի, | |
| ա: | . . . . . | . . . . . | . . . . . | . . . . . | Ներկայ: |
| բ: | Հե՛ղ. մի՛ հեղուր: | Հեղէ՛ք. մի՛ հեղուք: | Հեղի՛ր մի՛ հեղանիր: | Հեղարո՛ւք. մի՛ հեղանիք: | |
| գ: | . . . . . | . . . . . | . . . . . | . . . . . | |

### Անդէմ և անժամանակ բայանունք:

Աներևոյթք. { Ներգործ: Հեղուլ: հեղլոյ, հեղլով: և այլն:
Կրաւորակ: Հեղանիլ: Նոյն, նոյն:

Ընդունելութիւնք: { Հեղող:
հեղեալ:
հեղլի.
հեղլոց.

Բայք չորրորդ պատկերի:

211: Սակաւ են բայք, որ խոնարհին ըստ այսմ Դ. պատկերի, և գրեթէ ամենքին զարտուղի են և պակասաւոր, վասն ըստ սովորին միայն տողեալց առանձնօք, առ իւրաքանչիւրսն զխոտորմունս նոյին նշանակեալ:

Ներգործականք:

Առաւելում. ելուս. ելու: Առաւելուլն. ելուլր. և այլն: առաւելրէ. ելիր. ելեայ: ելաք. և այլն: առաւելեա՛. մի՛ առաւելուր:

Առաւելայ. ելար. ելաւ: Առաւելեալ:

Առնում. առնուլ:

առի. առեր. էառ էառ առ: Ա՛ռ. մի՛ առնուր. առէ՛ք:

Առայ, առար. առաւ: առեալ. առօղ. առնլոց. առնըլ ի:

Արգելում. արգելի. ելեր. արգել: արգե՛լ. մի՛ արգելուր. արգելէ՛ք:

Գելում. գելի. գելեր. գելեաց: գե՛լ. մի՛ գելուր: գելեալ:

Գերծում. գերծի. գերծեր. եգերծ: գե՛րծ, մի՛ գերծուր գերծեալ:

Դիզում. դիզի. դիզեր. եդէզ, դիզեա՛ մի՛ դիզեր: դիզեալ:

Զգենում. զգեցայ. ցար. ցաւ: զգեցի՛ր. մի՛ զգենուր: զգեցեալ:

Զեղում. զեղի. զեղեր. զեղ. զե՛ղ. մի՛ զեղուր: զեղանիմ. զեղայ. զեղեալ:

Զենում. զենի. զեներ. եզեն: զե՛ն: զենանիմ. զենայ: զենի՛ր: զենեալ:

Զերծում. զերծի. զերծեր. զերծ. զե՛րծ. մի՛

զերծուր: զերծանիմ, զերծայ: զերծեալ:

Ընթեռնում, ընթերցայ, ցար. ցաւ: երցայց: ընթեր-ցի՛ր, մի՛ ընթեռնուր: ընթերցեալ:

Ընկենում, ընկեցի, ցեր, կէց: ընկե՛ց մի՛ ընկենուր: Ընկեցայ, ընկեցեալ:

Թողում, թողի, ղեր, եթող: թո՛ղ, մի՛ թողուր:

Թողանիմ. թողայ, թողայց: թողանիցիմ, թողեալ:

Թքնում, թքի, թուքեր, եթուք: թո՛ւք, մի՛ թքնուր: թքեալ:

Լեսում, լեսի, սեր, լես: լեսեա՛. մի՛ լեսուր: լեսեալ:

Լիզում, լիզի, լիզեր, լեզ: լիզեա՛, մի՛ լիզուր: լիզեալ:

Լնում, լցի, լցեր, ելից կամ լից: լի՛ց: Լնանիմ, լցայ քնանիցիմ: լցեալ:

Խնում, խցի, խցեր, եխից կամ խից: խի՛ց: Խցանիմ, խցայ, խցեալ:

Կասում, կասի, կասեր, կասեայ: կա՛ս կամ կասեա՛. կա-սեցեալ:

Կիզում, կիզի, կիզեր, եկէզ: կէ՛զ: կիզեալ: Կիզա-նիմ, կիզայ:

Հանում, հանայ, նար, հան: հա՛ն, մի՛ հանուր:

Հենում, հենի, հեներ, հեն: հե՛ն մի՛ հենուր:

Հերձում, հերձի, հերձեր, եհերձ: հե՛րձ: Հերձայ: հեր-ձեալ:

Յաւելում, յաւելի, լեր, յաւել: յաւե՛լ, մի՛ յաւելուր Յաւելայ, յաւելի՛ր յաւելեալ:

Յեղում, յեղի, յեղեր, եյեղ: յե՛ղ: Յեղայ, յեղեալ:

Յեռում, յեռի, յեռեր, յեռ: յե՛ռ, մի՛ յեռուր, յե-ռեալ:

Սկսնում, սկսայ, սկսար, սկսաւ. սկսի՛ր: սկսեալ:

Ստեղծում, ծի, ծեր, ստեղծ: ստե՛ղծ: Ստեղծայ:

Քե՛րծում. ծի. ծեր. եքերծ: քե՛րծ. մի՛ քերծուր: քերծեալ:

Ցելում. ցելի. ցելեր. ցել: ցե՛լ. մի՛ ցելուր: Ցելացեալ:

Ծանօթութիւն: 'Ի ներգործական բայից սոսկ ը՛ երկ բայք և երրորդ դասակերպի խոնարհելոյ, ի՛ն, ա՛ն, և ո՛ւն, եղերելոյ սակաւք են, որք աւելցէն զներկայն կրաւորական ին, յանգե՛ւ, այլ 'ի պահանջել հարկին կամ ներգործական ներկայն դնի փոխանակ կրաւորականի, և կամ զբաղադրեալ նոյն բային ը՛ էական բայի 'ի գործ ածի, զօ", ասացեալ լինիմ, Թացեալ լինիմ, յղացեալ լինիմ, դերձեալ լինիմ, Թողեալ լինիմ, եւայլն: զնոյնն խամ և զն բաղադրեալ ածանցոյն և հրամայականի նոյին:

212 Չեզոքական, ո՛ն, եղերեալք, որոց խոնարհումն 'ի ժամանակս ինչ լինին ը՛ ներգործելի, և 'ի ժամանակս ինչ ը՛ կրաւորականի այսր երրորդ պատկերի: (ը՛ 203:)

Այտնում. նուս. նու: Այտնուլ. եւայլն: Այտեայ. եար. եաւ: այտի՛ր. մի՛ այտնուր: այտուցեալ:

Երդնում. երդուայ. ար. աւ: երդուայց: երդնուցում. երդուի՛ր. մի՛ երդնուր. երդուեալ:

Զատնում. զատայ. տար. տաւ: զատի՛ր. զատուցեալ:

Զարթնում. զարթեայ. եար. եաւ: զարթի՛ր. զարթուցեալ:

Զբաղնում. զբեցայ. ցար. ցաւ: զբաղի՛ր. զբաղեալ:

Զբօսնում. զբօսայ. սար. սաւ: զբօսի՛ր. զբօսեալ:

Ընկլնում. ընկլայ. լար. լաւ: ընկլջի՛ր. ընկլեալ:

Թաղնում. Թաղեայ. եար. եաւ: Թաղի՛ր. Թաղուցեալ:

Խրտնում. խրտեայ. եար. եաւ: խրտի՛ր. խրտուցեալ:

Հարթնում. հարթեայ. եար. եաւ: հարթի՛ր: հարթուցեալ:

Հեծնում. հեծայ. ծար. ծաւ: հեծի՛ր: հեծեալ.

Հեղձնում. հեղձայ. ձար. ձաւ: հեղձի՛ր: հեղձուցեալ:

Մածնում. մածեայ. եար. եաւ: մածի՛ր. մածուցեալ:

Յենում. յեցայ. ցար. ցաւ: յեցի՛ր. յեցեալ:

Շրտնում. շրտեայ. եար. եաւ: շրտի՛ր: շրտուցեալ:

Ոստնում. ոստեայ. եար. եաւ: ոստի՛ր: ոստուցեալ:

Ուռնում. ուռայ: ուռի՛ր. ուռուցեալ:

Պագնում. պագեայ. պագի՛ր. պագուցեալ:

Պշնում. պշեայ. պշի՛ր. պշուցեալ:

Ջեռնում. ջեռայ. ջեռի՛ր. ջեռուցեալ:

Սառնում. սառեայ. սառի՛ր. սառուցեալ:

Սարտնում. սարտեայ. սարտի՛ր. սարտուցեալ:

Ցածնում. ցածեայ. ցածի՛ր. ցածուցեալ:

Ցասնում. ցասեայ. ցասի՛ր. ցասուցեալ:

Փախնում. փախեայ. փախի՛ր. փախուցեալ:

Քաղցնում. քաղցեայ. քաղցեա՛ց. քաղցեալ:

213: Չէզոքականք, ի՛, եզերեալք, որք խոնարհին ամենևին իբրև զներգործականն այս երրորդ պատկերի: զօրօրինակ:

Ագանիմ, նէի. ագայ. ագար, ագաւ: ագայց: ագանիցիմ: ագի՛ր. մի՛ ագանիր: ագեալ:

Անդրադարձիմ. ձայ. ձայց: անդրադարձի՛ր:

Անկանիմ. անկայ. կայց: անկի՛ր. մի՛ անկանիր: անկերուք: անկեալ:

Բուսանիմ. բուսայ. սայց: սանիցիմ: բուսի՛ր: մի՛ բուսանիր: բուսեալ:

Դիպանիմ. դիպայ: դիպի՛ր: դիպեալ:

Զեղանիմ. զայ. զի՛ր. մի՛ զեղանիր. զեղեալ:

Զբօսանիմ. սայ: զբօսի՛ր. մի՛ զբօսնիր. զբօսեալ:
Զղջանիմ. ջայ. ջանիցէս: զղջի՛ր: ջեալ:
Զատանիմ. զնստայ. զնստի՛ր: տեալ:
Թռանիմ. թռեայ. թռի՛ր. մի՛ թռանիր. թռեալ:
Մածանիմ. ծայ: ծանիցիմ: ծի՛ր. ծեալ:
Մեռանիմ. ռայ. ռի՛ր. մի՛ մեռանիր. մեռեալ:
Յեղաղարձիմ. ձայ. ձի՛ր: յեղաղարձեալ:
Նստիմ, նստայ: նստիցիմ: նի՛ստ. մի՛ նստիր. նստեալ:
Շիջանիմ. ջայ: ջանիցիմ: ջի՛ր. ջեալ:
Ջեռանիմ. ռայ. ռի՛ր մի՛ ջեռանիր: ջեռեալ:
Ջերանիմ. րայ. րի՛ր. մի՛ ջերանիր. ջերեալ:
Սնանիմ. սնայ. սնի՛ր. մի՛ սնանիր. սնեալ:
Վերադարձիմ. ձայ. ձի՛ր. մի՛ վերադառնար:
Փլանիմ. փլայ. փլի՛ր. մի՛ փլանի՛ր. փլեալ:
Փրծանիմ. ծայ. ծի՛ր. մի՛ փրծանիր: և այլն:

Ձ 14: Բայն մի չեզոքականք, չէ՞, եզերեալք, որք ի կրաւորականն այսր պատկերի խոնարհին, զօ՞:

Երկնչիմ. երկեայ. կեայց կամ երկեցիմ. երկեցես կամ
երկիցիր. երկիցէ: կիցուք. կիջիք. կիցեն:
Երկնչիցիմ: չիցիս. չիցի: երկի՛ր. մի՛ երկնչիր. կերո՛ւք:
կնչի՛ք. երկուցեալ: երկնչօղ:
Զարթչիմ. տեայ. տի՛ր, մի՛ զարթչիր. զարթուցեալ:
Թագչիմ. գեայ. գի՛ր. մի՛ թագչիր: թագուցեալ:
Թռչիմ. թռեայ. թռի՛ր մի՛ թռչիր. թռուցեալ:
Խափչիմ. փեայ. փի՛ր. խափուցեալ:
Խրտչիմ. տեայ. տի՛ր, խրտուցեալ:
Կառչիմ. ռեայ. ռի՛ր. կառեալ:
Կորնչիմ. կորեայ, րի՛ր. կորուսեալ:
Հանգչիմ. գեայ. գի՛ր մի՛ հանգչիր. հանգուցեալ:
Մատչիմ. տեայ. տի՛ր. մի՛ մատչիր. մատուցեալ:

Մարտնչիմ, րտեայ, տե՛ր մի՛ մարտնչիր: տուցեալ:
Յանդչիմ, դեայ: դե՛ր մի՛ յանդչիր: յանդուցեալ:
Սառչիմ, սառեայ: ռե՛ր, մի՛ սառչիր: սառուցեալ:
Փախչիմ, խեայ: խե՛ր, մի՛ փախչիր: խուցեալ: եւ այլն:

215: Յայսմ վայրի կարգեցից զխոնարհմունս էական բայից, յորոց երեքին, էմ, գոմ, լինիմ, են պակասաւոր, իսկ չորրորդն եղանիմ, ունի զյատուկ ժամանակս:

Պակասաւոր էական, էմ. խոնարհի այսպէս:

Սահմանական·

Ներկայ: Եմ. ես. է: եմք. էք. են:
Անկատար: Էի. էիր. էր: էաք, էիք. էին:
Ապառնի: Իցեմ. իցես. իցէ: իցեմք. իցէք. իցեն:

Հրամայական:

Ե՛ր . . . Է՛ք. երուք:
Ել. ելոյ. ելով. եւ այլն: եալ. ելոց:

216: Պակասաւոր էական, գոմ, խոնարհի այսպէս:
Ներկայ· Գոմ. գոս. գոյ: գոմք. գոյք. գոն:
Անկատար· . . . . . . գոյր . . . . . . գոյին:
Ապառնի· . . . . . . գուցէ . . . . . . գուցեն:
գոլ· գոլոյ· գոլով· եւ այլն: գոլոց:

217: Պակասաւոր էական, լինիմ, խոնարհի այսպէս:
Ներկայ· Լինիմ, լինիս, լինի: լինիմք, լինիք, լինին:
Անկատար· Լինէի, լինէիր, լինէր: լինէաք, լինէիք, լինէին:
Ապ. որոշ. Լիցիմ, լիցիս կամ լիջիր, լիցի: լիցուք, լիցիք կամ լիջիք. լիցին:
Ապ. ենթ. Լինիցիմ. լինիցիս կամ լինիջիր. լինիցի. լինիցիմք. լինիցիք կամ լինիջիք. լինիցին:

հրամայական. Լե՛ր. մի՛ լինիր, լերուք, մի՛ լինիք:
Լինել, լինել կամ լեալ, լինելոյ, լինելն:

218: Նշական բայս, Եղանիմ, խոնարհի այսպէս:

Ներկայ: Եղանիմ, եղանիս, եղանի: եղանիմք, նիք, նին:
անկատ: Եղանէի, նէիր, նէր: նէաք, նէիք: նէին:
կատար: Եղէ, եղեր, եղեւ: եղաք կամ եղեաք, եղէք, եղեն:
ապ. առջ: Եղէց կամ եղիցիմ, եղիցիս կամ եղիջիր. եղիցի
եղիցուք կամ եղիցիմք. եղիջիք. եղիցին:
ապ. երկ. Եղանիցիմ. եղանիցիս կամ եղանիջիր. եղանիցի,
եղանիցիմք, եղանիցուք կամ եղանիջիք, եղանիցին
հրաման: . . . մի՛ եղանիր, եղերուք, մի՛ եղանիք:
Եղանել, նիլ, նելոյ, նելով:
Եղեալ, եղանելոյ, եղանելն:

219: Գոն եւ այլ քանի մի բայք՝ բազմօք պակասաւորք, 'ի գիրս Նախնեաց ուրեք երեւեալք, զորս աստանօր առաջի արարեալ 'ի գիտու՟ համբակաց: Այսպիսի են:

Նախ՝ պակասաւոր չէզոքն, պարտիմ, (այ՟, պարտաւոր եմ.) որ խոնարհի այսպէս:

Ներկայ: Պարտիմ, տիս, տի: պարտիմք, տիք, տին:
անկատ: պարտէի, տէիր, տէր: պարտէաք, տէիք, տէին:
ապառ: Պարտեցիմ, ցիս, ցի: ցիմք. ցիք, ցին:

Երկրորդ՝ պակասաւոր չէզոքս, Մարթեմ, որ խոնարհի այսպէս:

Ներկայ: Մարթիմ, թիս, թի, մարթիմք, թիք, թին:

ապառնի: Մաղթեցեմ, եցես կամ եջիր, եցէ: Թեցեմք; եցէք կամ եջիք, եցեն:

Երրորդ՝ Պակասաւոր ներգործականս. գոգցեա. որ խոնարհի այսպէս:

ապառնի, . . . գոգցես կամ գոգջիր, գոգցէ: գոգցուք, գոգջիք, գոգցեն:

հրամայ: գո՛գ . . . գոգէ՛ք . . . . :

Չորրորդ՝ այս չեզոք բայք, ցաւէ, ցաւէր, ցաւեաց, ցաւեսցէ, ցաւիցէ, ցաւել:

Հինգերորդ՝ այս չեզոք բայք, պիտի, պիտէր, պիտէին, պիտել:

Վեցերորդ՝ այս մի բառ, չի՛ք, որ նշանակէ. ո՛չ գոյ:

220: Յաղագս բնուն և կազմուն բայից շատասցէն ասացեալքս ցայսվայր, որոց ուղիղ գործածուն աւանդի յերկրորդ մասին գրոյս:

# ԳԼՈՒԽ. Ե:

## Յաղագս Ընդունելութեան:

221: Չորրորդ տեսակ նշանական բառից մերոց կոչի ընդունելութիւն, որով լծանին այն իմն բառք, որ 'ի բայից ծնանին քառեակ այս վերջաւորութեամբք, օղ կամ ող. եալ. լի. լոյ, և 'ի խօսակցութեան վարին իբր ածական անուն, ունելով զզօրութի բայի. յորմէ և կոչին. բայանուանք, զորոց և զօրինակս բղխման եդի վերագոյն յերես պատկերս անդ բայից, իբր այս կալող, կալեալ, կալելի, կալելոց, լուացող, հեղեալ, հեղլոց, և այլն:

Մասնիկն, ող իբր բուն յատուկ տեղւոյ կարէ զօդիլ իբր ներկայի կամ իբր կատարելոյ սահմանականին. զո". կալեմ, կալեցի, կալող, կալեցող: կամիմ, կամեցայ, կամող, կամեցող: ասացի, ասացող: և այլն: Բայց ոչ իբր իմն բայից անխտիր կցի, այլ առաւելապէս իբր ներգործականս և իբր չեզոքս առաջին և երկրորդ պատկերին. իսկ իբր էական բայս, իբր կրաւորականս, և իբր բայս, ում, չիմ, եցերեալս, կամ ոչ երբեք, կամ սակաւ ուրեք միաւորի. զի անախորժ է ասել. լինող, եղանող, գիտող, յուշող, և այլն: այլ փոխան սոցին 'ի գործ ածի վերջաւորութին, եալ. զո", եղեալ, զեղեալ, թռուցեալ, և այլն:

222: Մասնիկս, եալ, միանայ իբր ներկայի կամ իբր կատարելոյ սահմանականին. զո". կալեցի, կալեալ, կալեցեալ: լուացի, լուացեալ: խօսեցայ, խօսեցեալ. և այլն:

Բայց 'ի զարտուղի բայից իբր 212. և 214. համարովք եդելոց որոց բառնումք անկանոն վերջաւորութ իբր եկերին ա-ցեալ. զո". պակուցեալ, փախուցեալ, կորուսեալ,

մարտուցեալ. եւ այլն: Նմանայն բառք սովին մասնկամբ եղերեալք. առանձին անուամբ կոչին. դերբայ:

223: Մասնիկքս, ՆԻ, ՆՈՅ. յաւելին յանորոշութիւ բայից, զո՛. կապել — կապելնի. ընթանալ — ընթանալնի, ընթանալնոյ. եւ այլն: միայն թէ ՚ի բայս, որք ուն եղերեալ ՚ի բայ ձգի այդ մասնիկ, եւ ը̄ մնացեալ արմատոյն կցին, ՆԻ, ՆՈՅ. զո՛. ընթեռնլի. ընթեռնլոյ. հեղլի. հեղլոյ. յաւելլի. յաւելլոյ: եւ ՚ի բառս, որք չեն եղերեալ. ՚ի բայ ձգի են. եւ յաւելի, ԵԼԻ, ԵԼՈՅ. զո՛. երկնչիմ. երկնչելոյ. երկնչելի. մարտնչելոյ. մարտնչելի. եւ այլն:

224: Ընդունելութիւն մասնկամբքս, ԱԾ, ԵԱԼ, ԵԼՈՅ եղերեալս որոշեսցեն համբակք ՚ի սակաւ անուանց նմանաձայն յանգելոյ. որպիսի են սոքին, ձախող. ներբող. կոթող. խանձող. բարելի. զզուշալի. զազրալի. սքանչելի. կուսարձալի. ծամալի. ցաւալի. գելոյ. թաւալոյ. եւ այլն: վա̄ զի երեք առաջինքն յայտնի անուանք են. ը̄ որում չունին բայ, յորոց բղխեսցեն: Բառն խանձող. վարի երբեմն իբր անուն, եւ այլ ուր իբր ընդունելու, ՚ի բայէս. խանձեմ, յորմէ բղխեն խանձող, խանձելոյ: եւ այլն: Բառքս. բարելի. սքանչելի. ցաւալի. կուսարձալի. եւ այլն. են անուանք բարդեալք ը̄. ՆԻ. բառիս. վա̄ զի չունին անորոշ. բարել. սքանչել. զազրալ. ցաւալ: Զի՞ն բայք. սքանչանամ. ցաւիմ. կուսարձանամ. բայց ընդունելութիւնք սոցին լինին, սքանչանալի. ցաւելի. կուսարձանալի: նոյնպէս եւ բառքս. գելոյ. թաւալոյ. են անուանք. վա̄ զի թէպէտ գոյ բայ գելում. բայց ընդունելութիւնքն լինին. գելեալ. գելլի. գելլոյ. իսկ ՚ի բայէն թաւալեմ. բղխեն, թաւալելի. թաւալելոյ. եւ այլն:

225: Կորագայք ընդունելութեանց են այնք, որք

են. 1 սեռ: 2 ձև: 3 տեսակ: 4 թիւ: 5 հոլով: և 6 հոլովադասութիւն:

Սեռք ընդունելութեանց թէպէտ նոյն են ընդ սեռից բայից, սակայն ոչ ճանաչին 'ի վերջաւորութեանց իւրեանց, այլ մասամբ լինի՝ ճանաչին 'ի բայէն՝ յորոյ բղխեն, ոպ̃ թէ, կոչող. հեղեալ. լուացեալ. եւ այլն. իցեն ներգործական, զի գլի բայք նոցին են ներգործական: եկեալ, զարթուցեալ, մեռեալ. եւ այլն. իցեն չէզոք, զի գլի բայքն՝ յորոյ բղխեն, են չէզոքական. եւ այլն:

Բայց ստուգագոյն մասամբ՝ սեռք ընդունելութեանց ճանաչին 'ի խնդրոցն, զոր առնուն 'ի խօսակցութեան անդ, օրինակ իմն, եթէ ասես. օրհնեալ եմ՝ զած̃, օրհնելոց եմ զած̃, օրհնելի է մզ զած̃, եւ այլն. ընդունելութիւնքդ վարին ներգործական մտօք, վն հայցական հոլովոցն՝ զոր առնուն 'ի խնդիր: սակս եթէ ասես, օրհնեալ եմ յայլ, օրհնելոց եմ յայլ, օրհնելի է 'ի մէնջ ած̃, եւ այլն. ընդունելութիւնքդ գնին իբր կրաւորական վն բացառական խնդրոյն, զոր առեալ են: Իսկ ճշգրիտ խօսելով՝ ընդունելութիւնք ոչ նշանակութբ և ոչ յանգիւ որոշեն կամ ցուցանեն զայս կամ զայն սեռ:

226: Ձևք ընդունելութեանց երեք են, ըստ բայիցն՝ յորոց բղխեն, այն է՝ պարզ, բարդ, և յարաբարդ:

Պարզ կոչին ընդունելութիւնք, որ ծնանին 'ի պարզ բայից, որ°. խաբող. կանգնեալ. հայցելի. եւ այլն:

Բարդ կոչին բղխեալքն 'ի բարդ բայից. որ°. դասակարգող. բարեբանեալ. վերադասելի. եւ այլն:

Յարաբարդ ասին, որք 'ի նոյնպիսի բայից ծնանին. որ°. գործադատարարող. ողբերգեալ. եւ այլն:

227: Տեսակք ընդունելութեանց նոյնչափ են, որչափ բայից. այն է, ներկայ և անցեալ:

Նախատիպ ընդունելութի համարին բղխեալքն 'ի նախատիպ բայից. զօ". տեսեալ: տեսանելի, այրեցող. եւ այլն ածանցեալ ասին ընդունելութիք սերեալք յածանցեալ բայից. զօ". ըմբռնելոյ. սթափեալ: պատառող. լծորդելի. եւ այլն:

228: Թիւք ընդունելութեանց երկու են ըստ անուանց. ըստ եզական. քանդակող. փորձեալ. ծնանելոց. եւ այլն, և յոգնական: քանդակողք, փորձեալք, լսելիք, եւ այլն:

229: Հոլովք ընդունելութեանց ըստ օրինակի անուանց են ինն, ուղղական, սեռական, գործիական, եւ այլն, զօ". ծագող, ծագողի, ծագողաւ: ծագողք, ծագողաց, եւ այլն:

230: Հոլովադասութիւք ընդունելութեանց երեք միայն են ըստ երից պատկերաց անուանց:

Ածերեալքն, ող կամ՝ ող, հոլովին ըստ երկրորդ պատկերի (տե՛ս, 59, 63.) զօ". շինող, շինողի, գաւ, գոյ, գաւք: կամ գօ.ք: եւ այլն:

Ածերեալքն, էալ, հոլովին ըստ երրորդ պատկերի, (տե՛ս 67, 72.) ըստ եզականին և ըստ յոգնականին: զօ". ծնեալ ծնելոյ, ծնելով. ծնեալք. ծնելոց, ծնելովք, եւ այլն:

Որք 'ի չէ եկերին. հոլովին ըստ չորրորդ պատկերի. տե՛ս 77, 81. յերկոսեան թիւս, զօ". սիրելի, սիրելւոյ, սիրելեաւ. սիրելիք, սիրելեաց սիրելեաւք կամ սիրելեօք. եւ այլն:

231: Իսկ որք 'ի լոյ վերջանան: պակասաւոր են. զի նախադրիւ միայն հոլովին (42.) յառաջոյ կողմանէ եզակի և յոգնակի. զօ". ապրելոյ. յապրելոյ. զապրելոյ. ապրելոյք, յապրելոց, զապրելոյս, եւ այլն:

Այլ կարեւոր դիտելիս ընդունելութեանս գտցես յերկրորդ մասին:

# ԳԼՈՒԽ Զ.

## Յաղագս Նախադրութեանց:

232: Նախադրութի կոչին այնպիսի բառք, որք յա-րելով ՚ի գոյական անուանն՝ յայտ առնեն զպէտս վերա-բերութիս նոցին առ այլ անուն կամ առ բայ. և բաժանին յերկուս տեսակս, որք են, հոլովառու նախդիր. և հոլո-վառու նախադրութի:

Հոլովառուքն, որք և նախդիր կոչին, են սոքին. ՚ի, յ, առ, առ ՚ի, ց, զ, ընդ:

Հոլովառու ՚ի. կազմէ զտրական, զբացառական, և զներգոյական հոլովս. և յարի ՚ի բառս բաղաձայն տառիւ սկսեալս, զո՛. ՚ի սիրտ, ՚ի սրտէ, ՚ի սրտի, և այլն:

Հոլովառու, յ, նոյնպէս կազմէ զտրական, զբացառա-կան, և զներգոյական հոլովս. և յարի միայն ՚ի բառս ձայնաւորաւ սկսեալս, զո՛. յաղեղն, յաղեղանէ, յաղե-ղան, և այլն:

Հոլովառու, առ, յօրինէ զտրական հոլով, զո՛, առ արքայ, առ բժիշկ, առ քեզ, առ իս, և այլն.

Հոլովառու, առ ՚ի, յարեալ ՚ի բառս բաղաձայնիւ սկսեալս, կազմէ զտրական և զբացառական հոլով, զո՛, առ ՚ի քեզ. առ ՚ի չգոյէ, առ ՚ի ձէնջ, և այլն:

Հոլովառու, ց, յարի միայն ՚ի տրական հոլով: և ՚ի բառս բաղաձայնիւ սկսեալս՝ զկնի իւր առնու զօրութ [illegible], ը, զո՛. ցարքայ, ցբաժակ, որ հնչի իբր ցըբաժակ:

Հոլովառու, զ, կազմէ զհայցական [illegible] և զպատմական հոլովս. և ՚ի յարիլն ՚ի բառս բաղաձայ-նիւ սկսեալս, յառաջ քան զինքն զօրութ ստանայ ըղ-

տառդ, ը. զօ". զարշնաստ. զարշնատիւ. զարքայէ. զըն՛ ժամ՝ որ հնչի, ըզ բաժակ:

Բառս, ընդ. կապ մէ զօրական. զ բացառականն, և փոխ- գոյական հոլովս. զօ". ընդ թիւ. ընդ նա. ընդ աջմէ. ընդ ահեկէ. ընդ անյանիւ:

233: Հոլովառու նախադրութիւնք բաժանին ՚ի զանազան տեսակս ա̅ ծկութե, բ̅ կազմութե, և գ̅ նշանակութե խորհեանց:

Ըստ ծկութե մտածեալ՝ բաժանին ՚ի բնական և ՚ի յարմարական:

Բնական նախադրութի ասին այն ք, որք չեն ՚ի փոխ առեալ յայլ տեսակ բառից, այլ միշտ են նախադրութի վարին, և են այս սակաւ բառք, առ. առ՚ի. ըստ. ընդ. եբր. եբրև. եբրու. մինչ. մինչև. վասն. քան. հանդերձ. եւայլն: Ը որս դասին և այլ քանի մի նախադրութիւնք. որք ոչ երբէք կամ հազիւ ուրեք ՚ի գործ ածին. և են այսոքիկ. զերդ. զերթ. ենթ. լծալը. լծանց:

Իսկ յարմարական նախադրութի կոչին այնք, որ յանուանց կամ յայլ բառից առեալ ՚ի գործ ածին իբր նախադրութի, զօ". ՚ի ձեռն. յառաջոյ. որպէ. յայսկոյս. եւայլն:

234: Ըստ կազմութե մտածեալ՝ նախադրութիւք բաժանին ՚ի պարզ. զօ". վասն. քան. իբր. ընդ. եւայլն:

Եւ ՚ի բարդ. զօ". ընդդէմ. առընթեր. իբրև. զերքան. նախքան:

235: Ըստ նշանակութեն քննելով՝ նախադրութիւք բաժանին յեօթն տեսակս, որք են:

Նախ՝ առաւելական. և են այս բառք. առ. քան. դեր. առաւել քան. աւելի քան. դեր ՚ի վերոյ. դեր քան. դեր ՚ի վերոյ քան. եւայլն զոր օրինակ:

Առաւել քան զիման է սառ . . . . աւելի:

քան զերկաթատան դուռն զհրեշտակաց . . . զի՞ր մարդկան զտան սովատ զօրացեալ . . . զեր ՚ի վերոյ քան զմարտակերն լինել . . . քան զքաղում ձայս լաւ էք դուք. եւայլն:

Երկրորդ՝ կցորդական. որք են այս բառք. Ը՛նդ, զ՚հետ. զ՚կնի. հանդերձ. եւայլն, զորօրինակ:

* Մի ոՃն յայնզանէ՝ որ էին ը՛ յ՚մի . , . ընդ հարթրել՝ ընկղմանէ հանդերձ ծերովքն եւ դայլոք . . . եւ երկթայլին զ հետ ն՛ը . . . ելթէ ոք կամեցի զհետ իմ գալ, | եւայլն:

Երրորդ՝ զատական, որք են առքին, առանց, բաց. զատ, մեկուսի, քաւ, եւայլն. զ՛ օրինակ:

* Առանց առակի ոչինչ խօսէր ը՛նոսա . . . մի՛ է ինձ, եւ ոչ գոյ այլ բաց ՚ի նմանէ . . . մեկուսի յամբոխէ անտի, | եւայլն:

Չորրորդ՝ պատՃառական. են որքն, Առ, առ ՚ի, պատճառ, յաղագս, վա՛, սակս, ՚ի սակս, եւայլն, զօ՛:

* Եղիցիք ատեցեալ յամենեցունց վասն անուան իմոյ . . . գիտէր՝ թէ առ նախանձու մատնեցին զնա . . . ՚ի ձեր սակս սիոն արօրադիր լիցի . . . կեցցէ անձն իմ յաղագս քո . . . վառեսցէ զերարեած առ ՚ի խնդրելոյ զ փրկէժս . . . խօսէք զ բանն Այ վա ձերոյ ուսմնդուՃ . . . որ հայի ՚ի կին նորա առ ՚ի ցանկանալոյ նմա, | եւայլն:

Հինգերորդ՝ նմանական. որ են այսոքիկ: Իբր. իբրեւ, իբրու, պէս, որպէս, ըստ, զօրէն. քան, եւայլն, զօ՛:

* Արդարքն ծագեսցեն իբրեւ արեգակն . . . ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ . . . բայց ը՛

գործոյ նոյա մի՛ անձէք ... եղէ ես ով մարդ, որ ո՛չ լսէ ... զօրէն տղայոյ անմտոյ խաբեալ.ք. Խոյն:

Վեցերեորդ՝ ժամանակական. և են այս բառք,
Ո՛ւ: զ կնի: զ հետ: յառաջ.քան: նախ քան: յետ: յետոյ: յետոյ քան: մինչ: մինչև: և այլն, զօ":

*Ո՛ւր էր մինչև ցվախճան հերովդի ... զմարգարէսն՝ որ յառաջ.քան զձեզ էին ... մինչև յօրն՝ յորում եմուտ նոյ 'ի տապանն ... յետ երից աւուրց յառնեմ, | Խոյն:

Եօթներրորդ՝ տեղական, որպես համարին այսոքիկ,
Ո՛րտաքոյ: առ: առաջի: հանդէպ: յետ կոյս: 'ի վերայ: 'ի ներքոյ: յետոյ: 'ի մէջի: դէմ: դէպ: ընդդէմ: կողմն: կոյս: շուրջ: շուրջանակի: և այլն, զօ":

*'Ի վր ձեռայ բարձցեն զքեզ ... լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան ... իբրև գուշակս 'ի մէջ գայլոց ... ամ ժողովուրդն կայր առ ծովեզերբն .. ընկեցին զնոսա առ ոտս նորա ... նստէին հանդէպ գերեզմանին. | Խոյն:

236: Զատուելագոյն ծանօթութիւն նախադրութեանց ուսուցանէ քեզ երկրորդ մասն գրոյս:

# ԳԼՈՒԽ. Է:

## Յաղագս Մակբայի:

237: Վեցերրորդ՝ տեսակ նշանական բառից լեզուիս մերոյ կոչի, Մակբայ, որով իմացեալ լինին այնպիսի բառք, որք եդեալ առ՚ի թեր բայից՝ յայտ առնեն ըզ-պարագայ ինչ գործողութեան կամ կրելութեան, որպէս է ժամանակն: տեղին: թիւն: չափն: սաստկութիւն: թուլութիւն: և այլն: օրինակ իմն, յասել թէ, | հասուցանիցէ ինձ այժմ այսր աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց, | բառքս. այժմ, այսր, յարեալ ՚ի բայդ, հասուցանիցէ. ցուցանեն ըզ-ժամանակ, և զտեղի այնր գործողութեան:

238: Մակբայք ըստ օրինակի նախադրութեանց բաժանին երրակի, ըստ ինկութեան, ըստ կազմութեան. և ըստ նշանակութեան:

239: Ըստ ինկութեան մասանց մակբայից ոմանք են բնական, և ոմանք յարմարական,

Բնական կոչին այն բառք, որ միշտ և ամ ուրեք իբր մակբայ վարին, և չեն ՚ի փոխ առեալ յայլ տեսակ բառից, որպիսի են այս բառք. Աստ: անդ: այժմ: այո: արդ: ուր: ոչ: իսկ: և այլն:

Յարմարական մակբայ առեն այնք, որ յանուանց կամ ՚ի դերանուանց կամ յայլ բառից յարմարին, և իբր մակբայ ՚ի գործ ածեալ են ՚ի նախնեաց որպէս են. Առժամայն: արագ: յոյժ: միանգամայն: վերաւ: յանչափս և այլ բազումք.

240: Մակբայք բանից կազմութեան բաժանին յերիս տեսակս, այսինքն, պարզ, բարդ, և ածանցեալ:

Պարզ մակբայ կոչին, որ չեն բարդեալ ՚ի բազում

նշանական բառից, և ոչ ՚ի վերջոյ ունին զաննշան մասնիկ ինչ. զո". այժմ, աստ, երբ, ուր, և այլն:

Բարդ կոչին, որ յերկուց կամ յերից նշանական բառից միացեալ իբր մի վարին. զո", այսօր, նոյնչափ, այլ ընդ այլոյ, մի ըստ միոջէ, և այլն:

Ածանցեալ մակբայ կոչին այնք, որ ՚ի վերջոյ կցեալ ունին զմի յաւանչաց մասնկանցս, այն, եմն, եւ, եք, է, էն, էք, ի, իկ, իմբ, ին, իցս, կի, նոր, ոյ, ոյն, ուց, ստին, րէն, ցի, և այլն, զո":

Այն, — միանգամայն, համայն, հետայն, գիշերայն, զճանապարհայն, զորայն, առժամայն, և այլն:
եմն, — ուրեմն, երբեմն, ուստեմն:
եւ, — մինչև, ստորև, իբրև, արդարև:
եք, — ուրեք, ուստեք:
է, — իմէ
էն, — անդէն, այժմէն, ինձէն:
էք, — երբէք:
ի, — այտի, աստի, վերուստի, ուստի:
իկ, — լռիկ, հեզիկ, հուշիկ:
իմբ, — ամենևիմբ, բոլորովիմբ:
ին, — ինքնին, բնաւին, գլխովին, կամովին:
իցս, — բիւրիցս, քանիցս, երկիցս, երիցս:
կի, — կողմնակի, ուժգնակի: ուղղակի:
նոր, — աստանոր, անդանոր, ուրանոր:
ոյ, — յետոյ, յառաջոյ, արտաքոյ:
ոյն, — իսկոյն, ուրոյն, ողջոյն, կենդանւոյն:
ուց, — ՚ի մերկուց, այգուց, տարապարտուց:
ստին, — ասաստին, անդստին, վերստին:
րէն, — անդրէն, այսրէն, հայերէն, յունարէն:
ցի, — աքայլի, բերանացի, բանցի: նշանացի, և այլն:

241: Մակբայք բանիւ նշանակութեան բաժանին 'ի տասն տեսակս. որք են. 1 Տեղական: 2 Ժամանակական: 3 Քանակական: 4 Թուական: 5 Հարցական: 6 Հաստատական: 7 Բացասական: 8 Ցուցական: 9 Բաղդատական: 10 Որակական:

242: Տեղական մակբայ կոչին այն բառք, որ եդեալ առ բայիւ՝ ցուցանեն զվայրն կամ զտեղին, ուր կատարի գործողութիւն կամ կրելութիւն ոճին այս բառք:
Աստէն, աստ, այդրէն, այդր, անդէն, անդ, անդստին, աստուստ, անդուստ, այլուստ՝ արտաքուստ, 'ի բացուստ, 'ի հեռուստ, 'ի մէջ, 'ի մօտոյ՝ յառաջոյ, յետոյ, ուստի, ուստեք, ոմ ուստեք, 'ի սորէ, այսր, այդր, անդր, յո, յոր կոյս, ընդ որ, յայսկոյս, յայդկոյս, յայնկոյս, յետ կոյս, այսրէն, 'ի վեր, 'ի վայր, աստ, աստանօր, անդ, անդանօր, այլուր, 'ի բաց, 'ի բացեայ, 'ի ներքս, ուր, ուրեք, ուրանօր, ուր ուրեք, բազում ուրեք, ոմ ուրեք, 'ի մէջ, 'ի միջի, ստորև, 'ի ստորև, առընթեր, առաջի, արտաքս, արտաքոյ, դէմ, ընդ դէմ, յանդէպ, մօտ, մերձ, հուպ, հեռի, շուրջ, շուրջանակի, յետս, յետկուսէ, մեկուսի, յետուստ, 'ի վերջէ, 'ի վերջոյ, և այլն:

*Ուր էր մանուկն . . . անդ լինիջիր . . . արկ զքեզ աստի 'ի վայր . . . եղբարք քո կան արտաքոյ . . բաղեցուք զայն 'ի բաց . . . երթիցեն շուրջ 'ի շէներն . . . յառաջել յայնկոյս . . . հեռացեալ մեկուսի է յինէն . . . ոչ ուրեք առաքեցայ . . . աստ է քան կամ անդ . . . անդր ժողովեսցին արծուիք . . . մնաց 'ի ներքս՝ նաւէն. | և այլն:

243: Ժամանակական կոչին այն մակբայք. որք

նշանակեն զժամանակ գործողութեան կամ կրելութեան. որպիսի են բառքս: Երդէն, արդէն իսկ, երեկ, յերեկն և յեռանդն, կանխաւ, յայնժամ, ցայնժամ. նախ, նախ առաջին, յառաջ, յառաջագոյն, յորմէհետէ, 'ի հերուն հետէ, վաղ, վաղ ուրեմն, վաղու ևս, այժմ, այժմու, այժմէն, արդ, այսօր, այժմիկ, այժմոյս, 'ի սերկեանս, զօրդէս, զմիջաւուրբ, ապա, այն ինչ, այսուհետև, դեռ, դեռ ևս, զկնի, հուսկ յետոյ, մինչ, մինչդեռ, յայսմհետէ, յետ, յետոյ, 'ի մօտոյ, վաղ իւ, տակաւին, իսկ և իսկ, չև, չև ևս, մինչչև, այգուն, առաւօտուց, գիշերի, գիշերայն, իսկոյն, առժամայն, նոյնժամայն, ձեպով, շտապաւ, հազիւ, երբ, երբեմն, երբէք, երբև, մերթ, միշտ, յաւէժ, յաւէտ, յաւիտեան, յաւիտենից, յորժամ, ցորժամ, յարաժամ, հանապազ, հանապազօր, ցանգ, նոյնհետայն, հուսկ ապա, ուր ուրեմն, տակաւ, անդադան, և այլն. զօ":

*Մինչև ծնաւ զորդին իւր . . . Երբև լուաւ արքայ . . . յայնժամ սկսաւ նախատել զքաղաքն . . . վաղու ևս ապաշխարել էր . . . մինչդեռ նա 'ի ժողովուրդն խօսէր . . . զի մի՛ երբէք տեսցեն աչօք . . . տակաւին և դուք անմիտ էք . . . հանապազ տեսանեն զերեսս հօր իմոյ . . . մի՛ այսուհետև 'ի քէն պտուղ եղիցի յաւիտեան . . , ե՛րթ այսօր գործեա՛ յայգւոջ . . . ո՛չ զղջացարուք յետոյ հաւատալ նմա . . . ո՛չ ևս տեսանիցէք զիս յայսմհետէ . . . ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ . . . մինչչև հաւու խօսել իցէ . . . իսկոյն հաւ խօսեցաւ . . . Իջցէ այժմ 'ի խաչէդ . . . կամիմ թէ արդէն իսկ բոր-

Բովէր . . . խիկ և խիկ ծանեան զնա որք տեղւոյն այնո- րիկ . . . խնդրիցէ ստէպ՝ մինչև գտանիցէ. | Եւ այլն:

244: Քանակական մակբայ տսին բառք, որ վարին ՚ի ցուցանել զորչափութի, զորքանութի, զառաւելութի, զպակասութի, զստոյգութի, եւ այլն, գործողութե ինչ ումի են սոքին: Այսոքիկ են, ամենևին. այսչափ, այսքան, այդչափ, այդքան, այնչափ, այնքան, անդրէն, առաւել, առաւելեւս, առ հասարակ, բնաւ, բնաւին բոլորովին, դարձեալ, դոյզն ինչ, ՚ի սպառ, կարի, հետ զհետէ, համանգամայն, միանգամայն ՚ի միասին, յաւէտ, յախուռն, յերկար, յաճախ, յոլովակի, յոյժ, ողջոյն, որչափ, որքան, շատ, սակաւ, սակաւիկ մի, սուղ ինչ, ստէպ, փքրատին, փոփոխ, փոխանակաւ, փոքր մի, եւս քան զեւս, ուրոյն, առանձին. Եւ այլն. զօ՛:

Ածել ՚ի միասին մինչև ՚ի հունձս . . . մատեան աշակերտքն առանձինն, և տեսն . . . եւ տեսի ձեզ՝ ամենևին մի՛ երդնուլ . . . բնաւ և անուանի խիկ ՚ի ձեզ . . . որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել քարոզէին, և եւս քան զեւս զարմանային . . . ՚ի սպառ սիրեաց զնոսա . . . զայրանային նմա յոյժ . . . փոքր մի և ոչ տեսանէք զիս, դարձեալ սակաւիկ մի՛ և տեսանիցէք զիս . . . դարձեալ ուրոյն երդմամբ . . . որում շատ թողցի, շատ սիրէ, և որում սակաւ՝ սակաւ. | Եւ այլն:

245: Թուական մակբայ են այնք, որ զԹիւ, ըղքանիութի. զդասաւորութի. զկարգ. և զկրկնութի գործողութեն ցուցանեն, զօ՛, Միանգամ. առ անգամ մի. առ մի նուագ. առաջին. գամ մի. զառաջինն. նախ առաջին. անդրէն. բիւրս. բիւրիցս. բազում անգամ.

երկիցս, երիցս, հնգիցս, եւ այլն։ Նախ, Նախ—ապա, Երկրորդ, Երրորդ, Չորրորդ, եւ այլն։ Կրկին, կրկնակի, դարձեալ, վերստին, միւսանգամ, քանիցս, քանիցս անգամ, լոկ, եւ եթ, մի—միւս, մի մի, մի ըստ միոջէ, մի քան զմի, միայն, միայնակ, եւ այլն, զորօրինակ։

*Նախ՝ կապեսցէ զհզօրն, եւ ապա զտուն նորա յափշտակեսցէ ... դարձեալ ասեմ ձեզ ... քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո ... երիցս ուրասցիս զիս ... և լուեալ եղանէին մի ըստ միոջէ ... եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ այս են, նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս, ապա զօրութիւնս ... բազում անգամ մարտեան ընդ իս 'ի մանկութենէ իմմէ, ] եւ այլն։

246։ Հարցական տեսն այն մակբայք, որ պատճառու կամ զկասկած գործողութեան հարցմունքով կամ երկբայելով յառաջ անեն, զո՞, Զո՞ւ ե՞նչ, առ իմէ՞, հե՞մ, զմէ՞, զկնի՞ որդ, զի՞, ի՞բր, ի՞ւ, ի՞ւ իւիք, ո՞րպէս, ո՞չ ապաքէն, ո՞չ, մի՞ թէ, յո՞րժամ, ե՞րբ, քանի՞ցս, ո՞րդեօք, զուցէ երբեք, մի՛ արդեօք, ապաքէն, է՞ր, է՞ր վասն, ո՞ւր, ուստի՞ եւ այլն, զորօրինակ։

*Ո՞վ զալ ի մեղուօրն ... ընդէ՞ր ոչ կացեր 'ի հեռաստանէ ... զուցէ երբեք յափշտակիցէ ... ե՞րբ եկից երեւեցայց երեսաց այ ... ո՞րպէս ասիցէք ցանձն իմ ..., զկնի՞ գնայ ա՛ծ ... ե՞ւս ոչ լուիցէ ... քանի՞ցս է ... մի՞ թէ 'ի վա՞ղ ինչ աւեղծեր ... զմէ՞ դարձուցանես զերեսս քո 'ի մէնջ ... թերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ ... մինչեւ ցե՞րբ եղէց ընդ ձեզ, մինչեւ յե՞րբ անսայցեմ ձեզ, ] եւ այլն։

247: Ստորասական մակբայ ասին այնք, որ եդեալ առ բային, զհաստատութիւն կամ զձայնութիւն կամ զժամանումն, և զառուգումն գործողութեան ցուցանեն: չօ": Ապաքէն: ամէն: արդեօք: անշուշտ: գրեթէ: գոլ: զոյգես: խակ: խակապէս: յիրաւի: իրաւամբ: յիրաւունս: հաւաստի: հաւաստեաւ: կարի քաջ: այո: արդարև: օն և օն: և այլն: զորօրինակ:

Այո՛ ասեմ ձեզ, ... արդարև որդի էր նա դա ... լծէ թշնամւոյն նախատեալ էր՝ համբերէի արդեօք ... մինչ գրեթէ յի իսկ լինել նուէն ... քանզի ի գոլ լերև ստացեալ իմն էր. | և այլն:

248: Բացասական կոչին մակբայք, որ զանստուգումն, զարգելումն, զչկամումն, և զհերքումն գործողութեան կամ կրելութեան նշանակեն, զօ", Ամենեւին, մի, ամենեւին ոչ, ամենեւին մի՛ ոչ բնաւ, մի՛ բնաւ, չ, ոչ, ոչ ևս, չև, չև ևս, ոչ երբէք, ոչ ինչ, այլ ոչ ևս, մի՛ երբէք մի ևւս, քաւ օն անդր, և այլն, զորօրինակ:

Քաւ լիցի ինձ անէր. մի՛ լիցի քեզ այդ ... ընդէ՞ր չգրկեմ զքեզ ... ոչ գիտէք զինչ խնդրէք ... այլ ես ասեմ ձեզ. մի՛ երդնուլ ... մի՛ ՚ի գլուխ քո երդնուցուս. | և այլն:

249: Ցուցական մակբայք կոչին այն բառք, որ կառաջակայ ելն, զյայտնումն, և զկատարումն գործողութեան նշանակեն, զօ": Ահա՛ աւասիկ, աւադիկ, աւանիկ, ահաւասիկ, ահաւադիկ, ահաւանիկ, և այլն, զօ":

Ահաւանիկ աշակերտքն քո գործեն ... աւասիկ մեք թողաք զամ ... ահաւասիկ կնքոյ իմ պատ-

բաստեցէ . . . ահա՛ թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ, | Խ. այլն:

250: Բաղդատական մակբայ կոչին այն բառք, որ զկանոնական գործողութիւն բաղդատելով առ իրեարս, զմին առաւել ընտրելի ցուցանեն քան զայլս, զօրութ՛ և երբեմն ներգործութ՛ ը. հոլովաւ ունելով զբառս, չափ, որպիսի են սոքին: Այն զի: առաւել: առաւել ևս: մանաւանդ: յաւէտ: նա: նա մանաւանդ: ոչ: որչափ: որքան: ու՛: ու՛ նա: Խ. այլն. զծ՛՛:

*Երանելի է մանաւանդ տալն քան առնուլն . . . այժմիկ ծանեայք զած. մանաւանդ թէ՝ ծանուցայք իսկ յայ . . . այլ երթայք առաւել առ ոչխարս կորուսեալս . . . եթէ արժան իցէ առաջի այ՝ ձեզ լսել առաւել քան այ, ընտրեցէ՛ք . . . եթէ այլք ձերով իշխանութ՛ վայելեն, ոչ առաւել ևս մեք . . . եթէ ինձ այսպէս, ո՛րչափ ևս առաւել քեզ՝ մարմնով և տէրամբ. | Խ. այլն:

251: Որակական մակբայ կոչին այն ամ՛ բառք, որ անխտիր զոր՛ և իցէ որակութի կամ որպիսութի գործողութեց նշանակեն, և այսպիսի մակբայք բազում են յոյժ, առաւել ք մանաւանդ յաւուրս 'ի ռամկական հոլովս, յորոց պակասս դնեմք աստ: Այսպէս: այդպէս: այնպէս: այլազգ: այլ ը՛ այլոյ: արդեօք: բարւոք: բաղդովի: բնաւ: բնաւին: բռնի: գաղտնի: գիշերի: դիւրաւ: դժուարաւ: դոյնպէս: դոյնօրինակ: զխարդ: զորօրինակ: զանխուլ: զիւրովին: վաղ: 'ի զուր: 'ի նանիր: 'ի բնէ: 'ի հարկէ: 'ի մասնէ: 'ի հարևանցի: 'ի ծածուկ: 'ի մերկոյց: 'ի դէպ: լռելեայն: լռիկ մնջիկ: լու 'ի լուէ: խաւարեւ: կամակար: հարկաւ: հեշտեաւ: հետի: հե-

տիրապ: Ճշտիւ: Ճշմարտիւ: մեղմով: մի օրինակ: մաւր-ցայն: մեկին: յանդէպս: յանգէտս: յանչափս: յիրաւի: յարժանի: յայտնի: յայժ: նորոգ: նենգաւ: նոյնպէս: նոյնօրինակ: նմանապէս: ուղղէս: որգոն: ող կարգ: ընդ վայր: չարաչար: չարւոք: վայրապար: սարապար-տուց: քաղդէարէն: քեզէն: մեզէն: ձեզէն: և այլն. զորօրինակ:

՟Արար՝ ով հրամայեաց նմա հրեշտակն . . . այնպ եղիցի և ազգիս այսմիկ չարի , . . զուր պաշտեն զիս . . . դուստր իմ չարաչար այսահարի . . . զորօրինակ ժողովէ հաւ զձագս իւր . . : զի՞մ ինչ բարւոք գործեաց սա . . . գնաց կոչեաց զմարիամ զքոյր իւր լռելեայն . . . գնացին զհետ նորա հետի 'ի քաղաքաց անտի . . . և լու 'ի լու ամ ժողովրդեան ասէ ցաշակերտսն . . . արկեալ զիւրև կտաւ մի 'ի մերկոյ . . . փախեաւ մերկ 'ի նոցանէ . . . այլ դուք ձեզէն տեսէք զիրաւն . . . արի և քեզէն թօթափեա զանկողինս քո . . . ասէին հրէայքն մի թէ զիրովի՞ն երթայցէ. և այլն.

252: Զգործածութ՟ մակբայից զկանոնս և զայլ պա-տանի ծանօթութիւնս ցուցից յերկրորդ մասին:

# ԳԼՈՒԽ Ը.

## Յաղագս շաղկապի:

253: Ութներորդ՝ տեսակ նշանական բառից մերոց կոչի, Շաղկապ, որք են այսպիսի բառք, որք գեղմնակ կապակցեն նախադասութեանց յայտ առնեն, վասն զի նախադասութիւնք 'ի կապակցելն ընդ միմեանս առ 'ի կազմել զպարբերութիւն, միշտ կարօտին զօդաւորիչ բառի միոյ, որոյ պաշտօն այս է, զի եդեալ 'ի միջի նախադասութեանց, ծանուսցէ ընթերցողին, թէ միս 'ի նախադասութեանց անտի նկատմամբ միւսոյն՝ է պատճառ, կամ թէութեան. կամ բացայայտութեան, հետևութեան, մեկնութեան, կամ այլ ինչ այսպիսի:

Օրինակի աղագաւ՝ տեսցուք զբան աւետարանին, (Ղկ. ԺԸ.) | Թէ և յԱյ ոչ երկնչիմ, և 'ի մարդկանէ ոչ ամաչեմ, քանզի վն աշխատ առնելոյ զիս այրւոյս՝ արարից նմա դատ, զի մի՛ 'ի սպառ եկեալ թախանձեսցէ զիս, | յորում՝ են չորք նախադասութիւնք, և 'ի սկզբան իւրաքանչիւր նախադասութեանց՝ տեսանեն այս բառք, Թէ՛ և, և, քանզի, զի, որք կոչին շաղկապ, մի զի կապեն զնախադասութիւնս ընդ միմեանս, և երկրորդ զի յայտ առնեն, թէ մին մի 'ի նախադասութեանց զի՞նչ իցէ նկատմամբ միւսոյն:

254: Շաղկապք ըստ եղանակի նախադասութեանց երրակի բաժանին, այսինքն, ըստ խոկութեան, ըստ կազմութեան, և ըստ նշանակութեան:

Ըստ խոկութեան քննելով՝ շաղկապաց ոմանք են բնական, որ միշտ են շաղկապ վարին, որք են այս բառք

ապաքէն, բայց, գէթ, եւ, դի, եւայլն:

Կան ոմանք յարմարական, որք յայլ բառից առեալ՝ իբր շաղկապ փոխին, զո՛. այլ, առաւել, դարձեալ, կրկին, նա, եւայլն:

255: Ըստ կազմութեան մասնաւոր բաժանին յերիս դասս, որք են, պարզ, բարդ, և ածանցեալ:

Պարզ շաղկապ ասին այնք, որ չեն բաղդեալ ՚ի բազմաձայնական բառից, զո՛, եւ, բայց, զի, թէ, կամ, եւայլն:

Բարդ կոչին այնք, որք յայլ և այլ նշանական բառից բաղադրեալ են, զո՛, այսինքն, որովհետեւ, նմին իրի, քանզի, եւայլն:

Ածանցեալ ասին այնք, որ ՚ի վերջոյ կցեալ ունին զմանշան մասնիկ ինչ, զո՛. ապաքէն, ուստի, ուրեմն. եւայլն:

256 Համեմատ ըստ նշանակութեան նկատեալ բաժանին ՚ի մետասան ազգս, որ են այսքիկ, 1 անկատարական: 2 բաղդատական: 3 բաղձական: 4 բացատրական: 5 յետնական: 6 մակաբերական: 7 մեկնական: 8 պատճառական: 9 ներհակաւորական: 10 փորձնական: և 11 տրոհական:

257: Անկատարական շաղկապ ասին այն բառք, որ զմիտս յառաջնոյ կատարեն ՚ի նախադասութեն, որոյ Լրացուցիչ նախադասութիւն ամբողջապէս սկսանի բացատրական շաղկապաւ, և այսպիսի բառք են ասքէն, թէպէտ և ոչ, թէպէտ, թէպէտ և, ոչ եթէ, ոչ եթէ: եթէ ոչ, եթէ ոչ միայն, և այլն, զորօրինակ:

« Թէպէտ և ամենեքեան գայթակղեսցին ՚ի քէն, սակայն ես ոչ գայթակղեցայց . . . Թէպէտ և բաժինք շնորհաց են, այլ հոգի նոյն է, եթէ բաժինք պաշտամանց են, այլ տէր նոյն է . . . եթէ ոչ եթէ

անօրէն ինչ էի յոյժ, այլ Ը օրինօք քոց, | և այլն:

258: Բողոքական ասին այն շաղկապք, որ զհառաչանս և զբողոքանս նախադասութեանց յայտ առնեն, և են այս բառք, ափսոս, աւաղ է զի, վայ է, վայ և, եղո՜ւկ էր, հառաչանք, ո՜հ, ո՜հ զի, ո՜հ զի, յաւէտ, ով, ա՜հ, ա՜հ էր, և այլն. զօ":

*Կամէի աղաւօրէն մտանել, ք անկանել ՚ի ձեռս անօրինաց ... մինչ զի և հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա ... գործեսցուք զբարիս առ ամենեսեան մանաւանդ՝ առ ընտանիսն հաւատոյ ... զի եթէ երկինք ոչ են անարատ առաջի նր, թող թէ այր պիղծ և անօր ... մինչև բազմաբար անգամ խոնարհեցաւ ՚ի նոյն կեղծաւորութիւն, | և այլն:

259: Բաղձական շաղկապ են այնք, որ զերկուս բառս կամ զնախադասութիւն կապեն ը իղձս, որպէս են: Որպէս այլ և, երանի թէ, ե, ո, ով, ո՜վ, ով ի, երանի, էր, երանի — երանի, եթէ, կամ, և կամ, կամ էր, ով և, ով և, ով եթէ, և այլն, զօ":

Այլ եղև ՚ի միում աւուրց ... եւ յովհաննէս իբրև լուաւ ... ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ կամ ծարաւի, կամ օտար, կամ մերկ ... նա և այլ ևս ոչ խարք են իմ ... եթէ հրեշտակք, եթէ հեթանոսք, եթէ ծառայք, եթէ ազատք, ամենեքին զմի հոգի արբաք, և այլն:

260: Բացառողական կոչին այն շաղկապք, որ եդեալ ՚ի միջի երկուց նախադասութեանց, ցուցանեն զմին լինել բացառութիւն ՚ի միւսոյն, և են այսոքիկ: Որպէս այլ ոչ այլ, բայց բայց եթէ, բայց միայն, բայց ոչ այլ, էթէ ո՛չ, եթէ ո՛չ եթէ, միայն, միայն էր, ոչ այլ, զի և, և այլն, զօ":

"Ոսկեձեր ու ծամ խոկ հեր գլխոյ թօւեալ է... ոչ որ ձեռնաչէ պղըղել, եթէ ոչ հայր... ոչ էր օրէն նմա սանրել. բայց միայն քահանային... սակայն և այն ծամ սկիզբն է երկանց... հոգին յօժար է, բայց մարմինս տկար. | Եւ այլն:

261. Թեքական համարին այն շաղկապք, որ եդեալ 'ի սկիզբն կամ 'ի մէջ երկուց նախադասութեանց՝ յայտ առնեն, թէ մին 'ի նախադասութեանց է թեքուն միւսոյն, կամ ունի կախումն զայնմանէ, և են այս բառք:

Որպէս: որպէս թէ: այնպէս թէ ոչ: որպէս եթէ: զի: Բա: Բայ: Բանզ: եթէ: եւ եթէ: թէ: խոյ եթէ: և այլն, ռօ":

"Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո՝ երթ յանդիմանեա զնա... ապա թէ ոչ լուիցէ քեզ. առ ը քեզ միւս եւս... իսկ եթէ և նոցա ոչ լուիցէ, առաջի եկեղեցւոյ... գիտէի զի այր մի խիստ ես... պատմեցին և սոքին, բայց հայր խնչ մեք անդր ոչ գտաք:

262. Անձարկելական կոչի այն շաղկապք, որ եդեալ 'ի միջի երկուց նախադասութեանց, ծանուցանեն թէ յետին նախադասութիւնն է եզրակացութիւն կամ հետևութիւն առաջնոյն. և են սոքին: Ապա: ապաքէն: Բա: Բայ, Բանձ: ուստի: ուրեմն: Նա ուրեմն: առ մի եւս: վասն եւս: Նոյն եւս: ընդ որս դասին և չորք նախադասութիւնք. աղագաւ: յաղագս: առնի ձեռն: որք սեռական խնդիր առեալ 'ի դերանուանց, այսպէս. այսր աղագաւ: յաղագս այսորիկ: առնի որոյ: ձեռն այնորիկ: Եւ այլն: որոց 'ի խնդրոյն իբր մի շաղկապ վարին 'ի խօսս. ռօ":

"Ապա ուրեմն պարտ է 'ի շնորհաց բարիս գործել... վասն այնորիկ նոքա եղեցին ձեր դատաւոր... ուստի և երդմամբ խոստացաւ ամենայն...

վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր . . . ամին իրի զքեն թողթ տա՛նս | և այլն:

263: Անկնական շաղկապ կոչին այնք, որք եդեալ ՚ի մէջ երկուց նախադասութեանց կամ՝ բառից, յայտ առնեն, թէ երկրորդն է մեկնութի, վկայութի, նմանութի, կամ՝ օրինակ առաջնոյն, և են սոքին: Այսինքն, այս է, այսինքն է, զորօրինակ, բայց այնմ, բայց որում, իբր, իբրև թէ, իբրու թէ, իբրու այն թէ, որպ, որպ այն թէ, օրինակ իմն, և այլն:

*Ով երանելի է յերկինս, այս է զքո ծնուցանել . . . մեծ է բանն ՚ի բերան քո, այս՝ բանն հաւատոյ, զոր քարոզեմք . . . պարզութեան անձն նորա, զորօրինակ շարժեալն յանուառ ծառ մի ՚ի հողմոյ . . . մի թէ ապաւանեն՝ կամիցիս գլխ, զորօրինակ սպաներ երեկ զեգիպտացին. | և այլն:

264: Պատճառական կոչին այն շաղկապք, որ եդեալ ՚ի սկիզբն կամ ՚ի մէջ երկուց նախադասութեանց, յայտ առնեն զմին լինել պատճառ կամ շարժառիթ միւսոյն, և են այս բառք: Այն զի, զի, իբր զի, քանզի, որ, որովհետև, որպ զի, ուր, քանզի, փոխանակ զի, յաղագս, և այլն:

*Երանի՛ է աչացդ, զի տեսանեն . . . որովհետև ՚ի սակաւուդ հաւատարիմ ես, ՚ի վերայ բազմաց կացուցից զքեզ . . . փոխանակ զի ասէիր՝ եթէ ոչ էր կամեայ . . . զի յայտ զօրաւոր ենթադրութք ազդը. | և այլն:

265: Ակզբնաւորական շաղկապ անուանեն այն բառք, որ ՚ի գործ ածին ՚ի սկզբան զնոր ինչ իմաստ առանձին նախադասութ, և են այսոքիկ: Արդ: արդ, այլ արդ, բայց արդ, և արդ, իսկ արդ, նա ուստի, և այլն, զորօրինակ:

*Եւ արդ՝ լուարուք դուք զառակ սերմանա-

ծանէին . . . արդ՝ անկեալ ծառայակցին առ ոտսն իր . . խակ արդ՝ ո՞չ էր պարտ և քեզ . . . ապաքէն ասայէք առ իս զառակս զայս. | և այլն:

266: Վարմնական կոչին այն շաղկապք, որք ցուցանեն պակասայ ընտրութեն կամ զյանձնառութեն փոքուն և նուազին վս անձեռնահաս զոլոյն առ մեծն. և են բառքս: Գէ՛թ: գո՛նէ. գո՛նեա, գո՛նեայ. կօ":

"Օ՛լի գո՛նէ միայն ՚ի քղանցս հանդերձի նորա մերձեսցին . . . գո՛նեայ արդ մերժեսցեն զպառնկութիս իւրեանց . . . բնաւի մարդկան զ՚լ՛արդ գէ՛թ ո՛չ նմանի նոցա . . . ցանկային տեսանել զո՛նեայ ընդ աղօտ հրեշտակս. | և այլն:

267: Տրոհական ասին շաղկապք, որ եդեալ ՚ի սկզբան կամ ՚ի մէջ երկուց նախադասութեանց, յայտ առնեն զնոսին որոշել և բաժանել ի միմեանց, և այսպիսի են բառքս: Կամ, և կամ, կամ թէ, կամ եթէ, թէ, եթէ, և այլն. զօրօրինակ:

Կա՛մ արարէք զծառն բարի . . . կա՛մ արարէք ըզծառն չար . . . որպէս կամիք, գաւազանաւ եկից, եթէ սիրով հոգւոյն. | և այլն:

268: Ծանօթ: ՚Ի նախագրեալ շաղկապաց բառքս թէ, եթէ, և թէ, և, քայ, քամ, ոչ, իբր, զի, և զի, բազում ուրեք յաւելուս և ՚ի պարզ ու տակս զնին ՚ի բանի, յորմէ և կոչին, Բոպ՛շտաթ. ա՛յն է՝ առանց բուն նշանակութեան իւրեանց, յոր սկզբնաբար հնարեալ են որպէս տեսանի յայսոսիկ օրինակս նախնեաց:

"Ո՛չ էին՝ թէ մի՛ ՚ի տանի աստ . . . զո՞ կամիք. զ՚ի արձակեցից ձեզ . . . բանիւք ասէ բա սիրեմ զաստուած. | և այլն:

# ԳԼՈՒԽ Թ:

## Յաղագս Միջարկութեանց:

269. Ութերորդ տեսակն բանից մերոց կոչի Միջարկութիւն. և են այնպիսի բառք կամ մասնիկք, որք 'ի գործ ածին իբր նշանք զարմանալոյ, խնդալոյ, ցաւելոյ, և այլ այսպիսի գործողութեանց և կրելութեանց մտաց, և բաժանին յեօթն տեսակս. որք են. 1. Աղաղակական. 2. Երգիծական. 3. Զարմացական. 4. Ըղձական. 5. Խընդական. 6 Յորդորական. և 7. Սպառնական:

270: Աղաղական միջարկութիւն ասին այն բառք, զոր 'ի գործ ածեմք յորժամ զցաւ, զտրտմութիւն, կամ կերկեւղ որոնց մերոց յայտնել կամիմք, և են սոքին: Ա՛, աղէ՛ա, աւա՛ղ, էղո՛ւկ, ո՛ո, ո՛հ, ո՛հ ՜հ, ո՛ւ, ո՛ւ ՜ւ, վա՛յ, վա՛յ վայ: և այլն: զօ":

*Վա՛յ քեզ Քորազին ... վա՛յ քեզ բ' Բեթսայիդա .., ո՛հ ես մեղայ նման նմին ... եղո՛ւկ զիս ... աղէ՛ս տարակուսանաց. | և այլն:

271: Երգիծական միջարկութիւն ասին այնք, որ 'ի գործ ածին իբր նշանք նախատելոյ, հեգնելոյ, ծաղրելոյ, և այլն, և են սոքին: Ա՛յ, է՞, ո՛հ, վա՛հ, վա՛շ, և այլն, զօ":

*Վա՛հ որ քակէիր զտաճարն ... ո՞վ հնացեալ աւուրբք չարաց ... վա՛շ նոցա անմտութեան, | և այլն:

272: Զարմացական կոչին բառք վն այն, զի վարին 'ի խօսս իբր նշանք զարմանալոյ, գովելոյ, սքանչանալոյ, ուստի են սոքին: Բա՞բէ, ո՞, ո՛վ, ո՛վ բէ: և այլն, զօ"

*Բա՞բէ անոխակալութեան ..., ո՛ մեծի շնորհացդ ...

ո՛ սքանչելեացս ... ո՛վ թէ՝ քանի՛ անչափ են իր-
նամքն քոյ. | Եւ այլն:

273: Ողբական կոչին միջարկութիւնք որ ցուցանելոյ զյօժարութիւն, զբաղձանս, եւ զցանկութիւն սրտի խօսողին. եւ համարին այս բառք: Երանի՛ երանի՛ թէ, եթէ՛ թէ, յո՛ն-ձորդ, ո՛չ, եւ այլն: պօ՛՛:

*Երանի՛ ողբարտոյ հոգւոյ... Երանի՛ ազատուորաց ... եթէ՞ թէ յաւելից հայել 'ի տաճար սբ. քո ... յանկարծ՝ երթայր տուղ իմ. | Եւ այլն:

274: Խնդական միջարկութիւն առին որ նշանակելոյ զխնդութիւն, ուրախութիւն, եւ զցնծութիւն հոգւոյն, որք են բառքս: Ո՛հ ո՛հ, վա՛շ, վա՛շ վա՛շ, եւ այլն, դօ՛՛:

Վա՛շ վաշ անձանց մերոց, զի ընկլուզաք զնա ... ո՛հ ո՛հ պամբոյ ժպտեալ. | Եւ այլն:

275: Ցուցողական կոչին, որ 'ի գործ ածին 'ի խօսս ողոքելոյ, քաջալերելոյ, խրախուսելոյ, եւ այլն, որք են բառք: Ա՛ղէ, ո՛ն, Եէ՛ր, է՛կ, Եո՛չ, հա՛, հա՛պա, օ՛ն, եւ այլն: որօրինակ:

*Ա՛ղէ՝ ածէ՛ք զմատ ..., բե՛ր աստանօր բացցուք զմեծայլն գիրս ... բայց ե՛կ բե՛ր զճշմարտութին խոստովանել ... հա՛յա իմ մարդ զչեա իմ եկեց ... օ՛ն տրիք զնացուք աստի. | Եւ այլն:

276: Սպառնական միջարկութիւն կոչին բառք, որք վարին 'ի բեր նշանք բարկութեան, սաստելոյ, սպառնալոյ, եւ այլն: եւ այսպիսի են բառքս: Վա՛յ, ա՛յ, ո՛չ ա՛յ, եւ այլն. դօ՛՛:

*Վա՛յ դառնացելոյ ծեր ... այն՛ չե՛ք ինչ հնար ... ո՛վ դիւրապատիր մարմին երկրածին. | Եւ այլն:

277: Այսչափ ինչ շատ լինի առ ժամս որ ըմպս

ծանօթութե̃ց ութ տեսակ բառից և պարագայից նոցին, զորս պարտ է մանկանց անթերի և անշփոթ տպաւորել 'ի միտս, եթէ կամին ը̅ արժանւոյն զարգանալ յերկրորդ մասին, յայս սակս 'ի լրանալ դասատուն իւրաքանչիւր տեսակաց բառից՝ դասատուն փորձեսցէ զհամբակ իւր պ̃ղ հարցաքննութ̃բ, իսկ 'ի ժամանելն ցայս վայր՝ հրամայեսցէ նմա առնուլ զտուն մի խօսից 'ի գրոց ինչ նախնեաց, զօ", յո̃ծաշնչէն, 'ի շարակա-նէն, և այլն։ և զ իւրաքանչիւր բառիցն տացէ նշանակել զպ̃գայս այսուքի կամ այլով նմանօրինակ եղանակաւ։

1. Եւ. — է շաղկապ բնական, պարզ և բաղհիւ̃կն։
2. մինչդեռ. — է մակբայ բնական, բարդ և ժամա-նակական։
3. խօսէր. — է բայ, ը̅ սեռին՝ հասարակ, ը̅ ձեւոյն պարզ, ը̅ տեսակին՝ նախատիպ, ը̅ թուոյն՝ եզական, ը̅ դիմին՝ եր̃դ, ը̅ ժամանակին՝ անկատար, ը̅ եղանակին սահմանական, և այլն։
4. զայս. — է դերանուն ցուցական, ը̅ որակին՝ ածական, ը̅ տեսակին՝ նախատիպ, ը̅ թուոյն եզական, ը̅ դիմին՝ առաջին, և ը̅ հոլովոյն հայցական։
5. աղաչէր. — է բայ, ըստ սեռին՝ ներգործական, ըստ ձեւոյն՝ պարզ, ը̅ տեսակին՝ նախատիպ, ըստ թուոյն՝ եզական, ը̅ դիմին՝ եր̃դ, ը̅ ժամանակին՝ անկատար, ըստ եղանակին՝ սահմանական, լծորդութ̃ն և խոնարհութ̃ն ը̅ առաջին պատկերի։
6. զնա. — է դերանուն ցուցական, ըստ որակին դիմական, ը̅ տեսակին՝ նախատիպ, ըստ թուոյն՝

եզական, ը̅ դիմին՝ երրդ, և ը̅ հոլովոյն հայցական։

7. ոմն. — է անուն անորոշական, ածական, եզական, և ուղղական։

8. փարիսեցի. — է անուն, ը̅ որակին, ածական, ըստ ձևոյն՝ պարզ, ը̅ տեսակին՝ ածանցեալ, ըստ թուոյն՝ եզական, ը̅ հոլովոյն՝ ուղղական, և հոլովադասութն՝ ըստ երրորդ պատկերի։

9. զի. — է շաղկապ բնական, պարզ, և պատճառական։

10. ճաշ. — է անուն, ը̅ որակին՝ գոյական, ը̅ սեռին՝ չէզոք, ը̅ ձևոյն՝ պարզ, ը̅ տեսակին՝ նախատիպ, ը̅ թուոյն՝ եզական, ը̅ հոլովոյն՝ աննախդիր հայցական, ը̅ վեցերորդ պատկերի։

11. կերիցէ. — է բայ, ը̅ սեռին՝ ներգործական, ըստ ձևոյն, պարզ, ը̅ տեսակին՝ նախատիպ, ըստ թուոյն՝ եզական, ը̅ դիմին՝ երրդ, ը̅ ժամանակին՝ ապառնի, ը̅ եղանակին՝ սահմանական, խոնարհումն, պակասաւոր ըստ առաջին պատկերի։

12. առ. — է նախադրութի բնական, պարզ, և տեղական։

13. նմա. — է դերանուն ցուցական, ըստ որակին՝ գոյական, ը̅ տեսակին՝ նախատիպ, ը̅ թուոյն՝ եզական, ը̅ դիմին՝ երրդ, ը̅ հոլովոյն՝ վերջահոլով տրական, ը̅ հոլովադասութեն՝ ը̅ հինգերորդ պատկերի։ Եւայլն։

278։ Յայտնի հարցաքննութեանն՝ եթէ զարգացման փոքր մանկանն, փորձեսցի և ես ՚ի մեկնել զիմացեալ այդմի հոլովել կամ խոնարհեալ բառից՝ թէ

ռամկական լեզուաւ տեղւոյն, թէ՛ օտարազգի լեզուաւ-քինչ, զոր գիտիցէ, զօ՛, թէ այս ինչ դոյական անուն 'ի ներգոյական, կամ 'ի բացառականն, եւայլն, հոլովս եղեւ, զխնդիր առեալ յաշխարհաբառ լեզուէ, կամ բայ ինչ այսու կամ այնու դիմաւ, թուով, ժամանակաւ, սեռիւ, եւայլն, զխնդիր իմանի 'ի ռամիկ լեզուի, եւ ը՟ հակառակն՝ այն ինչ բառ ռամկօրէն՝ զխնդիր թարգմանի 'ի գրաբառն, եւայլն, եւ այսպիսիս ոչ միայն կենդանի ձայնիւ, այլ եւ գրովք իսկ յանձնեսցեն մանկունք, որովք օր ըստ օրէ զարգանայ թէ՛ արտասանութիւն լեզուին, եւ թէ յարմարագրութիւն ձեռայն 'ի վարժս գրչաւ խօսից։

279։ Այլ բաց յայսմանէ՝ ծծախրատ ուսուցիչն վարժեսցէ եւ եւս զհամբակս իւր, նախ՝ 'ի մտանել զիմաստ այնց դոյականաց եւ ածականաց, (խորհրդով-քինչն զումարելոց ը՟ պատկերօք հոլովադասութեանց,) որք անծանօթ են ժողովրդականաց։ Վ՟ս զի են առ մեզ բազում բառք ռամկականք, յո՛ որք մի օրինակ անփոփոխ 'ի գործ ածին թէ՛ 'ի ռամկական եւ թէ 'ի գրաբառ լեզուի մերում, որպէս են հաց, ջուր, գինի, աղուն, եկեղեցի, քաղաք, մարդ, ակն, օր, գիշեր, տարի, ամիս, թուղթ, քար, ծով, ձի, շուն, կով, եւայլն, եւ այսպիսիքս անկարօտ են մեկնութեան։ Բայց են եւս բազում բառք, որք անլուր եւ անիմանալի են ռամկաց, 'ի մասնաւոր եւ առ գիտունս միայն յանձնեալք, եւ յայսպիսեաց առաւել զերկու կամ զերիս բառս յօր ուսուցանել մանկանց զանձեալ 'ի յիշողութիւն, յայտ է՝ թէ համդերձ նշանակութեամբ իմաստին, որով եւ յընթացս միոյ ամի՝ զոմն արամադիկան բառս մեր, որք չեն առել 'ի քան պհազար, ուսանիս մանկունք համդերձ նշանակութեամբ եւ հոլովմամբ նոցին, եւ հորդի նորա ձայնաւորն։

է անուանց և ճանաչմանց ՚ի գրուածս գծոց: Նոյն օրինակաւ վարժեսցեն մանկունք և ՚ի մտաւ բերել զբայս, զմակբայս, զշաղկապս, և այլն:

280: Երկրորդ՝ յետ վճարելոյ զդասատուն ան-ուանց՝ ուսուցիչն առաջի արասցէ մանկանց զանուն ինչ՝ գոյական, կօ՛, զհաց, զտուն, զսեթա, զգիրք, և այլն, և տացէ զնա գտանել ածականս պատշաճեալս այնմ իրի, բայց որչափ մարթ իցէ, զյոլովագոյնս, օրինակ իմն, թէ հացն է սեաւ, սպիտակ, մեծ, փոքր, ծանր, թեթև, բոլորակ, ընտանի, քառակուսի, յագե-ցուցիչ, սնուցիչ, զանգեալ, խմորեալ, եփեալ, և այլն. Երբ ըստ այսմ մանկունք հարկաւ ընկալան թե-թևամտութեան իւրեանց՝ ուսանելն սևեռել զմտադրութիւն ՚ի վերայ միոյ իրի առաւել և գտանել զբազմատեսակ որակութիւնս իրաց, բաժանել զբոլորն ՚ի մասունս իւր, զանազանել ոչ միայն զայս իր յայնմ իրէ, այլ և ըզ-պէսպէս որակութիւնս միոյ իրի, որով և նրբանայ սրուի և հանճ ր մտաց նոցին, լուսաւորի դատողութիւն, բաց-եալ լինի նոցա աղբիւր առատագոյն բառից ստորա-գրելոյ զիրս, և ճ խաբան խօսելոյ լեզուաւ և գրչաւ ՚ի քերականութ և ՚ի ճարտասանութ, ընդդէմ ընդաբոյս ցամաքութն և սղխութն՝ բազմածնութ և առատա-բանալ ի տուայեալ միտս և հոգի:

281: Երրորդ՝ առ տարբերելոյ ՚ի միտս մանկանց զայս ընդհանուր ծննդականութի, վարժեսցէ զնա ուսու-ցիչն գտանել և յարմարել զենթակայս և զխընդ-րեալս անուանց բայից ինչ, հարցանելով զնա՝ օրինակ իմն, թէ ում պատշաճի բայն "առաջադրեմ" յայտ է թէ՝ նաւավարն առաջնորդէ զնաւն, ոսկերիչն արծնէ զարծաթն, հիւսն բևեռէ զտախտակն, արջն զլշատէ

զօրսն, երեխան դիէ զկաթն 'ի ստեանց, դերձիկն ժապաւինէ զգդեստն, երկրագործն լծէ զեզինս, հովիւն խուզէ զխաշինս, պարթեւյերն կթոյէ զայծս, կատաղեալն կրճտէ զատամունս, եղնիք բառանչեն, ճնճղուկք ծրտեն, ճղուղեն: հաւք թխեն, օձք շշեն, ծաղիկք թօշնին, թարշամին: հուրն գաղախանայ, օրն լուսանայ, գիշերանայ, տարաժամի: ամպք անձրեւեն, երկինք փայլատակեն, կայծակեն, եւ այլ նոյնպիսի բազումք,

282: Այնպիսի ջանիւ վարժեսցին մանկունք եւ 'ի 'յարմարել բայից զմակբայս, զի եւ այս բանայ զաչս մտաց նոցին, տալով առիթ ճանաչելոյ եւ զատանելոյ զպատշաճողութի այդպիսի բառից:

283: 'Ի մերում ճեմարանի՝ պատրաստել նորընծայք յառաջին դասու անդ՝ միայն զհոլովս անուանց ուսցին 'ի բերան, եւ ապա 'ի բառից անտի ը պատկերօք հոլովոց դասելոց՝ ուսցին զանծանօթս հանդերձ նշանակութ՟ն եւ թարգմանութ՟ 'ի ռուսաց լեզու, յեւրաքանչիւր աւուր զերկուս կամ զերիս բառս 'ի յիշողութ՟ ամբարելով, իսկ յաւարտել զանուանս՝ զբայս եւ զբնական մակբայս եւ զշաղկապս 'ի միտ առցեն:

284: Յերկրորդում դասու՝ սկիզբն արասցէ վարժապետն դիւրահաս եւ ճոխ մեկնութ՟ ուսուցանել մանկանց զայս առաջին մասն քերականութեան, տպաւորելով 'ի միտս նոցա զուղիղ եւ զանթերի ճանաչումն ազգի ազգի բառից, եւ նշանակութ՟ց՝ տարբերութ՟ց՝ պարագայից՝ եւ հանգամանաց նոցին, նոյն եւ զգործնական վարժութ՟ սրտատանելոյ եւ գրելոյ սեփհական տառիւք զանուանս ժբ հոլովոյն, զբայս ժբ խոնարհմանցն, եւ զայլ բառից տեսակս ժբ պարագայիցն, որովք հոր-

դէպ ի նոյն ճանապարհ յանսխալ կազմութեան խօսակցութեան յերկրորդում մասին:

285: Յերրորդ դասու աշակերտաց ճեմարանիս մեկնեաց է ուսուցիչն զերկրորդ մասն քերականութեան, առանց աւելորդաբանութեան զպարունակեալսն պարզաբանելով, քաջադէպ օրինակօք և նմանութեամբք զխոկումն գրելոյն տարրացուցեալ 'ի միտս մանկանց, և առ իւրաքանչիւր կանոն խօսից՝ զարդեամբք նմանիլն յաւելեալ. այն է՝ ընտրանն խօսից և օրինակաց նախնեաց նորաստեղծելով, որ զի ոչ 'ի տեսական ճանաչումն քերթողական կանոնաց, այլ 'ի գործնական վարժութեան և յունականական նմանադրութեան նոյն հաստատեալ կայ բովանդակ այս արուեստ, զոր ուսուցիչք մի՛ շատասցին միամտութ մանկանց, այլ հարկ 'ի վերայ դիցեն յօրինել զնմանակ խօսս յինքեանց հնարիմս կամ յայլ լեզուաց թարգմանելս, այնպէս զի 'ի վճարել զդասատուն բովանդակ գրոց; մարթասցեն տալ զպարզ խօսակցութեան մեր անսխալ, այսինքն՝ առանց խօսելոյ և գրելոյ ընդ հակառակ աւանդեալ կանոնաց:

Յայսմ վայրի և ես ծնրադրական երկրպագութեամբ մատուցեալ պարտուպատշաճ գոհութիւն անպատում մեծար Եղբայրին իմոյ, բաւական հարկիս մեկնել զ՚ երկրորդ մասն քերականութեան, որ ունի օրինակ զայս

# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

# ՓՈՔՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ.

Որ ուսուցանէ զկարգն խօսակցութեան մերոյ:

## ԳԼՈՒԽ. Ա.

Յաղագս նախադասութեան ըստ հանրապէս:

286: Առ քաջ իմանալոյ զկերպն նախադասութեան (զի այս բառ ունի յայսմ հետէ միշտ փոխանակ բառին, խօսակցութիւն,) կարեւոր է յոյժ կանխաւ իմանալ նախ՝ զԹիւ բառից նախադասութեան: երկրորդ՝ զանազան բառից նախադասութեան: և երրորդ՝ զբաղխումն բառից նախադասութեան:

Արդ՝ նախ՝ թէ քանի՞ բառք պարտին լինել ՚ի խօսակցութեան, ասելի է, թէ ՚ի միում նախադասութեան՝ գլխաւոր բայն միշտ լինելոյ է մի միայն, և ոչ աւելի. նոյնպէս և այն դրական բառ, որ կոչի, ենթակայ, պարտի լինել մի, և ոչ բազում, զի բազմաւն միոյ յերկուց միշտ բազմացուցանէ զնախադասութիւնն:

287: Իսկ քանիութիւն այլոց բառից՝ բաց յասացելոցդ, կախեալ կայ կէս՝ զնպատակէ խօսից, և կէս՝ զհաճոյից քերթողին, որ ունի կամակարութիւն ըստ թե-

լուծրելոյ նիւթոյն խօսել երկք, չորք և աւելի բա-
ռիւք, այնպէս զի 'ի սովորել հարկին՝ մարթ է դնել 'ի
նախադասութեան իւրում պատմն, զ բառն, և պահել ի բա-
ռըս, սակայն նուազն զ վերկուս, զի մի բառն միայն
ոչ երբէք յօրինէ զնախադասութի կատարելապէս:

288: Օ՝ նախադասութի երկբառ՝ կազմէ չէզոք բայն ընդ ենթակայի իւրում, որպէս են սոքին, մեծ մարդացաւ, երկինք որոտան, առիւծն գոչէ, և այլն, բայց կատարել նախադասութեն պարտի ունել դէթ զերիս բառս, զ մի ենթակայ, զմի զմառոր բայ, և զմի խնդրեալ, ընդ որս կարլի բարդում անգամ և այլ զանազան բառք իբր անուանք, իբր յարաբերութիւն, իբր բացայայտող, և այլն, որով նախադասութեն լինի բազմաբառ, որոյ օրինակք տեսանելին առորև:

289: Արդ՝ թէ յուլթ տեսակ բառից անուն ոյք առաւել կարևոր եցեն նախադասութե, ասել է, թէ երկու միայն տեսակք բառից, այն է, բառ գոյական և զմառոր բայ, հարկաւ պահանջեն առ էութի նախադասութե իբր գոյականներ և բաղադրիչք նորին, առանց որոց անհնար է կազմել զխօսակցութի:

Իսկ միւս տեսակք բառից, դերանուն, ընդունելութիւն, յաւելոյ, և այլն, յօրին առաւելոյ էականն բառից սակաւ կամ շատ, զի որում բերէ նիւթն ճառելի և ճոխաբանութի քերթողին, այնպէս կ'լի թէ տարբեն պարագայք հնարք է կազմել զխօսակցութի կամ զնախադասութի, յորում ութ տեսակք բառից են զտանելին, որպէս է օրինակի աղագաւ՝ այս

1 1 1 1 Է

Աւբուհէ կանայքն մարիամ մագդաղենացի և յով-

1 7 1 8 6 6
Հաննա և մարիամ յակոբայ, բաբէ, գլխարդ վաղ
6 5 1 1 1 1 7 1
քաջ ընդ առաւօտն կիւրակէ աւուր՝ խունկս և իւղս
4 3 1 1 5
բարձեալ՝ գնային ՚ի գերեզման քրիստոսի, ՚ի սակս
4 1 1 5 1 1
բարբոքելոյ սիրոյ սրտիցն առ ծայրն վարդապետն իւ-
2
րեանց, | Յորում տեսանի զի գոն ութևտասն անուանք ընդ 1. թուանշանաւ: մի դերանուն ը. 2 թուանշանաւ: մի դիմաւոր բայ. երկու ընդունելիք. երեք նախադրութիւք, երեք մակբայք, երեք շաղկապք, և մի միջարկութի, և ընդ ամենն երեսուն և երկու բառք ՚ի միում նախադասութեն: Այսպէս գիտեա և յայլ օրինակս նախնեաց, յորս յուշ և ուշ դնես տեսակք բառից ըստ պէտից:

290: Երրորդ՝ ոճախօսի բառից նախադասութեն է մի ՚ի կարևոր հմտութեց, որում քաջ միտ դնել ունին համբակք, որոց հարկէ գիտել, թէ զոր և զորպիսի բառս արժան է ՚ի գործ ածել ՚ի խօսակցութեն, և յորպիսեաց խորշել, պարտին ուսանիլ և գիտել ընտրել զբառս պիտանիս յանպիտանեաց, զպատշաճականս յանպատշաճից, նոյն, զի ոչ գործեսցեն սուտ, տաճարի, կամ այլոց լեզուաց շինուածոց, կամ զգեղեցկութեն նիւթոյն, յորոց բաղադրի, նոյնպ և գեղեցկութի խօսակցութեն մերոյ կախի զգեղեցկութենէ և զպատշաճաւորութենէ բառից, յորոց բաղկանայ, և մա զի համբակաց չէ դիւրին այդ ընտրութի, վսկ սիրով յանձնարարեմ նոցա յաւելուլ խօսել զընտրութենէ բառից առանձին, և ապա ճառեցից զկերպէ նախադասութեն:

# ԳԼՈՒԽ. Բ։

## Յաղագս ընտրութեան բառից։

291։ Թէ զի՞նչ իցէ բառն, և 'ի քանիս բաժանիցի, խօսեցաք եմք յառաջին մասին, այժմ ունիմք խօսել միայն զօրինաւոր գործածութեան բառից, զի թէպէտ հարուստ է յոյժ լեզու մեր ամենատեսակ բառիւք, սակայն ոչ ջնջի՛ մ՚ բառ մարթ է գործ ածել ըստ ուրեք և ըստ ումեք, այլ կամեցեալ շաւիղ արքունի և համառօտ հորդել հանգամանաց, սահլի է թէ սա 'ի լինել գրաբառ խօսակցութեան մեր՝ ամենևին հայկական, հարկ է, զի բառք մեր լիցին նախ՝ վաղեմի, երկրորդ՝ ամփոփական։ և երրորդ՝ բաջագոյ։

292 Վաղեմի բառ կոչին այնք, զորս նախնիք վարժապետք և հեղինակք լեզուիս մերոյ հնարեալ, և առանձինն են միայն 'ի զանազան մատենագրաշար գիրս իւրեանց, որպիսի են այն գիրք, զոր ասորև յառաջին կանոնին յիշեցաք եմք։ Այլև կամիմք արգելուլ համբակաց զգործածութիւն այնց օտարահնչաց և այլանդակ բառից, զոր յետինք և թերավարժք ոմանք տգիտական բաղադրութ՝ բարդութ՝ ածանցութ կամ՝ թարգմանութ հնարին մուծին 'ի լեզու մեր սովոր անուանելի գրոց լերեանց, որպիսի են այն գիրք՝ զոր 'ի վեցերորդ կանոնին յիշել ունիմք։

293։ Ամփոփական բառ կոչին այնք, զոր նախնիք հեղինակք լեզուիս յաճախ ըստ ուրեք 'ի կիր առեալ են, և մեզ՝ որպէս թէ մասամբ ցուցեալ և պատուիրեալ գոյն համարձակ վարել 'ի գործ։ Ո՛չ են բառք խնչ

զոր նախնիք հազիւ միանգամ կամ՛ երկիցս վարեալ են ՚ի խօսս, և զայսպիսի անսովոր բառս՝ ամենևին չէ՛ արժան համբակաց ՚ի գործ ածել: Եւ են բազում բառք զոր համարձակ ամ̃ հեղինակք ՚ի կիր առեալ են, և զայսպիսիս միայն արժան է վարել և մեզ:

Այլ ՚ի ժամանաւորի՝ թէ որ բառ իցէ անսովոր, և որ սովորական, համբակաց դժուարին է ճանաչել, և մեզ ՚ի գործումս չէ՛ դիւրին կանոնական սահմանել, զի այդ պարտաւորութի̃ է յօրինողաց զբառագիրս, որոց հարկ է սովորական և զանսովոր բառսն՝ առանձնանշանօք՝ խաչանշանօք կամ այլով իւիք օրինակաւ որոշել յիրերաց, որ տպագրողք հասարակ և յատուկ կոչեցեալ բառարանին մերոյ՝ յայտ է՝ թէ կն թերավարժութ̃ն չե՛ն մոլթայեալ կատարել, բայց քաջայայտ եմք, թէ զայդ հարկաւոր կատարելութի̃ ունիցի նոր տպելի բառարանն, զոր ՚ի լոյս ընծայել խոստանան Մխիթարեան վարդապետք՝ ը̃ գիտնականութե̃, այլ ոչ ը̃ դարաձայնութե̃ հաւատոյ՝ ՚ի մէջ գովելիք:

294: Մեք առ տեղեաւս ամենակերպ հնարիւք օգնել կամեցեալ մանկանց ազգիս, առ որոշելոյ զգործածելի և կանգործածելի բառս՝ հոգացաք զհետագայ կանոնադ սահմանել, որոց պահպանութ̃ի ը̃ դաստիարակութ̃ անխափան հմուտ դասատուաց մեծապէս օգնէ, առ ստանալ զարուեստ ընտրութե̃ բառից:

Կանոն. Ա.

295: Համբակք միմիայն հետևելի զասացեալն և անխտիր ՚ի կիր առցեն զայն ամ̃ բառս, որք գտանին ՚ի հետագայ գիրս Նախնեաց մերոց, որք են: Նորա-

ռելով ածուղունչն մեր, (յո՛ տպեալն է ձեռագրաց 'ի վենետիկ, 'ի 1805, ամի:) շարականք: ժամագիրք: մաշտոց: ընդհանրական շնորհալւոյն, յո՛ որդէ գիրք: յաճախապատում: մեկնութիւն աւետարանին յիգնատիոսէ: մեկնութիւն թղթոց կաթուղիկեայց 'ի սարգսէ շնորհալւոյ: մեկնութիւն ժամագրոց 'ի խոսրովայ: պատմութիւն եղիշէի: պատմութիւն խորենացւոյն: պատմութիւն յովհ. կաթողիկոսին: ամ՛ գրուածք լամբրոնացւոյ: պատմութիւն ղազարայ փարպեցւոյ: մեկնութիւն սաղմոսաց 'ի վարդան վարդապետէ: Եւայլն:

Կանոն. Բ:

296: Օրէնս՝ որ գտանին 'ի գիրս նարեկացւոյն: ագաթանգեղոսի: դաւթի անյաղթին: պիտոյից խորենացւոյն: յովհաննու իմաստասիրին օձնեցւոյ: գրիգորի մագիստրոսին, թէոդորոսի քռթենաւորին բազում ընտրոյք և կրթութիւն 'ի կիր առնուլն համբակք:

Կանոն. Գ:

297: 'Ի գրոց նորոց տպելոց 'ի վենետիկ, արժան է համբակաց առնուլ և վարել զբառս այսոցիկ գրոց, որք են, Ս. խորհրդ. գրոց, իմաստասիրութեան թեսաւրոսի, մեկնութեան թղթոց պօղոսի: մեկնութեան սաղմոսաց: պատմութեան հայոց և հռովմայեցւոց: և վարք սրբոց:

Կանոն. Դ:

298: Արժան է նորավարժից 'ի գործ ածել զբառանակսն և զփիլիսոփայական բառս առեալս 'ի յետնագոյն գրոց տպելոց 'ի վենետիկ, յո՛ են Նախկինաչափութեան, երկրաչափութեան, ընդօրինակութեան, թուաբանութեան, ժամբանկոր, նաւաղգութեան, աշխարհագրութեան, և փիլիսոփայութեան կողմանց:

Կանոն. ՁԹ:

299: Ի հասարակ բառարանէն մարթ է ամ ուսմբք քաղել և վարել զայն բառս, կորոյ գնի անդ օրինակ կամ վկայութի. թէ այն բառ ՚ի գործ ածել է ՚ի նախնեաց ՚յածաշունչն կամ այլ գիրս յիշեալս ՚ի մէջ ՚ի վերոյ սահջին կանոնին: Իսկ զայն բառս, որոյ տեղի գործածութեան ոչ նշանակի անդէն, չէ՛ օրէն համբակաց ՚ի կիր առնուլ թէպէտ և յայսմ բոյսաւուէ պէտք են: Պարզեսցուք զկանոնս օրինակաւ, բառարանն յետ մեկնելոյն զբառս նոյն, ցուցանէ զտեղիս գործածութեան ՚ի նախնեաց, իբ. ՚ի գիրս Եղիշ., Եզն., Եփր., Ոսկ., Յայսմ., Հաւատ., Խորեն., Շարական. և այլն. նոյնպէս զկնի բառիս՝ Փոխարէն, նշանակէ զտեղիս գործածութեան ՚ի գիրս Եւս., Յայսմ., Եփր., Ճառընտ., Նարեկ: Իսկ համդէպ բառիս, Ագաթանգեղոս, Եղիսանու, Նոնն., Հարցփոխաթոյ, և այլն: ոչ ինչ տեղի կամ վկայութի ՚ի մէջ բերէ, ապա յայսմանէ կարէ իմանալ աշակերտն, թէ այն բառք են սովորական և վարելի են, իսկ յետինքդ՝ անսովոր և խորշելի:

Կանոն. Ղ:

300: Ամենևին ոչ է արժան ուսմբք, և ոչ իսկ ընթեռնուլ, թող թէ ՚ի կիր առնուլ զբառս, որք գտանին ՚ի ներքնաշարել աղճատախօս գրեանս, որք են, Այպերա, Աղբիւր բարեաց Աստուածութեան և մարդոյ, Վերժանք բազեալ, Գրկաւոր հոգւոյ, Թանկագին զմրխտեայ ազգին, Իմաստ գրքման, Կերակուր բնական, Համդերձելոյ կենաց, Զայն քրիստոսի Զուարճութեան, Մեկնութի ժողովոյ, Մեկնութ աւետարանին, մաս-

թէոսի, Յարացոյց ապաշխարողի, Ուղղեծուծ, Ուսո-րեկվեց, Ալեպպոյի, Օրինակաց և Նմանութեց, Փիլա-կանուե մխիթարայ, և ընդհանրապէս ամ՟ գիրք շա-րադրեալք 'ի մխիթարայ և ընկերաց նորա, 'ի Կղե-մես Գալանոսէ, 'ի Յակոբայ Վիլլոթայ, և 'ի նմանեաց սոցա, մահուչափ խորշելի և անվերածանելի են և լինելին ամ՟ հայկաբանից։

### Կանոն. Ի։

301։ Մանկունք՝ որ ուսանին առ ոտս յաջահմուտ հայկաբան վարժապետաց, կարգեսցեն անձանց պատուանձին Տետրակ, յորում որոշակի նշանակեսցեն զայն ամ՟ բառս՝ զորս ուսուցիչն 'ի գրուածոց նոցա ջնջէ իբր զանհեթեթս, և զորս փոխանակ անարգայն ուղիղ դնէ զի այսպէս յընթացս քանի ամաց մարթ լինի մանկունք մեթերել զկարևոր ծանօթութիւնս ընտիր և անյարիր բառից, եթէ դաստատուքն իցեն 'ի կատարեալ լեզուագիտաց անտի։

302։ Նոյնչափ ինչ յաղագս ռամկական և անսովոր բառից, իսկ թէ զի՞նչ իցէ քաջագոյն լինելն բառից, մեկնեսցի 'ի վախճանի յիւրում համապատաշաճ վայրի։

# ԳԼՈՒԽ. Գ:

## Յաղագս կերպի խօսակցութեան:

303: Ի յարուեստագործելն ելս կերպ անուանի ձևն ծագեալ ՚ի յարաբերութենէ կապակցեալ մասանցն, նոյնպէս ՚ի նախադասութենէ կամ՝ ՚ի խօսակցութենէ մարդոյ կերպ ձայնի Եղանակն այն, որով բայքն կալեն ընդ-միմեանս այսպիսի կամ այնպիսի իմն առնչութիւն: կամ Ձևն այն, որ ծնանի ՚ի կապակցութենէ բայից հանդերձ առըն-չութեամբ ինչ, իբր զի ՚ի խօսակցութեան անդ՝ բայքն ոչ ևս մտածին առանձինն՝ յինքեանս, (որպէս յառաջինն մա-սին գրոցս քննեցաք ըստ ինչութեան, ըստ կազմութեան և ըստ այլ պարագայիցն,) այլ նկատեալ լինին իբրու մա-սունք ինչ, կամ յօդ ևս, իբր Անդամք՝ որք բաղադր-րեն զբովանդակ մարմին ինչ բոլոր, որ է նախադաս-ութիւն, Բայց յանդամս մարմնոյ երկու ինչ նկատ-ուելի, մի՝ Պաշտօն, զոր իւրաքանչիւր անդամ մա-տուցանէ ընկերին կամ բոլոր մարմնոյն, և երկրորդ՝ Առըն-չութիւն, զոր այս ինչ անդամ զգենու հայցմամբ առ այլ անդամ, բանիւ սեռից, դրից, թուոց, պիտոյութեան, ևայլն, իւրոյ: ըստ այսմ՝ և բայք ՚ի նախադասութեան մտածին եր-րակի, 1, իբր անդամ, 2, իբր պաշտօնեալ, և 3, իբր առնչացեալ, որով և կերպն խօսակցութեան բաղկացեալ լինի յերից, կամ բովանդակէ յինքեան գիրս ինչ, այն է՝ 1, զանդամս խօսից, որք են նախադասեալ ութ տեսակք բանից: 2, զպաշտօնս անդամոց: և 3, զառնչութիս անդամոց:

304: Պաշտամունք անդամոց կամ պարզ են և խօ-

սելով, գլխաւոր անդամք մասնմունք հանդերձ պաշտամամբք, ը են և 'ի ժամուս՝ են տասն այսուհետև:

Առաջին՝ բառ Գոյական, որ պաշտէ կայելով ընդ ածականի իւրում՝ այսպիսի կամ այնպիսի ինչ անունն:

Երկրորդ՝ Ածական, որ պաշտէ կայելով ը գլխաւոր բայի:

Երրորդ՝ Բայ գլխաւոր, որ պաշտէ կայի ընդ մակբայի:

Չորրորդ՝ բառ Խնդրող, որ պաշտէ առնչայել ը Խնդրեալ բառի:

Հինգերրորդ՝ բառ Բացայայտող, որ կամի կալել ը բացայայտելի բառի:

Վեցերրորդ՝ բառ Յարակայուցող, որ պաշտէ ընդ Յարակմնալի բառի:

Եօթներրորդ՝ բառ Յարաբերող, որոյ պաշտօն է կրկնել զբառն Յարաբերեալ:

Ութերրորդ՝ տառք Դիմորշողք, որք կամին կալել ընդ Դիմորշելի բառս:

Իններրորդ՝ բառ Շաղկապող, որոյ պաշտօն է ը խեաւոր կապակցել զբառս և զնախադասութիւնս:

Եւ Տասներրորդ՝ բառ Միջանկեալ, որ կարօտի կապել ը բառս և ը նախադասութիւնս:

305: Իսկ առնչութիւնք, որք ծնանին 'ի միջի այդչափ անդամոց՝ պատճառաւ պէտ պաշտամանց նոցին, յապաւեալ զդժուարընկալս մանկանց, տասացուք լինել նոյնպէս տասն, որք են, 1, Գոյութիւն: 2, Քանիութիւն: 3, Տեղակայութիւն: 4, Բնիթերակայութիւն: 5, Բնթակցութիւն: 6, փոխադրութիւն: 7, Թիւ: 8, Դէմք, 9, Հոլով: և 10, Հոլովատառ: զորս համառօտ

մեկնաբանել՝ կարեւոր է յոյժ ուսանելեաց։

Արդ՝ նախ գոյութիւնն նշանակէ զայն առնչութիւն, որ ծագէ՝ երբ մին յառնչակից անդամոց կամ դնի ներգործուած, կամ 'ի բաց թողանի լռուած, զօ" երբ գոյականն, կամ ենթակայն, խնդրողն, յարակայութեան, ևայլն, լռեալ լինի, զի լսողք զօրութեամբ իմասցեն զայն։

Երկրորդ՝ քանակութիւնն յայտ առնէ զչափ առնչակից անդամոց, օրինակ իմն, թէ քանի՞ ածականս մարթ իցէ յարել առ մի գոյական, քանի՞ մակբայս առ մի բայ, քանի՞ յարակացուցիչս, խնդրեալս, ևայլն։

Երրորդ՝ տեղակայութիւն ուսուցանէ զտեղի բառից 'ի նախադասութեան, թէ ո՞ւր պարտէ դնել զենթակայն, զածականն, զյարաբերողն, զշաղկապն, ևայլն։

Չորրորդ՝ ընթերակայութիւն ցուցանէ, թէ ե՞րբ կամ զո՞ր բառ որժամ իցէ կցել կամ անջատել հեռի դնել յառնչակից իւրմէ՝ միջադրութեամբ այլոց բառից։

Հինգերորդ՝ ընթացակցութիւն ծանուցանէ, թէ ո՞ր բառք միայնակ, և ո՞ր բառք ընկերակցութեամբ այլ բառից կամ տառից կարեն վարիլ 'ի խօսակցութեան։

Վեցերորդ՝ փոխադրութիւն ուսանէ, թէ ո՞ր բառ հնար իցէ վարել փոխանակ այլոյ բառի, զօ", փոխանակ մակբայից կամ ընդունելութեանց՝ զածականս, փոխանակ դերբայից՝ զգոյականս, ևայլն։

Եօթներորդ՝ թիւն ուսուցանէ, եզակա՞ւ՝ թէ յոգնական թուով պարտ իցէ կապել զայս բառ ընդ առընչակցին, զօ", զենթակայն ընդ բային, զածականն ընդ գոյականին, ևայլն։

Ութերորդ՝ դէմքն ծանուցանէ, թէ ո՞ր առնչակից բառք պարտին դնել նոյնադէմ կամ այլադէմ։

Իններորդ՝ հոլովք զայն յայտնէ, թէ ո՞րպիսի

հոլովով կապիլ ունի ընդ անձնական իւրում, օրինակ իմն խնդրիլն, խնդրողն, ածականն, ենթակայն, և այլն:

Տասներորդ՝ հոլովատառն ուսուցանէ, թէ որով կանոնաւ բառնին, փոխին, կամ առաւելուն նախդիրք:

Նոյն այս ամ. առնչութիւնք ևս քան զևս բացայայտեալ և օրինակօք հաստատեալ գտանին յետագայ գլուխս Ճառից:

306: Ի բազմատեսակ զուգադրութէ այսչափ առըն-չութեց և կապելի անդամոց՝ ծագեն այն բիւրատեսակ կերպք խօսակցութեց ՚ի բերանս անթիւ խօսողաց և գրողաց, ըստ որում իւրաքանչիւր ոք խօսող ըստ դատողութեց մտացն և հաճոյից կամաց իւրոց, ըստ առաջակայ առթին և նիւթոյն պահանջման, ըստ չափոյ հմտութե և անհմտութե կանոնաց լեզուին, ըստ թեթևադրութե սրամըտութեն և բնական խառնուածոյն բերման, և այլն, անխըտիր զուգադրէ զբառս, և կարգէ զչափ և զեղանակ խօսից իւրոց, և յայս յորդնադիմի պէսպիսութէ ծագել են այն բազմապատիկ բաժանմունք խօսից ՚ի քերականութե, ՚ի ճարտասանութե, և ՚ի տրամաբանութե, զորոց զայլսն թողեալ այլում աւուր, միայն զքերականականն ՚ի մէջ առից ՚ի ժամուս ՚ի քննել:

307: Արդ՝ ըստ քերթողական զննութեանց, գրաբառ խօսակցութի լեզուիս նկատմամբ կերպին իւրոյ բաժանի նախ յուղիղ և ՚ի սխալ: Ուղիղ առի խօսակցութին երբ կազմի համաձայն արտաքին զաղափարի իւրում, որ է խօսակցութին նախնի լեզուագէտ հեղինակաց մե-րոց, որոց բանք ՚ի մատեանս գրեալք և առ մեզ ժամանեալք, ըստ իրաւամբք համարին միմիայն քանոնելի կանոն, որով ամ. ճշգրտիւ հայկաբան պարտական է անխոտոր նմանել, մինչ որ ոչ ըստ այսմ կաղապարի յօ-

ընէ զբանս իւր, Այսու լինի խօսակցութիւն նորա, Թող այժմ զներքին ուղղութիւն խօսից, զորմէ առանձին գըլխով ճառել ունիմ ստորև:

308: Ուղիղ խօսակցութիւնն դարձեալ բաժանի յան- պարզ, և 'ի զարդարուն: Անզարդ կոչի խօսակցութիւնն՝ որոյ բառքն շարահիւսին բնական կամ իբր ռամկական եղանակաւ խօսելոյ առանց ինչ ձևոյ: Իսկ զարդարուն ասի, երբ ոճով քերականական ձևովք սեթևեթեալ և գեղազարդեալ հեռանայ 'ի հասարակ եղանակէ խօսից: Այլ թէ զինչ և քանի իցեն այս քերթողական ձևք, ուսցիս 'ի մեծի քերականութեան իմում:

309: Զարդարուն խօսակցութիւնն դարձեալ բաժանի 'յերիս աստիճանս, որք կոչին, պարզ, միջակ, և խըր- թին:

Պարզ անուանի խօսակցութիւն, յորում բառք դիւրըմբռնելք կապակցին ըստ իրեարս հասարակ կանոնօք առնչութեց և ստորին ձևովք քերականութեան, որպէս են խօսակցութիւնք 'ի գիրս Թագաւորաց և Դատաւորաց յԱծաշունչն, սաղմոսք, բազում տեղիք յաւետարանս յայսմաւուրք, ևայլն:

Միջակ ասի խօսակցութիւն, որոյ բառքն յօդուածին չափաւոր կանոնօք առնչութեց և միջասահման ձևովք քերականութեան, որպէս են խօսակցութիւնք գրոյն Յոբայ, առակաց, գործոց առաքելոց, ևայլն:

Իսկ խրթին խօսակցութիւն կոչի այն, որոյ բառքն շաղկապին դերազանց կանոնօք առնչութեց և 'ի վսեմափայլ ձևովք քերթողութեան, որպէս են խօսակցութիւնք գրոյն Մակաբայեցւոց, աղօթից Նարեկացւոյն, Թղթոցն Մագիստրոսի, Մամբրէի Վերծանողի, ևայլն:

310: Յասացելոցդ բացայայտ երևի, թէ զանա-

դժնուն այսց խօսակցութեանց առնել լինի գլխաւորաբար յերկուց, այն է՝ 'ի կանոնաց անուշութեն, և 'ի ձևոց բե-րականութեն, զոյգ ըստ տարբերութեց նոցին, իբր զի բաժա-նեալ զօրով սոցունց յինքեանս յայլ և այլ աստիճանս ըստ փափկութեն և քաղցրութեն, ըստ պարզութեն և մեծութեն, և ըստ այլ հանգամանաց, ըստ չափոյն՝ որով յաճախեն կամ պա-կասեն 'ի խօսակցութեն անդ, տարբերեն զխօսս 'ի միմե-անց. և յայլ և այլ կարգս վերածեն զայնս, և յայսցա-նէ ծնանի դիւրութիւն և դժուարութիւն այն՝ ոչ միայն ի-մանալոյ: այլ և ուսանելոյ և արդեամբք յօրինելոյ վայելչական տեսակս բազմազանուած խօսից:

311: Նմանայն ողջախոհ մտաւորի հնար է վճռադա-տել թէ կլանան զայս բազում կանոնաց և ձևոց Խօսից՝ չէ՛ր արժան առանց ինչ յետևառաջութեն կարգի և ժա-մանակի՝ միանգամայն 'ի միում վայրի առաջի առնել. համբակաց, կամ՝ ով փառս բանից բերէ առնել, զկա-թիլն և զհաստատուն կերակուրն յանխտիր ջամբել տղայոց՝ յուսալ մարսել նոցա և 'ի սնունդ փոխարկել. վա զի և նոյն իսկ ամենիմաստ Արարչական բնութն ոչ կամովին միայն, այլ և զհոգի և զբանաւորութի նոցա ամփոփնութ իմն ուսաւ ուղերձել 'ի ստորէ 'ի բարձու-նս, և յանկատարէ 'ի կատարեալն, մանաւանդ զորեա մեղ օրինադրել, 'ի մատակարարել մեզ զսնունդ թէ՛ մնայ և թէ՛ մարմնոյ մանկանն՝ նախ 'ի խիւս դիւրահալ բուծանել զնա, և ապա ըստ կրթելոյ ճաշակելեացն՝ 'ի դժուարամարսելեան ընդելացուցանել: Արդ ահա այսմ օրինաց աշակերտել իմ, զբովանդակ փորձութիւն ար-ուեստի փոյթ յանձին բերի՝ 'ի համառօտս համառօտս աստիճանել, նախ՝ զթեթևախօսութիւնս դիւրամարսելի և միջասահման կանոնաց շարադրութե՝ սովին Նա-

ջին հատորոյ, և այս զանօսրաձայն ձևոց բազմա-
քանդակ բանահիւսութեան Նկրդական հատորով սահմանել
սերմանաւորել զմ ուսանելեաց, զի այսպիսօք ինչ
թերևս թեթևասցի ամ. եղբարց իմոց՝ եկղցւոյ և
ժողովրդականաց՝ ուսանել զգրաբառ լեզու մեր, յըն-
թեռնուլ և յիմանալ զնծայն և զարուքն մատեա-
նըս, լուսազարդել զբանականութի մտաց զիւրեանցն և
զընկերացն, օգնել ծառայել այ և եկեղեցւոյ, ազգի
և հայրենեաց և անձին, որով և արժանանալ տեսութե
ածութե ՚ի հանդերձեալսն, յոր ուղղի բովանդակ գոլ
և գործել մեր յայսմ թշուառականիս աշխարհի:

312: Մատուցուք արդ ՚ի մեկնել զվերայսբերեալ ան-
դամոց խօսից ընդ արտաքսմանց և առնչութեց նոցին,
բայց նախ զենթակայն, որ առաւել հեշտըմբռնելի է
մանկանց, և ապա զնմանութեանն ըստ կարգի՝ Տեառն գոր-
ծակցութե:

# ԳԼՈՒԽ. Գ:

## Ո՛րպէս արժան է հոլովել զներգործական ընդ բայս:

313: Ամենայն յոյժ ստեղծեալ էակք, և ամ ՚ի մարդ-
կանէ արուեստագործեալ իրք ունին զպէսպէս գործողութի
և զկրելութի, (132.) յորոց ոչ միայն իրարուց զա-
նազանին, այլև ՚ի խօսակցութե այլատեսակ բառիւք
բացատրին, զի իրքն բացատրին գոյական անուամբք
իսկ գործք և կիրք նոցին բացատրին բայիւք, և ահա
այս գոյականք մտածեալք ՚ի նախադասութե և կապեալք
ը բայի, կոչին Ենթակայ բայից, որով իմացեալ լինի

գործոյն ներգործական և չէզոք բայից, և կրօղն կր-րաւորական և էական բայից, այն է՝ զոր նախընթաց հեղինակք կոչեցին, [illegible] բայք, կամ [illegible] բայք:

314: Գիտացեալ զպաշտօն ենթակային, խնդրի և ևս, թէ որ բառք կարեն լինել ենթակայ, և թէ զխա՞րդ կապին ը բայս իւրեանց, զորոյ ասելի է, թէ ենթակայ կարէ՛ լինել,

315: Նախ՝ գոյական անուանք, զօ″ *Մայր իմ զերկինս և զերկիր . . . երկինք պատմեն զփառս ած . . . խաւարեցի արեգակն և լուսին . . . վէմք պատռեցան . . . գերեզմանք բացան: | Խոյլի:

316: Երկրդ՝ գոյական անուանք, զորօրինակ:

*Նա խօսիմ . . . դու լսես . . . նա ընթեռնու . . . դուք էիք մեր պարծանք . . . որ առնէ զմեղս, | Խոյլի:

317: Երրդ՝ ածականք առանց գոյականի եդեալք որ զօրութ ունելով զգոյականն՝ լինին ենթակայ բա-յից: զօ″, | արդարք զուարճասցին . . . մեռեալք տան-ջեսցին . . . խստասիրտն բարեաւ ոչ պատահէ, | Խոյլի

318: Չորրորդ՝ միջական ածականք. զօ″:

*Մին ՚ի ձէնջ է սատանայ . . . հինգ ՚ի նոցանէ յիմարք էին . . . առաջինն նստէր . . . երկրդն շրջէր . . . իմ քն ըղձանանքեզ . . . այնպիսին հալածեցեալ է . . . ո՛ կարէ կալ առաջի դորա . . . քանի՞ք ՚ի մարդկանէ ցան-կան . . . ոմն իշխէ, և ոմն իշխի . . . իմ իմչ երագ է . . . երկաքանչիւրն է ծածկեալ, | Խոյլի:

319: Հինգերրորդ՝ ածական դերանուանք (121.) այն է՝ ցուցականք և ստացականք: զորօրինակ:

*Այս է խաբել զընկերս . . . լուան մերքս զխոր-

հուրդ ձեր ․․․ խիղճն են թեթեւագոյն ․․․ քաւնք են ծանրագոյն ․ , ․ այդ բժշկուն է նց․ և այլն։

320։ Վեցերորդ՝ ածական բացականչութք, ո՜, եղերեալքն, օ՜, էհ, ըէ, վերջաւորութբ ։ պօ,"

* Բամբասօղն է սատանայ ․․։ ո՛չ պարծիմ նախատեալս ․․․ սպանեալն կենդանացաւ ․․․ պահալըն է քաղցր, ո՜ փառաւորեալդ ․․․ ցանկալին փրկութ ՚ի քեզ շրջէր ․․․ ողբալիս եղէ արժանի ողորմութ ․․․ զարմանալին քննութ յանդիմանէ զիս ․ ․․ կուրացեալքն փրկիցեն ՚ի կենաց ,․․ թեթեւացեալքդ ՚ի ծանր բեռանց՝ անձամբ անձին առէք զբեռն ծանրութ ․․․ բարկացօղս բարեաց ո՛չ պատահէ, և այլն։

321 ։ Եօթներորդ՝ ուղղական աներևոյթքն լինին ենթակայ երրդ դէմ բայից միայն, և ո՛չ առաջին կամ երկրդ դէմ բայից ․պօ"

* Անկաւ ՚ի սիրտ նր շրջիլ զեղբարբք իւրովք ․․ անմարթէ առն հրէի հպիլ կամ մերձենալ առ այլազգի ․․․ անլուայ ձեռօք ուտել ո՛չ պղծէ զմարդ ․․․ եթէ մեռանել եւս հասանիցէ ընդ քեզ եմ ․․․ գիտեմ թէ վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս ․․․ լաւ է ո՛չ ուտել միս և ո՛չ ըմպել գինի ․․․ խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել ․ ․ , հարկէ գալ գայթագղութ ․․․ կամ եղև ինձ կարգաւ գրել քեզ ․․․ ծանրէ մեզ և տեսանելն զնա ․․․ դիւրին իցէ երկնից և երկրի անցանել ․․․ ո՛չ է մարթ չգալ գայթագղութ ․․․ դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ ․․․ ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց ․․․ անդ եղիցի լալ և կրճտել ատամանց | և այլն։

Յայս ամ նախադասութս՝ ուղղական աներևոյթքն են ենթակայ դիմաւոր բայից յերրդ դիմաց եզակի։

322 : Ութերորդ՝ ուղղական դերանուն լինի ենթակայ էական բայից երրորդ դիմաւորաց, յայնժամ միայն, երբ էական բայն ունի առ իւր զանուական խնդիր, զօ."

* Ուսեալ է՛ մեր . . . գրեալ է՛ր ձեր . . . արարեալ է՛ր նա . . . թէ մոռացեալ իցէ մեր . . . թէ պահեալ իցէ քո . . . գողացեալ էր առաջնոյ . . . զայն այր և տեսեալ չի՛ք մեր . . . ղարան գործեալ է սորանց . . . որոց վերակացու լեալ իցեն . . . չի՛ք ինչ ձեր մոլորեալ առնս . . . չիցէ այսօր հաւու խօսեալ . . . տեսեալ է մեր . . . լսեալ է քո, | Յօդ՝ր: յորս Դերանունքն, ինձէր, մեզէր, նորայէր, գործէր, են ենթակայ էական բայիցդ, է, էին, էր, Յօդ՝ր, իսկ անուական անուանք կամ դերանունք են խնդիր նոյն էական բայից: Նոյն զայսմանէ այլում ևս բան լինի, այժմ տեսցուք կարգաւ զաննշաւոյս ենթակայից:

323: Պարտին ենթակային 'ի նախադասութեան պահանջի վասն պարզութեան առնելոյ զխօսս, զի մի մթին, անիմանալի, կամ երկդիմի լինիցի իմաստ ասացելոյն, վասն որոյ այսր՝ երբ բուք կարեն իմանալ զենթակայն, հնար է չդնել զայն 'ի նախադասութեան, զօ",

* Զգոյշ եղերուք հսկեցէ՛ք, և կացէ՛ք յաղօթս, զի ո՛չ գիտէք ե՛րբ ժամանակն իցէ . . . բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ, արթուն կացէ՛ք . . . գովեմ զձեզ, զի զամ ինչ զիմ յիշէք, և որպէս աւանդեցի ձեզ, զաւանդութիւնսն ունիցի՛ք, | Յօդ՝ր:

324: Նաև եթէ հարկ լինիցի ներգործութեան զենթակայն, զտեղակայութի կամ զտեղի նորին 'ի նախադասութեան՝ այսպէս կարգել է, զի նախ՝ 'ի պարզ խօսս դնիցի անմիջապէս յառաջ քան զբայն, իսկ 'ի միջակ

խօսակցութ՟, զկնի բային անընդմէջ։ Նոյնպէս՝ երբ նոյն բառն լինի ենթակայ ՚ի բազում նախադասութիս, օրէնք քաղցրաձայնութ՟ հրամայեն փոփոխել զտեղի նորին, ՚ի միումն՝ նախադաս, և ՚ի միւսումն՝ վերջադաս, կէս կամ անջատեալ շեշտեղելով զնոսին, որում զնդեցէք օրինակ ունիս զայս պարբերութ՟ նախնեաց,

* ՚Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Ած՟, և Ած՟ էր բանն, | յորում են երեք նախադասութիք, և յիւրաքանչիւրումն ենթակայ է նոյն բառն, Բան, բայց տե՛ս զերկրորդ քաջարուեստ տեղափոխեալ է զայն թարգմանիչն, յառաջին և ՚ի վերջին նախադասութ՟՝ յետադաս, և ՚ի միջինն յառաջադաս դնելով զայն։

Նոյնպէս՝ ուր այլ և այլ բառք ենթակայման յայլ և այլ նախադասութիս, մանաւանդ՝ ՚ի սակաւաբառս, բարւոք է նովին կանոնաւ այլափոխել զտեղին, մերթ յառաջոյ՝ և մերթ ՚ի վերջոյ բային կարգելով, որպէս տեսանես ՚ի նախընթաց օրինակդ։

325։ Ենթակայն ընթակցութ՟ կարէ առնուլ իւր ընկեր զտառս և զբառս, այն է՝ զդիմորոշող տառ, զածականս, զյատկացուցիչս, , զբացայայտիչս, ըստ խնդրելոյս, ևայլն, որպէս ցուցանեն այս օրինակք։

* Ի նմա հանդերձ սրբ՟ն գրիգորիւ տապանն ապրեցուցիչ, . . բերկրեալ զուարճանայ լեառն սեպուհոյ . . կիզիչ կենդանեացն եղև տեսանող հոգւով կենդանին, | և այլն։

326։ Թիւն և քանիութն ենթակայից հիմնեալ կայ ՚ի չափ դատողութ՟ մտաց մարդոյ. իբր զի յիւրաքանչիւր դատողութ՟ դնի միմիայն ենթակայ և զայնմանէ լինի դատաստան, և կերպարանի նախադասութ՟ վ՟ոյ որքան են դատողութիք մտաց, այնքան լինի և թիւ

ենթակայից այլևայլ նախադասութիւնք բացատրելի, որով բազմաւն կամ միաւն ենթակայից ծնող լինի բազմութիւն կամ միութիւն դատողութեանց, ընդ նմին և պէսպիսութեանն է զբառս նշանակողս զենթակայն, եթէ զի եթէ դատողութիւն կազմի զմիոյ անհատ ենթակայէ, ը նմին հարկ լինի միով եզական բառիւ բացատրել զենթակայն, զօ՛՛ . հաւ խօսեցաւ . . . պետրոս ուրացաւ, | և այլն: եթէ դատողութիւն իցէ զբազում նոյնատեսակ ենթակայից, միով՝ բայց յոգնակի բառիւ պիտի նշանակել զենթակայն, | զօ՛՛ վէմք պատառեցան, | և այլն: Իսկ եթէ զբազում այլատեսակ ենթակայից իցէ դատաստանն մտաց, յայնժամ պէրաքանչիւր ենթակայ՝ այլևայլ բառիւ պարտաւորիմք բացատրել, | զօ՛՛ ձմեռն էանց . . . գարունն եհաս. . , այգիք ծաղկեցան. | և այլն:

327: Որ ծանուցաւն զայս պէսպիսութիւն ենթակայից, մարթի ևս ճանաչել, թէ իւրաքանչիւր յենթակայից պահանջէ զինքեան թուակից զբայ գլխաւոր, այն է՝ եզակի ենթակայն՝ զբայ եզական, և յոգնականն՝ զյոգնական, զի երկու այդոքիկ՝ ոչ ը մտացն միայն, այլ և ը ձայնին կամին լինել նոյնաթիւ, որ է ընդհանուր և բնական օրէնք խօսելոյ, ծանուցեալ և պահեալ ևս և 'ի տգիտաց ռամկաց, որով և անկարօտ կանոնադրութեանց, այլ վն դի ը մանկունս խօսիմք զարդիս, որք ևս և 'ի լոյս տունջեան գայթել գայթեն, 'ի շնորհս նոցին յաւելցուք կարևորական կանոնս:

### Կանոն . Ա:

328: Եթէ ենթակայդ իցէ բառ յատուկ կամ

եզական, զբայ նորին( թէ մի իցէ, և թէ բազում, ) դի՛ր եզական թուով, զօ՛՛:

* Յուդա վաճառեաց զ.քս... Մարիամ ծնաւ ըզ՚յս. •: ադամ եղև իբրև զմի ՚ի մէնջ... մեռաւ անմահն... այր փորձի ՚ի բերանոյ գովչաց իւրոց· Ճշմարտութիւն ազատեսցէ զձեզ... եկն միաբան բազմութին խռնեցաւ... ընդ իս թէ ոք մտանիցէ՝ կեց-ցէ, մտցէ և ելցէ, և ճարակ գտցէ... եկեր յակոբ և յագեցաւ, յօրացաւ և անպուշեաց, գիրացաւ, ստուա-րացաւ, լայնացաւ, և եթող զած: | և այլն

Կանոն. Բ:

329: Եթէ ենթակայքդ իցեն բազում, նոյնադէմ, և ունիցին զնոյն գործողութի, զբայ նոցին դի՛ր յոգ-նակի: զօ՛՛,

* Զինուորք խաչեցին զ.քս... երևեցան լեզուք ՚ի հրոյ.. դուք տ՛ուք դոցա ուտել.. խորհուրդք թիւրք անջատեն յայ.·. փառք այ ծածկեն զբանն: իմաստուն կանայք շինեցին տունս.., բանք անօրէ-նաց զօրացան ՚ի վր մեր... անցաք մ.ք ըն̄ հուր և ընդ ջուր, | և այլն

330: Ծանօթ: Բազմութի ենթակայից ՚ի լեզուի մե-րում բացատրի քառակի: Նախ՝ բառիւք յոգնական թուով եղելովք, որպ յորինակդ տեսան:

Երկրորդ՝ բազում եզական բառիւք շաղապելովք, որոց բայքն նոյնպ դնելի են յոգնակի, զօ,

* Գինի և արբեցութի ապականեն զայս իմաստու-նըս... ատելի են այ ամբարշտեալն և ամբրշտութի

նէ . . . գործն և գործելին առ հասարակ տանջեցին . . . խիստն և յանդուգն և հպարտն ժանտկոչին, | և այլն:

331: Երրորդ՝ բառք ածանցելովք այնպիսի մասնըկամբք, որք թէ՝ ը ձայնին և թէ, ը խաստեան յոգնակերտութեանն զբառս, որք են այս մասնիկք, ածք, այք, անք, եայք, եացք, երք, ենք, էք, ինք, իչք, իք, ոյք, որայք, ունք, ուտք, քեան, քին, ծնք, օրէք, և այլն: զօ,"

Ածք, — արկածք, վարկածք, տարածածք, խարտածք, խուզածք, և այլն:

այք, երկկայք, հագագայք, հերձախոխտայք:

անք, աքսորանք, մեղանք, պարսաւանք, պարծանք:

եայք, արուարձանեայք, հեռաստանեայք, ահեկեայք. հողանիւթեայք:

եացք, աքեացք, հայեացք, նայեացք:

երք, ընդերք, կողերք, և այլն:

ենք, ծուէնք, կաղէնք, օրէնք:

էք, այծէք, անդէք, կորէք, օդէք:

ինք, աջինք, խլինք, յատակինք, նախատինք:

իչք թռիչք, կռիչք, և այլն:

իք, ականողիք, թեղանիք, լալիք, խայրիք, հարկիք, չարիք, պատարագ'ք պարտիք:

ոյք, ամօթոյք, բաշխոյք, գահոյք, հիւրոյք, յետոյք, սոսոյք, գործոյք. և այլն:

որայք, արտորայք, դեղորայք, դաշտորայք, և այլն:

ունք անուշունք, արտևանունք, լորձունք, խլախունք, կոչունք, հսկայունք:

ուտք, խրուտք, կոռուտք:

քեան, ամենեքեան, հնգեքեան, տասնեքեան:

քին, երկոքին, չորեքին, ութեքին, և այլն:

օնք, — գաղտագողօնք, քալօնք, մռայօնք, ցրօնք։
օրէնք, — գիւղօրէնք։

332։ Մակդիր բառք՝ որովհետեւ ձայնիւ եւ նշանա-կութ. յոգնական են, վ՛ն յենթակայանալն զբայն պա-հանջեն նոյնպէս յոգնակի, զորօրինակ,

* Ամենայն այգպիսիք պարտանք չարուլ են ... օրէնք տիրեն մարդոյ՝ որչափ ժամանակս կենդանի է ... նա-խատինք նախատչաց քոց անկան 'ի վ(ե)ր իմ ... եկին հա-սին իմ չարիքն 'ի վ(ե)ր նոցա ... ամօթոյքն մեր աւա-ւել եւ պարկեշտու(թ)ի(ւ)ն ունին ... տեսէ՛ք զարտորայսն-զի սպիտակացեալ են ... արտեւանունք նորա քննեն զորդիս մարդկան ... Թէպէտ եւ ամենեքեան զայ-թակղեսցին 'ի քէն ... մռայօնք լինիցին նմա ... ո՞յր են կապուտակ ակնողք, | եւ այլն։

333։ Զորրորդ՝ բառիւք ածանցելովք այնպիսի մասնկամբք, որք ըստ ձայնին եզական երեւին, այլ ըստ ի-մաստին բազմապատկեն զբառն, որպէս են մասնիկքս, ակ, ան, անի, եան, եար, իկ, կան, ոտի, տի, եւ այլն, գօ,"

Ակ, — կոհակ, կուտակ, հրոսակ։
ան, — երախան, խուժան, կարաւան, օրան։
անի, — ազատանի, աւագանի, գլխանի, երիցանի, զան-գականի, կանանի, նամականի, եւ այլն։
եան, — ատեան, բերդեան, գրեան, պեօղեան, խող-եան։
եար, — իշեար, վարժեար, որեար, քաղաքկնեար։
իկ, — մարդիկ։
կան, — բազմական, զօրական, փախստական։
ոտի, — ոսկերոտի, փորոտի։
տի, — ծակոտի, մանկտի, նաւաստի, եւ այլն։ *

334։ Իսկ իմ բառք՝ սոյն օրինակ ածանցեալք, են և անուանք հաւաքականք, լծուականք, հարականք, և անձնականք, յոլովականաւն երբեմն զ բայն կամին եզակի, և երբեմն՝ յոգնական, ըստ քաղցրուն խօսից, որոց յանձնա են օրինակք առ նախնիս, յորոց զ սակաւս զայս տես ։

" Համարձակ խռովեալ ՚ի վ֊ը իմ. հնակէր . . . իմ տոհմին խաղէբին զ յո և տարան հաւանէին . . . հարթէին զար֊հայան և ատեին հանձար մարդիկ եղանէին ՚ի քաղաքէն , . . ՚ի լծիկունս վ֊ագվազակի հատի գունդն հրեշտականե֊նայց . . . հարկանէին զունդն մակաբեան . . . անձեց ժողովուրդն այր ը՛ այր . , . և ծանէին իմ ժողովուրդն եփրեմեան . , . յանէին այլ ազգ, որ ոչ ճանաչէին զ֊ը . . . բռնադին մարդիկ էին ՚ի նեղութ ն֊ը . . . և փախեան իմ բռնադն . . . հեծեալ խաղ երկուց գնդաց կա֊ճառի . . . հինգն ՚ի նոյանէ յիմարեալին . , . և թէ եր֊կու ազգացն ՚ի մի երկամս . . . ժողով այլ ծածկէին զ բան . . էջ կենայն փոխէցան, Երեւայ։

335 Օրէնք ենթակայքն պարտի որոշել նոյն իւ֊րեանց իրն, զորմէ լինի դատողութ, զի որովհետև բառն ենթակայացող վարի փոխանակ իրաց ինչ, ապա պար֊տի լինել նոյնադէմ, ը՛ ունել և ցուցանել զ այն դէմ, զոր ունի իրն այն, և այս առանց իմ խրատու՝ միայն բնութեն ազդեցութ լինի իսկ ՚ի միտս և ՚ի լեզուս իմ ուսմկաց, զորմէ չէք ինչ առնել ծանուցանելի, բայց զայս միայն, թէ որովհետև դէմք իրաց ոչ մի՝ այլ ե֊րեք են, և ենթակայացող բառք ոչ մի՝ այլ բազմապատ֊իկ են ( 315 — 322 )․ վ֊ն այսորիկ պէտք են որոշակի ցուցա֊նել, թէ ենթակայք զ կարգ զ անազանեն զ դէմս իրաց։

Արդ՝ յենթակայացող բառից անուն էական և ցու֊

ցական դերանուանք ինքնին դիմաւոր լինելով՝ առանց ինչ սատարութե՟ այլոց բառին փոխանակ որոշեալ դիմաց իւրեանց :

336 : Յարաբերող դերանունն ոչ դէմս ունի և ոչ դիմորոշող տառս առնու, վ՟յ դնի անխտիր փոխանակ երից դիմաց ևս, զօ″,

*Ես եմ որ վկայեմ վ՟ն իմ . . . դու որ հրէայդ ես . . . որ խնդրէ զփառս այնորիկ որ առաքեացն զնա | և այլն :

337: Ստացական դերանունք՝ վ՟ն զի նշանակեն զգործս և զկիրս իւրաց, միշտ համարին օտար ինչ 'ի խօսողէն. վ՟յ և ե՟րդ դիմաւ բայատրելի, զօ″, տեսանելն իմ, քո, նորա, մեր, ձեր, նոցա, և այլն:

338: Անձնական, Թուական, և Հարցական միջականք գրեթէ հանապազ վարին փոխանակ իրաց ե՟րդ դիմաւորաց, զի ցուցանեն զայլ ինչ 'ի խօսողէն և 'ի լսողէն:

339 : Իսկ գոյական և ածական անուանք, ևս և ընդունելութիւնք՝ յինքեանց անդէմ գոլով, յենթակայանալն կարօտին դիմորոշող տառից, զի որոշեսցին 'ի յուցանել զայս կամ զայն դէմ, սակայն 'ի խօսակցութե՟ ոչ ա՟մ ուրեք հարկ լինի ներգործութ՟ յարել զդիմորոշողդ յասացեալ բառս, այլ ըստ որոշ կամ անորոշ լինելոյ նոյն ինքն ձայնի իւրն, և ըստ քաղցրութե՟ ականջաց, երբեմն դնին, և երբեմն զանց առնին դիմորոշքն. ըստ որում տեսանես յայսոսիկ բանս նախնեաց :

* Անօրէնութիւնք որսան զայր . . . սիրտ խոտորեալ նիւթէ զչարիս . . . հզօրք դրեն զարդարութի՟ . . . բռունք ինն առնին գերկեր . . . ա՟մ ինչ ուղիղ է իմաստնոց . . . մի՛ յաղթեսցէ քեզ ցանկութի՟ գեղոյ, | և այլն:

. Պատասխանի ետուն հրէայքն եւ ասեն ցնա . . . լուան փարիսեցիքն՝ եթէ Յս բազում աշակերտս առնէ . . . պատասխանի ետուն սպասաւորքն եւ ասեն . . . ասաց անզգամն 'ի սրտի իւրում, | Յովհ:

340: Բառն ենթակայացեալ յետ զգենոյ զդէմս երկոն՝ որոց փոխան վարի, պահանջէ զմասնաւ՝ զի եւ դիմաւոր բայ իւր նոյնպէս հաւանայնեսցի խօսելոյ 'ի դէմըս, այն է՝ զի զոր դէմ եւ ունիցի ենթակայն, նոյն դիմաց զիցէ եւ բայն, եւ այս նոյնպէս օրէնք է անդրժիլի, զոր զասատուցէ քնուծ զխոհն եւ զիւղականք, յորոց ոչ ոք ասաց երբէք, | Ես ննջեցեր . . . դու կերաւ . . . նա զրեցի, | Յովհ:

Յարաբերականին օրինացս թէպէտ չէ մեզ 'ի- խաղել զայս իմ բանաւորի, սակայն որովհետեւ օրինակագործ յայտնի բանից աւանդել լուսաւորէ եւ իմաստուն առնէ զտղայս, բե՛ր 'ի պէտս նոցա յաւելցուք զհետագայ կանոնդ ։

Կանոն . Ա։

341 ։ Եթէ 'ի նախադասութեան իցէ մի միայն ենթակայ զբայ նորին դի՛ր յայն դէմ, զոր ունի ենթակայն, զօ . Ես ընթեռնում. դու մտածես, նա նկրտէ . . . ո՞չ բարուք ասեմք մեք, եթէ սամարացի ես դու, եւ դեւ զոյ 'ի քեզ . . . վասն սիրոյ զի հայր իմ՝, զի ես դնեմ զանձն իմ, ոչ ոք հանէ զնա յինէն, այլ ես դնեմ զնա . . . ասէ ցնա կինն սամարացի. դու՞ որ հրէայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես, զի ոչ երբէք խառնակին հրէայք ընդ սամարացիս, — Յովհ։

Կանոն : Բ :

342: Եթէ 'ի նախադասութիւն լինին բազում շաղկապեալ ենթակայք ընդ նոյն դիմաց, զբայ նոցին դնել ընդ դիմի ենթակայիցն: զօ",

* Երկինք և երկիր անցցեն . . . անդրէաս և փիլիպպոս ասեն ցյս . . . խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ՝ անձն իմ՝ և փոր իմ, | և այլն:

Կանոն. Գ. :

343: Եթէ 'ի նախադասութիւն լինին բազում շաղկապեալ ենթակայք ընդ այլ և այլ դիմաց, բայց ունիցին զնոյն գործողութիւն, չէ' արժան ընդ այլ և այլ դիմաց ենթակայիցն յեղյեղել զնոյն բայ այլ և այլ դիմօք, այլ շատ է միանգամ դնել զբայն յոգնական ընդ դիմի միոյն յենթակայից, և զմիւս ենթակայս թողուլ առանց ընթերակայութեան բայի: Զոր օրինակ չէ' արժան ասել, | Ես աշակերտեցայց, դու աշակերտեսցես, և ամ՝ բազմութիւն աշակերտեսցի, ծծայլն գրոց, | այլ շատ է միով բայիւ ասել ընդ եղիշէի, | Ես և դուք և ամ՝ բազմութիւն աշակերտեսցուք ծծայլն գրոց, | Նոյնպէս ասէ, | գալո՞վ գայցե՞մք ես և մայր քո և եղբարք քո, և երկիրպագանիցե՞մք քեզ, | և այլն:

344: Այլ յայսպիսի դէպս՝ թէ ո՞ր ենթակայի դիմաւն դնիցի բայն, չի՞ք որոշեալ կանոն կամ օրինակ տուեալ մեզ 'ի նախնեաց անտի, այլ երևի՛ թէ թողեալ է այդ քաջուն քերթողին, իբր զի եթէ ենթակայքն լինին առաջին, երկրորդ և երրորդ դիմաց, զբայն հնարէ դնել,

կամ առաջին դէմն, զօ՛՛ | Ես և հայր իմ միեմք...
այլ ես և տուն իմ պաշտեմք զՏէր.. եթէ ես և եթէ
նք այսպէս քարոզեցաք ... դու և ես միեմք, | նոյն:

345: Կամ երրորդ դէմն, զօ՛՛ | Ով թէ մեք
կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ.. եկեր
սա և նա և որդիք նր ( Գ· Թագ· ԺԷ· ):

346: Իսկ եթէ ենթակայքն իցեն երկրդ և երրդ դի-
մաւ, զբայն հնարէ դնել,

Կամ երկրորդ դէմն, զօ՛՛ | Ընդէ՞ր մուանիք դուք
և ժողովուրդ քո ... դու և որդիքդ պատուես-
ջիք ... յորժամ դու և նա միայն իցէք ... ամ-
բեցիս դու և ամ տուն քո, | նոյն:

347: Եւ կամ երրորդ դէմն, զօ՛՛ | Վաղիւ դու
և որդիքդ ընդ քեզ անկանիցիք. ( Ա Թագ· ԻԸ· )..
դու և մեծամեծք քո, հարճք և կանայք քո ըմպէիք
նոքօք գինի, ( դան· Ե ) | նոյն:

348: Զորովն ենթակայից՝ յօրինողաց ցայս վայր
մատուցելոց՝ ցուցաւ յայտնապ, թէ պարտի լինել
միշտ ուղղականն, վա զի ենթական է բառ՝ որ ցու-
ցանէ զիրն գործող կամ կրող, իսկ արդ՝ զիր այդպիսի
չէ հնար այլով ինչ հոլովեալ բառիւ բացատրել,
բայց միայն ուղղականաւ, իբր զի ո՛չ ևիցէ բառ՝ հոլովով
ինչ փոփոխեալ, ոչ զնոյն գործողն ուղղակի այլ զիմն
ինչ գործողին կամ զեզր ինչ գործողութեն ցուցանէ,
որպ տեսցի առորև, իսկ ուղղական բառն՝ ի մէջ բերէ
զիրն՝ անփոփոխական նորուն անուամբ, վա յոյ համաձայն ուղղ
նմ ազգաց և լեզուաց վճիռ կարգեալ է ուղղական հո-
լովով բացատրել զամենայն դիմաւոր բային:

349: Ընդդէմ ընդհանուր օրինացս՝ քերականք ոմանք հնարեցին տալ, թէ և բառն սեռական, նա՝ և տրական հոլովին՝ ունի իրաւունս լինել տէր անդէմ բայից, այն է՝ դրադիմայ և դերբայից, որ է պատճառ 'նախապաշար մտաց և մոլորանք դատողութի հակառակ ընկղբանց քերթողական կազմուե, որ թողեալ 'ի բըննել քերթուածս սեփհական կայի, յառաջ բերեն առ ըղձորական կանոնս հոլովոյ ենթակայից 'ի շնորհս մանկանց:

## Կանոն: Ա:

350: 'Ի նախադասութեան՝ եթէ մի միայն է դիմաւոր բայն, զենթակայ նորին դի՛ր միշտ յուղղական հոլովին: Օրինակս կանոնիս պտղիս բազումս յայսմ Ճառի, յորս յաւե՛լ և զայլս:

"Աբրահամ ծնաւ զԻսահակ, Իսահակ ծնաւ զՅակոբ . . . օտարք յարեան 'ի վ՛ր իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ . . . այր փորձի 'ի բերանոյ գովեալ լիցի . . . տէր Աստուած ամենայն խնայեն տայ քեզ յ..., | Դանիէ.

## Կանոն. Բ:

351: 'Ի նախադասութեան եթէ իցեն երկու կամ աւելի դիմաւոր բայք, քաղցրութի լեզուիս պահանջէ, զի զմին 'ի բայից դիցես դիմաւոր, եւ զայլսն դրադէմ ուղղական կամ դերբայ գործիական, և յայնժամ զենթակայդ կարես դնել ուղղական կամ սեռական, ըստ և քաղցր թուեսցի առ տեղեաւն:

Օրինակ իմն փոխանակ ասելոյ, | Լսէր զեղանակ ծննդեան քո և սոսկանայր հինայր զաքարիաս՝ և համրանայր պատժէր պապանձեալ լեզուաւ, | քաղցր լինի՝ թէ ասես, | Լուեալ զեղանակ ծննդեան քո, սոսկացեալ հինայր զաքարիաս, և համրացեալ պատժէր պապանձեալ լեզուաւ |: Օրինակք այսր կանոնի անթիւ են առ Նախնիս, յորոց զսակաւս գրոյս ընկալ:

* Եւ ելեալ յս՟ ’ի տանէն՝ նստէր առ ծովեզերբն . . . յայնժամ թողեալ յսի՟ զժողովուրդսն՝ եկն ’ի տուն . . . մատուցեալ փարիսեցիքն՝ փորձելով խնդրէին ’ի նմանէ . . . եւ գնաց՝ ընդ միտս զարմացեալ՝ թէ զինչ եղև . . . պատեաց զվէրս նր՟ արկեալ ’ի վր՟ ձէթ և գինի . . . իջանելով քո ’ի դժոխս, յաղթեցեր մահու հզօր զօրութ՟, կենդանագործելով զըմբռնեալսն առ ’ի նմանէ . . . տարաժամ սգով թախծեալ հայր՝ արար պատկեր . . . խորագէտ տեսեալ զչարագործն՝ խրատէ զանձն . . . այսօր ժողովեալ սրբոց առաքելոցն պայծառացեալ իմաստութ՟, և համաձայնեալ անմարմնոցն՝ օրհնէին զամենօրհնեալ սրբուհին . . . զհին մարդն, նորոգելով՝ փրկիչն ’ի մկրտութ՟ կայ այսօր, | և այլն:

352: Ծանօթ. Ա: Գիտեա՛՝ զի յայսպիսի կազմուածս՝ դերադէմքդ համարին ուղղական խնդիր դիմաւոր բային՝ և ունին զիմաստ գործիական դերբայի, որ՟ տեսանի յայսմ օրինակդ, զորս մարթ է փոխել ’ի գործիական և ասել | Ելանելով յս՟ ’ի տանէն. թողլով յս՟ զժողովուրդսն, թախծելով հայրն, ժողովելով սրբոց առաքելոյն, | և այլն: Եւ վ՟ այսր պատճառի բազում ուրեք ’ի միում նախադասութ՟ եդեալ լինին երկոքին եւս, այս է՝ ուղղական դերադէմն և գործիական

դերբայն, որպէս յայնմ, ի մատուցեալ փոխանցիքն՝ փորձելով խնդրէին 'ի նմանէ, ի զոր մարթ էր զգենուլ, մատչելով փարիսեցիքն և փորձելով խնդրէին, ևայլն։

· Զոր՝ իբրև եկն, [illegible], հանեին 'ի վերնատունն ... զորոյ՝ իբրև անցանիցէ, ոչ գոյ զհետան գտանել ... որով՝ որք վարեցան, առ ամ̄ առաքելն զբարեկամութիւն ... յորոց՝ որք զանձինս տաճարս ա̄յ արարին, վայելեցին 'ի շնորհս նր̄ | ա. տղն:

697 : Չորրորդ՝ երբ հարկ լինի զնախադասութի̄ յարաբերելոյն և յարաբերողին դնել ը̄ երեարս բաղհիւսական, և շաղկապաւ, յարաբերող դերանունն՝ ը̄ այլ և այլ իմաստից խօսիցն փոփոխէ զտեղի իւր յառաջ կամ յաւելէ շաղկապին բազմելով, որոյ առաջին կանոն այս է, զի յորժամ յարաբերելին զօրութ̄ կամ ներգործութ̄ կայ 'ի նախընթաց նախադասութե̄, յայնժամ յերկրորդում նախադասութեան՝ յարաբերողն յառաջ դնի, և բաղհիւսական զկնի գայ զօ",

· Որոշեալ զընդրեալսն 'ի ակլքանէ, վասն և առաքեալս անուանեաց, որոց և վկայեաց լսկաքէս

բարին . . ։ Կուռք են փառասիրուլ և մարդահաճ ել, դք և զՀաւատն իսկ Հալածեն , . . 'ի ձեռն ոմն մե-րոյ յ̄ի ք̄ի, որով և զՀաշտութին իսկ ընկալայք . . . զաւետարանն իմ, զոր աւետարանեցի ձեզ, զոր և ընկալարուք, յոր և Հաստատեալդ էք . . . որ են խռովեցուցիք. որոց Հարքն, յորոց և ք̄ս ը̄ մարմ-նոյն. | և այլն։

698 ։ Իսկ յորժամ՝ յարաբերեալն ոչ յիշատակի բնաւ 'ի յառաջընթաց նախադասութն, այլ զօրութէ իմանի, կամ՝ զինի յարաբերողին դնի, յայնժամ՝ բաղ-Հիւսականն զառաջին տեղին կալ., և յարաբերողն՝ զերկրորդն. զօ",

* Յերկուանայք յերևելի օրինակացս, և զորս ա-ռաջի աչաց ունիք. փոքունս վարկանիք . . . որք զոտերն սպանին՝ Հանգստեամբ վայելեն, և որք ոմն Հաւատոյին՝ յայսպիսի վտանգս չարչարանաց անկեալ դնին . . . երանի՛ որոց թողան անօրէնութիք. և որոց ծածկեցան մեղք իւրեանց . . . որք ը̄ մարմնոյն են՝ զմարմնոյն խորհին, և որք ը̄ Հոգւոյն՝ զՀոգւոյն։ որ ունիցին կանայս, ոպ̄ թէ չունիցին, և որ լայցենն ոպ̄ թէ ոչ լայցեն, և որ խնդանն ոպ̄ թէ ոչ խնդայ-ցեն, և որ գնենն՝ ոպ̄ թէ չունիցին, և որ վարեն զաշ-խարհս՝ ոպ̄ թէ չվայելիցեն, | և այլն։

699 ։ Թէև բառիս միշտ պարտի լինել Հաւասար և նոյնաքանակ, զի որով Հետև յարաբերողն պաշտէ փոխանակ յարաբերեալ բառին, սակայն այնչափ պարտի նշանակել, որչափ նոյնս նշանակէ, մ̄ի թէ յարա-

բերեալն իցէ եզական ձայնիւ կամ նշանակութ., զյա-
րաբերողն հարկ լինի դնել նոյնպ. եզական, զօ՛՛,

* Եկա՛յք տեսէ՛ք այր մի, որ ասաց ինձ զամ ..., որ արարից զկամս այնորիկ, որ առաքեացն զիս ... Հարցանէր յնմանէ վս ժամուն, յորում ապաքինեալ ... ամ որ զչար գործէ, ատեայ զլոյս ... ժողովուրդ՝ որ դը-նայր ընդ խաւար, ետես զլոյս մեծ ... ազգ՝ որ ո՛չ ուղղեաց զսիրտ իւր, | Ն:

700: Այս թէ յարաբերեալն իցէ բառ յոգնական, հաւաքական, հանրական, անեզական, կամ շաղկապեալ բազում եզական եւ յոգնական, յայնժամ յանպաճոյճ գրուածս զյարաբերողն նոյն դի՛ր յոգնակի, մանաւանդ՝ երբ յարաբերեալն չկայցէ ներգործութ. ՚ի բանի, զօ՛՛,

* Սպասաւորքն գիտէին, որք արկին զջուրն ... յաւուրս Նոյի, յորս տապանն կազմէր ... ամ՝ որոց ո՛չ իցեն թեւք եւ թեփ, պիղծ իցէ ձեզ այն ... եղիցիս վկայ նորա առ ամ մարդիկ, որոց տեսեր եւ լուար ... ո՛չ գարշիս յումեքէ, յորոց արարեր, | Ն:

701: Իսկ ՚ի ձեւացեալ Ճառագրութիւն, եւ ուր չի՛ք վտանգ շփոթ իմացուածոյ, զյարաբերողն այդպիսեաց միշտ դի՛ր եզական թուով, զօ՛՛,

* Տեսանէին զնշանսն, զոր առնէր ... ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուք զարմանայք ... զամ զոր ետ ինձ Հայր, ո՛չ կորուսից ՚ի նմանէ ... այն խաժամուժ ամբոխ, որ ո՛չ գիտէ զօրէնս ... ժողովուրդ բազում, որ եկեալ էր ՚ի տօնն, իբրեւ լուան, | Ն:

702։ Յարաբերեալն չունի ինչ խորհուրդ դիմաց, զի ը՟ պաշտօնի իւրոյ կարէ ունել դարձեալ դէմ ինչ կամ ինքնին, կամ դիմորոշ տառիւք․ այլ ո՛չ նոյնպէս են և յարաբերող դերանուանքս․ զի այսոքիկ միշտ պարտին համաձայնիլ դիմաւ և լինել նոյնադէմ ը՟ յարաբերելոյն, այլ քանզի իւրեանց յանգիւ ո՛չ զանազանեն զայս և զայն դէմ, վասն կարօտին որոշիլ դիմորոշ տառիւ, բայց ո՛չ առնուն զդիմորոշն յինքեանս, այլ յարեն ՚ի բայն՝ որ անմիջապէս զկնի իւրեանց գայ։ Զօրութիւն կանոնիս տե՛ս յայսոսիկ օրինակս ը՟ երից դիմաց ևս։

703։ Յարաբերեալ և յարաբերող ըստ առաջին դիմաց։

* Արդարեւ զձեզ ես, որ կացեալս եմ ՚ի տը . . . այլ ես որ այժմս կեամ մարմնով . . . ծառայ ես իմ, որ խօսիմս ընդ քեզ . . . ես, զոր տեսանէքս . . . ես զոր ինչ ես գործեմ, դու այժմ ո՛չ գիտես . . . աւելի ինչ նշանս առնիցէ քան ես զոր սա առնէ . . . ու՛ր այրս յօրուէն, ես զոր խորհեցայս՝ առնել, . . . ամենեքեան սոքա, որ խօսինս . . . պարտ է մեզ որ կարողքս եմք . . . ինձ՝ որ տրուպս եմ ամենայն սրբոց | ևայլն։

704։ Յարաբերեալ և յարաբերող ըստ երկրորդ դիմաց։

* Արդարև՛ դու որ ո՛չդ երկնչիր . . . դուք որք չարքդ էք . . . առ դայեկս սիրելի, զոր եսդ սի-

ըեմ ... զայդ նշմա առնել` զոր դուդ առնես ...
Լինելոց է այս, զոր դայդ մարգարէանայ ... եթէ
տեսանիցէք զայս զոր ընտրեալդ սէր ... վա՛յ ձեզ,
որ յագեալդ էք. որ ծիծաղիքդ ... 'ի մէջ դորա որ
կանդ առաջին ... առակ է այս, որ ասիդ ... զի-
տասցէ զայս զոր գրեցին ., յանէլ ցի ջէն սրոց Լէ-
սէքդ ... զի՞նչ կարիցեմ առնել չէր որ գիտեսդ ըղ
միտս մարդկան ... վա՛յ դոցա, որ մարգարէանանդ 'ի
սրտից իւրեանց ..., զի ոչ լեր, յորում դուդ կաս 'ի
դմա. | ԿՆ

705: [illegible]

* Մարթեց զկամս այնոցիկ, որ առաքեալն զխ
... ասէ ցայնոսիկ, որ անդն կային ... լսէ այնմիկ
որ զխմն առաքեաց ... յայնժամ է որ կարողն է ըղ-
ձողի և զմարմին կորուսանել ... ո՛վ է այն որ
եհարն զ.քեզ ... քաղցեալ լինքն և նոքա որ ընդ-
նմայն էին ... որ բժշկեալն զխ` նա սասաց ցնա ...
որ քեն յուսացեալ են` ստացին գերկիր ... մատ-
եան նոքա որ.ք պերկրպագեանն պաշտոնէին ...
դուք երկրպագանէք այնմ որում ո՛չն գիտէք, մեք
երկիրպագանեմք, որում գիտեմքն .., նա որ էրն
ընդ քեզ. որում դուն ձկայեցեր ... մոտակաւք խոկ
Լինէին նոքա որ զձեզն խոստացուցանեն ... եւ
կեայէ նա, որոյ լուլն է հանդերձեալքն ... եւ
պատուէր զօրայն, որ զԼերեալն էին ... զի՞նչ զոք
նոքայն ժողովեցին, որդուլն հերցեն ... եւ այն
եմ, որ յաւխտենիցն եմ ... այն որ լինին պա.ս միջ է

... զփորձ ինչ խնդրէք զՔի̃, որ լինեւս ը̅ ձեզ խօսի, որ հզօրագոյնն է ՚ի ձեզ ... Դա որ էին ՚ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում ակնատեսն լեալ եղաք, ը̅ որ հայեցաքն ..., որոց չէինն գիտակ՝ հայհոյեն. | Եւն:

706: Յայսչափ հաստատելով զկայեւ հաստատեալ ի Յու սաւիրի, նախ՝ թէ յայտնելոյ խօսս բաղում անգամ յարաբերելեայն մեայ մտօք իմանալի, որ հոլովակի է դերանուն ինչ. Եւ մի յայտնութե ո՛չ դնի նիւթօրծութ:

707: Երկրորդ՝ թէ զդերանունն պարտ է յարել յերկրորդ բառն՝ որ անմիջապէս գայ զհետ յարաբերողին, ո՛չ ինչ փայլապար խառն եղեալ ը̅ մէջ, լ՛է այս երկրորդ բառ իցէ անուն, բայ, ընդունելութ, դերանուն, մակբայ, ածական, խնդրեալ, եւն, միայն ՚ի բաց առեալ լինիցին շաղկապք, որք թէ՛ ուրեք դիցին զկնի յարաբերողին, յայնժամ դերանունն յարի յերկրորդ բառն, որպէս ՚ի սմին, | գիտակ եմ է այսպիսի ... արքայ, ը̅ որում եւ համարձակեալ դ խօսիմ ... այրն խաղաղութե իմոյ, յոր եւ եսն յուսայցայ. | Եւն:

708: Երրորդ՝ թէ դերանունն միշտ պարտի դնիլ համաձայն դիմայ յարաբերելոյն, եւ թէ ուրեք ՚ի գործ ածցի նախնեաց հակառակն երեւեսցի. անդամօր կամ զայլ յարաբերեալ ուսանելի է, կամ վրիպակ ձեռագրաց եւ տպագրաց համարելի:

709: Չորրորդ՝ թէ ՚ի նախադասութե անդ զմի դերանունն միայն արժան դնել, եւ ո՛չ աւելի, թէ՛ եւ որոշելի բառն այն կամ համառօտակ նորին կրկնեսցի

անդ, զօ՛՛ ասել է, | ո՛չ սա էր որ նստէրն և մուրանայր, | այլ խորթ լինէր ասել, որ նստէրն և մուրանայրն,

710: Հինգերորդ՝ թէ ո՛չ յետ նախադասութեսն յարաբերողին հարկ լինի յաւելուլ դիմորոշ տառ. զի բազում ուրեք առանց դիմորոշի մնայ յարաբերողն, և զօրութիւն միայն համաձայնի ը յարաբերելոյն որպէս երևի ՚ի վերոգրեալ օրինակն 686. Ե՛ն:

Այլ թէ ո՛րք և ո՛ւր արժան իցէ դնել կամ չդընել զդիմորոշն, որ ունիցի աչս տեսանելոյ, տեսցէ:

711: Վեցերորդ՝ թէ ՚ի գլուխս ստորաց՝ ո՛չ զետ դիմորոշ ընծայելի է յարաբերողին, այլ զայսպես միայն, որ եղեալ իցէ յերկրորդ բառն յետ յարաբերողին. որպէս ՚ի բանս, | ապաշաւորքն գնացին, որք արկին զջուրն. | տառ. ն. ո՛չ է դիմորոշ յարաբերողին, այլ ջրոյն, եղեալ փոխանակ ցուցականի այն ջրոյ: որպէս ՚ի նախընթացն գլուխն ասացաւ:

712: Հոլով երկոցունց բառից տարբերի յերերայ, զի յարաբերեալն դնի յայն հոլով, զոր հրամայէ պաշտօն նորա յիւրում նախադասութեան. իսկ յարաբերեալն եղեալ լինի յայն հոլով. զոր պահանջէ նոյնպէս պաշտօն իւր՝ յիւրում նախադասութեան. ապա ՚ի խօսակցութեան՝ եթէ զյարաբերողն առնես ենթակայ, դի՛ր զայն յուղղական հոլովն 685. երբ յառկացուցիչ առնես, դի՛ր ՚ի սեռական 687: եթէ խնդրեալ է, դի՛ր յայն հոլով. զոր խնդրողն հրամայէ. նոյնպէս և ՚ի լինելն բացայայտել, ըստ միոյ յերից պարագայից սահմանի հոլով նորին ըստ 688:

713, Յորաբերօղն կրկնակի մարթի ունել զՀոլովատառ, այն է՝ զիւրն և զօտարին, զիւր Հոլովատառ ունի, երբ լինի խնդրեալ ՚ի նախդրաւ Հոլովս, ուր ըստ պահանջելոյ խնդրողին դնի ՚ի պէսպէս Հոլովս սեփական Հոլովատառիւ, ՚ի Հայցականն, ՚ի բացառականն, և այլն։, 686 ։ իսկ զօտարի Հոլովատառ կարէ առնուլ նախ՝ եթէ լիցի յառաջացուցող բառի նախդրաւ Հոլովելոյ, զորոյ զնախդիրն պարտ է կրկնել ՚ի յարաբերօղն, ըստ որում ցուցաւ յառաջ, 687, որպէս զ՚սիրտն, յորոյ ՚ի շնչմանէն, յորոյ ՚ի ձեռս, և այլն։ Երկրորդ՝ եթէ լինիցի սեռական խնդիր նախադրութ՝ նախդրաւ Հոլովելոյ, որոյ Հոլովատառն յարի ՚ի յարաբերօղն, որպէս, յոյր վերայ դնիցեմ զձեռս, յոյր սակս զայս բարկութիւնն էր, յորոյ վերայ աշտարակն անկաւ, ընդ յոյր Հետ երևալ ես արքայդ Իսրայելի, և այլն։

714։ Փոխադրութիւն յարաբերօղին նման է ամենեւին առասպելեալ պերոթէոսի, ըստ որոյ թողեալ զբնական կերպարանս իւր՝ օտարի դիմակօք պատրուակեալ բիւր օրինակ փոխակերպի, յորոց զմանն ինչ ցուցի ՚ի նախընթացսդ, ըստ փոխադրութ՝ տեղւոյ և թուոյ, իսկ որ զառեցալն արդեամբ Համբակաց, փոխեցաւ յերկրորդ Հատորն գործոյս։

715։ Բայց կարևոր Համարի ծանուցանել յայսմ վայրի զայն եղանակ փոխադրութ՝, որով նախնիք մեր վարեալ են ՚ի վայելչապաճ ոճս, փոխանակ մասնական բառիցս, ո՛րձ, ի՛րձ, ի՛նչ. Տ՛րձ ի՛նչ և այլն։ վարեալք զյարաբերականս կրկնուէ, ոչ տեսանի յայտնիկ բանիս նոցին։

Վողովեցին որք շատ, և որք սակաւ ( ոմանք շատ և

տեսանք սակաւ . . . երկայնէր Յակոբոս, վերջը ոչ ըղ-բարձամբք լերանց, ոչ գծորովք և զխորովք. մանաւանդ ինչ զբարձամբք . . զօրք պարսպապատ ’ի վեր անդր կայեն, ոչ ’ի ներքս. որ արտաքս . . . ոչ ’ի մահ ’ի մահ. և ոչ ’ի սուր՝ ’ի սուր . . . զայլոն զոր ’ի տախտակս, և զոր յայլ ինչ կայ ’ի նմանէ անտի . . . ընդ-բերբոպատիկ մտադրութեան անկեալ, որ խորհրդոյն, որ բանիցն, ոչ մտածուեցին . . . համառօտ մեղան-չեմք, որ խորհրդով, և որ բանիւ . . . զոր յերկինս, զոր յերկիր. և զոր ’ի ծովէ եւ մեզ. ինչ ինչ յերկ-նէ. Եւն . . . ամ զգայարանք իմ անօրէնեցան, ոչ ըստ հոգւոյ և ոչ ըստ մարմնոյ | Եւն:

716: Ոմն դիմանշումն և ընթակցութիւն է բառից ոչ, եւ, ինչ է. որս վարի, երբ ընդդրեալ, երբ ենթակայ Եւն: Է որում երեւի յօրինակդ:

Որ ուտիցէ ոչ ’ի սմանէ, մի՛ մեռանիցի. որ ոք ու-տիցէ . . . զոր ոչ ես առաքեցից . . . որ կամիցի ոչ դատել և առնուլ զշապիկս քո . . . որ ոչ ինչ առնիցէ ձեզ առաջիկք . . . յոր ինչ ոք համարձակիցի . . . ա-բով եւ-եւս յաղթիցի ոք . . . զոր ինչ գործէր նա . . որ ինչ անդ գիտեալ էին քաղաքացիքն . . զոր ինչ մի-անգամ նոքա անմարթնաբար արուեստակէին ’ի չա-րեաց . . . յոր ինչ հայի ոք ’ի նոյն փոխի մտօք . . որ ոչ սատ սիրէ երկայնել զբանս վարդապետութն:

# ԳԼՈՒԽ ԺԲ։

Դարձուածոյ և ձեռնհասու բանս զեղուրդ հանգէն ընդ բառս։

717: Ի մի յայս գլուխ բովանդակեմ սակաւ ծանօթութիւնս երկոցունց բանից, յորոց առաջինն

Դարձուածք թէ զի՞նչ պաշտօն ունիցին, առացաւ համառօտ յառաջին մասին, ա՛յն էր, կապել զբանս և զնախադասութիւնս առ 'ի կազմել դպարբերութիւն, որ-մէ բազում ինչ 'ի ձարտասանութեան։ Իսկ որ ինչ այժմս օգտակար գտանի նորավարժ մանկանց, զլխակարգեսցուք յառաջիկայդ օրինակ զայս։

718: Բաղձնասականս, էս, բազմօրինակ 'ի գործ ածի, զի կապակցէ զբազում ենթակայս ը. միմեանս, զո՛, ելեն 'ի վերնատունն պետրոս և յակոբոս և յովհաննէս և անդրէաս, փիլիպպոս և թովմաս ] ևն։

Զ բազում ածականս ը. միմեանս, զո՛, վերափոխելով յանպատմելի և յանհասանելի և յանանց լոյսն,

Զ բազում նոյնահոլով խնդրեալս միոյ խնդրողի, զո՛, եղիջիք ինձ վկայք յեմ և յամ հրէաստանի և 'ի սամարիայ և մինչև 'ի ծագս երկրի, ] ևն։

Զ ենթակայն կապէ երբեմն ը. բայի նորին, զորոյ դհարկն, զտեղին, և զժամանակն ուսուցէ դասատուն. զո՛, ] գնաց և պառնկեցաւ ի նա . . . ած ի հաբէլ յանդրանկաց խաշանց իւրոց . . . աղաղակե-

ցին է՝ երկոքին ծերքն կից նմին, | Եւն,

719: Զբաղում ըղձական բայս յօդէ ը̄ իրեարս, զօ″, | քաղցեաք եւ ծարաւեցաք եւ մերկ գնացաք եւ կուփահարեցաք եւ անհանգիստ եղեաք եւ աշխատեցաք ձեռօք մերովք, | Եւն:

Գեղեցիկ ոճով դասնէ ը̄ մէջ ըղձական բային եւ դերբային կամ ըղադրմի Նորուն, զօ″, ՚ի յընթանալս խմում եւ կասիմ, յարդարանալս իմ եւ մեղանչեմ, ՚ի յանթուս Տերոյ բարձեալ եւ խնայեղ եմ կյօրդիմ... ո՞վ ոք լսելով զայժմանի աղբոց բանքս եւ ո՛չ բեկանի սիրտն... ընդ Ճառաչելն գձշմարտութին եւ անծանօթացաք... որ սպառնացեալ եւ ձնոյ լինձ... առ երկրաւղի անկանելոյն պարհուրեալ եւ թմրեալ... արդարութ անսասցեալ եւ ո՛չ մեկնեսցայց, | Եւն:

Դնի ը̄ մէջ բային եւ խնդրոյ Նորուն, այլ թէ ո՞րք եւ ո՞ւր, ցուցյէ ուսուցիչն, զօ″, | որովք մեղանչէ ոք, նոքումբք եւ տանջի... կամ եղեւ եւ ինձ կարդաւ գըրել քեզ... մինչեւ անյայս լինելոյ մեզ եւ ՚ի կենայ. օրինակ բարեաց եւ դու լինիցիս... յորոց եւ թուղթըս առեալ առ եղբարս | Եւն:

720: Զբազում նախադասութիւ շաղկապէ ընդ իրեարս, զօ″, Ուսուցէ՛ք զիս, եւ ես լռեցից. եւ եթէ մոլորեալ ինչ իցեմ, առարէ՛ք զիս խելամուտ... յեռ զնա ը̄ մատունս քո, եւ գրեա՛ յընդարձակութի սրտի քո. կամեաց տէր փրկել զիս, եւ տէ՛ր յօգնել ինձ նայեա՛ց, | Եւն:

Երկիցս կամ երիցս կրկնեալ շնչուի ՚ի նմին պար-

բերութեն՝ ձայնի փոխադրութիւն փոխանակ թէականի Իհ, էհէ, վօ՛։ Ո՛հ ո՜վ մտանէ կորստեան եւ՛ վշտացեալ ուժգնապէս, եւ՛ մեղանչելն մոլեգնաբար . . . չարեաց արուեստագէտք՝ արժանի այնպիսի յաւաց՝ եւ՛ որք փա- փագեմն, եւ՛ որք պաշտեմն . . . խնդրէի յո՜յ՝ եւ փա- քու եւ մեծաւ լինել այպանէ . . . կրկնապատիկ քեզ պատիւքն լինիցին եւ ը վաստակոց եւ ը համբերութեն. առօրեայ են և անցաւորք՝ եւ ինքեանք, եւ յորս պար- ծին . . . յորմէ հեռի ամենեւին գտանիմք եւ մեք եւ նոքա։

Ձայնական եւ, նշանակութ բառիցս, յոյժ, ատատէլ, ատէլի, բազում, լեռ, յորս 'ի դրական և 'ի բաղդատա- կան ածականս առ ածուած նշանակութ նոյնս. վօ՛, | մեծ եւ էր. լաւ եւ գրեծ. եւ հնարաւոր. եւ չար. եւ մեծագոյն լոյս. վեհագոյն եւ, համարէին չար եւ, քան զոր տեսանէին. | Լեռ։

721։ Գոյութն շաղկապաց ամենեւին կարեւոր է 'ի բանի, այնպէս՝ զի ուր պէտք են, չէ օրէն 'ի բաց թողուլ զայնս, մանաւանդ զոյ յարմարութիւն առ նախնիս, զի ուրանօր երկու պաշտօնականք շաղկապք կամ յերկուս նախադասութիս միոյ պարբերութ, մարթ է զմին թո- ղուլ մտօք իմանալի, որպ ցուցանի 'ի սոյդական օրի- նակսդ. յորս 'ի փակագծի եդեալ նշանադիր շաղ- կապք՝ զանց արարեալ են 'ի բուն բանս հեղինակաց։

* Որովհետեւ 'ի սակաւուց հաւատարիմ ես, մինչ 'ի վր բազմաց կացուցի զքեզ . . . և զի էք դուք որ- դիք, յայն ասէ առաքեաց ած զհոգի որդւոյ իւրոյ . . . եթէ որդի ոչ և ժառանգ աստուծոյ . . . իսկ եթէ սկիզբն մբ է, ուրեմն և զանգուածն. և եթէ

արմատն, ապա և ոտքն . . . թէ՛ և մեռանել հասա-նիցէ ը քեզ. ( «ռէ՛այն» ) զքեզ ոչ ուրացայց. | Խ. այնն։

722 ։ Տեղակալուն շաղկապաց զհասարակաց խօսելով՝ այստ սահմանեալ է, կի զոգցես ամենեքեան զառաջին տեղին կամին յիւրեանց նախադասուն, յառաջ քան զՃմ բառս բազմելով, սակայն ՚ի բաց առեալ լինին,

Նաև՝ թէպէտկանքս, Բէ , էԲէ , զորս հնարէ զկնի երկուց կամ երից բառից դնել, բայց միշտ յառաջ ՚ք զգլխաւոր բայ նոյնն, որք ՚ի սոսին և ի նմանս։

Մինչոււն Բէ առուլն կայցէ, մի՛ յօժարեսցին սիրտք ձեր . . . ընդ խս էԲէ ոք մտանիցէ, կեցցէ . . . իմ էԲէ չէր եկեալ, մեզ ինչ ոչ զայր նոցա . . . իսկ մեք Բէ ո՞րքան անխմաստ թագաւորաց պիՃակեցաք, ևն։

723։ Նորկրորդ՝ շաղկապքս, Բէպէտ, անգամ, ուրեմն, ապա, ապաքէն, գոնէ, խոկ, զի, ևն, կարեն պեսեզիլ ըզ-կնի քանի մի բառից նախադասուեն, զոր լաւ ևս ու-սուցանեն օրինակք նախնեաց։

Օհ վայն Բէպէտ ցանկուն շահից հնարեցաւ . . . ոսկի Բէպէտ անբան է ձայնիւ . . . չեմք ինչ մեղու-ցեալ և ոչ ՚ի միտս մեր անգամ . . . դու գոնէ մի ու-մեք չարի չար հատուցաներ . . . ահա և այդ յինէն կողմանէ դաւ է, սպաներ ուրեմն . . . թէ ընկեցայ ու-րեմն յերեսաց աչաց քոց . . . լինքեանք ինքեանց խոկ ծանրագոյն էլին քան զխաւար . . . այս ցուցանէ ապա, թէ զմմսեսն ՚ի զուր սահյծեր . . . ահա յայտ է ա-պա, թէ ոչ խմորուն հայն ապականուն է ՚ի քս . . . նոքա՝ զի զեղծանել ի պատկն առնուցուն . . . եւ ահա զի սէր ոչ նախանձի, | ևն։

724: Զ՝բանիւն շաղկապաց արժան է սահմանել ըստ որպիսութեան պարբերութեան, զի ուր հարկ լինի կցոյս նախադասութեան ընդ նախընթացին և ընդ յետադասին կապակցել, մա՛րթ է դնել զերկուս և պահել շաղկապս, կամ զնո՛յն կրկնել, զօ՛՛,

* Վասն զի ո՛չ էին յա՛ լուծքնին մկրտել ... զի էր- թեալ էին անուանեալ տեղք ... արժանի՛ է չարչարա- նացն այժմուս, ընդդէմ հանդերձելոցն. փառացն, թէ այժմուս, թէ ... մեծասցի.քն 'ի մարմնի իմում եթէ կենօք և եթէ մահու ... անհամեմատ պայծ մե- ծութեն ընդդէմ բազմութեն ... այլ՝ էին 'ի դատարկա- բանութեն տրտմի ... զի հատուցումն ունին պահեն կորեն ... ո՛չ և ոչ պանծն համարեցայ արժանի առ. քեզ գալոյ ... իսկ այլ էին յայտնութեն կատարելքն վրի պեն ... իսկ այլ՝ ... յայտնապէս 'ի շնորհաց վրի- պեցայք. | Են:

725: Զ՝միջարկութեց չի՛ք ծանուցանել բազում ինչ, զի ո՛չ մեծ ինչ է արուեստ կիրառութե նոցին, որ 'ի հինգ ազգս գրեթէ բովանդի, ա՛յն է, զի նախ՝ մի- ջարկութիւքս, ա՛ ա՛, ա՛յ, ո՛, ո՛հ. ո՛հ ո՛հ, ո՛վ, վա՛հ, յանկա՛րծ, Են, վարին միայնակ՝ առանց ինչ կապակցելոյ ընդ այլում բառի, կամ առանց խնդրոյ, զօ՛՛,

* Եւ ասէ զեղջն, ա՛ ա՛, տէ՛ր տէ՛ր, զի տեսի զհրեշտակն տեառն դէմ յանդիման ... այ՛, չի՛ք ինչ հնար, թէ՝ կամիք և թէ ո՛չ կամիք, բայց թէ մըտա նեմ ..., վա՛հ, որ քակէիր զտաճարն ... ո՛՝ ո՞րպիսի զեղջ կալցի զմեզ ... ո՛հ՝ պաշարեաց տէր զերկիր թագաւորս ... ո՛՜ քանի՞ մեծ է կուրութիւն խորայէ- լի ... յանկա՛րծ, երթայր տէրդ իմ առաջի մարգա-

ընկեն ոյ . . . ո՜հ ո՜հ, արդարն մոլորեցաւ, | Եսայ:

726: Երկրորդ՝ միջարկութիւնք, այ է՛ չէ ո՜հ ո՜հ ո՜վ ո՜հ ո՜ և այլն: Իբր կոչական կամ զարմացական յորին յուզական կամ ՚ի տրտական բառս, զօ՛,

* Ո՜յ զառանցեալ ծեր . . . ո՜վ մոլորեալ դու . . , ո՜վ անքաղչելիք և տեսիլ աչաւոր . . , է՞ հողմն կենսաբեր . . . զի՞նչ շահ ՚ի խօսելոյդ՝ չէ՞ մարգարէ: . . այ հնացեալ աւուրբք չարութ . . . ո՜հ ո՜հ օր· զի մերձ է օր տն . . . ո՜վ ամենաբարի բնութն . . . ո՜ մեծի զօրութն . . . ո՜հ հայր իմ ընդէ՞ր ծնար զիս . . . ո՜վ թշուառութն, | և այլն:

727: Երրորդ՝ միջարկութիւնք, էհա՜, աւա՜ղ, վա՜յ վա՜շ վա՜շ ի՜նչ էհէ՜, և այլն, լինին ենթակայ կամ տէր դիմաւոր բայից, որք յայտնի կամ լսելեաց կալով ՚ի բանի, պահանջեն զխնդրեալ ըստ բնութ իւրեանց ՚ի պէսպէս հոլովս, զօ՛,

* Վա՜յ է նոցա, զի ըստ ճանապարհին կայենի գնացին . . . երանի է մարդոյ . . . վա՜յ է ախտացելումն յախտէ . . . վա՜յ է գլխև, կորապտեալ զզանձրս իմ . . . վա՜շ վա՜շ անձանց մերոց, եղի՞ ընկլուզաք զնա . . . վա՜շ ինձ, զի ջեռայ և տեսի զկրակ . . . երանի էր, թէ երազ միայն էր , . . մեզ վա՜յ (է) թշուառականացս . . . եղուկ (այնմ) որ չարչարեսցն զնդ . . . աւա՜ղ ( էհա ); ՚ի վերայ չարչարելոյդ և հեծելոյդ առ հասարակ . . . ո՞ւմ է վա՜յ, ո՞ւմ խռովութիւնք | և այլն:

728: Չորրորդ՝ միջարկութիւնք բազում անգամ ըլ-նելն խնդիր դիմաւոր բայից՝ զօրութ կամ ներգործութ

եղելոյ, յուղղական կամ յանորոշ հայցական հոլովն, զորօրինակ,

* Ուա՛ղ հարըստայ՛ց թշուառացելոյս ... երանի՝ տան նմա և երկրին ... աւա՛ղ ամէն ողբումս և արտասուելի մեր թշուառութես ... երանի՛ տան կրօնաւորի. դու կոչեցեր զժամանակն զայն, և եղե ինձ վա՛յ վա՛յ... քա՛բէ ամէն կարօտութե մտայն ... բիւր երանի են որ տան զպտուղն լիապէս ... վա՛յ և եղո՛ւկ զայնոսիկ մշականի ... իբրև վող հարկանի, նա վա՛շ վա՛շ հար-ղայ ... եթէ ասացի ՚ի սրտի իմում վա՛շ ... քան-դ_ի յայտնապէս ՚ի շնորհաց վրիպեցաք, օ՛ն առէալ մեր՝ յերկրորդն դիմեսցուք ... որ ասէին ինձ վա՛շ վա՛շ. | ևն:

729: Հինգերորդ՝ բառքս, ա՛ղէ, ա՛ծ, բե՛ր, ե՛կ, թո՛ղ, հա՛պա, օ՛ն, ևն: վարին ը հրամայական բայից:

* Ա՛ղէ, է՛կ դու, ընկա՛լ ՚ի լսելիս քո զաստացեալն ՚ի մարգարէէն ... բե՛ր աստանօր բացցուք զծածկեալն գիրս ... օ՛ն, արի՛ք գնասցուք աստի ... հա՞պա. ա՛մ մարդ զհետ իմ՛ եկեսցէ ... բայց է՛կ բե՛ր ա՛ղէ՝ ճշմարտապէս զսա ասել գործօնեայ ... հա՛ քարշեցէք հա՛ քարշեցէք ... բայց ա՛ղէ, հա՛րց զուղղն առաջին. | և այլն:

# Գ Լ Ո Ւ Խ. ԺԳ:

## Յաղագս ներքին ուղղութեան խօսակցութեան:

730: Զիւսուած բառից 'ի կազմել զամբողջ խօսակցութիւն պահանջէ ունել զերկուս ուղղութիւնս, յորոց առաջինն անուանի, արտաքին ուղղութիւն, և եղեալ կայ յայն, զի բառք առնչային ընդ իրեարս՝ համաձայն 307 արտաքին գաղափարի իւրեանց, որ է խօսակցութիւն նախնեաց, յորմէ հերիք խօսեցաք:

Իսկ երկրորդն ասի ներքին ուղղութիւն, և կայանայ այնմ, զի բառք մեր իցեն համաձայն նախ՝ ներքին գաղափարի իւրեանց, որ է ըմբռնումն և դատողութիւն մտաց մերոց զիրաց և զպարագայից նոցին, և երկրորդ՝ զի իցեն համապատշաճ նոյն իսկ իրաց, որոց փոխանակ վարին. վասն զի են ո՛չ սակաւք 'ի մարդկանէ, որք կամ ո՛չ կարեն ուղիղ խորհրդածել և դատել զիրս, կամ ո՛չ բաւեն զխորհեալս քաջայարմար բառիւք արտայայտել, որով և անուշադիր մօք վիժեն զբանս, որք ո՛չ իրացն ասացելոց, և ո՛չ ընդ այլոց բանից նախադասութեան միաձայնեն, վա՛յ առ պատսպարելոյ ըղ-հաւբակս յայսպիսի ամօթալից տարաձայնութենէ խօսից, փոյթ յանձին բերել նշանակել յայսմ վայրի զգլխաւոր եղանակս պատշաճողութեան բանից ընդ իրաց, որոց

731: Առաջինն է յարմարութիւն գոյական անուանն

ը իրայն՝ զորմէ խօսիմք, մն զի ոմ արտաբերողացն և ոմ արուեստագործեալ իրք ունին զսեփհական անուանս ո՛չ միայն ը սեռին և ը տեսակին, այլ և բազում անգամ ը անհատին և ը տարբերութեն, զորս հարկ է քերթողին քաջ ճանաչել, և զիւրաքանչիւր իր՝ իւրով սեփհական բառիւ անուանակոչել, առանց շփոթելոյ զբառս կամ զիրս, օրինակ իմն, բառքս, | նկանակ, բաղարջ, բլիթ, պան, գրտակ, լաւաշ, հաց, | ո՛չ եթէ նշանակեն ընդհանրապէս զո՛րևիցէ հաց, այլ զպէսպէս տարբերեալ տեսակս հացի, Թէպէտ մեզ տարակուսելոյս այժմ 'ի հայրենեաց, և զրկելոյս 'ի բազմապատիկ մատենից նախնեաց՝ Թողուն մնալ լռելի զանազանութի նոցին։ Նոյնպէս բառքս, | բառանջիւն, բոմբիւն, բզզումն, ռանչիւն, խոխոջումն, կաղկանձիւն, հաչումն, վրնջումն, մնչումն, ևն։ ո՛չ ընդհանրապէս զորևիցէ ձայն, այլ զտարբեր տեսակս ձայնից այլ և այլ իրաց և կենդանեաց յուշանեն, ապա կարի պէտք են քերականի ճանաչել զորոշեալ անուն իւրաքանչիւր իրաց, և զայն վարել 'ի խօսս իւր, զի մի՛ երևեսցի խառնախօս ճառատօղ, և ծաղր լիցի յաչս գիտնոց։

732։ Երկրորդն է յարմարումն բառից ընդ գործածութեն. ա՛յն է՝ զի որ և իցէ գործողութեան իրաց բացատրեսցի ճիշդ և համապատասխան բառիւ, որպ ը սահմանելոյ նախնեաց ասի, մնչեն աղաւնիք, մռնչեն առիւծք. մլաւեն և մառլցեն կատուք. մայեն ոչխարք. զռան զռնչան էշք. խանչեն խոզք. խինջեն վրնջեն ձիք, բղղեն ճպուռք. ոռնան գայլք. բառաչեն եզք. հաչեն կաղկանձեն շունք. խոխոջեն կարկաջեն գետք. կափկափեն ատամունք. ևն։ Այնպէս և 'ի մարդկա-

յին կամ յարուեստական գործողութիւն ստանձանք և տաղ բերուլք են, թէ՛ յերն և թէ՛ 'ի բառս, օրինակ իմն ներգել, նոջել, խորդալ, թէ՛ ը̅ երին և թէ ը̅ ձայնին տարբերեն յոյժ յերայ, և վերջապէս մեծ յերգը զներգելն կոչել խորդալ, կամ ը̅ հանգստոյն աւել և այլն։

733 ։ Երրորդն է յարմարութի՛ ազատեցնէն ը̅ գոյակեալն, քանզի ծաղրական է առել, օրինակի աղագաւ, | ես տաղաչեալ փոքիս զառանուն գործեցի զհրաշալի մեզս . . . զու ամծայն տանձարիս ձանձրացուցիչ կարապետ . . . որն թորոս է առենկ անմահութն և պէտի եւալոյս . ՛ . սըրբոլծեալն մաղթանոք խնդրել յոյ . . . հանգուցած սուր բարկութիւն եհար զհոգի իմ | և այլն։

734 ։ Չորրորդն է համանայնութի իմաստից բայի ը̅ ընկալեալ իբրում, վա զի չէ՛ մարթ ուղղութ՛ ասել, | անկիրթ եզն ոչ զգենու զլուծ . . . կենաց փրկչեան մէջ տրամուն . . . զանազան օրօրեր փոփոխեալ բաղձանօքն. եթէ յաղգի մերում ելանելոցն ուսումնարանք . . . սաղմոսերգութիք զաւթի նուագօքն զոգիս իմ . . . զէատն նաւք 'ի վր ծովու . . . սրաթափիչ թևօք յարեալ հեշտն 'ի վր մեր որոմունք չարուն | և այլն։

725 ։ Հինգերորդն է յարմարութի իմաստից նորոգեալն ընդ բայէն, այն է չասել ընդ մանկանց, | յանձն և յոգնամն թաթաւել . . . անցեալ զկաթն քաղցրուն ուսանարանի 'ի լսելիս տղայոց . . . լեառն թագաւոր մեր անկաւ 'ի բանտ . . . հարաւէր զըն թայս նաւուն . . . 'ի մաքրուն ծփեալն կուսանքն, | և այլն։

736 ։ Բառ այսոյիկ և 'ի կարգել զմակբայս ը̅ բայից, և զ շաղկապս կամ զայլ տեսակս բառից՝ մեծ զգուշուն յանձին բերել ունի քերթողն, զի որպիսիք բառ-

ո՛չ միայն ըստ արտաքին քերականական կանոնաց, այլ և ըստ ներքին իմաստից քաջաճաշակ և համապատշաճ իցէ իրացն, որոց փոխանակ վարի:

## ԳԼՈՒԽ. ԺԳ:

### Յաղագս սկզբանց Քերականութեան:

737: Սկզբունք կամ Ե.ուղղ կոչին այն անուամբ ճշմարտութիւնք, որք դնին իբրու էական հիմունք, յորոց մի հաստատեալ խախտին կանոնք և օրէնք քերականութեան, և յորոց իբրու 'ի հարազատ աղբերաց բղխեն ամենայն եզրակացութիւնք այսր արուեստի, ապա հա՛րկ է քերթողին ճանաչել, ո՞յք և քանի՞ իցեն այնք, և զի՞նչ զօրութիւն 'ի նոսին, ո՞րպիսի հաստումն յարուեստս, և ո՞րք կապակցութիւն ընդ հետևանս, ևն:

Այս ամենայն թէպէտ բազում վկայիւք և օրինակօք ցուցաւ 'ի նախընթաց ճառս, սակայն կարևոր թուեցաւ զկարի համառօտն մերայլ խուռն յանդիման կացուցանել աստանօր, նշանակելով զանազանաբար, որ մեկնեալ գտանին, մի՝ զի համբակք զանձեսցեն զայս 'ի յիշողութեան, առ աւանդ հայցելոյ 'ի դիւր 'ի բերան առնուլ միշտ, և միւս՝ յընծայել առիթ իմաստագունից 'ի կատարելագործել զայնս առ յապայն յաղգիս, զոր 'ի մէջ զանուսկալս յաւելեալ, զաւելորդս յապառեալ, զկողմակարծս համառօտեալ, և զհաւաստին հաւանեալ, որպիսիք են՝ դէթ ըստ իս:

738: Կանոն Ա:

Յամ կատարելագործ խօսակցութիւն, քանզի են բոլոր ինչ բաղադրեալ ՚ի մասանց, հարկաւ և միշտ պահանջանելի են նիւթ և կերպ տե՛ս. 18. 19:

739: Կանոն Բ:

Յո՛րևիցէ խօսակցութեան հարկաւ պայմանն գտանել նախ՝ բազում բառք, այս առաւել քան զմի 287. և երկրորդ՝ կապակցութիւն բառից ընդ միմեանս:

740: Կանոն Գ:

Որևիցէ բառ ՚ի նախադասութեան եդեալ՝ միշտ պարտի լինել կապեալ ընդ այլում բառի՝ առնչութեամբ ինչ, զի ո՛չ ինչ բառ կազմէ զխօսակցութիւն առանց կապելոյ ընդ այլում:

741: Կանոն Դ:

Նոյն բառ պահելով զնոյն նշանակութիւն, ո՛չ կարէ վարիլ մերթ իբր գոյական, և մերթ իբր ածական:

742: Կանոն Ե:

Նոյն բառ՝ այլայլեալ նշանակութ՟ մարթի վարել երբեմն իբր գոյական, և երբեմն իբր ածական:

743: Կանոն Զ:

Ընդ մէջ գոյական և ածական բառի չի՛ք այլ տեսակ բառից միջակ նշանակութ՟:

744: Կանոն Է:

Ոչ ի՛նչ բառ գտանի ՚ի խօսակցութեան, որ չունիցի ինչ պաշտօն և առնչութի՟ ընդ այլում բառի, 303:

745: Կանոն Ը:

Որևիցէ խօսակցութիւն պարտի միշտ համաձայնիլ թէ արտաքին 307 և թէ ներքին 730 գաղափարի իւրում:

746: Կ֊ոն. Թ:

Միայն խօսակցուն ընդունաւոր հեղինակաց մերոց է արտաքին գաղափար և կանոն խօսից մերոց 307:

747: Կ֊ոն. Ժ.

Նաւոց գոյական բառի և գլխաւոր բային ո՛չ երբէք կարգի խօսակցուն կատարելագոյն 289:

748: Կ֊ոն. ԺԱ:

Որևիցէ խօսակցուն կամ նախադասուն՝ միայն դրադէմ կամ աներևոյթ բայիւ կազմեալ՝ միշտ է լթերխմատ:

749: Կ֊ոն. ԺԲ:

'Ի միում նախադասութեան՝ մի միայն գլխաւոր բայ կարէ գտանիլ և ո՛չ աւելի 448:

750: Կ֊ոն. ԺԳ:

'Ի միում նախադասութեան մի ենթակայ միայն կարէ գտանիլ և ո՛չ աւելի 448:

751: Կ֊ոն. ԺԴ:

Միոյն նախադասութեան կոխի դիմուէ՝ թէ՛ ենթակային, թէ՛ գլխաւոր բային 448:

752: Կ֊ոն. ԺԵ:

Բազմոյն նախադասութեան ծագէ 'ի բազմուէ կամ են-թակային, կամ գլխաւոր բային 448:

753: Կ֊ոն. ԺԶ:

Միայն գոյական անունն կարէ լինել ենթակայ 'բա-յից, և ո՛չ այլ բառք 355:

754: Կ֊ոն. ԺԷ:

Աներևոյթ բայք լինին ենթակայ միշտ երրորդ դէմ. բայից միայն 321:

755: Կ֊ոն. ԺԸ:

Ենթակայ և գլխաւոր բայ պարտին լինել նոյնաթիւ-

և նոյնադէմ միշտ ը̅ իմաստին, թէ և ոչ միշտ ը̅ ձայնին և ը̅ կազմուածն 326 — 347։

756։ Կ՟նոն. ԺԹ։

Ենթակայն դիմաւոր բայի՝ միշտ պարտի դնել յուղղական հոլովս 348։

757։ Կ՟նոն. Ի։

Ուր ոչ դիմաւոր բայ, անդանօր անորոշինելի հարկաւ դնել պիտոյ և զենթակայ յուղղական հոլովս։

758։ Կ՟նոն. ԻԱ։

Ընդ մէջ գոյական բառի և ածականի նորին՝ ոչ երբէք մտանէ շաղկապ, 367։

759։ Կ՟նոն. ԻԲ։

Ենթադրին գոյականն, և մակադրին ածականն պարտին լինել նոյնաթիւ, նոյնահոլով, և նոյնադէմ. միշտ ը̅ նշանակութեն, այլ ոչ միշտ ը̅ ձայնին 376, 415։

760։ Կ՟նոն. ԻԳ։

Նմանեալ բառն միշտ պարտի նոյնահոլով լինել ընդ նմանելի բառին, 6[illegible]0։

761։ Կ՟նոն. ԻԴ։

Տեղափոխութիւն ոչ կարէ փոփոխել զգոյութի և զպաշտօն բառից, զի թէ՛ յայսմ. և թէ՛ յայնմ տեղւոջ նոյնաւ իցէ բառն, միշտ միայ՚ի նմին պաշտաման 639։

762։ Կ՟նոն. ԻԵ։

Բացայայտեալ և բացայայտօղ բառք պարտին լինել նոյնաթիւ, նոյնադէմ, և նոյնահոլով՝ միշտ ը̅ իմաստիցն, թէ և ոչ միշտ ը̅ կազմուածն 640։

763։ Կ՟նոն. ԻԶ։

Բազում յարակացուցօղք միշտ բայ.ձայնուցանեն զյականոնին 648։

764: Առած. ԻԷ:

Յատկանալի և յատկացուցող չեն պարտաւոր լինել նոյնաթիւ և նոյնահոլով 649:

765: Առած. ԻԸ:

Յատկացուցող բառին միայն սեռական հոլովն պատշաճի, և ո՛չ այլ հոլովք 654:

766: Առած. ԻԹ:

Յարաբերեալ և յարաբերող պարտին լինել նոյնաթիւ, և նոյնադէմ միշտ ՚ի ներքին իմաստին, այլ ո՛չ միշտ ՚ի արտաքին կազմուածն 699—702:

767: Առած. Լ:

Յարաբերող դերանունն ՚ի որում՝ այնպիսի՝ ո՛չ առնու յինքն զդիմորոշ տառ 702:

768: Առած. ԼԱ:

Բառն անորոշ հայցական՝ ո՛չ երբէք առնու զդիմորոշ տառ:

769: Այսչափ ինչ հերիք համարեցի ՚ի ժամուս և ինձ և ուսանողաց, մանաւանդ զի անօգուտ արուեստիս ո՛չ տանի զառաւելագոյնն:

## ԳԼՈՒԽ ԺԸ:

Ընդդիմաձայնութեան նախադասութեանց, և յաւելուած հարկաւորաց:

770: Աւաղ է կուրութեան մտաց, և խաւարածըննունդ արդասիք նորին՝ դիւրահաւանութիւն, որ ամենուրեք անհնարին վնասուց է պատճառք, յաստուածայինս և ՚ի մարդկայինս, ՚ի տեսականս և ՚ի գործնականս,

յատոր և յանոր կեանս, ըստորում կրկեալ զմարդս յինծապարգև ձիրից բանականութեան՝ անասնոց անբանից հաւասար է, ստորև աչօք տուեալ միշտ սեռանել, ստորին ձայնի լսել, ըստ հողւոյ հաւատալ, 'ի ծնէ կայր ծնեալ՝ 'ի կուրութեան այրիլ, և կուրօրինակ մեռանելով՝ անկանիլ 'ի խորխորատ գեհենին յաւիտենից:

771: Յայտնի մոլորաշաւիղ ընթացից քեզ կամեցեալ ցուցանել իմ, յանձին կալայ 'ի վախճանի հաստատութեանս, առաջի առնել իմացական մտաց ն͞ց չափով լուսաւորելոյ, որոյ լծողն զյաւելուածն, որոց բարձումն՝ զփառսն. և որոց փոխեցումն՝ զկ͞ն է'ին, զի զորս ուսանն մինչև ցայս վայր, մի' բուռաքանակ աչօք հաւատասցեն լիբրու մկայից ծերոց յիւրայէլի, այլ ճանաչեսցեն զբանիցն, որոյ աշակերտեցան, զճշմարտութի, քննեսցեն զգիրս՝ զ͞ը պատուիրանին, զխտասցեն զմ͞ն վր͞դպետութիս, 'ի ճշմարտութե՞ լիցէ արդեօք, նթէ ես յանձնէ խօսիմ, որպ զի ճշմարտութին առառեսցէ զն͞ա, և արասցէ որդիս լուսոյ և տունջեան:

Բայց արժան է կանխաւ ազդ առնել քննողաց զճշմարտութի, որպէս նախ պաշտ մտաց 'ի գերանայ առերութե. նախանձու, աչառութե, ատելասիրութե, այլովքն հանդերձ, և ապա մաքրեն 'ի հանդէս զննութե, զբարի բանին յաժանս մտաց առնել. և զխտանս 'ի զրելոյ և 'ի գրոցաց ո'չ 'ի բաց ընկենուլ լոկ, այլ քննդէն պատուիրանաւ սիրոյ բարւոքել:

772: Դոյ խաւար նիւթք արժանաւոր զննութե և յաւելուածոյ՝ հետազայքդ դառեցան, յորս և յայլում ժամանակի ունիմք յաւելուլ ինչ ինչ պիտանի պէտութե քերականաց:

772: Զածական անուանս ուղիղ թուեցաւ բաժա-
նել ո՛չ յերիս, այլ յերկուս դաս, ՚ի դրական և ՚ի
բաղդատական. արտաքսել զգերադրականն: Փաստք՝
որ շարժեցին զմեզ ՚ի յանձառուլ կարծեացս, են

Նախ՝ զի այս բաժանումն համաձայն է բնութ ածա-
կանաց, որք ցուցանեն զորպիսութիւ իրաց կամ առանց
ամ՛ բաղդատութ (զոր առնէ դրականն). կամ՝ հանդերձ
բաղդատուք (զոր ցուցանէ բաղդատականն);

Բ: Եթէ զատուցանս բաղդատութե քննեմք, ո՛չ
՚յերկուս, այլ ՚ի բազում տեսակս հարկ լինէր բաժա-
նել զնոյն. զի յայն որ բաղդատի ընդ միում. որ բաղ-
դատի ընդ բազմաց. որ բաղդատի ընդ ամենայնի, որ բաղ
դատի ընդ առաւելագունի, ընդ հաւասարի, ընդ պակասա-
գունի քան զինքն. և այլն:

Գ: Զի բառն ամէն. չէ աննշան մասնիկ, այլ բառ
նշանական, որ առնու և պահանջէ մասնիկս, (այն) ա-
մենայն, ապա ո՛չ կազմէ զգերադրական ածական այլ
զբարդ անուն ընդ ձևոյն, ուր և եդաւ իսկ ՚ի մէնջ:

Դ: Զի նոյն բառ ամէն յաճախ միանայ ընդ գոյա-
կան անուանս, յարմարս բայից և յընդունելութիւ զօ",
ամենահայր, ամենատէր, ամենաբուեստ, ամենալոյս, ա-
մենահամ՛, ամենապատիւ, ամենաժողով, ամենօրհնեալ,
ամենակեցոյց, ամենահայեաց, ամենակարօղ. և այլն, որ
ընդդէմ է բաղդատականին, և ածանցական մասնը-
կանց:

Ե: Եթէ բառիս, ամէն, կազմի գերադրական
աստիճան, ապա և զբարդեալսն նոյնանշանակ բառիւ-
քըս, համայն, բոլոր. և այլն. զօ", համայնաջինջ, համայնա-
պատում, բոլորաբուղխ, բոլորափայլ, բոլորայար-

մալ, եւն. հարկ էր համարել դերադրականս, որ ո՛չ յիշեն հեղինակք:

774: Իսկ առ 'ի նշանակել 'ի լեզուի մերում զառաւելութի բաղդատելոյն քան զնմանն նորին, 'ի կիր առնումք կա՛մ զբարդ անուանս, զո", ամենաչար, դառնադառն, մեծամեծ, գերամաքուր, ծանրծանր, եւն. կա՛մ 'ի բաղդատականն յաւելումք զմակբայս, զածականս, զշաղկապս, եւն. զո", երիցս թշուառական, յոյժ իմաստուն, կարի դժուարին, անհնարին չար, սաստիկ հզօր, ամենեւին գեղեցիկ, եւ մեծագոյն, լուսաւորագոյն եւս, ստոյ սուտ, չար առաւել քան զչար եւն:

775: 'Ի բառս բարդեալս ('ի նախնեաց) եւ 'ի բարդելիս ('ի քաջահմուտ հայկաբանից) մասնին վեց ինչ. որ է 1. ադէ բառից: 2. յօդ բառից: 3. յանգ բառից 4. հոլով բառից: 5. նի- բառից: եւ 6. յեղանակ բառից: զորոց խօսեսցուք 'ի համառօտի:

776: Վասն այդպիսի բարդելի բառից գիտելի է զի անունն կարէ բարդել նախ ընդ անուան, եւ այս կամ ընդ ինքեան զո", արծարծ, բաղբաղայք, պէշպէշ, դէպադէպ, զանազան, ծործոր, մեծամեծ, շեղջաշեղջ, չարաչար, պէսպէս, ջոկջոկ, վաղվաղ, եւն:

Կա՛մ ընդ այլում անուան, զո", արդարասէր, բարենըշան, գահագլուխ, դիւագունդ, եղեռնագործ եւն:

Երկրորդ՝ անունն բարդի ընդ դերանուանց, որք միշտ յառաջադաս լինին, զո", այնինչ, այսորինակ, ինքնաբոյս, իմածին, իւրակերպ, մերազնեայ, միմեանցասէր, նոյնանշան, քոյնակրօն, | եւն:

Երրորդ՝ ընդ արմատս բայից, զո", աշխարհակեցոյցբազմածին, զաղտաղնեայ, դրամահատ, զենընկեց, ըն-

կերպասեաց, թշուառահասոյց, ծովահեղձոյց, վարձա-
հատոյց, անդրագերծ, քաղցրաձայն, և այլն։

Չորրորդ՝ Ը բաղադրեալ-բառերէ, գո՛, ամենօրհնեալ, ա-
ստուածընկալութիւն, գլխակարկելի, ընտրելակից, երրա-
դաբարբառ, մեռելաթաղ, կատարելաչափ, ներ-
դամիտ, անաստուածաշաւիղ, քնքթողալեր. | և այլն։

Հինգերորդ՝ Ը հնգաբաղադրեալց, գո՛, աղօթարար
տուարկայ, ենթակայ, ընդդատաջ, ընթադիր, չաքա-
պարէտ, ըմբռնեալ. | և այլն։

Վեցերորդ՝ Ը վեցբառից, գո՛, այժմածին, դեռակա-
տար, մշտաշարժ, յարաթաթառ, յաւետահրաշ, հա-
նապազաբուղխ, ուշէք, ուշէուք. | և այլն։

Եօթներորդ՝ զանոնս և ՚ի շարակարգէս, ԲՀ, բար-
դեալ կամ անձնեալ բառքս, թէողին, թէ լի,
թէ ակամ, և այլն, որք ՚ի գլխական մասանս ՚ի գործ-
ածին ուրեք։

777։ Բառք բարդին Ը միմեանս կամ ինքնին՝ ա-
ռանց միջարկութեան յօդաւորին տառին, գո՛։ աղատերամ.
բայերեն, դաշերէն. դառնապաման, եղբօրորդի, ձե-
ռընկեց, թղթատուութիւն, ժամերգուն, լուսոյք, ձար
տարփառն, և այլն։ կամ Ը միջ ներկայն դնելով տառս
ինչ, երբու յօդ շաղկապիչս մասանց, այլ են տառքս
ա. է. ի. գո՛, արուեստաշէն, կոկորդախօս, հնարագէտ,
յորդաձնաց, ողջահայլ. ընչած. ամենագործ. և այլն։

778։ Ան եւ բառք. որ կարեն բարդիլ թէ՛ յօդիւ
և թէ առանց յօդի. գո՛, ոտնալուայ, ոտնալուայ։ պարզ
միտ, պարզամիտ։ պարտիզպան, պարտիզապան, և այլն։

Ծանօթ։ Նայեալ տառքս ուղղեալ երբ շաղ-

կալ միաւորեն զերկու բառս, յայն ունի երբեմն զձա-լսմնակ այնց դնելն բաղհիւսական շաղկապս, որ. են. զօ՛, աղուհացք. այբուձի. տանուտէր. ցանկյէր. ուամ և պէտ. հարցուփորձ. կամ հարցփորձ. և այլն։

779։ Յանդուգն նախադաս բառին և սկսեալ երկդ-բառին քննելի է ՚ի բարդուլն, և նախ՝ բառն նախըն-թաց կամ բաղաձայնիւ եղեալ, կամ ձայնաւորաւ։

Բաղաձայնիւ եղելոյ պարզ բառք՝ բազմադիմի վերջնւք աւարտին, և սակաւ են, որ ունիցին զնմա-նակ յանգս, զորս գլխաւորս քննեցից։

Բառք, որպէս, մանկամբ եղեալք անփոփոխ բաղ-դին ը այլս, զօ՛. դիպուածապէտ. ընթերցուածատէր. յօղուածագու. հատուածակալութն. և այլն։

Յանգեալքն. որպ. ուռ. սամկնուն լոյղին՝ ՚ի բայ ձգեալ զվերջին վանկն, են. զօ՛. կորստաէր. կորստագետ. գողտագոծ. փախստակից. ծննդաբաղդ. ծննդակից՝ սերնդագործ. և այլն։

780։ Որք. ուծ. մանկամբ յանգին՝ բաղձօրինակ մասնն ՚ի բարդուլն. գլ. կամ ՚ի բայ թողեալ կայք մանեկ միանան ընդ բառս. զօ՛. արբումն. արբշիռ. ընթերցումն, ընթերցասէր . . . խօսումն. խօսակց. խօսա-կից . . . արդելումն. արգելանոց . . . ծնունդն. ծնն-ծոփորդ. թխումն. Խժոնացս . . ՝ լսումն. լսակ, և այլն։ Իսկ կամ անփոփոխ կամ սակաւ փոփոխումն միանան ը այլս, զօ՛. ուսումնասէր, երգմնագոյց. [ և այլն։

781։ Բառք ուՄն. մանկամբ եղեալք. կէր-կին եղանակաւ բարդեալ լինին։ նախ՝ թողլով ըն մասնիկն. միայն արմատն միանայ ը բառս. զօ՛,

Օրհնութ. օրհնաձայն. օրհներգու . . . պատմութ. պատմագիրք . . . ողորմութ., ողորմաշնորհ . . . խնդութ., խնդամիտ, խնդալից . . . խրթնութ., խրթնատեսակ . . . առաքինութ., առաքինասիրաց. | և այլն:

782: Երկրորդ՝ պահելով զմասնիկդ, ութիւն, և այն՝ կամ անփոփոխ ուղղական հոլովով, կամ սեռականաւն մտանելով 'ի բարդութի, զի զայսպիսին չեն միաբան նոյն իսկ մխիթարեան միաբանք, յորոց հայրն Գաբրիէլ կարծէ ( Քերակ. էր 214 ) ուղղականաւ գրելի, փրկութեանագործ. զօրութենականք . . . և ասէ կ չէ զգրելն, փրկութենագործ, բայց կրօնակից նր հայրն Յարութի, որ երկու ամօք յառաջ տպեալ է զբառագիրսն հայ, և գաղղ. տակաւին գրէ, բնութենակէ, զօրութենակից, փրկութենաբեր, Այս հարկ է գրենել զհնագոյն ձեռագիրս նախնեաց, և ըստ այսմ վարիլ:

783. Դրադէմք՝ որք միոշ, էութ. եզերին, 'ի բարդելն թողուն զտառն, ո., և եթէ աներևոյթ բայ միանայ ըբառս, զօ՛, հաւատչէալ կատարելահասակ . . . . աստուածէալ, առաքելախօս . . . ձեռնէալ, մանկաթող, և այլն.

784: Իսկ 'ի բառից ձայնաւոր տառիւ եզերեալց յանդէալքն, է, տառիւ՝ անփոփոխ բարդելն յօդիւ կամ անյօդ, զօ՛, բազէակալ, բազէկիր, մարգարէախօս, բոբէահամար, քուէարկու, յէսաէածին. | և այլն:

785: Բառք ու տառիւք վերջացեալք նոյնպէս անփոփոխ բարդեն անյօդ կամ յօդիւ, զօ՛, առուամէջ, արուարձան, արուագէտ, լեզուախօս, մեղուաբոյն. ուրուապաշտ որոյ նախատիպն երևի լինել ուրուբուաքարակ, ձուաձև. | և այլն:

786։ Իսկ բառք, որք 'ի, տառիւ եզերին, կրկնակի ժամեն 'ի բարդուլ. մի՝ պահելով զնոյն տառ, և՝ կա'մ յօդիւ միանալով ը բառս բաղաձայնիւ սկսեալս, զօ", շողիալից, ոսկիաձոյլ, սնոտիասէր, կղզիաբնակ, ալիաջան, արփիափայլ, միածին, գլխազարդ, հոգենիւթ, ըխահանճար, ձիավարժ; թիաքարշ, գոտիածու, ձիխատուր. | ևն։

Կա'մ առանց յօդի կապելով ը բառս ձայնաւորաւ սկսեալս, զօ", միանձն, յուղալիկ, ձիանդամ, միօրեայ միեղջերու, հոգիընկալ, հեռիոստ։ | ևն։

787։ Այլ միւս զձայնաւորդ 'ի 'ի բաց բառնալով կամ ը տառից ա, ե, է, փոխելով, զօ", զինարբու, ազանակեայ, այգեգործ, արծուէնշան, բազմէպան, գոտեմարտ, տարեգլուխ, պատասխանատու, խնամեխօս, տեղափոխ, հեռաբնակ | ևն։

788։ Երկրորդ բառն բարդութ՝ նոյնպէս կա'մ բաղաձայնիւ սկսանի, կա'մ ձայնաւորաւ։

Սկսեալքն ձայնաւորաւ ունին զանփոփոխ կանոնս առաջին՝ զի և առանց ինչ կրճատութ սկզբնաւոր վանկին՝ գնան միանալ ը յառաջադաս բառից, որպ տեսաւ ('ի 786)։ յորս յաւելցին և ոտակաւս. | բնմ. բաստ, գառնարբեց, ըթանկին, դաշերեց, ընակեռդ, կխնշ, խորխմատ, փոքրոգի, կենցաղօգուտ, միջօր, քաջուսումն, ևն, բայց 'ի բառէս ձգօրէօր, որ բարդի 'ի բառիս, բարի, արտ։

789։ Երկրորդ՝ զի ո՛չ երբէք առնուն յառաջքան զ[illegible]քեանս զյօդաւորիչ տառսն ա, ե, է, թէ՛ ձայնաւորաւ, և թէ՛ բաղաձայնիւ եզերեալ իցէ բառն նա

խընծաց, վոյ ողբական բարդուի է ածըն ոմանց |
աղդաօղուտ, միածնակէջ, ածապաղդ, պուղահեռատամն.
ևն, զի չունիմք այդմ օրինակ 'ի նախնեաց.

'Ի բաց առեալ լինին շաղկապքս ո–, է–, որք ու-
րեք երբէք յառաջեն քան պձայնաւորս, զօ". երկթ-
ևեկ, արուէգ, եղևէջք, ևն, զի այսպիսի բառք ո՛չ
համարին տիրապէս բարդեալք:

790: Իսկ բաղաձայնիւ սկսեալ երկրորդական բառք, չունին ինչ խոտորումն, զի կարեն միանալ յօդիւ կամ անյօդ ը̅ նախադաս բառս, որպէս յամ̃ օրինակսդ տեսաւ 'ի վերոյ:

791: Այսն հոլովոյ բարդելի բառից գիտեա՛, զի նախ՝ 'ի յառաջադաս բառից ոմանք ուղղական հոլովով միայն կային ը̅ յետադային, զօ", աստուածատու, բարձրագագաթ, գանձապետ, զգեստապահոյր, խաւարասէր, Ջոխաբան, հիմնարկու, ցայգապահութիւն, պետընկէց, սեւնաձև, բերանայոյծ, խաշնարած. | ևն:

792: Երկրորդ՝ մեծ մասն բառից բարդի միայն սեռականաւն կա՛մ ամբողջ, կամ 'ի բաց թողեալ զ յետին վանկն կամ զտառն, զօ", դէղ, փէշէ, դիզաբան իղձ, ըղձալեբոտ. սխրահար. կշռաձև. մանկավարժ. արբերահօս. անասնադարման. ժողովրդապետ. կայսերապատ. ձկնորս. նռնաձև. շանագլուխ. տանուտէրն. | ևայլն:

793: Երրորդ՝ են բառք որք միօրինակ բարդին թէ ուղղականաւն. թէ սեռականաւն, զօ", արևն, արեան, արիւնահեղ, արինակից . . . էշ, իշոյ, էշայծեամն, իշավար . . . ծաղիկ, ծաղկան, ծաղի-

կըճիւղ, ծաղկազարդ ... հայր, հօր, հայրասպան. հօ-
րաքոյր ... այր, առն, այրաթող, առնապատկեր ...
սերմն, սերման, սերմնակալթ, սերմնավաճառոյց ... գլուխ
գլխի, գլխակն, գլխապետ. | Են:

794 Չորրորդ՝ անեզականք են, եղեալք 'ի բայ
ցուցի մասնեն կամ կրճատ սեռականաւն, որ՛, աղի՛
աղէկ. ծ. ածառուք. երախտաւորուք. աղէխօսիլ. հայ-
րենասէր. ընկալակ | Են, կամ ամբողջ սեռականա-
ւըն, որ՛, բարիք. բարեաց. բարեացակամ .. չարիք.
չարեաց. չարեացապարտ ... լերինք. լերանց. լերան-
ցամէջ. Են:

795: Հինգերորդ՝ անեզականք միայն ։ տառիւ յոգնակա-
նացն ք կամ սեռականաւն ամբողջ կամ կրճատ բայ
դեալ լինին, որ՛, մարգանձին. մեղայածին. կանանցա-
պետ. ապստամբակցորդ. դիցապաշտ. կենակից՝ մեղա-
դիր. օրինագանց. ազօթասէր. խօսակից. աչացաւ. | Են:

796: Կամ՝ հայցականաւն լինին բարդեալ, որ՛, կեն
սառիթ. մեղսաձաշակ. օրէնուսոյց, | Են:

797: Վեցերորդ՝ անեզականք որ եղերին 'ի ան.
կամ ուղղականաւն բարդին 'ի բայ ձգեալ դ վանկդ
որ՛, ազաչանք. ազաչակից. դ բօսանք. դ բօսասէր.
թշնամանք. թշնամադիր Են, կամ սեռականաւն կըր-
ճատեալ, որ՛, առձանք. առձանաբաց. և այլն:

798: Իսկ երկրորդ բարդելի բառն՝ դրեթէ միշտ
ուղղական հոլովով դնի, բաց 'ի սակաւ այս բառից,
Երեքսայրի. երկդիմի. հինաւուրց. միամօր. քառակուսի.
երեքբերան. որք երեւին սեռականաւն բարդեալ:

799: Գտանին առ մեզ և յետագայ բառք փո-
խեալ հոլովով և նախդրօքս ընդ. 'ի. առ. բարդեալք,

որք երբեմն միայր, և երբեմն անջատեալ դրին զօ″, խոչընդակն, այլընդայլոյ, նոյն ը՟ նոյն, որոտ ը՟ ոտ, ա-փիլբերան, զառ 'ի թաւի, գլխիվայր, բանիբուն, գեր-կընդխառն, պատ 'ի պատ, խիտ առ խիտ, | ևն:

800: Բարդելի բառք ո՛չ փոփոխեն զթիւ հերեանց, այլ եզական պարզն եզակի թուով մնանէ 'ի բար-դութ, և անեզական պարզ անունն՝ յոգնակի նշանա-կութ. գնայ 'ի բարդութ, թէ՛ նախադաս լինելով՝ որպ տացաւ 'ի վերոյ (794]. և թէ՛ յերկրորդ տեղւոջ դասելով, ոմք են բառքս, Աշամէջք. թօքառաջք. արգելավանք. հողմայոյզք. ծակառք. բարձրագահոյք. յորդահոսանք. հրահոսանք. բաղարջակերք. կլորա-կամք. հարկապահոյք. ձիթահանք:

801: Բայց գոն անեզականք առանց * տառի 'ի վեր-ջըն դասեալք, զօ″, յոգնամիտ, կրքոլամիտ, յօժարա-կամ, այլափառ:

802: Յոգունս բառից ցուցանէ վերջնակն կըճատե-լոյ զբառս 'ի բարդութ. անդ, որ քառակի պատահէ, նախ՝ են բառք որք առանց փոփոխութ. լինին բարդքն, զօ″. զե-ղատեսիլ, լայնախորհուրդ, հրեշտակաձև, ճաշածամ. ևն: երկրդ՝ են յորս երկոքին ևս կըճատին կամ փոփո-խին, զօ″, երկդիմի, բազմապիսի, լուսատու. ևն երրդ՝ երբեմն առաջինն միայն ամբողջ, և վերջինն փոփոխի, զօ″, աշխարհալիր. գործառնաց. մարդածին. ևն, չրրդ՝ յամանս առաջինն փոփոխի և յետինն միայն ամբողջ, զօ″, բարեսէր. պաղբոդէմ. կարմրագեղ, ևն:

803: Ծանօթ.: Ազդ առնեմք ուսանողաց մերոց 'ի բարդութ. բառից սպառկառ կալ ինչ ինչ կարևոր ըզ-գուշութեյ, և ծանօթութեյ, յորոց նախ 'ի կամիլն նա-

րորդ բարդել զբառ. ինչ հարկաւոր, արդ՝ թուն լեցին անկորուստ պահել զօրութիւն նոցին, զի կը ՚ի հոլովել և ՚ի հեղուլ կանխընթացն և զհետագայ բառն՝ մի՛ կ-րկյէն արտաքակայն տառք կրճատմամբ: ՚Ի պէտս օ-րինակի առցէն բառքս | որբայնաբան, որբայնագիրք, որբայնագործ, որբայնաչարդ, որբայնակատար, | (՚ի հին և ՚ի նոր բառագիրս Մխիթարեանց տպեալք). յորս զատուցեալ կ'կիրջնական բառսդ, բան. գիր. գործ. զարդ. ևն, Տեայ ուղղողն, որ ո՛չ ձայնաչի յայտ-նապէս, թէ արդեօք բարդեա՞լն իցէ ՚ի բառիցս, ուղղէ-ալն, թէ կրճատեալն բառիս ուղղականն: Եթէ առաջինն՝ ուղիղ են յարաբարդքն, որբայնաբան, որբայնագիրք, որբայնայեալ, որբայնուլի, (այլ ղիւցայնացեալ. դիւ-ցայնուլի) ևն: Իսկ եթէ երկրորդն, վրիպակ մեծ է ՚ի բարդութեանդ, իբր զի բառն չէր (որ նշանակէ հէտե-ւն.]. ո՛չ երբէք կրճատի ՚ի բարդութիւնս կամ յածանց-մունս, որպէս յայտ է ՚ի բառիցս, զանայան. այլա-յան. փոխառանուլի. բաղայանուլի. անդայանուլի. զար-մանայանուլի. | ևն:

804: Երկրդ՝ ՚ի բարդել զբառս՝ հարկէ ունել ըղ-ձեմնական օրինակ ՚ի նախնեաց. բայց պտղաբերական և դշաատրակս, և ո՛չ զմտրակամնոս, զի են առ նախնիս բարդութիւնք, որոց չէ՛ մարթ նմանել, այլ են՝ օրինա-կի աղագաւ՝ բառքս, | ղիւցայն. նկեղեցորհնէք. խաչ-օրհնէք, հիմնարկէք. ձեռնադրել. ծննդածառել, բե-նատեղ. ցնտառեայ. հայնեդղու. | ևն:

805: Երրդ՝ ՚ի բարդելի բառից են որ դոյական են. և են որ ածական, խոկ յետ բարդութեան ըստ կիրառու-թեան թերեթողին մարթ են նշանակել ամենայն իբր գոյական, և ամենայն իբր ածական, բայց ըստ հանդերձեալ խոսելով թէ գո-

յական ը գոյականի կապի, բազում ուրեք ծայ գոյա-
կան, զօ՛, Ոսկեձեռաջոյր. ոսկեփայլաքաղաք. ամպերէց.
բազմաքար. բանակետղ. դաշտագետին. եղբօրորդի.
ժամանակակից. և այլ բազում.ք:

806: Իսկ ուրեք երբեք փոխին յածական, զօ՛, ար-
ծաթատէր. ղարանագործ. երկաթագիր. լծագամու-
ւանդ. խաչադրոշ, հրաբերան են:

807: Իսկ եթէ գոյական ը ածականի կապեսցի, զօ՛,
հրակերպետն. կամ ածական ը ածականի, զօ՛, չարա-
փառաշ, և կամ ածական ը գոյականի զօ՛, մեծամիտ,
են, գրեթէ ամ՛քեան փոխին յածական:

808: Ջոր՝ բառք ՚ի բարդութի մտեալք՝ բաղդա-
տին առ միմեանս քառակի, ո՛յն է՝ իբր ածական, իբր
յատկացուցիչ, իբր խնդիր, և իբր շաղկապեալ, իբր
գլի, Ա. բազում ուրեք առաջին բառն ժամծի իբր
ածական եղեալ ՚ի վր երկրին՝ ՚ի ցուցանել զորպիսութ
նորին, զօ՛, առոյգամեձ, ռ որոյ անձն է առոյգ, առա-
քանասէր. բարեբարոյ. գեղեցկաձայն. ղառնահամ. կաղ-
բաղէմ. մեծամիտ. չրեկալ, ճիւրաթևեալ. են:

809: Բ: ՚Ի բազում բարդութի՝ առաջին բառն է
յատկացուցիչ և երկրորդն է յատկացեալ զօ՛, Աստուածապատկեր.
աստեղատուն. արջառաջիլ. բաղկեպար. բառագիրք.
գարեջուր. գետաբերան. գլխահարկ. ծովեզր. նաւա-
պետ. վարժապետ. քերթողի. հօրաքոյր. հօրեղբօրորդի.
շարադրութ. գաղափարմանէս:

810: Գ: ՚Ի հոլովական բարդեալս՝ խնդրող բառն
կայ ը խնդրեալ բառի, և հասարակօրէն՝ երկրորդն է
խնդրող, իսկ առաջինն խնդրեալ, փոխանակ զի երկրոր-
դական բառք մեծ մասամբ են արմատք բայից, որք թէ

ը սեռից գլխաւորայն խնդրեսցի. թէ՛ ը եղերաց գործո-
ղութեն կամին առնել առ խնդրոյս զբառ ինչ խնդրել
՚ի սմանէ հոլովս, և յայս առ իս առաջին բառն միշտ է
ցուցանէ հոլովման: Նաև յայսպիսի բարդութիւն հանա-
պազ մտածել ի է երկու ինչ, մի՝ բայական սեռն ՚ի կըզ-
բառին, որ ընդ կամ ներգործական նշանակութ, ըստ
մտաց, օր. ընծայութիւն, կամ կրաւորական նշանակութ ըստ
մտաց, եւ, չէ, ընծայութիւն: և միւս՝ հոլովն առաջին
բառին, որ թէ՛ և ը մերձիմսնալ կանոնաց բարդութ
եղել լինի յաւելմամբ, կամ ՚ի սեռական, առ այն
միշտ ը հանդերձ խնդրոյ բառին՝ նկատի եղել յայլ և
այլ հոլովս, առանձնապէս:

՚Ի հայցակ: օր. Որդեսպան (սպանող որդոյ). պատկե-
րապաշտ (պատկեր պաշտող), լեզուաբան, լուսա-
տուու, երկնագէտ, ամենաբեր, դիւաբան | ևն:

՚Ի բացառ. օր. Ձեռապատիւ (յայլ պատուեալ). ա-
նեկաշէն. խորշակահար. հողածին. դեւալլուկ. երկնա-
հասան. հողեհանգ. | ևն:

՚Ի գործիական: օր. Շնորհազարդ (շնորհօք զարդարեալ).
ծիրանազգեաց. դժուարաբոյթ. զարդախոս. ձորապատն.
խանձարրապատ. | ևն:

՚Ի տրական: օր. Մեղսապարտ (մեղաց պարտաւոր).
երկայնահայեաց. Ձանձրացուցանող. | ևն

՚Ի ներգոյական, օր. Ծովամոյն (՚ի ծովու սուզեալ).
գետընկեց. ՚ի գետ ընկղմեալ. բանտապահ. գիշերա-
գնաց. ՚ի գիշերի գնացող. աշխարհակալ, ալեծածանեալ.
ևն:

811: Գտանին ևս բարդութիւնք, յորս խնդրողն առաջ
միշտ թէ՛ ներգործականի, թէ կրաւորականի, յայս-

ռակս և խնդրին ըստ հաճոյից նորան փոփոխէ զհոլովն, զօ", Ճանաչայոյ, կոչէ խօսնել, յայսօր զբարկուլ, և ցայտեալ ՚ի բարկուէ. ևն:

812: Գ· Ոմնք և բարդուքս, յորս բառքն դը-նին ընկ երբեմն շաղկապեալք յայտնի կամ ծածուկ, ոչ թէ մին իբր մեկնիչ կամ բացայայտիչ միւսոյն, զօ", արջնդրը. այսպնակատակ. գիւղաքաղաք. դարակաճատ· ածայլոտկան. արքայհայրի. ևն:

813 Նոյնպէս: Ժ: ՚Ի քնաւորկ կոմմայս, որ ուսուցին ՚ի բաց տար ձ բառս բարդեալս կամ բաղադրեալս ՚ի նախադաս մասնկանց, Ո՛ն, ապ. առ. ար. ը. ը. բաղ. տար. համ. ևն. և ՚ի վերջադաս բառիցս, բար. պէս. օրէն. զան. ևն:

814: Նոյնպէս: Ի: Դասատուք մի՛ թողլ տայցեն ան-կատարից նմանաձևել գնոյս ըստ չորեցունց եղանակացդ, մի՛ դուցէ զեղծցեն ՚ի ճառատանս, որ չէ՛ ինչ օտար ՚ի տհաս մտայ, զի ո՛չ այդպիսեաց, այլ ՚ի զարգացե-լոց պէտս նշանակեցի, ոչ զի առաջնորդութ քաջա-հմուտ դաստիարակի մարթասցին ուրեք նմանօրինակ ճխաբանել:

815: Հինգերորդ՝ վս հոլովոց բարդ բառից գիտեա՛, զի գրեթէ յամենայն վերջին բառն հոլովի, յորս են ամենք, որք զպատկեր հոլովոյն ո՛չ փոփոխեն, այլ ոչ հոլովեն՚ի լինելն պարզ. Նոյնպէս և յետ բարդութեն ձևանան, զօ", բանկրօն. ձայն. սեռ. կէտ. թէ՛ պարզ, և թէ՛ բարդեալ, զօ", սրբաբան. սրբակրօն. քաղցրաձայն. նոյնասեռ. ժամանակակէտ. ևն, հոլովին ըստ առաջին պատկերի:

816: Բայց են բաղդումք, որք ՚ի պարզութեն այլ, և ՚ի բարդութեն այլազգ հոլովին, զօ", գլխ. գիր. ձև,

նխաթ. բեր. գործ. կապ. եւն, 'ի պարզումն հոլովին ը̄ երրդ. պատկերի, իսկ յետ բարդութն, Մեծագին. ձեռագիր. քառաձեւ. քառանիւթ. պտղաբեր. չարագործ. եւն, հոլովին ոմանք ը̄ առաջին, եւ ոմանք ը̄ երկրորդ պատկերի:

817: Յառաջին մասին վասնակ եղէ զումարել ըդ-նոյնահոլով բարդս ը̄ խառնաքանչիւր պատկերաց. գի տառ՛ի այսպ ունելով մանկանց զորոշեալ կանոն ինչ, մի' հարկեսցին յոյժ վարկանել գիտել առ բառաքնիս հինս եւ նորս, որք 'ի նշանակել զ հոլովս եւս նմայանց բառից՝ չեն միաձայն ո՛չ ը̄ ինքեանս, եւ ո՛չ ը̄ այլգոր բազում փորձիւ արժան էր հաստատել, թէ ո՛չ արդեւոյր կարճուկ գրոյս:

818: 'Ի սակս ծանօթութեան, զոր յառաջին մասին (38) առաք զածանցեալ անուանց, յաւելումք աստանօր զհետագայսդ:

Որով կանոնօք բարդէին անուանք ը̄ իրեարս, նաքումբք եւ միանան ը̄ աննշան մասնիկս, այն է, կա՛մ ամբողջ ուղղականն, կա՛մ սեռականն անփոփոխ կամ կրճատեալ, եւ կա՛մ գործիականն սակաւ ուրեք՝ միանայ ը̄ մասնկանցն երբեմն առանց միջադրութե տառից. եւ երբեմն հանդերձ միով 'ի տառից, ա, է, ու, եւն, զ օ", ոխ, առանցքան, տանջենական. տանջենայիս, զորս եւ 'ի յառաջագս օրինակաւ փորձեա:

819: Ո՛չ գոյական եւ ածական անուանք միայն, այլ եւ դերանուանք (122), ընդունելութիւք, մակբայք 240, եւ շաղկապք 255 կարեն ընդունել զածանցական մասնկունս, որպ տեսցուք եւ առաջի:

820: Մասնիկքս թէպէտ առ հասարակ աննշան

ասին, և են իսկ մեծու մասամբ, զօ՛՛, յի՞, ոյ, ու, ևն. սակայն են 'ի նոսին, որք յայտնի կամ ծածուկ նշանական են ըստ պատահման, զօ՛՛, այն, որ, եա՞, ած, ակ, գին, ևն. բայց այսոքիկ ո՛չ դադարեն 'ի լինելոյ ածանցից մասնիկ, և ո՛չ փոխին 'ի բարդից բառս, այլ կարի յոյժ տարբերին յայնմանէ, իբր զի 'ի բարդութեան երկոք բառն է կատարեալ անուն նշանակման, և չունի ինչ վերաբերութիւն առ նախադաս բառն, բայց ինքն է պայման, զոր ասացի 'ի 803—815. իսկ մասնիկքս նշանակեն զպարագայսն ինչ առ նախատիպ բառն, կամ զկապակցել ինչ ընդ այնմ, օրինակ իմն, զտեղի նախատիպին, զստացօղն զնախատիպն, զգործօղն միջնորդութեամբ նախատիպին, զարտադրեալն, զնուազեալն, կամ զառատացեալն նախատիպաւ, կամ զայլ ինչ այսպիսի, որոց գումարն բովանդակի յերկոտասան կարգս, որք անուանին, մասնիկք 1. Արտադրականք. 2. առատականք. 3. գործիքականք. 4. ենթակայականք. 5. թըւականք. 6. հայրանունականք. 7. նուազականք. 8. նոյնականք. 9. ստացականք. 10. վերբերականք. 11. վերացականք. և 12. տեղականք:

